48.

СПЕЦІАЛЬНАЯ
ПЕРЕПЛЕТНЯ
Б. ВАРДИКЯНЦА
Эривань.

145

№ 5043

2006

# ՀՐԱՀԱՆԳ
# ԵՕԹՆԵԱԿԻ

Եօթնեակ եօթանիք դա-
սաւորեալ

Յօրինեալ ՚ի հայր Միքայէլ վար-
դապետէ Չամչեանց ։

Յամի տն 1802. և ՚ի թուականու-
թեանս հայոց ՌՄԾԱ ։

՚Ի ՎԷՆԵՏԻԿ

՚Ի Վանս Սրբոյն Ղազարու

Հրամանաւ մեծաւորաց ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека

# Տեղեկութիւն նիւթոյ գրուածոյս ։

Փափաք բարեպաշտից առ բազում ինչ յօժարեցուցանեն զմեզ՝ ձեռն արկանել, մանաւանդ առ կարեւորագոյնս. թէ առ մեծամեծս, և թէ առ փոքունս ։ Զանզի մեր ևս 'ի նոյն փութան՝ 'ի լնուլ զբարի փափաք նոցա. որով և յառաջիկայ փոքու հրահանգութեանս. զոր 'ի լոյս ընծայել կամեցաք ըստ փափաքանաց և ըստ խնդրոյ նոցին ։ Եւ թէպէտ զորս ունիմք առաջի դնել պատուականագոյնք քան զնոսին գտանին յայլևայլ գրեանս ազգի մերոյ, բայց առաւելուլ բարեպաշտութեան ոմանց ոչ շատացեալ նոքիմբք, ստիպեաց զմեզ զայն ևս ընծայ նուիրել ըղձանաց նց ։ Զայս մեր գրուած փոքր՝ յեօթն հրահանգութիւնս տրոհեմք, եօթամբք դասաւորեալ ։

Յառաջնումն դնեմք զտեղեկութիւնս հանգամանաց եօթն աւուրց շաբաթու ։

Յերկրորդումն դնեմք զնուէրս աղօթից եօթանց՝ ըստ եօթն աւուրց ։

Յերրորդումն՝ զայլ եօթն աղօթս վասն առաւօտու և երեկոյի ։

'Ի չորրորդումն՝ զեօթն ևս այլ աղօթս 'ի կրթութիւն եօթն առաքինութեանց 'ի վերայ

եօթն բանից տէրունական աղօթից ։

՚Ի հինգերորդումն՝ զայլ ևս եօթն աղօթս առ խորհուրդ խոստովանութե̅ և հաղորդութեան ։

՚Ի վեցերորդումն՝ զեօթն կարգս աղօթից՝ նուիրելոց ՚ի ժամ՝ սբ̃յ պատարագի՝ յաւուրս եօթն ։

Յեօթներորդումն՝ զեօթն հատուածս բանից ՚ի վերայ մ̃ր հաղորդութե̅ առ ՚ի յորդոր ջերմեռանդութե̅ ։



Ե՛ս փրկիչ աշխարհի ։

# ՀՐԱՀԱՆԳ · Ա ·

## Հանգամանք աւուրց եօթնեկի ։

Յառաջ քան զմտադրել մեր 'ի խօսել զիւրաքանչիւր աւուրց առանձինն' արժան է գիտել 'ի հասարակէ, որ յաւանդութենէ առաջին նահապետաց սովորութէ եղեւ յաւէտական կողմանս' կարգել զՇաբաթն եօթնօրէայ աւուրց' յորէ շաբաթս մինչեւ ցուրբաթս որպէս մարթ է իմանալ 'ի բանից Մովսիսի առան ՏԴ. (Ծնն. Է.) եդեալ իւրաքանչիւր աւուրց զթուականն անուանս. Այս է առաջին օր. Երկրորդ օր. Երրորդ օր. ԵՒԼ ։ Բայց 'ի յայտնել եւ յորոշել թուոյ եօթն մոլորակաց առ Եգիպտացիս' սկսան բազումք, եւս եւ նոքին իսկ Եգիպտացիք եւ 'ի նոցանէ յոյնք եւ լատինք յանուան

այնոց մոլորականաց ընծայել պատուանս աւուրց եօթնեկին. համարելով՝ թէ իւրաքանչիւր աւուր եօթնեկի տիրէ մոլորակ ինչ, մանաւանդ 'ի վերայ առաջնոյ ժամու. որպէս 'ի Միաշաբաթու՝ արեգակն. յերկուշաբաթի՝ լուսինն, յերեքշաբաթի՝ հրատն. 'ի չորեքշաբաթի՝ փայլածուն. 'ի հինգշաբաթի՝ լուսնթագն. յուրբաթու՝ արուսեակն. և 'ի շաբաթու՝ երևակն: Եւ զի զիւրաքանչիւր մոլորակս համարէին լինել ա̄ծս, յանուն նոցա և զօրն կոչէին. զՄիաշաբաթին՝ որ արեգական, կամ ըստ նոցա օր ապողոնի, որ էր ա̄ծ լուսոյ և բժշկաց, և իշխան գուսանաց: Զերկուշաբաթին՝ որ լուսնի, կամ ըստ նոցա օր անահիտայ ա̄ծուհւոյն. որ ասէր դշխոյ ջուրց, և թագուհի զգաստութեան: Զերեքշաբաթին՝ որ հրատի, կամ ըստ նոցա՝ օր մարտեայ, այ̄ արէոսի. որ էր ա̄ծ մարտի այ̄ պատերազմի: Զչորեքշաբաթին՝ որ փայլածուի, կամ ըստ նոցա՝ օր մերկուրեայ, այ̄ հերմէսի.

ամսի • որ էր չափ ժամանակաշրջանութեան, և ձուոմարանութեան, եւս և պարգամաւոր չափոյ: Օ հինգշաբաթին՝ որ Լուսըն-թագի, կմ ըստ Յոյն՝ որ Դիոսայ, կմ Եուպիտերայ, կմ Արամազդայ, այն է դէոս, որ և աւետոր Թագաւոր չափոյ և մարդկան: Օ ուրբաթն՝ որ Արուսեկի, կմ ըստ Յոյն՝ որ Վեներեայ կմ Աֆրոդի-տեայ • որ էր չափուհի սիրոյ և հեշտու-թե: Օ շաբաթն՝ որ Երևակի, կմ ըստ Յոյն՝ որ Սատուրնոսի, կմ Կռոնոսի • որ էր չափ հանգստեան • որդի Երկնի և Վեստայի՝ Թագաւոր լեալ Կրետացւոց: Իսկ առ Եբրայեցիս սովորութե եղև՝ զօրն եօթներորդ կոչել շաբաթ, կմ է հանգիստ • իսկ զայլ աւուրս անուանել՝ի շաբաթէ՝ անուանէին առաջին որ շաբա-թու • երկրդ որ շաբաթու • երրդ որ շա-բաթու • չրդ որ շաբաթու • հինգերրդ որ շաբաթու • վեցերրդ որ շաբաթու: Որպէս և 'ի հայս եղև կոչել, շաբաթ, միաշաբաթի, երկուշաբաթի, երեքշա-բաթի, չորեքշաբաթի, հինգշաբաթի,

և

և ուրբաթ :

Այս անուանքն եմնաց և յայլ ժամանի մի ազգս մինչև 'ի ժամանակս սբյն Սեղբես-տրոսի հայրապետին , և Կոստանդիանոսի Թագաւորին . որք բաց ասելոյ ոմանց՝ սահմանադրութե ուղղեցին՝ այնուհետև այսոքիկ Թուականն անուամբք կոչել զաւուրս եօթնեկին . այն է՝ օր առաջին , կամ կիւրակէ . օր երկրորդ , օր երրորդ , օր չորրորդ , օր հինգերորդ , և օր վեցերորդ , կմ ուրբաթ . և շեօթներորդն շաբթ : Կամ՝ փօն առաջին , փօն երկրորդ , փօն երրորդ ևն : Այս կարգեցին պայսունէք աստուրս 'ի դպրանս պաշտաման աշ և սէր նորա . այլ Թէ առ ինչ և պիտոյ , համառօտն ի մեծ ծանուցանօք յառաջիկայդ

բաց եօթն աւուրց :

# ԿԻՒՐԱԿԷ

Նուիրեալ ՚ի պատիւ յարութեան Քի,
եւ ՚ի յիշատակ գալստեան Հոգւոյն սբյ,
եւ ՚ի փառս ամենասբ երրորդութեան ։

Օր այս է սկիզբն աւուրց Ձի․ զի ը̃ս աւանդելոյ մզ գրոց՝ ՚ի սմին աւուր արար ա̃ծ զաշխարհս ։ Որով յառաջատանայն՝ յեղերս զեղու․ սոյնպէս եւ ա̃ծ յառաջատանայն յանսահման բա- րութե̃ խորոց առ արտաքս՝ ՚ի յայտ ածնել զփառս իւր, զե- ղաւ իբրեւ զծով յեղերս՝ ա̃մ յա- րարածս, յանէից գոյացուցանե- լով զն̃տ յառաջնում անբաւա- նելի վայրկենի այսր աւուր ։ ՚Ի սմին աւուր ստեղծ եւ զլոյս յերկինս եւ յերկրի․ յերկինս զլոյս հրեշտակային բազմութե̃ ՚ի պայծառութե̃ փառաց արարչա- կան

կան զօրութե՟ իւրոյ . յերկրի՝ զլոյս զգալի՝ առ ՚ի երևելի կացուցանել զա՟մ զոր հանդերձեալ էր առնել ։ Ի սմին աւուր ՚ի ծագել լուսոյ՝ ծագեցաւ և փառք ա՟ծութե՟ն յարարածս ։ Ուստի և օրս այս ՚ի կողմանէ իւրմէ կարգի ՚ի փառս արարչագործ կարողութե՟ն ա՟յ , և ՚ի պատիւ անստուեր լուսոյ ա՟ծութե՟ն ։

Զօրս զայս կոչէին հեթանոսք յանուն չորրորդ մոլորակի (սկըսե՟լ յերևակէ՝ ) որ արեգական . ընծայեալ զնա ՚ի պատիւ պաշտաման նր՟ , վասն երից պատճառաց . մի՝ զի համարէին՝ թէ արեգակն տիրէ ՚ի վր՟ այսր աւուր ։ Երկրորդ՝ զի կարծէին՝ թէ մարդիկ յարեգակնէ առնուն զհոգի . և ՚ի լուսնոյ զմարմին . և զի հոգին առաջին է ՚ի մարդն , և դերագոյն մասն նր՟ , զառաջին օրն նմա ընծայեցին , և զերկրորդն՝

րորդն՝ լուսնի ։ Երդ՝ զի առաս-
պելէին, թէ արեգակն իցէ Ա-
պողոն չա̃ծն՝ արարիչ լուսոյ ․ և
զի զլոյսն համարէին առաջին յա-
րարածս՝ զառաջին օր շաբաթուն
նուիրեցին արարչին լուսոյ ։

Առ Հրէայս՝ 'ի սկզբանն անդ մինչ-
չև էր ծագեալ արեգակն արդա-
րութեան, օրս այս չէր այնչափ 'ի
պատուի ․ այլ 'ի տեղի որ պատ-
ուեալ լինէր մեծապէս օրն շա-
բաթու ․ զի 'ի նմին աւուր հան-
գեաւ ա̃ծ յամենայն գործոց իւ-
րոց՝ զոր սկսաւ առնել յօրէ
յառաջնոյ ։ Եւ այս պատիւ շա-
բաթու ոչ եթէ նորոգ սկիզբն
կալաւ 'ի Հրէայս առ Մովսէսիւ,
այլ յադամայ անտի ․ քանզի Ա-
դամ՝ որ բարւոք ես գիտէր զկրս
արարչագործութեան, 'ի հարկէ ա-
ւանդեալ էր զայս որդւոց իւրոց ․
զոր զկնի ժամանակաց որոշա-
գոյնս սահմանեաց Մովսէս հրա-

մա

Մանաւանն տ̅յ :

Ս.յւիբրև սկիզբն եղև երկրորդ արարչութ̅ , յորում աշխատեցաւ որդին տ̅յ` քարոզութ̅ աւետարանին , համբերութ̅ նախատանաց , յանձնառութ̅ խաչի և մահու , և թաղմամբ 'ի գերեզմանի . 'ի յառնելն անդ 'ի հետևել̅ աւուր զկնի շաբաթու , որովհետև հանգեաւ ը̅ ա̅մի յա̅մ գործոց իւրոց` և լոյս ծագեաց աշխարհի , օրս այս կարգեցաւ սահմանադրութ̅ առաքելոց 'ի պատիւ յարութ̅ տ̅ն 'ի յոյս հասարակաց յարութ̅ . որ ը̅ աւանդելոյ երևելի վ̅դ̅պ̅տաց լինելոց է յաւուր կիւրակէի : Նաև զի 'ի սմին աւուր էջ հոգին ս̅բ , և հաստեաց զնորս եկեղեցի . նաև զի 'ի սմին աւուր յայտնեցաւ խորհուրդն ամենա̅ս̅բ երրորդութե̅ , որոշեցաւ սա միանգամայն և 'ի պատիւ գալստեան հոգւոյն ս̅բյ , և 'ի փառս ամե-

նա.

նամբ երրորդուե՟ . և այսու որոշ-
մամբ որ շաբաթուն փոխադրե-
ցաւ 'ի հետևեալ օրն . որ կոչի
միաշաբաթի վ՟ն լինելոյ առաջին
որ զկնի շաբաթուն ։

Ասիցէ ոք թերևս . ա՟ծ հրամայ-
եաց պահել զօր շաբաթուն
սրբելով զայն, ք՟ ա՟յ ընծայելով
և սրբութե՟ պարապելով . զիա՛րդ
ապա կարէին առաքեալքն փոփո-
խել զայն ։ Պատասխանեմ թէ
առաքեալքն այսու փոփոխուե՟ ոչ
բարձին զպատիւ աւուրն , այլ փո-
խադրեցին զվիճակ աւուրն յայլ
օր ։ Առաջինն վերածի 'ի բնա-
կան օրէնս . ք՟ որում արժան է
'ի միում աւուր եօթնեկի պա-
րապ առնուլ՝ առ 'ի հանգստեամբ
պաշտօն մատուցանել ա՟յ . և
զայս առնել ևս հաստատեցին
առաքեալքն ։ Իսկ երկրորդն՝ ք՟
որոշումն այս ինչ և այն ինչ ա-
ւուր՝ հայի 'ի խորհրդական օրէնս .

որ

որ դադարեցաւ 'ի գալ փրկչին . ուստի և առաքեա̃լքն կարէին փոփոխել որպէս և կամէին . մանաւանդ զի պատիւ աւուր կիւրակէին զսոյն պահանջէր ը̃ նախակարգեալ պատճառացն :

Եւ արդ՝ քանզի օրս այս բոլորովին սրբեցաւ Ք̃յ , զի Թէ նուիրեցաւ Ք̃յ՝ ո̃ր առնել զսա , վ̃նկ կոչեցաւ և կիւրակէ , կամ ը̃ յունայ գիրիագի զ̃ի Տ̃րունի . 'ի ցուցանել՝ Թէ այս լուսապայծառ օր տուեալ է միայն Ք̃յ : Ուստի և 'ի սկզբան եկեղեցւոյս ոչ կատարիւր 'ի սմա այլ ինչ տօն հասարակ ս̃րց . ո̃պ և ոչ այժմ յեկեղեցիս հայոց , բայց եթէ միայն տօն ամենա̃րբ կուսին վ̃ն լինելոյ նորա մայր Ա̃ծն և Ա̃ծածին :

Զօրս զայս պարտական էն ա̃մ քրիստոնեայք՝ ո̃ր առնել երկուք : Ա̀ի՝ դադարելով յարտաքին ծառայական գործոց , զ̃ի յաշխա-

տաւոր արհեստից . որպիսի է ոս-
կերչութիւն, դարբնութիւն, հիւսնութիւն, եւն. եւս և 'ի վաճառականութենէ և յառևտրութենէ, նաև
յատենական դատաստանաց ։

Ասացի նախ՝ արտաքին . զի որքան ինչ վշտ անձին է՝ ոչ եփել զկերակուր, զգենուլ, եւն . սոքա 'ի բաց առեալ լինին իբր ներքին ։

Ասացի երկրորդ՝ ծառայական . զի 'ի բաց առեալ լինին ազատական գործք, որպիսի է ընթեռնուլ և գրել, եւս և նուագել, և անմեղ խաղուց պարապիլ չափով . և դարձեալ առանց ատեան ուղղելոյ դատաստան առնել կամ վճիռ հատանել . զի սոքա եւս վերածին յազատական արհեստ ։

Երրորդ՝ դադարելով 'ի գործելոյ զգործս մեղաց և զգործս ախտաւոր պարապմանց . որպիսի են մոլի պարաւորութիւնք, անկարգ կենցաղավարութիւնք, ցոփ խրախ-



ИМЕНИ Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ 1922

ձանութիւնք. անվայել զբօսագնա-
ցութիւնք, դրամոլ շահու խաղա-
ցողութիւնք, անտեղի դատարկա-
կացութիւնք. ԼԶ։

Երկրորդ՝ պարապելով ՚ի գործոյ ՚ի
բազում իրաց. ո՞պ̃ի է տեսանել
զպատարագ ՚ի հրամանին եկե-
ղեցւոյ. առնել զաւելի աղօթս.
ընթեռնուլ զհոգևոր գրեանս.
լսել զհոգեշահ բանս. ուսուցա-
նել այլոց զքրիստոնէական ուս-
մունս. մեկնել զբանս գրոց.
քննել զընթացս կենաց. առ-
նել և զայլ բարեպաշտական
գործողութիւնս. որովք անդորրա-
նայ հոգին և սփոփի. և օրհնու-
թեան այ արժանաւորի, և շնոր-
հօք հոգւոյն սբյ բարեզարդի, և
առ փրկութիւն յաւիտենական
պատրաստի ։

ԵՐ-

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ :

## Կարգեցաւ 'ի պատիւ Երկնային զօրաց :

Օր սա այս է երկրորդ զկնի միա-
շաբաթու . ուստի և կոչի երկու-
շաբաթի , կամ ըստ յունաց տեւդե-
րա , որ երկրորդ օր . յորում աստուած
բաժանեաց ի մէջ զյորդութիւն ջուրց
'ի վերին և 'ի ստորին . և եդ 'ի
միջի զտարածութիւն օդոյ 'ի հաս-
տատութիւն՝ առ 'ի գոյացութիւն ամ-
պոց անձրևոյ , և քիջուցն ցօղոյ,
'ի յանուցն մեզի , և 'ի սփռումն
եղեման :

Եւ այս՝ առ 'ի ցոյց անջրպետե-
լոյն իմոյ զերկնաւոր և զխոնաւն
ջուրս՝ որ զհրեշտակային բնութիւն
յերկրաւոր և 'ի զգալի ջուրց՝ որ
'ի հողեղէն բնութեց . որոց 'ի մի-
ջի եդ խեր անջրպետ զբարձրութիւն
երկնից 'ի հաստատութիւն :

'Ի սոսա հային ստացեալքն 'ի շարականն ձն. * Արարչական բանին հրաման՝ 'ի յերկրորդում աւուր սկզբան՝ զջուրս 'ի ջուրցն բաժանեաց, հաստատութբ պարունակեաց. որով զաշխարհս հողեղինաց՝ անջրպետեաց 'ի հրեղինաց ||:

Զօրս զայս կոչէին հեթանոսք յանուն վերջնոյ մոլորակի՝ որ լուսնի, ընծայեալ զսա 'ի պատիւ պաշտաման նր. և այս վասն բազում պատճառաց. նախ՝ զի լուսինն՝ առ մեզ հայելով նմանագոյն է, արեգական ըստ մեծութե և ըստ փայլման. ուստի յընծայել նոցա արեգական զառաջին օրն՝ զերկրորդն ընծայեցին լուսնի: Երկր՝ զի լուսին յարեգակնէ ընդունի զլոյս իւր զհետ գնալով նր. և զի երկուշաբաթին՝ կիւրակէի հետևի, վնկ 'ի պատիւ լուսնի կարգեցին զօրն՝ որ

հե.

հետևի աւուրն արևու ։ Երրորդ՝ զի որպէս ասացաք 'ի վերոյ, համարէին թէ մարդիկ յարեգակնէ առնուն զհոգի, և 'ի լուսնոյ զմարմին. և զի պատուական և առաջին մասն է մարդոյ հոգին, և ստորինն իբր երկրորդ մասն՝ մարմինն, արևու ետուն զառաջին օրն, և լուսնի զերկրորդն ։ Չորրորդ՝ զի կարծէին՝ թէ լուսինն տիրէ առաջնոյ ժամու երկուշաբաթի աւուրն. զորմէ տես 'ի սկիզբն այսր հրահանգութեան ։ Հինգերորդ՝ զի համարէին թէ լուսինն իցէ տիանիա աստուածուհին, այն է Անահիտ՝ որ և ասի Արտեմիս, իշխող ջուրց ա̃մի և թագուհի զգաստութեան. և զի յաւուր երկուշաբաթի եղև բաժանումն ջուրց, թերևս վասն այսր պատճառի յեբրայական աւանդութենէ առեալ՝

Նմա ընծայեցին զայս օր ։

Յայսմ մնոտիապաշտութենէ կա-

մելով քրիստոնէից սրբել զօրս
զայս՝ կարգեցին զսա 'ի բարեպաշ-
րիշտ պաշտամունս։ Լատինայնք
'ի փառս կենդանարար սբ Հոգ-
ւոյն, եւս եւ 'ի պատիւ այնոցիկ
որք եղեն տաճար Հոգւոյն սբյ.
այ 'ի պատիւ սբցն այ։ Եւ Թէ-
պէտ դնի ուրեք եւ 'ի պատիւ
Հրեշտակաց, այլ այն Հայի 'ի
մերն եւ ըստ նց յերեքշաբաթի։
Ասորիք կարգեցին յապաշխա-
րութե կենաց։ Իսկ յոյնք եւ Հայք
նուիրեցին զսա 'ի պատիւ երկ-
նային զօրաց ըստ ինն դասուց։

Եւ այս՝ է պատշաճի։

Նախ՝ զի որովհետեւ զչորեսին
աւուրս շաբաթուն կարգեցին 'ի
պատիւ սբցն այ, առաջին գոլով
սոցա 'ի կարգս սբց՝ զառաջին
օրն՝ որ զկնի կիւրակէի՝ առ սո-
սա ուղղեցին։ Երկդ՝ զի Հրեշ-
տակք կոչին Երկդ լոյսք յառա-
ջին լուսոյ. ուստի յետ նուիրե-

լոյ զառաջինն որ առաջին անըս-
տեղծ լուսոյ, պատշաճ էր զերկ-
րորդ օրն նուիրել այնոցիկ՝ որք
կոչին երկրորդ լոյսք ։ Եսայի՝ ըստ
ինն դասուց. զի սոքա բաժանին
յերիս քահանայապետութիւնս. յա-
ռաջնումն են սերովբէք, քերով-
բէք և աթոռք ։ Երկրորդումն են
իշխանութիւնք, զօրութիւնք և տէրութիւնք ։
Երրորդումն են պետութիւնք, հը-
րեշտակապետք և հրեշտակք ։
Սոքա ամենքին երեքեամ յանուն
վերջնոյ դասուն կոչին հրեշ-
տակք. երեքեամ յանուն միջնոյն
զօրութիւնք. երեքեամ և զինուորու-
թիւնք ըստ որում զինուորեցան ամե-
նեքին իմանալի մարտիւ ընդդէմ
սատանայի և զօրաց նորա ։ Իսկ
թիւ համարոյ սոցա անհաս իմն
է՛ի մէնջ. զի որչափ և բազում
ասիցեմք՝ սակաւ է. վասն զի պայ-
ման կարգի գերագոյն բնութե-
նից պահանջէ այնչափ թուով լի-

նիլ՝ որչափ ոչ կարէ հաւատարիլ
Թէ համարոյ մարմնեղէն իրաց:
Սոքա ամենեքին յինքեանս են ինք-
նատեսակք . իւրաքանչիւր յիւ-
րում անհատական տեսակի՝ զա-
տաբաժանեալք 'ի միմեանց այլ-
ևայլութեամբ էութեան . որպիսի է այ-
լատեսակութիւն ընդ ծաղկունս և ընդ
թռչունս , ընդ անասունս , և ընդ-
ձկունս՝ մի քան զմի սքանչելիք :
Յինն դասուց սոցա՝ 'ի չորիցն և
եթ առաջինն 'ի պահպանութիւն ազ-
գի մարդկան՝ իւրաքանչիւր մար-
դոյ մի մի հրեշտակ , որք յամի
զգուշանան զմեզ . 'ի չարեաց
նահանջեն , և 'ի բարին առաջ-
նորդեն : Կան զմեօք հանապազ
իբրև իշխանք ամենափառաւորք
և ահաւորք : Եւ քանզի 'ի պա-
տիւ այսոցիկ գերագոյն էակաց՝
և մեզ երախտաւորաց կարգեալ
է օր երկուշաբաթի , պարտ և
պատշաճ է զգաստութեամբ և ամբը-
ծու

ծուլ̄թ անյուսացանել զսա . և զի ըս-
կիզբն է սա աւուրց գործոյ եօթ-
նեկի՝ հարկ է հիմն բարի դնել՚ի
սմա այլ աւուրց շաբաթու ։

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ ։

Կարգեալ ՚ի պատիւ նահապետաց և
մարգարէից . և տիրապէս ՚ի պատիւ
յովհաննու կարապետին ։

Օրս այս է երրորդ զկնի միա-
շաբաթու . ուստի և կոչի երեք-
շաբաթի , կմ̄ ըստ յունաց դռի-
դի . յորում աւուր ամփոփեաց
ա̄ծ զջուրս պատեալս զերկրաւ .
և բաժանեաց ՚ի ծով և ՚ի գետս .
և երևեցաւ ցամաքն . զոր ՚ի սմին
աւուր զարդարեաց ողէսպէս բու-
սովք յանհամար տեսակս , և զա-
նազան պտղատու ծառովք փո-
խանակ երկնային զարդուց . յո-
րում և երևեցաւ սկզբնաւորու-
թիւն բարեբարութեանց ա̄յ ՚ի խնա-
մել ։

մել: Ուստի և օրս այս ՚ի կողմա-
նէ իւրմէ կարգի ՚ի գոհութի և ՚ի
շնորհակալութի ամենաարքաւական
խնամոցն այ̄. և ըստ հետևութե՛
՚ի պատիւ այնոցիկ, յորս նախ
երևեցան խնամքն այ̄ ՚ի վ̄ր երկ-
րի. որպիսի եղեն նահապետք
և մարգարէք, և յովհաննէս
մկրտիչ. որպէս ունիմք ասել
այժմ:

Զօրս զայս կոչէին հեթանոսք
յանուն երրորդ մոլորակի (ըս-
կսեալ յերևակէ) օր հրատի. և
այս՝ վ̄ս երկուց պատճառաց: Մի՝
զի համարէին՝ թէ այս աստղ տի-
րէ ՚ի վ̄ր առաջնոյ ժամու երեք-
շաբաթի աւուր: Եւ երկրորդ՝
զի կարծէին՝ թէ այս աստղ իցէ
արէս չ̄ստծն մարտի և պատերազ-
մի. և զի առասպելէին՝ թէ բաղդ
մարդոյ յայսմ աւուր մարտ ընէ
ը̄ մարդոյ, սմին իրի ՚ի չ̄ստծ մար-
տի ընծայեցին զսա առ ՚ի պաշտ-

պա.

պանութեան գտանելոյ 'ի նմանէ ։ Իսկ եկեղեցիք քրիստոնէից հաստատեցին զսա 'ի յարգուն սըրբազան պաշտաման ։ Սահմանացին 'ի պատիւ երկնային զօրաց , և մանաւանդ որպէս 'ի յարգութիւն պահապան հրեշտակաց . և ուրեք ուրեք , մանաւանդ յիտալիա 'ի յիշատակ սքյն անտօնի պատուացւոյ . Թէպէտ 'ի գիրս ուրեք դնի և յապաշխարութեան կենաց ։ Ասորիք կարգեցին 'ի պատիւ լըրութեան եկեղեցւոյ ։

Իսկ մեք և յոյնք ընդ մեզ 'ի յարգուն սրբոց նահապետաց և մարգարէից՝ զի նոքա եղեն հիմունք աստուածային պաշտաման և կրօնի . ընդ որում նախ առաջին նոցա յայտնեաց աստուած զինքն . և 'ի ձեռն նոցա եցոյց ազգի մարդկան զկամս իւր ։ Սու քզլի լրումն եղև նոցա սուրբ Յովհաննէս մկրտիչ , և սկիզբն առաքելական պարու , մանաւանդ որա-

պէս

պէս և տիրապէս 'ի պատիւ յի-
շատակի սորա կարգեցաւ օրս
այս . որոյ և յղութի՛ն 'ի սմին ա-
ւուր ասի յոմանց լեալ : Մ̃ինչ
ո՛չ պարտական գտան ազգ մարդ-
կան մատուցանել զայս յարգու̃ն
և պատիւ . վ̃ն զի ո՛ք արդեամբք
և բանիւք և բազում մասամբք
գուշակք եղեն փրկութե̃ ն̃ց 'ի
ձեռն տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի :
Բայց առաւել ես պարտական
գտան իբր զաւետչեայ տալ յով-
հաննու մկրտչի զպատիւ աւուրս
այսորիկ . ըստ որում սա եղև ա-
ռաջին աւետաբեր գալստեան
փրկչին : Եւ զոր նահապետք և
մարգարէք գուշակութ̃բ աւետա-
ւորեցին , սա մատամբ եցոյց
զնոյն , գառն ա̃յ անուանելով
զնա . և ետ աւետիս՝ թէ հան-
դերձեալ է նա բառնալ զմեղս
մեր :
Նա զի 'ի սմին աւուր 'ի բաժան-
ման

ման ծովու և ցամաքի , ըստ հրէից և հեթանոսաց 'ի հին և 'ի նոր՝ սա եղև խոր յօդ միաւորութեան հնոյն և նորոյն . և սկսաւ 'ի կիր առնուլ պաշտօն խոր ջրով 'ի մկրտութ՛ն ապաշխարութե : Նա կարապետ լեալ նորոգողին ազգի մարդկան զնա ինքն ևս իջոյց 'ի ջուր . զի զոր բաժանեայն սրբեսցէ :

# ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ :

## Կարգեալ 'ի պատիւ բարեբանեալ Սբ Ածածնին :

Օրս այս է չորրորդ զկնի միաշաբաթու . ուստի և կոչի չորեքշաբաթի , կմ ըստ յունաց տետրադի . յորում աւուր գոյացոյց ած զաստեղս , մանաւանդ թէ կարգեաց և եդ 'ի նմ զորոշ շարժմունս՝ և զազդուութիս՝ ներգործել 'ի ստորինս . և ըստ իմաստնոյն ասէ.

ասելոյ՝ որքանեկել, և սահմանել զաւուրս և զժամս տունջեան և գիշերոյ, ամսոյ և տարւոյ, ամառայնոյ և ձմերայնոյ, գարնայնոյ և աշնանայնոյ:

Լսանելի յոմանց, թէ լոյսն՝ զոր ստեղծ Ած զաւաջինն, 'ի սկին աւուր ամփոփեցաւ յարեգակն. յոր միտ ասի 'ի շարականի: *Լոյսն այն պայծառ յոր չորրորդին յարեգական նիւթ հաւաքեալ‖. ըստ այսմ օրս այս 'ի կողմանէ խորհէ կարգի 'ի գոհութն լուսաւորութն, զի 'ի շնորհակալութն յայտնութն փառացն այ. և ըն հետևութն 'ի պատիւ այնր՝ յորում փայլեաց փառքն այ. այն է որ Ածածինն որպ ունիմք ասել այժմ:

Զօրս զայս կոչէին հեթանոսք յանուն վեցերորդ մոլորակի (ըսկսեալ յերևակէ՝) որ փայլածուի. և այս՝ վն երկուց պատ-

ճառ.

ճառաց ։ Մի՛ զի կարծէին, թէ սոյն այս աստղ տիրէ 'ի վ̃ր առաջնոյ ժամու չորեքշաբաթի աւուր ։ Իսկ երկրորդ՝ զի համարէին՝ թէ այս աստղ իցէ մերկուրիոս յա̃ծն, այն է հերմէս յա̃ծ բարեբաղդութե՛ն և ճոխաբանութե՛ն, և պատգամաւոր այլոց յա̃ծոց ։ Իսկ քանզի կարծէին՝ թէ 'ի նահանջել մարդոյ զընդդիմութի՛ն բաղդի յաւուր երեքշաբաթի՛ 'ի հետևեալ աւուրն ունի գտանել զյաջողութի՛ն բաղդի և վաճառաշահութե՛ն, յայս սակս զօրս զայս նուիրեցին 'ի յա̃ծ բարեբաղդութե՛ 'ի հերմէս իբրև 'ի պատգամաւոր յա̃ծոց և իբրև 'ի նպաստամատոյց ։

Իսկ եկեղեցիք քրիստոնէից արևելեան կողմանց նուիրեցին զօրս զայս 'ի պատիւ պաշտաման թագուհւոյն երկնի և երկրի. և այս՝ վ̃ս երից պատճառաց ։ Մի՛

զի

զի աւանդի 'ի բազմաց , թէ 'ի սմին աւուր եղև աւետումն նր̅ . յորում անպարագրելի լոյսն պարագրեցաւ յորովայնի նորա . որով և կայուցաւ նա յայսմ աւուր ճշմարիտ մայր այ̅ . յոր միտ ասի 'ի շարականի . * 'Ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն , ետ զաւետիսն կուսական , թէ լոյսն որ ոչ բովանդակի , 'ի քեն մարմնով պարունակի || :

Երկրորդ՝ զի ը̅ այլ իմն տեսութե̅ ( ո̅պ եդաք այժմ յաւանդելոյ յայլոց ) , զք̅ 'ի լուսոյ կազմաւորեցաւ այսօր արեգակն յերկինս , որպէս 'ի սր̅յ կուսէն իբր յիմանալի լուսոյ կերպարանեալ եղև մարմին իմանալի արեգականն 'ի լուսաւորել զխաւարեալս սկզբնապատիր մեղօք :

Երրորդ՝ զի որովհետև եկեղեցի ոչ պատուէ զհրեշտակս յերկուշաբաթի , և զնահապետս հին

եկե-

եկեղեցւոյ յերեքշաբաթի, նաև վասն յովհաննէս՝ որ եղև յաւարտման հնոյն և 'ի սկսման նորոյս, այս 'ի մատչիլն անդ 'ի յարգութն ՚որց Նոր օրինաց, արժան համարեցաւ նախ առաջին պատուել զմայրն այսր նորոգութե տուանձին աւուրբ յոմ եօթնեկի · զոր յոյնք մասնաւորապէս վերածեն 'ի պատիւ ցաւուց նր ։ Նաև լատինացիք այլով իմն խորհրդով յօրն շաբաթու փոխադրեցին զայս պատուադրութն ։ Իսկ զօրն չորեքշաբաթի կարգեցին յապաշխարութն և 'ի կրթութն առաքինութեց ։ Նաև զգերագանցութի անհաս փառաւորութե որբ ծածնին՝ և զպաշտամանց նր , տես 'ի մասնաւոր Ճառս նորին , զոր յօրինեցաք 'ի պատիւ բարձրութե նորուն ։

# ՀԻՆԳՇԱԲԱԹԻ :

Աւրհնեալ ՚ի պատիւ յեղատանէն ած առաքելոց :

Օրս այս է հինգերորդ զկնի միաշաբաթու . ուստի և կոչի հինգշաբաթի , կամ ըստ յունաց բէմբդի , յն հինգերորդ օր . յորում աւուր արար ած զթռչունս քաղցրախօսս յօդս , և զձկունս վայելչալողակս ՚ի ջուրս՝ բազմատեսակ և բազմահրաշ՝ փոխանակ իմանալի երկնային թռչնոց, յն հրեշտակաց . յորում և երևեցաւ ամենահրաշ կարողութիւն արարչին : Ուստի և օրս այս ՚ի կողմանէ իւրմէ կարգի ՚ի գովութիւն ածային ամենակարողութեան . և ըս հետևութեան ՚ի պատիւ այնոցիկ՝ որովք սփռեցաւ քարոզութիւն ամենակարող զօրութեան նր . յն են առա

ռաքեալքն · զորոյ ունիմք ասել այժմ ։

Զօրս զայս կոչէին հեթանոսք յանուն երկրորդ մոլորակի (ըսկըսեալ յերևակէ) որ՝ լուսընթագի · և այս՝ վն երից պատճառաց ։ Մի՝ զի համարէին թէ այս աստղ տիրէ 'ի վր առաջնոյ ժամու հինգշաբաթի աւուր ։

Երկրորդ՝ զի կարծէին, թէ մարդ յայսմ աստեղէ ընդունի զբարեխառնութի 'ի բարեկարգութի մտաց և լեզուի · զորս առնու ասէին 'ի փայլածուէ · և զի զչորեքշաբաթի տային փայլածուին, զհինգշաբաթին ետուն լուսընթագին ։

Երրորդ՝ զի առասպելէին, թէ այս աստղ իջէ յովիս կին իւպիտեր չստծն · այն է արամազդ, որ և դիոս կոչի · և կարծէին՝ թէ սա կացեալ ընդ մէջ չստծոց և մարդկան՝ թագաւորէ 'ի վերայ

նչ̃ . և զի հինգշաբաթի օրն 'ի միջինս է այլոց աւուրց եօթնեկի , նմա ընծայեցին զսա իբրև զգահաւորակ այնր , որ լցէ թագաւոր չա̃ծոց և մարդկան :

Իսկ եկեղեցիք քրիստոնէից կարգեցին զսա 'ի պատիւ երկոտասան առաքելոց եւս և աշակերտաց ն̃ն : Ո̃ զի յետ յարգելոյ զտօնս հին օրինաց , և զկնի փառաւորելոյ զս̃բ կոյսն իբրև մայր նորոյս , 'ի սկսանիլն յարգել զտօնս եղեալս 'ի նոր օրէնս , նախ արժան էր յայնոսիկ վերածել զայս յարգութի̃՝ որք եղեն հիմունք և սկզբնաւորիչք նորոյս , ո̃պէ երևեցան և կարգեցան ս̃բ առաքեալքն , և աշակերտք ն̃ն : Սոքա հարազատ հարք մեր և ծնօղք հոգևոր երկամբք . սիւն հաստատութե̃ հաւատոյս մերոյ և դաստիարակք բարեկրօնութե̃ : Սոքա ըստ գրելոյ ս̃բյն գրիգորի

նա-

նարեկացւոյն . * Թէպէտ ըս-
տուգապէս մարդք , բայց հրեշ-
տակք հաւասարապէս՝ բացա-
կայք յերկրային կրից . յաջողա-
կան աջով անեղին ծնագրեալք .
ամենակալ ձեռինն յոր օրհնե-
ցեալք՝ի գովել աւուրն համ-
բարձման . խումբ համարոյ պատ-
կանաւոր . խորհրդական թիւք
երկոտասան , գերամբարձ իմաս-
տից վերբերիչք . անսպառելի
աղբիւրք անհատահոսք՝ վտակա-
ցեալք յիմանալիս և յանիմանա-
լիս . ամենապերճ դատաստանի
՚ի սոսկալի աւուր նորոգման .
ախտից և մահու վշտաց տխրութե
՚ի հրամանէ էին յաղթականք .
խրթնածածուկ բարբառոյ լե-
զուք . օտարացեղ ձայնից յայտ-
նուտիք . աներևութից բացերև-
մունք . ընդարձակեալք՝ի զօրու-
թիւս , և առատացեալք յայցե-
լութիւս . կենդանարար կամաց

բարձրելոյն հաճոյական յիշատա-
կարանք. անյեղաշրջելի պատ-
գամաւորութեանց տխրագրոշմ
կտակարանք ‖:

Ընդ սոսին և այլ աշակերտք,
* Եօթանասուն բոյսք արմաւե-
նեաց 'ի նշան անուանն յաղիմայ.
ճծազգեայք՝ ժմ գոյիւ կատա-
րեալք. իսկապէս շնորհիւ պա-
տարագեալք. ապէնիազ պար-
գևօք լցեալք. եօթանասնեկի
երկակի լեզուաց այլասեռն ձայ-
նից 'ի մի տեսակ խօսակցութե հա-
մահաւաքիչք. բաժանելոյ յոգ-
նակի ազգաց անսասանելի շաղ-
կապք սիրոյ՝ դասք և դասապետք
վայելչական պարուց. տիեզերաց
երկրի դատաւորք. գումարք թա-
գաւորաժառանգք կայսերաց.
ինքնակալ պետութիք իշխանա-
կանք. գունդք գեղեցկագեղք.
նախարարք ազանց պատուելոց ‖:

Ո՛հ 'ի յիշատակ պատուոյ այս-
պի-

պխսեաց ընծայեցաւ օրս այս ։ Ա-
սորիք եւ ըստ մեզ առնեն, բայց
կարգեն միանգամայն եւ առ այլ
ամ̃ սուրբս ։ Սոյնպէս եւ յոյնք
թէպէտ ը̃ մեզ նուիրեն, բայց
յաւելուն եւս կարգել 'ի յիշա-
տակ նիկողայոսի հայրապետին ։
Իսկ լատինք ընծայեն 'ի պատիւ-
ոբ հաղորդութե̃ ։

## Ո Ւ Ր Բ Ա Թ ։

### Նուիրեալ 'ի պատիւ եւ 'ի յիշատակ խաչելութե̃ն Ք̃ի ։

Օրս այս վեցերորդ է զկնի միա-
շաբաթու. վ̃զի եւ յոմանց վեց-
շաբաթի կոչի. յորում աւուր
արար ա̃ծ զա̃մ ցամաքային կեն-
դանիս հանդերձ ամ̃ զեռնօք եւ
սողնովք. եւ յետ ամ̃ի ստեղծ
զմարդն 'ի պատկեր եւ 'ի նմանու-
թ̃ի իւր, լի ամ̃ շնորհօք, եւ կա-

տարերց իմաստութեամբ իւրև զլրումն
գործոց իւրոց, և եդ զնա 'ի դր-
րախտին իբրև Թագաւոր ամի՝
զորս արար: Ստեղծ ապա 'ի կո-
ղից նորա զԵւա օգնական նմա,
և ընկեր: Ասէ յայսմանէ օրս
այս 'ի կողմանէ իւրմէ կարգի 'ի
գովութի կենդանական զօրութեն
այ և անսահման իմաստութե նր
որ սքանչելի ևս ցուցաւ յերկրոր-
դում արարչութե. զորմէ խօսեա-
ցուք այժմ:

Որս այս առ բաղում ազգս ու-
նի զանանձին և զյատուկ անուն.
առ եբրայեցիս 'ի հասարակի կո-
չի եէօմ սինի, այն է վեցերորդ օր
շաբաթու:

Առ յոյնս օր վեցերորդ, և յա-
տուկ անուամբ բառասդէւի, որ
նշանակէ նախապատրաստութի.
Իբր որում օրս այս կարգի 'ի պատ-
րաստութի առ օրն շաբաթու:
Առ ասորիս կոչի ըռուփթու, այն է

լրումն

լրուածն կին դուստր . և այս ըստ երկուց , մի՝ զի 'ի սմին աւուր լրացաւ գործն այն . և մի ևս՝ զի 'ի նոյն դուստրին այլ աւուրք եօթնեկին յետ շաբաթու ։

Ու արաբացիս կոչի Ճրուպէթ . որ նշանակէ ժողովումն . որոյ փոխան արդի արաբացիք 'ի կիր առնուն զբառս Ճիւմա . որ զնոյն նշանակէ ։

Ու Թուրքս ևս կոչի Ճիւմա . և այս բառ ծագի 'ի Ճիմ բառէ , որ նշանակէ ժողովումն . ըստ որում սովորութիւն է առ նոսա յայսմ աւուր յատուկ իմն պաշտամամբ ժողովիլ 'ի մզկիթս և 'ի հանդիսութիւն ։

Ու պարսիկս ասի ադինէ . եղև 'ի բառէս ադին , որ նշանակէ հանդիսութիւն . և Թուրքերէն զիննէթ կամ տօնանմա . ըստ որում սովորութիւն է առ նոսա հանդէս կատարել յաւուրս յայսմիկ ։

Ու

Առ մեզ կոչի ուրբաթ. զորմէ ասի 'ի գիրս ուրեք, թէ պատու-գաբանի օր բօլթ. բայց թուի թէ այս բառ առեալ է յասորւոց լեզուէ՝ յանուանէս ը՛ռուպաթ, որ նշանակէ կապ, կա̃ բովանդա-կումն. ը̅ որում լրումն գոր-ծոյն Այ̅՝ զորս արար՝ 'ի սմին աւուր կատարեցաւ, ը̅ս բովանդա-կեցաւ:

Զօրս զայս կ'չ'ին հեթանոսք յանուն հինգերորդ մոլորակի (սկսեալ յերեւակէ) որ արուսե-կի. և այս՝ վս̅ երկուց պատճա-ռաց: Մի՝ զի համարէին՝ թէ սա տիրէ առաջին ժամու ուրբա-թուն: Եւ երկրորդ՝ զի կար-ծէին, թէ սա իցէ վէնէրէ կամ վենուս չա̅ծուհին. որ առ յոյնս աֆրոտիդի ասի, այն է ափրոդի-տէ. իսկ առ մեզ աստղիկ լսի՝ իշխող փափկութե̅ և սիրոյ. և զի զայս օր տային փափկութե̅, սմին

իրէ

երբ 'ի պատիւ չա̃ծաւհւոյն փափ-
կուն նուիրեցին զսա :
Իսկ եկեղեցիք քրիստոնէից առ
հասարակ փոխանակ փափկուն
կարգեցին զսա 'ի պատիւ և 'ի յի-
շատակ չարչարանաց և խաչելու-
թեան ք̃սի · վ̃ն զի 'ի սմին աւուր
եղև նմա կրել զչարչարանս և
մեռանել վ̃ն մեր 'ի վ̃ր խաչին ·
'ի սմին աւուր ետ զկեանս իւր
առ 'ի կենդանացուցանել զմե-
ռեալքս մեղօք · 'ի սմին աւուր
եհեղ զարիւն իւր , զի բժշկես-
ցէ զմեզ 'ի մահաբեր հիւանդութ̃ե
մերմէ · 'ի սմին աւուր մատուցաւ
պատարագ , զի հաշտեցուսցէ
զմեզ ը̃ հօրն երկնաւորի : Սմին
իրի արժան է մեզ 'ի սմին աւուր
յիշատակաւ այսպիսի մեծի ե-
րախտեաց ն̃ր շնորհակալ լինե-
լով զնմանէ՝ մանաւոր իմն փու-
թով հոգ տանիլ 'ի ձ̃նչել զախտս
մեր և զապստամբութ̃ի մարմնոյ

մե-

մերոյ վ՟ն սիրոյ Նորա՝ որ այսչափ սիրեաց զմեզ ։

# ՇԱԲԱԹ

Կարգեալ 'ի պատիւ ս՟ց հայրապե-տաց , մարտիրոսաց , խոստովանողաց , ճգնաւորաց , կուսանաց , և այլոց ս՟ց ։

Օրս այս է վերջինն աւուրց եօթնեկի . յորում աւուր հանգեաւ ա՟ծ յա՟մ գործոց իւրոց . զ՟ի եթէ դադարեցաւ 'ի գործելոյ զնորատեսակ իրս . և վ՟նկ կոչեցաւ սա յեբրայեցւոց շաբաթ . որ թարգմանի հանգիստ ։ Զայս իսկ մասնաւոր պատուիրանաւ հրամայեաց ա՟ծ որդւոցն Ի՟ղի՝ հանգիստ առնուլ 'ի սմա՝ դադարելով յարտաքին ծառայական աշխատութեց ( զորմէ տես 'ի կիւրակէն ) ։ Եւ այս էր նշան ինչ յու-

յուսոյ յաւիտենական հանգըստեան • որք գնին 'ի շարականի :

'Ի սմին աւուր հանգեաւ և որդին Աստուծոյ յերկրորդում արարչութեն, ոչ յամենայն գործոց իւրոց, զի այս հայի 'ի յարութեան նորա* ( որ եղև յաւուր միաշաբաթի ), այլ յամենայն աշխատութեանց իւրոց • որոց աւարտեալ՝ թաղեցաւ մարմնովն 'ի գերեզմանի • և հոգւով էջ 'ի դժոխս • և վերածեալ անտի զհոգիս արդարոց՝ պարգևեաց նոցա զյաւիտենական հանգիստն :

Օրս զայս կոչէին հեթանոսք յանուն առաջնոյ մոլորակի՝ ըսկսեալ 'ի վերուստ՝ որ Երևակն • և այս՝ վասն երկուց պատճառաց :

Մի՝ զի համարէին, թէ նա իշխէ 'ի վերայ առաջին ժամու աւուր շաբաթու : Եւ երկրորդ՝ զի առասպելէին, թէ այս աստղ՝ իցէ սատուրնոս չաստուածն՝ այն է կռոնոս չաստուած •

չ̃տծ . կմ̃ ը̃ յունականին դռօնոս տուօղ հանգստեան . և զի յաւանդութ̃է երբայեցւոց համարէին զօրս զայս օր հանգստեան , ամին իրի 'ի չ̃տծ հանգստեան ընծայեցին զսա :

Իսկ եկեղեցիք քրիստոնէից յարևելեայս կարգեցին զսա 'ի պատիւ այնոցիկ ս̃րց՝ որք փայլեցին զհետ առաքելոյ . որպիսի եղեն հայրապետք և մարտիրոսք , խոստովանօղք և Ճգնաւորք , կուսանք և այլ ս̃րք :

Իսկ ասորիք կարգեցին զսա 'ի յիշատակ ննջեցելոց , ո̃պ արևմտեայք 'ի պատիւ ս̃ր կուսին :

Պատճառ պատիւ ընծայելոյ մեր այսոցիկ ս̃րց , ես և նահապետաց և մարգարէից , առաքելոց և աշակերտաց , երեքկին է :

Մին է այս , զի արժանի են մեծի պատուոյ և յարգութ̃է . որովհետև կան 'ի փառս արքայութ̃է 'ի

ժա

ժառանգութե՟ն անստեղծ էին , փոխարկեալք 'ի նա իմանալապէս , և նմանեալք նմին սքանչելապէս ․ ա՟մքն ա՟ծայնացեալք և իբրև ա՟ծացեալք ։ Երկրորդն է այս , զի երախտաւորք են մեզ ․ վ՟ն զի իւրեանց քարոզութ՟բ և գրութ՟բ , սրբութ՟բ և համբերութ՟բ , ևս և հեղմամբ արեան զօրացուցին զհաւատս մեր , և հաստատեցին զեկեղեցի ն՟ր ։ Երրորդն է այս , զի են բարեխօս վ՟ն մեր ․ և իւրեանց բարեխօսութ՟բ ցուցանեն մեզ զճանապարհ առ յա՟յ ․ քանզի հասեալ ն՟ց յաղբիւրն ա՟մ բարութե՟ն՝ զմեզ ևս կամելով հաղորդս առնել այնմ , ոչ կասին յառնելոյ՝ զոր կարեն ։ Լուսինն 'ի ժառանգել զլոյս յարեգակնէ, 'ի լրանալն անդ՝ ոչ կարէ չհաղորդել մեզ զայն ․ որչափ ևս ս՟րք 'ի ժառանգել զանստեղծ լոյսն , և 'ի լրանալն նոցա ։ Ուա-

փան-

փանցիկ ապակի 'ի հաղորդելն լուսոյ՝ հաղորդէ և այլոց . սոյնպէս և մեք 'ի ձեռն երանութե՟ն լեալք իբրև զմաքուր ապակի , և ընկալեալք յինքեանս զփառս ա՟յ , իւրեանց թափանցկութ՟բ , զ՟ն իւրեանց բարեխօսութ՟բ միջնորդ լինին ժամանելոյ առ մեզ ա՟ծային բարութե՟ն ։

# ՀՐԱՀԱՆԳ Բ.

## Եօթնեակ բանք մաղթողական աղօթից վասն եօթն աւուրց շաբաթու ։

Աղօթից գերազանցութիւն եւ զօ-րութի̅ մեծագործութեան եւ հարկա-ւորութի̅ յո̅մ ասացից դրուա-տէ ։ Գերազանցութի̅ նորին 'ի բազումս է, բայց մանաւանդ յայսմ՝ զի միաւորէ զհոգին ընդ Ա̅յ ։ Զի̅ զի թէպէտ սէրն է՝ որ միաւորէ՝ եդեալ զհաստատուն իբր յայտ-նիչ սիրեցելոյն, բայց ներգործութի̅ վերացուցանող հոգւոյն առ Ա̅ծ, եւ գործադրաբար իմացուցանօղ սիրեցելոյ աստուածայինն՝ է աղօթքն, որով իմացակա-նապէս միաւորի հոգին ընդ Ա̅յ ։ Ես-բառ այսմ աղօթքն ասէ դամասկեր այնր սքանչելի ա̅ծային դեսութիւն, զոր ծա-ռանգէն ա̅բք յերկինս, եթէ կատարեա-

ցի բարկութ . Իսկ եթէ լինի պաշտաաու-
րութէ, ասէ սուրբեր նորին, ըստ որում
ունի չեւ ինչ այնր, թէպէտ եւ թափուր:
Զօրութիւն աղօթից բազում է, եւ ըստ
ասելոյ ոմանց՝ գրեթէ յանբաւս եւեր .
Զի դի կարօղ է նահանջել զբարկութիւն ամե-
նակալին, եւ ախոյեան եղանել ընդդէմ
բարկութեան Նր . որպէս ասէ աղօթքն մով-
սէսի : Բանայ զերկինս, պատառէ
զերկիր . ծառայեցուցանէ զհրեշտակս .
սարսեցուցանէ զդևս . ողջացուցանէ
զհիւանդութիւն հոգւոյ . աղաջինէ զխօ-
թութ մարմնոյ . յարուցանէ զմեռեալս .
երկայնէ զաւուրս կենաց . ազատէ ՚ի
հալածչաց . դադարեցուցանէ զհար-
ուածս . դարձուցանէ զգերութիւնս :
Եւ եւս՝ մխիթարէ զհոգին . լուսաւո-
րէ զմիտս . հանդարտեցուցանէ զզօ-
րութիւն սրտի . շիջուցանէ զբորբոքումն
փորձութեց . խաղաղացուցանէ զկեանս .
ցուցանէ եւ զայլ բազմադիմի եւ զարմա-
նալի գործս որպէս յայտնի աւանդի ՚ի
սուրբ գիրս, եւ յեկեղեցական պատմութէս:

Հար-

Հարկաւորութե̅ աղօթից 'ի մէջ գլխոց տեսանի, բայց մանաւանդ յերկրէ։ Մի՝ 'ի վիճակէ տարի նեղեաց. զի մեք չև եմք հասեալ 'ի հայրենիս մեր, կամ տառասցեալ՝ 'ի նաւահանգիստ երկնից յերկրէն. այլ նաւեմք յալէկոծութե̅ նեղացագոյս. և քանզի աղօթքն է դիւրաշարժութե̅ առաջ- նորդօղ յերկինս, որպէս հարկաւոր է ղեկ նաւելոյ՝ այսպէս և մեզ աղօթք ։ Երկրորդ՝ 'ի հանգամանաց թշուառութե̅ մերոյ. զի̅ չեմք աղքատք առ հոգևորս, սովեալք և կարօտեալք. ապա որպէս հարկաւոր է հաց՝ սովելոց, և ստաց- ուած՝ կարօտելոց, այնպէս և մեզ ա- ղօթքն, որ է հաց հոգևոր, և ստաց- ուած առ ճեմն պատրաստ ։ Երրորդ՝ 'ի կարևորութե̅ յանդգնացեալ բնութեն մե- րոյ. վասն զի կամք 'ի խաւարի տգիտու- թե̅, և շրջեմք 'ի ստուեր տարակու- սանաց. ապա որպէս հարկաւոր է ճրագ 'ի խաւարի, և խորտ տարակուսելոց, այնպէս և մեզ աղօթք. որ է ոսկե- ծայլ ճրագ՝ լուսատու հոգւոց և մար-

## Մանաւանդ խորհրդարանու պարտաճանաչութեան Մասին :

Եւս արդ ջանալի այսպէս էին է աղօթք, ամենայն յիմի այսն աղաւաղանէն : Եւս չէ Եղմ ոչ կարեն ենթնեն կատարել զայսն, ’ի նպատ նոյս Եղմ եառաւամ գերս աղօթեց յօրէնէցէն . որոց այնպիսութի եէրն այնպէս ծաղկանց անուշահոտութի՝ ոմանց յայսմ երկին ախորժելի՝ եւ ոմանց յայնմ : Ընդ սոսէն շարահիւսել եւ չայլ ջանէ մի՝ աղօթս անդէպ ենչ ոչ համարելով՝ յօժարեցայ յաւելուլ նախ դէօթն աղօթս յայսմ հրահանգութե՝ զմի ասելոյ յիւրաքանչիւր աւուր եօթնեկի. եւ ապա չայլ եւս եառաւամ աղօթս ըստ այնպիսի կարգաց :

# ԱՂՕԹՔ ՚Ի ԿԻՐԱԿԷԻ ։

Օրհնութիւն առ Տէր ՚ի յայտարարութիւն
արարչագործութեան առաջնոյ աւուր ,
հանդերձ խնդրուածովք ։

Լոյս անքննին , ինքնութիւն անեղ, անհաս էութիւն , անսահմանելի բնութիւն , անբաժանելի միասնական սբ Երրորդութիւն , օրհնեալ գովեալ և փառաւորեալ յաւիտեանս ։ Քո են երկինք , և քո է երկիր . և զոր ինչ դու արարեր , յոչ գոյից ՚ի գոյ ածելով յաւուրս յայսմիկ . ստեղծագործելով միանգամայն և զլոյս ՚ի ցուցակութիւն յայտարարութեան երևելեացս ՚ի փառս արարչագործ ամենահաստիչ զօրութեանդ ։

Եւ յերկրորդումն արարչութեան համագոյակից բանդ հօր և սբ հոգւոյն եկեալ ՚ի նորոգութիւն

հնուն՝ 'ի սմին աւուր յարուցեն ինքնապանծ ազատութ̅, լոյս ծագեցար նստելոցս 'ի խաւարի և 'ի ստուերս մահու ։ Դու ելեալ յերկինս փառօք՝ առաքեցեր այսօր զփառակլից և զմխիթարիչ ս̅բ զոգիդ , 'ի հաստատել զնոր քո եկեղեցի ս̅բ 'ի վէմդ կենդանի , ևս և 'ի հրատարակել զօրէնս շնորհաց , և յաւետաւորել ազգաց 'ի ձեռն աշակերտաց զյարութի կենաց որում ակն ունիմք հասանել 'ի տ̅րունեան աւուրս ։

Յայսքան և յայսպիսի մեծամեծ բարերարութ̅ս մարդասիրութե̅ քո վայելեալ իմ և զմայլեն, անդստին անդնդային խաւարաւ մեղաց պատեցայ և պաշարեցայ թշուառականս . և անդրէն միւսանգամ յապականութե դարձեն կամաւ կորացայ և ածայ յոչէութի հոգևորական վիճակի և գեր-

բնա-

բնական կենաց ։ Այլ դու տէր ամենակալ՝ կալ զիս կրկին , ընդկալ վերստին . և հաստատեա՛ 'ի գոյաւորութիւն կենդանութեան հոգւոյ . և լուսաւորեա՛ լուսով ամենակեցոյց յարութեան քո զընկղմեալս 'ի խոր խաւարի ։ Տո՛ւր և զկենդանարար տէր զհոգիդ 'ի նորոգութիւն օրինաց մտացս խղճի , անարատ սրբութեամբ մատուցանել քեզ այսօր և զամենայն աւուրս կենաց իմոց զծառայութիւն իմ՝ հանդերձ պատարագաւ օրհնութեան , և արժանաւոր գտանիլ առ քեզ ժամանելոյ յաւուրն յետնում յանապական և յանմահական կեանս . և օրհնել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ յաւիտեան և յաւիտեանս . ամէն ։

## ԱՂՕԹՔ ՅԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ .

Գոհութիւն առ ա՟ծ ՚ի յայտարարութիւն արարչագործութեան երկրորդ աւուր, հանդերձ հայցուածովք .

Տէր տ՟ր զօրու՟եց և արարիչ ա՟մ լինելու՟եց . դու ինքն ինքնաբաւ բարու՟ին . դու ինքն ամենիշխան տ՟րու՟ին . դու ինքն ամենահայեաց տեսչու՟ին . դու ինքն տ՟ր յաւուրս յայսմիկ զջուրս ՚ի ջուրց բաժանելով ՚ի վերին և ՚ի ստորին՝ սահման կարգեցեր ՚ի միջի զտարածու՟ին օդոյ ՚ի հաստատու՟ին : Որով զհողեղինացս էու՟ին յիմանալեաց անտի անջրպետեալ ցուցեր, եդեալ ՚ի միջի իբր հաստատութ՟ի ամենազօր հրամանաւդ զբարձրու՟ին երկնից : Քեզ փառք և գովու՟ին, և յա՟մ բանաւորաց օրհնու՟ին և երկրպագու՟ին յաւիտեանս յաւիտենից : Քո է տ՟ր

կա

կարողութիւն, և քո ամենազդու զօ-
րութիւն . դու սկիզբն ամենայնի և վախ-
ճան ամենայն : Դու միայն ես, դու
միայն Տէր՝ դու միայն բարձրեալ
յամենայն յաւիտեանս :

Դու ինքն Տէր Աստուած իմ յափշտա-
կեա՛, բաժանեա՛, և վերացո՛ ըզ-
խորհուրդս չորից մտաց իմոց 'ի
ստորայնոց աստի չորից յերկրա-
քարշ յօժարութեանց ընդ անջրպետու-
թիւն վերնայնոց 'ի տեսութիւն սքան-
չելի բարձրութեան քո . և միացո՛ ընդ
լուսափայլ խորհուրդս անմարմ-
նոց, ճանաչել ճշմարտութեամբ հա-
ւատոյ զփառս քո . և ընդ նոսին
օրհնել, գովել, և փառաւորել
զամենասուրբ զերրորդութիւնդ . և
ըստ նոյին կարգի կատարել զհա-
ճոյս կամաց քո : Յամենայնի զքեզ
խնդրել, յամենայնի զքեզ սիրել,
յամենայնի զքեզ պաշտել : Զքեզ ծա-
ռայել, առ քեզ դիմել, 'ի քեզ
յուսալ, 'ի քէն առաջնորդիլ,

զքէն

զքէն խորհիլ և խօսիլ, զքև յամ-
նել և գործել, զքև փարիլ և
բերիլ, ՚ի քեզ ցնծալ և բերկ-
րիլ ։ Վն սիրոյ քո սիրել զսիրե-
լիս և զատելիս . վն սիրոյ քո տա-
նիլ վշտաց և թշնամանաց . վն
սիրոյ քո խորշիլ ՚ի չարէ, և առ-
նել զբարին ։

Կարողացո զիս Տր ՚ի սոսին , և
հաստատեա զանձն իմ յամ
յայսոսիկ . և յաջողեա ինձ յա-
ւուրս յայսմիկ ՚ի սկսանիլ եօթ-
նեկիս՝ սկիզբն առնել բարւոյ՝
նորոգութե կենաց . և ժամանել
լիութե ՚ի լրումն ընթացից ա-
ւուրցս ՚ի փառս միայնոյ տնօրէնդ.
որ ես օրհնեալ յաւիտեան ։

## ԱՂՕԹՔ ՅԵՐԵՔՇԱԲԱԹԻ ։

Խոստովանութիւն ախտացելոյ անձին ՚ի վերայ մեղաց, հանդերձ յայտարարութեամբ արարչագործութեան երրորդ աւուր ։

Ընկերպարան տեսութեան անձինս մեղօք վարակելոյ՝ յանհնարին տխրութեան մաշէ զիս ։ Ոչ տեսանել յիս՝ ոչ զգաստութեան մտաց, և ոչ զգուշութեան կամաց, ոչ ուղղութեան բանից, և ոչ ամբծութեան գործոց. և ոչ կարգաւորութեան գնացից, և ոչ արթնութեան ընթացից. ոչ արուեստաւորութեան նաւարկութեան վարուց, և ոչ թեւարկութեան լուղարկութեան կենաց. ոչ խոհականութեան խորհրդոց, և ոչ որոշողութեան ընտրութեանց ։ Յամի վատթարեալ և վայրենացեալ. յամի յիմարեալ և տրորեալ. յամի խաւարեալ և խարխափեալ. յամի վարանեալ և տարտամեալ. յամի վարակեալ

և

և փայլատակեալ: Ոչ լոյս երե-
սայ յերկնաւոր Թագաւորէդ,
և ոչ այցելուն դիմաց յամենար-
դար դտ͞ւորէդ: Ամօթ անհնա-
րին իջեալ պատե͞լ է զինև. զի
յամենաբարերար խնամոցդ յան-
չափս գթասիրեալ՝ չափ մի ոչ
ցուցի երախտեացդ մեծի. յերկ-
նային անձրևացդ առատ ոռո-
գեալ իբր անբեր երկիր՝ խոպա-
նացեալ գտայ. խրատեալ առ՚ի
քէն բզ͞մ մասամբք և բազում
իրօք՝ յամի անսաստ երևեցայ:
Այցելութ͞եդ քում անպգաստ
Է͞արմացեն մնացի. և ՚ի խօսիլդ
Է͞ էս ՚ի ներքուստ՝ ՚ի վ͞դ եկի,
և ապառումն պատասխանեցի:
Առ քեզ գոչել ոչ համարձա-
կիմ, և առ ս͞րբս քո դիմել ոչ ի-
ւիք վստահիմ. ՚ի գոչելս իմ սա-
տիմ, և ՚ի դիմելս իմ քարկոծիմ:
Առ գումարու͞ն մարգարէից ա-
պաստան եղեալ՝ ՚ի պատգամաց

նո-

նոցին կոչկոճիմ և կոծիմ, առ նահապատացն գունդ, և առ հայրն հաւատոյ բողոք արձակեալ՝ 'ի հայեցուածոյ նոցին տարագրիմ և մերժիմ. առ յառաջընթաց բարեխօսութեան կարապետին քում յովհաննու ապաւինեալ՝ 'ի սպառնալեաց հեծանոցասաստ բանից նորին կասիմ, հոսիմ, և ջնջիմ ։ Այլ դարձեալ վերստին յոյս առեալ վստահութեամբ 'ի յուսադիր յորդորանաց նոցա՝ նոցին խրախուսանօք առ տմյն տրդ. բարձրաձայն աղաղակեմ ։ Դու տր տր՝ որ զմմ անձկութեան դառնութեան հոգւոյ իբրև զխաւար փարատես, և զմմ դժնդակութեան խստութեան սրտի՝ իբր զմէգ ցրուես, փարատեա՛ աղաչեմ զվարանմունս իմ. և ցրուեա՛ զտագնապ վրդովութեանս ։ Խնայեա՛ յիս. ողորմեա՛ ինձ. և ցոյց առ իս ըղքաղցրութիւն մարդասիրութեան քո ։

Երկին աստանօր քաջալերս առեալ յարարչագործ բարերարութէ քումմէ՝ պաղատիմ և աղերսեմ առ հաստիչդ համայնից, և առ գոյացուցիչդ ամի · որ 'ի սմին անուր ամփոփեալ զջուրս 'ի ծով՝ զցամաքն երևելի կացուցեր · և զնոյն բազմազան տնկովք զարդարեցեր և պտղատու ծառովք վայելչացուցեր: Ըստ սոյին շքեղութե և 'ի հնումն անդ ամփոփեն զզանազան ազգս իբրև զջուրս, զազգ որդւոցն լուսոյ՝ իբր ընդրախտ բանաւոր բուսովք՝ նահապետական դասուք և մարգարէական պարուք բարեկարգեցեր · և 'ի լրումն հնութե առ պանծալի տնկագործութի նորոյս՝ ըզմեծն 'ի ծնունդս կանանց յառաջընթացութե պատրաստեալ բացածանուցեր:

Եւ այժմ աղաչեմ զքեզ տր,

դու

դու ինքն ազատարար հրմ̃նաւդ ամփոփեա՛ յինէն զամենահեղձոյց հոսանս ախտից ջուրց շըրջապատողաց զհոգիս․ և երկնային շնորհօքքո զարդարեա՛ բոլոր զանձն իմ․ և ամենապատիկ պարգևօք հոգւոյդ սբ̃յ՝ վայելչացո՛ զկեանս իմ։ Եւ 'ի ձեռն աղերսարկուե̃ ընտրելոց քոց նահապետաց և մարգարէից, և գոչման ձայնի յովհաննու կարապետի, ընկա՛լ զիս 'ի մասն վիճակի̃ոց քոց, փառաւորել ըղքեզ ը̃ նոսին յարքայութե̃ քում, և գոհանալ զքէն յաւիտեան ։

## ԱՂՕԹՔ 'Ի ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ ։

Յուսադրական գոհաբանութ̃ե առ ա̃ծ՝ յայտարարութ̃ե արարչագործութ̃ե չորր̃դ աւուր, հանդերձ մաղթանօք ։

'Ի քո ինքնաբաւ յամենիշխան տ̃րունիդ 'ի վեր ուղղեալ զանար-

ժան

ժամ զլիմ ծառայութն, տր տե-
րանց, ած ածոց. և յամենահասա
զօրութեն արարչական իշխանութեդ
յափշտակեալ մտայս խորհրդով
և 'ի հրաշագնին կարգ ձեռա-
կերտայդ ակն եղեալ և հիա-
ցեալ՝ մատչիմ առաջի ահաւոր և
անհաս բարձրութե բարեխնամ
թագաւորութեդ, օրհնել զան-
պարագրելի զիսկութն փառաց
ածութե քո, և գովել զանըմբռ-
նելի մեծութն անեղ և ահեղ
ինքնութեդ, և գոհութս մատու-
ցանել անկշռելի և անբաւելի
բարերարութե մարդասիրիդ:
Դու որ յաւուրս յայսմիկ սահ-
ման եդեր հաստատութե յաս-
տեղս երկնից 'ի լուսաւորութն
գոյից երևելեաց, և յազդումն
էից երկրաւորաց, յորոշումն ա-
ւուրց և ժամկաց և 'ի չափ ամաց
և եղանակաց: Ասացեր, և ե-
ղեն. հրամայեցեր և հաստատե-
ցան:

թան : Եւ յամի ցուցեր զամենա-
կարող զօրութիւն հրամանի քո՛
բարձրացեալ, մեծացեալ, յաղ-
թանակեալ, և փառաւորեալ :
Բարեկարգեա՛ բարեզարդեա՛ ա-
ղաչեմ և յիմանալի տաճարս
հոգւոյ իմոյ ’ի միտս և ’ի կամս
’ի հրամանատար վերինս մասին
իբրև երկնի ’ի լուսաւորել զստո-
րայնոյս տեսողութի, և ’ի ուղղել
զգայութեանս բերումն ’ի զգաստութի
’ի զգուշութի, և ’ի բարեյօժարու-
թի : Կառավարեա՛ կարգաւորեա՛
զքնաւոր և զքանաւոր շարժութի
անդէպ և անզուսպ գնացիս :
Կազդուրեա՛ խնամարկեա՛ զտկա-
րացեալ և զկարկամեալ ազդմունս
անձնիշխանութեանս : Յարդարեա՛
յօրինեա՛ զխախտեալ և զխոր-
տակեալ ներքին մասունս : Կան-
գնեա՛ նորոգեա՛ զխանգարեալ
և զխարխալեալ շինուած : Ե-
րացո՛ ամրացո՛ զանկեալ և զկոր-

ծանեալ տուննս ։ Հանդերձեալ յարմարեալ զեղծեալ և զապականեալ պատկերս ։

Ո՛վ լոյսդ անճառելի որդի ա͞յ կենդանւոյ հաստիչդ լուսաւորաց · դու որ 'ի սմին աւուր մաճառեցար խաւարելոց վ͞ն գնելոյ զիս , աղաչեմ զքեզ՝ ծագեա՛ առ հեռացեալս 'ի լուսոյ քո ընձռ͞ջյթ երկնային շնորհացդ · և փարատեա՛ 'ի գիշերացելոյս ընխաւարմանս աղջամղջին խորհրդոց ։ Կոչեա՛ առ քեզ 'ի մթանէ զսարտուցեալս 'ի խնամոց քոց · վստահացո՛ 'ի քեզ զտարակացելս 'ի յուսոյ քո · բորբոքեա՛ փչմամբդ 'ի քեզ զցրտացեալս 'ի սիրոյ քո · մերձեցո՛ առ քեզ զմերժեալս յերեսաց քոց · միացո՛ ը͞ն քեզ զանջատեալս 'ի գթոյ քո ։

Ե՛կ տ͞ր յ͞ս , եկ էջ բա՛նդ ա͞ծ նկարագիր էութե՛ հօր 'ի հոգի իմ · որ իջեր այսօր յարգանդ կուսին

աւե·

աւետեօք Գաբրիէլի ։ Տէր ինձ հովանի ամենագութ հայրդ երկնաւոր ․ որ հովանացար այսօր անարատ մօր միածնի քո ։

Մաքրեա՛ և զարդարեա՛ զսիրտ իմ կենդանարար ՚ս՛բ հոգի ․ որ մաքրապարդեցեր զորովայն կուսին ՚ի բնակութի քում էակցին ․ և հարսնացուցեր զնա այսօր քումդ անյեղական սրբութե ։

Ով ինքնաբուն բարութի և անճառ երանութի , օրհնեա՛ և զիս յաւուր յայսմիկ բարեխօսութբ ս՛բ ա՛ծածնին ․ և տաճարացո՛ ըզհոգի իմ ամենա՛սբ երրորդութեդ , և մի ա՛ծութեդ ․ որ ես օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

# ԱՂՕԹՔ 'Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ:

Պաղատանք առ Ած 'ի դէմս նեղեալ անձին, հանդերձ յայտարարուէ արարչագործուէ հինգերորդ աւուր:

Կեցո՛ զիս Ած, զի հասին ջուրք վշտաց յանձն իմ. և շրջանք անբերելի նեղութեանց պաշարեցին ըզհոգիս: Իջեալ կամ 'ի խորս տխրալից տրտմուե. և յանյատակ անդունդս տարակուսանաց տառապիմ: Յորձանք փորձանաց վըտանգեն զիս. և պտոյտք խեղդիչ խորհրդոց ընկլուզանեն ըզկեանս իմ: Խստուէք վիշապայ ծովու յուսահատութե կլեալ են զսիրտ իմ. և Թևաւորայ Թռիչք դիւական Թելադրութեանց յափշտակեալ են զմիտս իմ:

Եւ դու բազմագութ և բարեխնամ ամենահնար մարդասէր Տր, կարկառեա՛ զամենազօր բազուկ

զուկ քո յամենավարան գերիս .
ձգեա՛ զաշխարհակեցոյց ձեռն քո
յամենատատան ոգիս . ապրեցո՛
զանձն իմ յոգեսպառ և յոգե-
կորոյս վարանմանցս . ազատեա՛
յանել և յանհնարաւոր պաշար-
մանցս . արձակեա՛ յանզերծ և
յանլուծանելի չար կապանացս ։
Միթէ տկարանայցէ՞ աջ քո տ՟ր
'ի փրկել . միթէ չիցէ՞ բաւական
ձեռն քո 'ի կեցուցանել . միթէ
կարօտ ի՞նչ իցէ բան հրամանի
քո՝ 'ի կոչել և 'ի կորզել զանձն
իմ 'ի դժոխային անձկութ՟է ։ Դու
էացուցեր զա՟մ, և 'ի քէն է ա՟մ .
դու իշխես ա՟մի , դու դարմանես
զա՟մ . դու հաստատեցեր , դու կար-
գեցեր , դու պատրաստեցեր .
դու պարագրես զա՟մ . դու գրա-
ւես . դու խնամես . դու պահպա-
նես ։ Նու արդ չիցէ՞ դիւրին ա-
ռաջի քո և առ իս ցուցանել ըղ-
տիրելդ և զմարդասիրելդ . և ա-

մենաքաւական հրամանաւդ հա-
նել յապականութե ղոսկերս իմ։
Դու ինքն ամենակարող արա-
րիչդ ամենարուեստ Ճարտարու-
թբ քով գոյացուցեր 'ի սմին
աւուր 'ի ջուրս զձկունս մեծա-
մեծս և փոքունս, յոդնատա-
րազս և զզեռնասխալուղակս. և
'ի ջուրց անտի ստեղծագործե-
ցեր այսօր յօդս զթռչունս բազ-
մատեսակս և բազմաձայնս, գե-
ղեցկատեսիլս և քաղցրախօսս։
Որոց ամի տեսութի, և իւրաքան-
չիւր մասանց կնութի՝ քարոզ են
անսահման իմաստութե քո, և ան-
բաւ կարողութեդ։ Նաւ բարբառոք
նց յորդորումն են մարդկութե՝
յօրհնաբանութի փառաց քոց. ևս
և 'ի զգաստութի բարեկարգութե
անարատ վարուց բանաւորացս
և 'ի քաջալերութի յուսոյ՝ առ 'ի
բարձրելոյդ վայելչութի դատանե-
լոյ, և 'ի մարդասիրեդ խնամ

սե-

սիրոյ տեսանելոյ ։

Դու ինքն իմաստութիւն յաւիտենական կարգեցեր և յերկդումն արարչութեն զոր առաքեալս քո և զաշակերտս լինել ձկնորսս հեթանոսաց իբր ձկանց , և որսորդս հրէից իբր թռչնոց ։ Եւ ՚ի սմին աւուր ընդ նոսին բազմեալ յընթրիս պասեքի՝ կարգեցեր կազմեցեր սեղան խորհրդոյ մարմնոյ և արեան քո ։ Եւ յանդիման նց համբարձար այսօր փառօք առ հայր յերկինս ։

Եւ արդ հայեաց տր յայս ժմ և յայլ ժմ զարմանահրաշ մեծագործութիւն ամենակարող զօրութե քո . որով ուղղեցեր և ուղղես զբովանդակութիւն երկրիս համանգամայն ։ Հայեաց և յանձառելի մարդասիրութիւն քո . որով հաճիս և ախորժես ցուցանել առ որդիս մարդկան զգութ սիրոյ քո ։ Ցոյց աղաչեմ և առ իս զողորմութի քո մեծ .

մեծ · և հա՛ն 'ի վշտաց զանձն իմ ·
անդորրացո՛ 'ի գերութէ, ախտից
պղծոցի իմ · և հանդո՛ 'ի ծառայ-
ութէ մեղաց զկեանս իմ · փարա-
տեցո՛ յինէն զմթութիւն մտացս
խաւարի · և լո՛յս արա՛ ինձ 'ի խո-
րութէ մառախլապատս վայրի ։ Յա-
ժարեցո՛ զսիրտ իմ 'ի գործել ըզ-
բարիս, և արիացո՛ զիմ կարողու-
թիւն իմ 'ի ծառայութի երկնաւոր
թագաւորին · ուսո՛ ինձ լուղիլ
անարատ և անվտանգ 'ի ջուրս
փորձութեց, և թռչիլ թևօք մտա-
ծութեց 'ի Ճանաչութն մեծ վայել-
չութե քոյ և 'ի ծանօթութի բազմա-
պատիկ երախտեացդ · և ես որհ-
նեցից զքեզ զբարերարդ իմ
յաւիտեան ։

Ա․-

# ԱՂՕԹՔ ՚Ի ՅՈՒՐԲԱԹՈՒ ։

Գոհաբանութիւն առ Ած ՚ի յայտարարութիւն արարչագործութեան վեցերորդ աւուր ՚ի դիմաց անձին աղերսանօք գտելոյ առ բարերարութեան Այ ։

՚Ի լրումն ամենաբարերար առատաբաշխ անբաւ բարութեան և քաղցրութեան քո լցեալ լիացեալ՝ յամենայն սրտէ գոհանամ զքեզ, և փառս մատուցանեմ քում ամենակալ ամենապատակ սքանչելամեծութեանդ ։ Օրհնութիւն գովութիւն և փառաբանութիւն, ինքնահրաման, ինքնիշխան ինքնազօր, ամենայաղթ թագաւորութեանդ ։

Դու ինքն ամենահրաշ կարողութիւն․ դու ինքն ամենահաստիչ զօրութիւն․ դու ինքն ամենադրաւ տէրութիւն ։ Ամենևին և յամենի ինքնակատար իշխանութիւն․ ինքնահոսան առատութիւն․ ինքնաբաւ բա-

րե-

բերարուն՟ : Անհաս բարձրուն՟ . անբաւ գթուն՟ : Լիապատար երանուն՟ . ցանկալի ժառանգուն՟ . անպարագիր յաւիտենականուն՟ : Դու ամենառատ բարերար , կամելով քոյովդ միայն որ հաճուե՟ ստեղծագործել զմարդն , իբր պալատ բնակուե՟ նր՟ գոյացուցեր զերևելի զայս աշխարհ . և յետ զարդարելոյ զառաստաղ նորին զերկին , ևս զյատակ նորուն զերկիր՝ ամ՟ գոյիւք . էացուցեր 'ի սմին աւուր 'ի հրաշազննին վայելչուն՟ հողագնտոյս զբազմադիմի և զյոգնապիսի կենդանիս չորքոտանեաց, սողնոց և զեռնոց : Իսկ 'ի լրանալ ամ՟ պատրաստուե՟՝ առեալ հող յերկրէ՝ ստեղծեր այսօր զմարդն 'ի պատկեր քո և 'ի նմանուն՟ պանծալի : 'Ի հողոյ երկրի արարեր զնա , զի ծանիցէ՝ թէ ուր բնակի՝ անտի կերպարանի . ոմ՟ զի խոնարհեսցի : Պատ-

ուէ.

ուելով ապա զնա իբրև զթշ̃ր
երկրաւորացս ա̃մի՝ հրաժարեցեր
բնակիլ 'ի ներքին սենեկի 'ի դը-
րախտին փափկութ̃ իբր յորքու-
նիս ։ Այլ յանկանիլ ն̃ր, և յա-
պականիլ վիճակի նորին, և յեղ-
ծանիլ սկզբնական արդարութ̃ն
ճաշակմամբ պտղոյ փայտին յան-
ցանաց 'ի պատրանաց չարին, ա-
հա եհաս 'ի նա և յորդիս ն̃ր, և
յիս ը̃ն ն̃ա վճիռ յաւիտենական
դատապարտութ̃ ։ Իսկ դու բանդ
ա̃մծ ոչ տանելով տեսանել ըղ-
մարդն յայսպիսի խորայատակ
թշուառութ̃ իբրև զոչխար վայրե-
նացեալ և իբրև դրամ արքայա-
կան 'ի տասանց կորուսեալ, ոչ
արարեր անտես ․ այլ ինքնին ե-
կիր 'ի խնդրել և 'ի նորոգել ։
Դու 'ի սմին աւուր 'ի փայտ խաչի
բևեռելով, և 'ի նմին զդառնութ̃
մահու ճաշակելով՝ ազատեցեր
զնա և զիս ը̃ն նմա 'ի դատապար-
տու․

տուէ՟ անտի, յամօթ արարեալ
զպատրանս չարին ։

Իսկ ես անարգս և անպիտանս յա՟մի՝ ա՟մ իրօք ապերախտ գտայ ընդդէմ ա՟մի · փոխանակ քոյդ լինելոյ՝ չարին բաժին վաճառեցայ · փխնկ փրկու՟ն գտանելոյ՝ տարագրուե՟ հետևեցայ · փխնկ յարդարու՟ն հասանելոյ՝ անիրաւու՟ մաշեցայ ։ Փոխանակ զգաստանալոյ 'ի հոգիս՝ յիմարու՟ն համբուրեցի · փխնկ բերկրելոյ 'ի բարիսդ՝ 'ի չարիս պեղծայ · փոխանակ զքեզ պաշտելոյ՝ ախտից ծառայեցի · փխնկ 'ի քեզ յարելոյ՝ 'ի մեղս զակատեցայ ։

Փոխանակ 'ի լոյս գնալոյ՝ ը՟ խաւար մոլորեցայ · փխնկ ուղիղ ընթանալոյ՝ չարաչար գայթակղեցայ · փխնկ յարքայու՟ն մերձենալոյ՝ ը՟ դժոխոց դաշն կռեցի · փոխանակ ժառանգ փառաց սահմանելոյ՝ սանդարամետին գերի

գրե-

դրեցայ · փ̄խնկ քեզ զինուորելոյ՝
ը̄ դրօշակաւ սատանայի պարա-
նեցայ :

Փոխանակ ազատութե̄ 'ի քեզ
պարծելոյ՝ 'ի շղթայս չար սովո-
րութե̄ց կապեցայ · փ̄խնկ խաչելոյ
զմարմինս իմ կապեօք և ցանկութե̄՝
բազկին դիւաց կազմեցի · փ̄խնկ 'ի
վերինս թռանելոյ՝ 'ի թակարդ-
ստորայնոց ըմբռնեցայ · փ̄խնկ
յերկնային անանց երանութե̄նն
վերանալոյ՝ յաւիտենական դա-
տապարտութե̄ պարտաւոր դա-
տակնքեցայ :

Աւա՛ղ աղէտից, թէ զիա՛րդ
յայսքան տարազ մոլեգնութե̄ց
յիմարեցայ և ցնորեցայ, և կա-
մակար կորստեան գրաւեցայ :
Աւաղեսցե՛ն երկինք զեղկելիս ·
աւաղեսցէ՛ և երկիր · աստեղք
խաւարեսցի՛ն 'ի վ̄ր իմ, և ամպք
կոծեսցի՛ն յիս կայծակամբք · Ե-
դեմ սուգ առցէ ը̄ իմ, և կեն-

դա-

դանիւք ողբասցեն զինև , մանա-
ւանդ թէ երգիծանիցեն և թըշ-
նամանիցեն զիս . զի ․ք̅ զն̅ն վատ-
թարս արձանացայ :

Ամաչեմ ասել . շուն անարգ է̅
միոյ պատառոյ 'ի մահ մատնէ
զինքն վ՟ն խուրոյ բարերարի , և ոչ
երբէք ընդդէմ նմին անխրաւի :
Այլ ես ․ք̅ զօրինակ անարգա-
գոյն գտայ առաջի քո Տ՟ր . զի ոչ
պատառ մի հացի , այլ զանձն
քո եդուր 'ի մահ 'ի փրկանս իմ .
Եդուր և զմարմին քո և զարիւն
հանապազօրդեան կերակուր ան-
մահութե՟ փրկ՟ ստողջն դառնութե :
Իսկ ես իբր անբան անզգայացայ
և անզգամացայ : Եւ արդ զինչ
ասացից կամ զինչ խորհեցայց .
զինչ տաց պատասխանի 'ի յան-
դիմանել զիս յայս ժ՟մ : Երկն-
չիմ երկրորդել . լաւ ևս էր ինձ
բնաւ երբէք ոչ կերպարանիլ 'ի
մարդ բանաւոր՝ ․ք̅ բանական բը-

նու

նուէ հաւատարիլ յանարգ զգոյ-աւոր , և ապիրատագոյն գու-մարիլ է զանբան շնչաւոր : Ող-բամ զորովայնն որ երկնեաց զիս ՚ի ողբալոյ բանաւորին մեծի. աշխարհէմ և զժամն յորում ես ծնայ : Մի՛ համարեսցի յաւուրս տարւոյ օրն այն , յորում անկայ ես ը անիծիւք նախաստեղծին ադամայ . որով յայսչափ ոճիրս եղեռնութեանց շաղախեցայ : Անի-ծեա՛լ լիցի ժամն այն , յորում ՚ի բարերարէդ վրիպեցայ . ՚ի փրկչէդ իմմէ հեռացայ . ՚ի լու-սոյդ կենաց խորշեցայ . և ՚ի կա-րիս այսքան մոլորութեանց տորորե-ցայ :

Այլ դու ամենագութ ամենա-բարի փրկիչ , որ մինչև ցօրս ցայս զարժանիս մատնութեան մահու և դժոխոց՝ ընդ իջեալս ՚ի ներքոյ երկիրս չարեօք ոչ պարտաւորե-ցեր , աղաչեմ զքեզ՝ մի՛ յանդիմա-

ներ

նէր զիս․ մի՛ մերժեր․ մի՛ անար-
գեր․ մի՛ դատապարտեր․ այլ
գթա՛ և խնայեա՛ յիս։ Պար-
ձո՛ զերեսս քո յապերախտութեց
իմոց․ և անցո՛ զինև զանօրէնու-
թի՟ս իմ զա՟մ․ զի հանդիսասցի
և փառաւորեսցի ողորմու՟թի և ա-
նոխակալու՟թի քո առաջի հրեշտա-
կաց քոց․ և եղիցի ուրախու՟թի
յերկինս վ՟ն մեղաւորիս։ Ջն-
ջեա՛ զիմ չարիս ամենասուրբ ա-
րեամբ քով․ մաքրեա՛ զյանցանս
իմ պատուական քրտամբք քով․
կազդուրեա՛ զտկարացեալս երկր-
պագելի չարչարանօք քո, և նո-
րոգեա՛ զապականեալս ամենա-
կեցոյց խաչելու՟թ քով։ Խոցուա-
ծով կենարար կողիդ՝ բա՛ց յու-
սահատելոյս զդուռն այցելու՟ե
յուսոյ․ և արժանացո՛ զանար-
ժանս ը՟ աջակողմեան աւազա-
կին խաչակից լինել քեզ՝ ի կեանս
իմ․ և ը՟ նմին հասանել առ քեզ

՝ի

՚ի վայելչութն դրախտին յարքայ-
ութե քում. և օրհնել զքեզ ը̅
հօր և ընդ սրբոյ հոգւոյդ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն ։

## ԱՂՕԹՔ ՅԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒ ։

Խոստովանանք առ ած յայտարարութե հանգստեան ան յեօթներորդ աւուր ՚ի դիմաց անչէն մարդացելոյ յաշերանս ծառանս ։

Եւ արդ հասեալ աւուրս հան-
գստեան շաբաթու ՚ի բարձրե-
լոյդ օրհնելոյ. յորում հանգեար
անաշխատ բնութն ՚ի նորագոր-
ծելոյ վորարածոց տեսակս, գո-
հանամ զքէն և օրհնեմ զքեզ ։
Օրհնեմ զերրորդն. և կրկին
գոհանամ, որ ՚ի սմին աւուր նորին
ինքն բանդ ած յետ կենագոր-
ծելոյ զիս՝ հանգեար յերեկոյէ
աշխատակիր մարմնով ՚ի նորա-

փոր վիմի կնքելոյ անուամբ Էլոգ, անապական մնալով վէմդ կենդանի ։

Հանգիր և այժմ յիս աղաչեմ զքեզ․ և հանգո՛ զվաստակեալս մեղօք․ անդորրացո՛ զվարանեալս վշտօք․ կազդուրեցո՛ զծանրաբեռնեալս հոգովք ։ Զխռովմունս կրից խաղաղացո՛․ զյարձակմունս ախտից դադարեցո՛․ զկոհակս ալեաց սրտից հանդարտեցո՛ ։

Մխիթարեա՛ զիս 'ի սգալոյ․ ըսփոփեա՛ զիս 'ի յողբալոյ․ քաջալերեա՛ զիս 'ի լքանելոյ ։ Թաղեա՛ զհնութի̄ շնչաւոր մարդոյս 'ի նորոգութի̄ վարուց․ կնքեա՛ զկեանս իմ 'ի տիպ նմանութե̄ նորոգողիդ․ հաստատեա՛ զգայթակղութիւն գնացիցս 'ի պնդութե̄ վիմիդ ։

Ժողովեա՛ զցրուումն և զցնդումն խորհրդոցս․ կառավարեա՛ զկոյրընթաց շաւիղ մտացս․ բարե-

կար-

կարգեա՛ զանբարի շարժումն կա-
մացս. յարդարեա՛ զանհարթութիւն
բանիցս. հաստատեա՛ զանդէպ
տատանումն զգածմանցս. ամ-
փոփեա՛ զանվայելուչ շարուած
զգայութեանցս. ոչ հայիլ աչացս՝
յարատ, ոչ լսել ականջացս՝
թիւր, ոչ խօսել բերանոյս՝
սուտ, ոչ գործել ձեռացս՝ չար,
ոչ գնալ ոտիցս՝ զարտուղի, և
ոչ մոլորիլ խելք ըս ուղի։ Մո-
ռացի՛ր աղաչեմ զչարիս իմ, զորս
գիտութեամբ և անգիտութեամբ գործեցի
առաջի քո. մոռացի՛ր և զապե-
րախտութիւնս իմ, որովք ապաշնորհ
գտայ առ բազմերախտ բարերարդ.
մոռացի՛ր և զամարդի բերմունս
իմ, որովք զայրացուցի զընկերս։
Ջնջեա՛ տէր զհին հաշիւ անօրէ-
նութեանց իմոց, զորս գրեալ ունիս
'ի դպրութեան քում։ Պատռեա՛
զմուրհակ յանցանաց, զոր յի-
մարութեամբ իմով ստորագրեցի։

Դա՛րձ 'ի միջոյ պտուման գաղտնեաց իմոց, զոր ձեւամբ իմով կնքեցի. զի մի՛ յաւուրն յետնում երեւեսցին ապիրատութիւնք իմ յայտ յանդիման հրեշտակաց եւ մարդկանց, ե՛ս եւ դատապարտելոյ եւ դիւաց: Ա՛յժմէն վարանիմ եւ տագնապիմ 'ի յիշել իմ զհրատարակութիւն յանդիմանութեանս. այժմէն սարսիմ եւ դողամ. այժմէն հալիմ եւ մաշիմ: Դու ես բազմողորմ Տէր՝ ա՛յժմ ներեա. ա՛յժմ ջնջեա. ա՛յժմ լուա. ա՛յժմ սրբեա: Ա՛յժմ է ժամ նորոգելոյ զիս. 'ի յետնում աւուր շաբաթ է հանգչելոյ յայսպիսիս աշխատելոյ:

Մի՛ ոխս պահէր խոնարհեցելումն մինչեւ յերկիր. մի՛ վրէժս խնդրէր յամօթապարտելոյս իսպառ. մի՛ 'ի դատ մտանէր ընդ դատակնքելոյս 'ի մահ: Մի՛ մեծ երեւեսցի չարութիւն իմ առաջի ան-

հաս

հաս ներողութեանդ . մի՛ բարձր ե-
ղիցի եղջիւր անզգամութեան իմոյ
առաջի անքննին գթածութեանդ .
մի՛ անթողլի ցուցցի յանցաւորու-
թիւն իմ առաջի անոխակալ եր-
կայնմտութեանդ ։ Յաղթեսցէ մար-
դասիրութիւն քո իմում չարա-
սիրութեան . մեծացեալ ողորմութիւն
քո յանվճարելի պարտաւորութեանս .
բարձրասցի բարեգթութիւն քո՝ քան
զներելս իմ թշնամեաց իմոց ։

Գիտեմ՝ զի անօրինեցայ . գի-
տեմ՝ զի չարաչար յանցեայ .
այլ գիտեմ եւս՝ զի սիրես նե-
րել, ախորժիս քաւել, յօժարիս
սրբել . քանզի ոչ կամիս զկորուստ
մեղաւորին , այլ զդառնալ նորա
եւ զկեալ , եւ հանգչիլ ՚ի փրկու-
թեան քում ։ Յայդ եւ ՚ի դոյն ահա
ամենաքաղցր կամեցողութիւն քո
վստահացեալ՝ առ քեզ ապաւի-
նիմ . եւ արկեալ զանձն իմ զգար-

շապարօք ոտից յոխ փրկիչդ ի-
մոյ՝ պաղատիմ. ողորմեա՛ ինձ Տ͞ր,
ողորմեա՛ ինձ. և քաւեա՛ զանօ-
րէնութիւն իմ զա͞մ։

Եւ արդ շատ է Տ͞ր, հանգո՛ զիս,
հանգիր և դու ՚ի ձայնէ բողոք-
մանցս։ Ա՛ռ զիս և ժամանեցո՛
՚ի հանգիստ քո ՚ի թագաւորու-
թիւն երկնից, ուր են ժողովք
ս͞րց քոց հայրապետաց և մարտի-
րոսաց, ճգնաւորաց և կուսանաց։
Հանգո՛ ընդ նոսին բարեխօսութ͞բ
նոցին և զհոգիս ննջեցելոց մե-
րոց ՚ի հանգիստ յաւիտենից.
և արժանի արա՛ զամենեսեան
զմեզ՝ օրհնել զքեզ ՚ի փառս ար-
քայութ͞ե քո ընդ հօր և ընդ սրբոյ
հոգւոյդ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։

# ՃՐԱ. ՃԱ. ՆԳ. Գ.

## Յօրինեալ աղօթք վռ առաւօտու և երեկոյի.

Պարտական է մեզ քրիստոնէից 'ի զարթնուլն 'ի քնոյ խաչակնքել զերեսս մեր, և փառս մատուցանել ամենասուրբ Երրորդութեան, և գոհանալ զբարերարութիւնս նորա. և ապա խնդրել 'ի նմանէ զշնորհս, զի կարացէ առանց մեղաց անցուցանել զօրն զայն, և անփորձ պահել 'ի վտանգից հոգւոյ և մարմնոյ։ Այլ և սա պարտի յանձն առնել զինքն 'ի խնամս սրբոյ Աստուածածնին, նաև 'ի պաշտպանութիւն սրբոյ ուրուք, զոր ունի իւր յատուկ բարեխօս. նոյնպէս և 'ի պահպանութիւն իւրոյ հրեշտակի։

Նոյնպէս և յերեկոյի նախ պարտի գոհանալ զԱստուծոյ վասն խնամարկեալ լինելոյ 'ի նմանէ յայնմ աւուր մինչև յերեկոյ. և

ապա քննութեան առնել, թէ որպէս անցոյց զտիւն զայն. արդեօք գործեա՞ց ինչ ընդդէմ Այ, և կամ ընդդէմ իւրոյ ընկերին՝ խորհրդով, բանիւ, կամ գործով. և մասնաւորապէս քննել զայն սխալանս, յոր սովոր է բազում անգամ սահիլ:

Ապա յետ բարւոք քննութե՛ան զղջալ՚ի Տէ-ռն, և առաջադրել ոչ ևս բնաւ մեղանչել: Ապա խնդրելով յԱյ զշնորհս՝ յանձն առնել նմա զանձն իւր. և ևս յանձն առնել Սբ Ածածնին. և աղաչել զնա, զի մայրական գթութե իւրով պաշտպանեսցէ զինքն: Ապա ահա կանոն այսոցիկ Տր կարգեմք սար զեօթն աղօթս, զչորեսին ժամն առաւօտու, և զերեսին ժմ երեկոյի:

# Ա Ղ Օ Թ Ք․ Ա։

Գոհութիւն առ Տէր առաւօտու՝ ի զարթնուլն՝ ի քնոյ ։

Յանուն Հօր և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ․ ամէն ։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո ։

Փառք երկրպագելի աստուածութեան քո Տէր․ փառք հրաշափառ մեծի տէրութեան քո․ փառք ամենազօր թագաւորութեան քո ։ Օրհնեալ, գովեալ, և փառաւորեալ յաւիտեան։ Ցնծամ Տէր ընդ անբաւութիւն անհասանելի բարձրութեանդ․ խնդամ ընդ անքննութիւն ամենայաղթ իշխանութեանդ․ բերկրիմ և ուրախանամ ընդ անչափութիւն անպարագրելի մեծութեանդ ։

Ո՛վ բարութիւն անսահմանելի, և բարերարութիւն ասնելի, երանութիւն յաւիտենականն, ա՟ծ իմ և կեանք . գոհանամ զքէն յա՟մ սրտէ ։ Դու արարեր զիս յանէից՝ առ ծառայել քում ամենակալ տրութե . այլ դու ստեղծեր և դու պահեցեր զիս յամի . և հովանաւորութբ ամենաբաւկն աջոյ քո պաշտպանեցեր և խնամարկեցեր զիս 'ի գիշերիս յայսմիկ . և ամենահաստիչ տեսչութբ քով հասուցեր զիս ողջ 'ի ժամ առաւօտուս, յանդիման լինել առաջի քո, և օրհնել զքեզ ։ Չէի արժանի այսմ շնորհի, և չեմ բաւական 'ի հատուցումն այսոր ամի ։ Ներընծայեմ քեզ զարժանաւոր օրհնաբանութիւն և զգովաբանութիւն սերովբէից և քերովբէից, և ա՟մ ս՟րց քոց . և նոցին միջնորդութբ յանձն առնեմ զանձն իմ անձառելի գթոյ մար-

դա-

դասիրութեան հաստատչիդ իմում․ որ ես օրհնեցից յաւիտեան ։

## Ա Ղ Օ Թ Ք․ Ը ։

Խնդրուածք առ Աստուած յառաւօտու ։

Տէր Աստուած բարերար և մարդասէր, բազումողորմ և բարեգութ․ աւասիկ հեղում զանձն իմ առաջի մեծվայելչութեան փառաց քոց․ և անկանելով առ ՚ի քէն առատ ողորմութեդ և անսպառելի գթութեդ աղաչեմ զքեզ․ նայեա՛ յիս, և սրբեա՛ զիս յամենայն մեղաց իմոց ։ Օրացո՛ զիս այսօր գնալ ըստ հաճոյս կամաց քոց ՚ի խորհուրդս ամբծութե՛, ՚ի բանս ճշմարտութե՛, և ՚ի գործս արդարութե՛ ։ ՚Ի վտանգիլս իմ լե՛ր ինձ ձեռնտու, ՚ի փորձիլս իմում լե՛ր նպաստատու, ՚ի խաւարիլս իմ լե՛ր լուսատու ։ ՚Ի մոլորիլս իմ ուղղեա՛ զիս․ ՚ի դաւաճանիլս իմ ազատեա՛ զիս․

՚ի

'ի հարստահարիլս իմ պաշտպանեա՛ զիս ։ Յորոգայթից թշնամւոյն ապրեցո՛ զանձն իմ . 'ի դարանակալութէ դիւաց պատսպարեա՛ զոգիս . 'ի ձախորդական անել դիպուածոց պահպանեա՛ զիս ։ Զյարուցմունս ախտից իմոց նուաճեա՛ . զխստութի անբարի սովորութեցս ընկրկեա՛ . զհրապոյրս վատ օրինակաց խափանեա՛ . և զյարձակմունս կեղակարծ արկածից յետս նահանջեա՛ ։ Գիտես տր , զի տկար եմ , և յոյժ անզօր և խաւար . դու օգնեա՛ . դու արիացո՛ դու բաւականացո՛ ։

Հայր երկնաւոր ած ճշմարիտ . կարողացո՛ զիս կալ 'ի պատուիրանի քում . և ցնծալ 'ի պահպանութե օրինաց քոց ։ Որդի ոյ ած ճշմարիտ . որ եկիր 'ի խնդրել զիս , և գտեր , գնեցեր և փրկեցեր . և ցուցեր ինձ ճանապարհ , ճշմարտութի և կեանք . առաջ-

նորդեա՛ աղաչեմ ՚ի զգաստութե̃ն վարուց և յուղղութե̃ն կենաց ․ և նշանաւ ամենայաղթ խաչիւ դ-քով զինեա՛ և պահեա՛ զիս ․ և վանեա՛ յինէն զգիմամարտութե̃ն չարին ։ Հոգի՛ ո̃յ ա̃ծ ճշմարիտ , լոյս անճառելի , և մխիթարիչդ վշտացեալ սրտի ․ լուսաւորեա՛ զմիտս իմ՝ անմոլար և անսայ-թաքընթանալ առաջի քո այսօր , և քև քաջալերիլ յա̃մ վարան-մունս հոգւոյ և մարմնոյ ։ Փա-րաւորեա՛լ միասնական անբաժա-նելի ը̃դ երրորդութե̃ն , ընկա՛լ զա-ղաչանս իմ , և տաճարացո՛ զիս քումդ սրբութե̃ ․ և արժանի՛ արա՝ սրբութե̃ պաշտել զքեզ զա̃մ ա-ւուրս կենաց իմոց , և օրհնել զքեզ յաւիտեան ։

## ԱՂՕԹՔ . Գ :

### Մաղթանք յառաւօտու առ մեր Աստուածածինն :

Ապաւէն կենաց և յոյս փրկութեան մերոյ Աստուածածին . աղբիւր գթութեան, դուռն ողորմութեան, օրհնաբանեալ տիրուհի . ամենահրաշ գերափայլ աթոռ փառաց ամենասուրբ երրորդութեան : Դուստր լուսոյ հօրն երկնաւորի . հարսն սխրալի հոգւոյն Ճշմարտի . և մայր անարատ որդւոյն միածնի :

Աղաչեմ զքեզ ո՛վ ամենօրհնեալ կոյս, լե՛ր ինձ այցելու և պաշտպան յայսմ աւուր և ձեռնտու յամենայն ժամու, և յամենայն վտանգի . օգնական և պահապան յամենայն նեղութիս, և պատսպարան ապաւէն ՚ի փորձութիս : Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն Տիրամայր . մի՛ ամփոփեր զձեռն

քո

քո՛ ի ծառայէ քումմէ. մի՛ հեռի առներ զմայրական խնամս քո՛ ՚ի սպասաւորութենէ պաշտամանցս ։ Մի՛ թողուր, մի՛ լքաներ, մի՛ արհամարհեր ։

Խնայեա՛ յիս մա՛յր Տ՟ր. ցո՛յց առ իս զգութ սիրոյ քո. և երևեա՛ յիս զօքանչելիս քո ։ Պահեա՛ զանձն իմ ՚ի դժրողուէ՟ աւթից մեղաց, և զերծո՛ զիս յա՟մ որոգայթից չարաց ։ Ուղղեա՛ զկեանս իմ, և կառավարեա՛ զա՟մ զվարմունս իմ, յորս ունիմ վաստակել այսօր ։ Ընկա՛լ և սրբեա՛. ա՛ռ և մատո՛ որդւոյ քում յընծայ ը՟ունելի ։ Ինձէն ոչ համարձակիմ. քո ձեռամբդ մատո՛. քո միջնորդուբ՟դ հաճոյացո՛. քո բարեխօսուբ՟դ մեծացո՛ ։ Օի սրբուբ՟ և բաւականուբ՟ ձեռին քո սրբին և նուիրին ա՟մ ՚ի փառս միածնի քո ։

Կտրեա՛ աղաչեմ զխնդրուածս իմ.

իմ. Քզի կարող ես, և կամիս. և
քեզ ոչինչ պակասեսցի ։ Եւ 'ի
կարելւդ կատարել՝ բարձրասցի
պատիւ քո և փառաւորեսցի ա-
նուն քո յաւիտեան ։

## ԱՂՕԹՔ. Է ։

Պաղատանք առաւօտուն առ յատուկ
պաշտպանաւոր մերն ։

Առ քեզ ապաստան լեալ՝ աղա-
չեմ զքեզ ով երանելի տէր ( այս
անուն ) բարեխօսեա՛ վն իմ առ
պսակիչն սրց , և առ նմի բարե-
րարն . զի միջնորդութբ մաղթա-
նաց քոց գտից 'ի նմանէ զթո-
ղութի ամ մեղաց իմոց . և ար-
ժանի եղէց հաճոյարար շնորհաց
նր . զօրացայց 'ի գործել զբա-
րիս, և զինեցայց 'ի վանել զչարիս.
և յամի կատարեցից զկամս նր
այսօր ։ Օ քեզ կալայ՝ և զքեզ
ունիմ անձին իմոյ սեպհական

պաշտ-

պաշտպան, և յա̃մի յաւուր օգ-
նական ։ Մի՛ գարշիր 'ի տաղտկա-
լի տեսուէ̃ նուաղեցելոյս, և մի՛
դժուարիր հայիլ յերեսս ապա-
ւինելոյս 'ի քեզ. այլ քաղցր
դիմս ցուցանելով՝ մատի՛ր առ
իս, և լե՛ր ինձ օժանդակ 'ի ձա-
խորդուէ̃, և զօրավիգն 'ի յաջո-
ղուէ̃ ։ 'Ի վարանիլս իմ 'ի խոր-
հուրդս՝ արա՛ ինձ անդորրութի̃,
և 'ի լքանիլս իմ 'ի գործս բա-
րիս՝ մատո՛ ինձ քաջալերուի̃. 'ի
տկարանալ իմում 'ի փորձուի̃ս՝
տու՛ր սատարուի̃, և 'ի կարդալս
իմ առ քեզ՝ հա՛ս ինձ յօգնուի̃ ։
Նայեա՛ 'ի վիճակ թշուառուէ̃
իմոյ յորում տառապիմ և տագ-
նապիմ. չունիմ և ոչ ժամ մի
աներկեան ընթանալոյ, և զա-
պահով կեանս վարելոյ. այլ
յա̃մի տատանիմ 'ի բազմադիմի
որոգայթս պատրանաց, և տա-
րուբերիմ 'ի զանազան առիթս

մեղաց և կորստեան : Նեղեալ եմ, վշտացեալ եմ, կարօտ եմ և ողորմելի . դու իսկ տեսանես և գիտես զկարօտութիւն իմ: Իսկ արդ՝ չիցէ՞ արժան նեղելոյ սփոփանս մատուցանել, վշտացելոյ քաջալերս ընծայել, և կարօտելոյ այցելութիւն ցուցանել:

Դու այժմ յերկինս յանկարօտ կեանս ցնծաս, յանանց անդորրութե մշտնջենաւոր հանգստեան զուարճանաս, յանվիշտ և յանտրտում օթևանս հօր բերկրիս և ուրախանաս: Ցնծամ և ես ը̅ փառս քո, և խնդամ ը̅ ժառանգութի երանութեդ: Իսկ արդ ՚ի վայելել քո յանձառ յերկնային բարութիւնսդ՝ մոռասցիս արդեօք զտառապեալս և զտաժանեալս ՚ի վ̅ր երեսաց երկրի: Մի՛ մոռանար, մի՛ ստունգաներ, մի՛ անտես առներ . այլ յիշեա՛ և միջնորդեա՛ . զի և ես բաւական գը-

տայց

տայց ժամանել այգը և տեսա-
նել զքեզ, և փառաւորել ընդ
քեզ զամենայն զերրորդութիւն,
զհայր և զորդի և զսուրբ հոգին յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն :
Քեզ եմ յանձն եղեալ յամե-
նակալէն այ̃ ո՛վ հրեշտակ իմ
պահապան, և զքեզ աղաչեմ .
դու ուղղեա՛ և կառավարեա՛ ըզ-
կեանս իմ յաւուրս յայսմիկ . և
առաջնորդեա՛ ինձ գնալ անա-
րատ յամ̃ 'ի գործս իմ, և առանց
մեղաց անցուցանել զերկարութ̃
տունջեանս և անվնաս ժամանել
'ի ժամ երեկոյի, 'ի փառս փրկ-
չին իմոյ յսի քսի :

## Ա Ղ Օ Թ Ք . Է :

### Պահպանութ̃ յերեկոյի առ Ած :

Ընդորրացեալ և հանգստացեալ
'ի ծանրութ̃ աշխատութեց աւուրս,
և թեթևացեալ 'ի զբաղմանց

բազմավէրդով հոգւոյս , մատչիմ
առաջի քո տ՟ր , և գոհանամ ըզ-
քէն ա՟ծ իմ : Յորքան լիս և յոր-
պիսի արարս պատաղեալ իմ այ-
սօր՝ տեսի առ ՚ի քէն զխնամս
մարդասիրութեան քո . ՚ի քանի՛
վտանգից փրկեցեր զիս . ՚ի քանի՛
անձկութիս պատսպարեցեր զիս .
՚ի քանի՛ տարակուսանս նպաստե-
ցեր ինձ : ՚Ի վշտանալ և ՚ի դառ-
նանալ իմում մխիթարեցեր զիս .
՚ի տրտմիլ և ՚ի տխրիլ իմում ըս-
փոփեցեր զիս . ՚ի վարանիլ և ՚ի
դարանիլ իմում քաջալերեցեր
զիս . ՚ի գրգռիլ և ՚ի փրփրիլ ՚ի
մոլի շարժութ՟եց՝ ձեռն ետուր
ինձ . ՚ի հարստահարիլ և ՚ի հա-
լածիլ իմում՝ ապրեցուցեր զիս .
՚ի դատափետիլ և ՚ի դաւաճա-
նիլ իմում՝ յօգնութ՟ի ժամանե-
ցեր ինձ . յախորտալ և յորոտալ
թշնամեաց իմոց՝ հովանի եղեր
ինձ : ՚Ի խաւարիլ խորհրդոյս՝

լու-

լուսաւորեցեր զիս ․ 'ի տկարա-
նալ զօրութեանս՝ կազդուրեցուցեր
զիս ․ 'ի թուլանալ կարողութեանս՝
զօրացուցեր զիս ․ յանկանիլ ի-
մում 'ի ցանցս մեղաց՝ զերծու-
ցեր զիս ։ 'Ի ձախորդութիւնս իմ
մերձ գտար առ իս, և 'ի յաջո-
ղութիւնս իմ զգուշացար զինև ․
և յամ վտանգս իմ ցուցեր առ
իս զգութ և զողորմութիւն ։ Ոչ
պակասեցուցեր որ և ոչ յիմեք
զխնամս քո յինէն ․ ոչ անտես ա-
րարեր զթշուառականս մտ ապի-
րատութեց իմոց ․ ոչ վարեցեր զիս
'ի բաց 'ի վրիպելս իմ 'ի քաղցրու-
թէ քումմէ ․ ոչ անարգեցեր զիս
յանիրաւելս իմ 'ի սբ օրէնս քո ․
ոչ յարուցեր զարարածս 'ի վր
իմ 'ի յառնելս իմ ընդդէմ հրա-
մանի քո ․ ոչ խնայեցեր ծագել
զարեգակն քո 'ի վերայ անարժա-
նիս յընթանալս իմ ը խաւար ․
ոչ հեռացուցեր յինէն զպահպա-

 նու-

նութ՟ի հրեշտակաց քոց 'ի հեռա-
նալս իմ 'ի քէն ․ ոչ գլուխ շար-
ժեցեր 'ի վերայ իմ 'ի շարժիլ ի-
մում ը՟ս կամս չարին ․ ոչ կորա-
սեր զլիս 'ի համբուրել իմում
զպատճառս կորստեան ․ ոչ ոտն-
հար եղեր ինձ 'ի սահիլս իմ
յորոգայթ մահու ։ Իբրև հայր
փայփայեցեր զիս ․ իբրև տ՟ր
պաշտպանեցեր զիս ․ իբրև հո-
վիւ տածեցեր զիս ․ իբրև թա-
գաւոր կառավարեցեր զիս ․ իբ-
րև դատաւոր ջատագով եղեր
ինձ , և իրաւացուցեր զդատաս-
տանս իմ ։ Ո՛րն արկից 'ի ճառ
յանճառ բարերարութ՟եց քոց ․ կ՟մ
զո՛րն թուեցից յանթիւ երախ-
տեաց քոց ։ Մեծացան , զօրա-
ցան և բարձրացան ցոյցք հանդի-
սի տեսչութ՟ե և այցելութ՟ե քո առ
յետին նուաստութ՟ի իմ ։
Չէի արժանի և ոչ իսկ ը՟ս անաս-
նոյն համարի հոլովիլ և առաջ-
նոր.

նորոգիլ 'ի քէն ։ Իսկ դու իբրև
զպանծալի՛ քո ծառայ յամի և
յամ ժամ զգուշանալով և զաչս
քո 'ի վր իմ ունելով խնամար-
կեցեր զիս՝ զխորդացեալս իբրև
զհարազատ ։ զօտարացեալս իբ-
րև զընտանի ։ զսարտուցեալս
իբրև զհաւատարիմ ։ զխելագա-
րեալս իբրև զիմաստուն տնտես ։
զմատնեալս ախտից իբրև զմա-
քուր հոգեկիր ։ զմիաբանեալս
ընդ թշնամւոյ քո իբրև զաննենգ
քո պաշտօնեայ ։ զտարամերժեալս
յարքայութէ քումմէ իբրև զկոչ-
նական ընտիր ։ զապստամբեալս
յինքնակալ տէրութէ քումմէ իբր
զմտերիմ հպատակ աննենգ ։
Զարմանամ տէր , միթէ կարօ՞տ
ի՞նչ էիր իմումս անարգութե՛ , զի
այսպէս վարեցար ընդ իս ։ միթէ
սակաւ ի՞նչ էր ներելդ ինձ յայս-
քան ժամանակ աւուրցս անցելոց ։
միթէ ո՞չ էր բաւական այն ամ՝

զորս ցուցեր ինձ մինչև ցայսօր ՚ի
բազում իրս ։ Այլ զի ամենա-
բարի ես և բարերար, հաճեցար
զբարութիւն քո բազմօք առաւելուլ
յիս . որպէս զի ամիւ կեցուսցես
զիս, և յերջանիկ վախճան ժա-
մանեցուսցես զիս, և ՚ի ժառան-
գութիւն փառաց արքայութեան քո
հասուսցես զիս ։ Այլ արդ յետ
տեսանելոյ իմ ՚ի քէն զայսքան
և զայսպիսի մեծամեծ երախտիս
բարերարութեան՝ զիա՛րդ չիցէ ինձ
արժան այսուհետև քեզ միայնոյ
ծառայել զամենայն աւուրս կենաց ի-
մոց . քոյդ լինիլ, և քեզ ընծայիլ.
՚ի քեզ պարծիլ, և առ քեզ ապա-
ւինիլ . զքեզ օրհնել և մեծա-
ցուցանել այժմ և յամենայն ժամ ։
Իսկ արդ քանզի գիտեմ՝ զի բազ-
մօք յանցեայ այսօր առաջի քո,
խնդրեմ ՚ի գթասիրութենէ քում-
մէ՝ ծագեա՛ յիս զլոյս երկնային
շնորհաց քոց, ճանաչել յորս վրի-
պե.

պեցայ. և զղջալ 'ի վերայ ամենայն յորս մեղայ. և հաստատութիւն առաջադրել ոչ երբէք մեղանչելոյ ։

* Լո՛յս տուր Տէր աչաց իմոց. զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ ‖ ։

Աստ քննեա՛, թէ յո՛րս արդեօք սխալեցար այսօր՝ յառաւօտէ մինչև ցերեկոյ, 'ի խորհուրդս, 'ի բանս և 'ի գործս, եթէ՛ առ Աստուած, և եթէ առ ընկերն ։ Եւ քննեա՛ համառօտապէս զայն սխալանսն, յորս առաւել ես անկանիլ սովորաբար 'ի բամբասել, 'ի յերդնուլ, 'ի թըշնամանել, 'ի խաբել, 'ի մեծաբանել, 'ի բարկանալ, 'ի նեղասրտիլ, 'ի ծուլացել՝ ևլն ։ Եւ յետ քննելոյդ զղջա՛ 'ի վերայ ամենայնի, և առաջադրեա՛ ոչ ևս մեղանչել. և յետ այնորիկ յա՛նձն առ պահել 'ի ձեռս Աստուծոյ, և 'ի խնամս սուրբ Աստուածածնին. և ապա Երիցս այսոցիկ ասա՛ զաղօթսն՝ որ զկնի ։

Աս-

# ԱՂՕԹՔ. Է:

Խնդրուածք ցերեկոյի առ Տէր հան- դերձ ողջմամբ, և առաջադրութե̄ և յանձնարարութե̄:

Ի քո Տէր անբաւ գթութիդ ապաւինեալ, և յանհաս երկայնմտութի̃ քո յուսացեալ, և յանձառ ներողամտութի̃ քո վստահացեալ, մատչիմ 'ի դուռն ողորմութե̃ քո. մատչիմ 'ի գաւիթ շնորհաց քոց. մատչիմ և յաթոռ ամենիշխան թագաւորութե̃ քո: Մատչիմ այժմ և բաղխեմ. և յողորմած Տնէդ զողորմութի̃ խնդրեմ. բաղխեմ և հայցեմ՝ թողութի̃ գտանել չարեաց: Թո՛ղ ինձ տէր, թո՛ղ զա̃մ զմեղս իմ. քաւեա՛ զպարտաւորութի̃ անօրէնութե̃ց իմոց. և ջնջեա՛ զա̃մ զյանցանս իմ, յորս յանցեալ յաւուրս յայսմիկ: Քեզ միայն

մե-

մեղայ Տէր ․ 'ի քէն խնդրեմ, դու
ներեա՛ ինձ , և դու ինքն սրբեա՛
զիս ։

Մատչիմ և մտանեմ ես և 'ի
դաւիթ շնորհաց քոց ․ և հայցեմ
յամենառատ քաղցրութենէ քումմէ
զպարգևս քո ․ զի զօրացայց և
հաստատուն կամօք առաջադրե-
ցից՝ ոչ ևս դառնացուցանել զե-
րեսս քո ։ Գիտես Տէր , զի առանց
շնորհաց քոց ոչ կարեմ ինձէն ոչ
'ի չարեաց 'ի բաց կալ , և ոչ ըզ-
բարեաց զհետ գնալ ։ Յոյժ կա-
րօտ եմ , յոյժ անկար եմ , յոյժ
անզօր եմ և անարգ ․ տո՛ւր կա-
րօտելոյս՝ զոր խնդրեմ յանկա-
րօտ մեծութենէ քումմէ ։ Եթէ յա-
ռաւելն տալ տկարանաս , մի՛ և
զնուազն պարգևեր ․ ապա թէ
յոյժ աննուազ մնաս 'ի լիութե-
ամ բարւոյ , մի՛ խնայեր տալ ա-
ղաչեմ ։

Մատչիմ և ես , և անկանիմ ա-
ռա․

ռաջի աթոռոյ փառաց թագաւո-
րութեան քո . և բազում խոնարհու-
թեամբ յանձն առնեմ զանձն իմ
՚ի խնամս մարդասիրութեան քո ։
Յանձն առնեմ զհոգի և զմար-
մին իմ . յանձն առնեմ զկեանս
իմ և զամենայն զգայարանս իմ . յանձն
առնեմ և զամենայն զոր ունիմ այժմ,
և զոր ունիլ կամիմ զկնի ։ Յանձն
առնեմ և աղաչեմ . դու պահեա՛,
և ուղղեա՛ և խնամարկեա՛ ՚ի գի-
շերիս յայսմիկ ։

Լեր ինձ հովանի ամենակալ ա-
ջով քո . և կա՛լ զիս զօրութեամբ ամե-
նակարող ձեռին քո ։ Սուրբ
պարսպեա՛ զամրոց քաղաքիս մարմ-
նոյ երկնային բանակաւդ, և ամ-
րափակեա՛ զկեանս իմ յաջմէ և
յահեկէ ՚ի զգուշութեան, և ՚ի
զգաստութեան . ամփոփեա՛ և
զզգայութիւնս իմ յանարժան հա-
կամիտութեանց և յանվայել բեր-
մանց ։

Մի խաւարեցուսցեն զմիտս իմ խորհուրդք վատութեան, և մի պղտորեսցեն զոգիս կրից ամբօխմունք անդէպ շարժութեամբ ․ մի ուռկանեսցեն զկամս իմ հրապոյրք բանսարկուին, և մի գայթակղեցուսցեն զգնացս իմ դարանակալութիւնք դրժանայ չարախրին ։ Պահպանեա՛ և պաշտպանեա՛ զիս մինչև ՚ի պահ առաւօտու ․ և ՚ի ծագել լուսոյ տուընջեան փարատեսցի յինէն զծանրութիւն տարտամութեան ծառայութիւք շնորհաց քոյ ։ Զարթեայց ցնծութեամբ, զգաստացայց բերկրութեամբ ․ և զուարթացայց յանդիման մեծ վայելչութեան քո ․ և փառաւորեցից զամենասուրբ զերրորդութիւնդ, զհայր, և զորդի, և զսուրբ հոգիդ ․ ամէն ։

Անկեալ առաջի պատուականոյ խաչի քո, աղաչեմ զքեզ փրկիչ իմ յիսուս քրիստոս ․ աղերսեմ և պա-

ղա-

ղատիմ , պահեա՛ զիս սովաւ 'ի գիշերիս յայսմիկ 'ի վտանգից հոգւոյ և մարմնոյ , անփորձ և անվրդով հանգչիլ յանկողնի . և 'ի յառնելս իմ յառաւօտու ցըն-ծալ 'ի պարծանս խաչի քո ։

## ԱՂՕԹՔ . Է ։

Մ՝աղթանք յանձնարարութե՛ն յերեկոյի առ ս̃բ ա̃ծածինն ։

Ո՝ալխանձանօք աղաչեմ և մաղ-թելով պաղատիմ առ քեզ ո՛վ ամենօրհնեալ կոյս մարիամ ս̃բ ա̃ծածին . ոսկեփայլ տաճար ա-նեղ էութե՛ն անպարագիր ա̃ծու-թե՛ն , և հոգեխանձոյլ աթոռ բանին ա̃յ անձառ բնակութե՛ն . երկինք վեհագոյն , և ամպ գերագոյն . աներկեան ապաւէնութե՛ չքնաղ հովանի , և սիրասահման հաս-տատութե՛ն ամուր ապաստանի ։ Բաւմք գթութե՛ն յանձն առնեմ

յայսմ

յայսմ գիշերի զտառապեալ հո-
գի իմ և զվշտագնեալ մարմին
իմ. քումդ մայրութ՟ե յանձն առ-
նեմ զխաւարեալ միտս իմ և զտա-
տանեալ սիրտ իմ. քումդ սրբու-
թ՟ե յանձն առնեմ զկեանս իմ,
և զա՟մ զոր ունիմ:

Պահեա՛ զիս անարատ յանկողնի
'ի խորութ՟ե խաւարի: Տո՛ւր ինձ
ննջել զգաստութ՟բ, և յառնել
առ ա՟ծ զուարթութ՟բ: Արա՛ ինձ
անգայթակղելի մնալ 'ի մեղան-
չական խորհրդոց, և անվնաս
զերծանիլ 'ի գաղտամտեսա դիւա-
կան մեքենայից: Ամրացո՛ զիս
թևօք պաշտպանութեան քո և
պատսպարեա՛ աջով այցելութ՟ե
քո: Աղաչեմ զքեզ մա՛յր Տ՟ր,
հա՛ր զսիրտ իմ սիրալի ցաւօք 'ի
ցաւոց անտի՝ զոր կրեիր առ խա-
չելութ՟ե որդւոյդ: Ներկրեցո՛
զհոգի իմ 'ի բերկրութ՟է անտի
զոր ունեիր 'ի ժամու աւետման
քո:

քո : Օրհնեա՛ զիս աւետաւոր օրհնութ̅ն անպատում փառացդ , որով բարձրացար և վերափոխեցար 'ի վեր քան զերկինս . ուր փառաւորիս յաւիտեան :

Ո՜վ բարի պահապան հրեշտակ իմ . յանձն առնեմ զիս առանձին և յատուկ խնամոց քոց : Աղաչեմ զքեզ , 'ի ննջելս իմ 'ի գիշերիս յայսմիկ պահպանեա՛ և պաշտպանեա՛ զիս յերևելի և յաներևոյթ արկածից : Լեր ինձ պարիսպ ամրութեան ը̅դէմ ամենայն չարի . աներկիւղ հանգեայց , և անվրդով զարթեայց : 'Ի յառնելս իմ գտից զքեզ առ իս . և օրհնեսցիս ընդ քեզ զա̃ծ փրկիչ իմ :

# ՀՐԱՀԱՆԳ. Գ.

## Եօթնեակ աղօթք ՚ի կրթութիւն եօթն առաքինութեանց ՚ի վերայ եօթն բանից Հայր մերին:

Արժան է ջերմեռանդել յամենայն աւուր, կամ գոնէ յաւուրս կիւրակէից առնել զներգործութիւն աստուածաբանական առաքինութեանց. այսինքն հաւատոյ, յուսոյ, և սիրոյ: Հաւատոյ՝ ՚ի զգաստութեան մտաց առ Աստուած. Յուսոյ՝ ՚ի քաջալերութեան համայն առ հատուցումն հաճոյիցն Աստուծոյ. Սիրոյ՝ ՚ի միաւորութեան հոգւոյ ընդ միայնոյ Աստուծոյ:

Դարձեալ՝ արժան է ցուցանել երբեմն, և զներգործութիւն չորից գլխաւոր բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան, արդարութեան, արիութեան, և բարեխառնութեան. ՚ի կատարողութիւն չորից կարողու-

թե̃ց մարդոյ. ա̃յ մտաց, կամաց, յաւերժ-նական մասին, և ցանկականին ըստ բարոյական կարգի: Մտաց' ի ձեռն խոհեմութե̃: Կամաց' ի ձեռն արդա-րութե̃: Ցասմնականին' ի ձեռն արիու-թե̃: Ցանկականին' ի ձեռն բարեխառ-նութե̃. առ որս վերածին այլ ա̃մ առա-քինութե̃ք բարոյականք:

Եւ քանզի այսոքիկ առաքինութե̃ք՝ եթէ՛ ա̃ծաբանականք, և եթէ՛ բարոյականք բովանդակին յեօթն բանս վերոյնական աղօթից՝ ա̃յ Հայրմերին, առաւելէ դնեմք աստ ընթերթութեանս սոյա եօթնեակ աղօ-թեաց՝ ըստ կարգի եօթն բանից նոյն Հայր մերին:

# ԱՂՕԹՔ. Ա:

## ’Ի չարչարանացն համառօտ :

Հայր մեր որ յերկինս. Սբ եղիցի անուն քո :

Համբառնալով զաչս հոգւոյ իմոյ յերկինս առ ամենաբարի հայրդ, երկրպագանեմ մեծ վայելչութեան փառաց քոց. երկիր պագանեմ և հաւատամ յամենայն երրորդութիւնդ փառաւորեալ ’ի միում անսահմանելի էութեան յերրեակ անձինս իբր յերիս յանհաս յիմանալի երկինս, ’ի հայր և յորդի և ’ի սբ հոգի : Ոչ մի քան զմի զերագոյն դաւանելով, և ոչ մի ’ի միոյ բնութեանն բաժանելով. այլ՝ յամենայնի հաւասար, յամենայնի համագոյ, յամենայնի նոյն, յամենայնի մի էութիւն, մի զօրութիւն, և մի յաւիտենականութիւն : Որ էնդ,

և եսդ , և էդ . անսկիզբն , ա-
նեղ , անմահ , անյեղաշրջելի ,
իսկութի̃ անբաժանելի . օրհնեալ
յաւիտեան :

Հաւատամ աներկբայ մտօք և
աներկուանալի խորհրդով . զի
մինդ յերից անձնաւորութե̃ց որ-
դիդ միածին՝ հաճութե̃ հօր և
հոգւոյդ սբ̃յ ՚ի վախճան աւուրցս
իջեր յերկնից վ̃ն մեր . և առեր
մարմին յանարատ կուսէն . և ե-
ղեր մարդ ճշմարիտ , մնալով ան-
փոփոխ յէ̃ութե̃դ : Յղացար սր-
բութե̃ , և ծնար կուսութե̃ . վա-
տակեցար և չարչարեցար . և ՚ի
խաչին մեռանելով , և ՚ի մեռե-
լութենէ յառնելով՝ մեռուցեր
զմահ . և ազատեցեր զմեզ ՚ի դա-
տապարտութենէ անիծիցն : Նա
քաղցր բարբառով բերանոյ քո ,
և ա̃ծահրաշ գործով առաջնոր-
դեցեր մեզ յերկինս . յոր համ-
բարձար ինքնիշխան կառօք , և

բազ-

բազմեցար մեծային փառօք ։

Հաւատամ տէր, զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր․ որոց բարիս գործեալ իցէ՝ զկեանսն յաւիտենականս․ և որոց չար արարեալ զանվերջանալի դատապարտութիւն ։ Յայս և ՚ի սոյն անաղարտելի հաւատ ըստ դաւանութեան սրբոյ եկեղեցւոյ հաստատելով, և ՚ի սոյն ճշմարտութիւն իբր յերկնից բարձրութիւն զտէրդ փառաց բարձրացեալ տեսանելով, մատչիմ առ հայրդ բարի․ և աղաչեմ զքեզ՝ տուր ինձ ըստ անստերիւր հաւատոյս ցուցանել և զուղղութիւն գործոց առաջի քո․ և յամենայնի սուրբ առնել և մեծացուցանել զանուն քո յամենայն ՚ի կեանս իմ ։

## ԱՂՕԹՔ . Բ :

### 'Ի Երրորդն յատուկ :

### Եկեսցէ արքայութիւն քո :

( այսինքն Թագաւորութիւն քո : )

Յանկարծ և յաննախազ բարութիւն քո որ յուսացեալ՝ ակն ունիմ ընդունիլ յամենաբարի արքայեդ շնորհս քո . զի զօրացայց 'ի ծառայութեան երկնաւոր Թագաւորիդ . և կարողացայց սրբութեամբ պաշտել զմեծութիւն ինքնիշխանութեանդ , խորհրդով , բանիւ , և գործով և լինիլ միայն քո , և զքեզ միայն ունիլ ինձ պանծալի արքայ : Դու միայն տիրեա՛ որ 'ի վերայ իմ . լարեա՛ ուղղեա՛ և Թագաւորեա՛ . կառավարեա՛ և յաջողեա՛ ինձ գնալ ըստ հրամանի քում , և կատարել զհաճոյս կամաց

մացքոց. և արժանաւոր գտա-
նիլ յաւիտենական երանութե-
քում յարքայութե երկնից. յոր
փափաքիմ հասանել՝ և զոր ցան-
կամ գտանել։

Այն է յոյս իմ. այն է մխիթա-
րութի իմ. այն է քաջալերութի իմ։
Յայն բերին կեանք իմ. յայն
հային աչք իմ. յայն դիմեն ամ̃
զօրութիք իմ. յայն հառաչէ սիրտ
իմ։ Յայն ժամանել տարփամ.
զայն ժառանգել փութամ. և
յայն վայելել անձկամ։ Բարձ-
րասցի յիս յայնժամ թագաւորութի
քո. բարձրասցի և մեծութի իշ-
խանութեան քո. բարձրասցի և
փառք իմ։ Յայնժամ ոչ միայն
եկեսցէ և տիրեսցէ արքայութի
քո ՚ի վերայ իմ, այլև յայտնի ե-
րևեսցի՝ և սքանչելի ցուցցի յիս
և յամենեսին ը̃ իս. և յոյս իմ
՚ի լոյս դարձցի, օրհնել, գովել
և փառաւորել զքեզ յաւիտեան։

# ԱՂՕԹՔ · Է ։

## ՚Ի հրճուանս սիրոյ ։

### Եղիցին կամք քո ո̄պ յերկինս և յերկրի ։

Տա՛ր զսիրտ իմ սիրով քո սէրդ յաւիտենական · և վառեա՛ ըզհոգի իմ բոլոր՝ յա̄մի բերիլ և փարիլ ՚ի սէր քո · բորբոքեա՛ ըզկամս իմ, ՚ի տուէ և ՚ի գիշերի պանծալ և ցնծալ սիրով քո · և ձգեա՛ զիս ՚ի ստորայնոց աստի՝ յա̄մ սրտէ յարիլ յօդիլ և միանալ ը̄ քեզ կապանօք սիրոյ քո ։ Զօրացո՛ զիս վանել և վարել ՚ի բաց յանձնէ իմմէ զա̄մ որ ինչ դիմադրի օրինաց սիրոյ քո · և արիացո՛ զիս ցանկալ և փութալ ՚ի կատարումն պատուիրանաց քոց վ̄ սիրոյ քո ։ Զի յայսմ փայլէ կրումն սիրոյ · որպէս և դու իսկ բաղ-

բաղձմօք վկայեցեր տիրապատ-
գամ բարբառով բերանոյ քո յա-
ւելն . * որ սիրէ զիս՝ զբանն իմ
պահեսցէ ‖ . ( յովհ . ժդ . 23 ։ )
Եւ թէ * որ ունի զպատուիրանս
և պահէ զնոսա , նա է՝ որ սիրէ
զիս ‖ . ( յովհ . ժդ . 21 ։ ) Եւ
յաւելեր ևս ասելով . * եթէ սի-
րէք զիս՝ զպատուիրանս իմ պա-
հեսջիք ‖ . յովհ . ժդ . 15 ։ Եւ ևս
* եթէ պահիցէք զպատուիրանս
իմ , կացջիք 'ի սէր իմ ‖ . յովհ .
ժդ . 10 ։ Եւ զհակառակն այսր
ևս եդեր առաջի , թէ * որ ոչն
սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ ‖ ։
յովհ . ժդ . 24 ։ Պահեսցից ապա
և ես զպատուիրանս քո , և մնա-
ցից անդրդուելի 'ի սէր քո ։ Կա-
տարեսցին կամք քո յիս իբր յերկ-
րի , զի կատարեսցի և սէր քո յիս ,
որպէս կատարի յերկինս ։ Նոյ
եղիցին և կատարեսցին հաճոյք
քո ամ 'ի վերինս մասին հոգւոյ
իմոյ ,

իմոյ , սոյնպէս և յերկրի 'ի ստո-
րինս մասին ։ Ո՛րո հաճոյք ևեթ
եղիցին յամի . քոյդ՝ և մի՛ իմ.
ես արհամարհեալ եղէց , և բերկ-
րեցայց 'ի քեզ . վերջացայց յա-
մենայնէ , և ոչ խելք վերջացայց
'ի սիրոյ քումմէ ։

Օ այս միայն խնդրեմ , զի մի՛
ի՛նչ հակառակ գտցի 'ի հոգիս ընդ-
դէմ սիրոյ քո . և մի՛ ինչ երևես-
ցի յիս ընդդէմ բարեհաճութեան կա-
մացդ քոց ։ Կամք քո ևեթ կատա-
րեսցին . փառք քո հռչակեսցին . աջ
քո զօրասցի . աթոռ քո բարձրաս-
ցի . անուն քո պաշտեսցի . և յամի
սէր քո հնչեսցէ 'ի սիրտ ամենայն .
ամենքն գոչեսցեն 'ի սէր քո յեր-
կինս և յերկրի ալէլուիա ։ Ընդ-
որս և ես կրկնեցից , և անդրէն
աղաղակեցից . ամէն ալէլուիա .
գովեցէք զտէր , զի քաղցր է , զի
բարի է , զի յաւիտեան է . և եղի-
ցի օրհնեալ յաւիտեան ։

Ա.

## ԱՂՕԹՔ· Է ։

### ՚Ի հրեշտակացն բարեխաւսութեն ։

### Օ՛հաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր ։

Տո՛ւր Տէր տո՛ւր յառատ ողորմութենէ
քումմէ զձիրս պարգևաց քոց ·
և լցո՛ զպէտս կարեաց հոգւոյ և
մարմնոյ իմոյ ։ Մի՛ պակասեցու-
ցաներ ՚ի նուաղելոյս զհանապա-
զորդեան զիմ սննդարար կերա-
կուր բաւական ՚ի վայելել ըստ չա-
փու՝ զգաստութեամբ և պարկեշտու-
թեամբ ։ Մի՛ նուաղեցուցաներ ՚ի
նքողելոյս զհոգեկեցոյց հաց-
փրկարար բանի քո ՚ի կազդուրիլ
՚ի նոյն զուարթութեամբ և մխիթա-
րութեամբ ։
Մի՛ հատաներ յինէն զհրեշտա-
կային առաքինութեն զանապական
մանանայն բարեխառնութեն , ՚ի
նուա-

նուաճել զապստամբութի̃ ապա-
կանարար կրից ցանկական մա-
սին, և 'ի կարգաւորել զանկարգ
բերմունս յօժարութե̃ նորին. 'ի
կանոնաւորել զանկանոն ազդ-
մունս բանուե̃ նորին 'ի զգայա-
րանս հնգեսին, և 'ի մաքրել
զաղտեղի զգածմունս անպատեհ
գրգռութե̃ նորին. 'ի նորոգել
զհնութի̃ փտութե̃ չարաչար սո-
վորուե̃ց նորին, և 'ի զարդարել
զտգեղութի̃ անվայել և անշուք
խաւարմանց նորին: Այսմ բա-
րեկարգիչ և բարեզարդիչ բա-
րեմնայց առաքինութե̃ իբր հոգե-
պարար հացի մասնակից արա՛ զիս
Տէր: Սովաւ սնայց. սովաւ աճե-
ցայց. սովաւ զարդարեցայց. սովաւ
զուարճացայց. և 'ի սմին վարե-
լով՝ ամբիծ և անարատ գտայց ա-
ռաջի աչաց քոց. և սրբուե̃ սրտի
օրհնեցից զքեզ յա̃մ ժամ:

## ԱՂՕԹՔ․ Է։

### 'Ի կերպուն արտաքսուն ։

Ու թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։

Բանի՛ քանի մեծամեծ և ծանր պարտեաց 'ի ներքոյ գրաւեալ կամ, և առ հատուցումն նոյին ամիւ անկարանամ ։ Տագնապ անհնարին պաշարեալ է զիս ․ 'ի պահանջել իմում զհամար պարտաւորութեան, զի՞նչ տաց պատասխանի ողբալիս յամի ։ 'Ի լսել իմում 'ի քէն՝ ծառա՛յ չար զի՞արդ վարեցար 'ի պատուիրանս իմ զորս ընկալար ․ ու՞ր վատնեցեր զպարգևս իմ զորս 'ի քեզ տարար ․ զի՞նչ գործեցեր ընդդէմ ուխտի մկրտութեան, յոր արժանացար ․ հե՞մ յիմարեցար և անհա֊

գա֊

դացար յառաջադրութիւնս քո՝ զոր
խոստացար ։

Վա՜յ է ինձ, զի չունիմ տալ պատասխանի, և ո՛չ միով իւիք ցուցանել զանձն իմ անստգտանելի ։ Այլ միջնորդ առեալ զողորմութիւն քո՝ 'ի պայման դաշինդ արդարութեան ապաւինիմ. և յայն ապաստան եղեալ սրտի մտօք առ քեզ պաղատիմ. Թո՛ղ ինձ տէր զամ̃ զպարտս մեղաց իմոց. զի և ես թողում ընկերաց իմոց ըզպարտս յանցանացն որ առ իս ։ Դու եդեր զայսր դաշինս իրաւունս արդարութեան. և դու ինքն բանիւք բերանոյ քո հաստատեցեր՝ ասելով. * Թողէք և թողցի ձեզ ‖ ։ Արա՛ տէր զոր խոստացար. և կատարեա՛ զոր ուխտեցեր. և փառաւորեսցի արդարութիւն քո յողորմութեան քում ։ Նա ես առ 'ի քէն արդարացեալ՝ արդարութեամբ վարեցայց ընդ ընկերս իմ.

իմ. ո՛չ միայն 'ի թողուլ նոցա՝ զորս յանցեան նոքա, այլ և 'ի հատուցանել նց զորս պարտիմ նոցա, իւրաքանչիւր ումեք զիւրն տալով. քանզի այս է չափ արդարութն: Եւ սովին այսու արժանի եղէց գտանել 'ի քէն զայլ ևս մեծամեծ շնորհս և զպարգևս քո. և կատարելով զհաճոյս կամաց քոց՝ ժամանեցից 'ի վայելել զարդարութն պսակն 'ի կեանսն յաւիտենից:

## ԱՂՕԹՔ. Ի:

'Ի կրթուն արիութն:

Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ:

Զօրացո՛ զիս տր զօրութեց, և արիացո՛ ընդդէմ ամ փորձութեց. 'ի յաղթել չարին 'ի մտս իմ և 'ի մտան-

վտանգել զիս՝ վանեա՛ զայն 'ի
բաց, և դարձո՛ զիս 'ի բարին:
Յառաջնորդել քո ինձ 'ի կեանս
և յընդդառաջ լինել ձախող և
թիւր դիպուածոյ՝ մի՛ 'ի նոյն,
այլ՝ յուղիղն յաջողեցո՛ ինձ. 'ի
տագնապիլ հոգւոյ իմոյ 'ի բազ-
մավրդով յարուցմունս զանազան
ախտից և խռովութեց, արի՛ և
օգնեա՛ ինձ. զարթո՛ զզօրութիւ
քո, և եկ 'ի կեցուցանել զիս:
Պատերազմ է կեանք իմ. պա-
տերազմ 'ի մարմնոյ, պատե-
րազմ 'ի դիւաց, պատերազմ 'ի
հրապուրիչ չար օրինակաց աշ-
խարհի: Օրհնեա՛ և վահանաւո-
րեա՛ զիս ա͞ծ իմ՝ արութ͞բ սրտի
մարտնչիլ, անվեհեր գօտեմար-
տիլ, և յաղթութ͞բ փառաւորիլ
առաջի հրեշտակաց քոց 'ի փառս
անուան քո: Ոչունէի ինչ հոգ-
մարտնչելոյ 'ի դրախտին փափ-
կութե. յանդորր կայի 'ի վիճակի
ան-

անմեղութե՟, և անքոյթ վայելել 'ի մեծի խաղաղութե՟ : Յարեաւ 'ի վ՟ր իմ սկզբնաչարն սատանայ . մատեաւ և մարտեաւ ը՟ իս, և խորտակեաց զսուսեր ցասմնա-կանս մասին, և անգործ կացոյց զնոյն : Դու տ՟ր Նորոգ հաստեա՛ զայն, և սրեա՛ առաքինութ՟բ ա-րիութե՟ . որով կարացից ո՛չ միայն վանել զբռնութիւն պատերազ-մացս, այլ և աւար առնուլ 'ի յաղթութե՟ցս . և դիմել վատա-հութ՟ 'ի գործել զմեծամեծս վ՟ն քո . և առնուլ վարձս առ 'ի քէն յարքայութե՟ քում :

## Ա Ղ Օ Թ Ք . Է :

### 'Ի Կիւրակէ խոհեմութե՟ :

Զի քո է արքայութի՟, և զօրութի՟, և փառք յաւիտեանս . ամէն :

Իմաստութիւն յաւիտենական բա՛նդ ա՟ծ . ծնունդ անքննելին .

լոյս փառաց և նկարագիր էութեան հօր · որ կրես զօրութեամբ ՚ի ձեռին զամենայն · էացուցանես և կառավարես · խնամես և դարմանես · պահես և կարգես չափով, թուով և կշռով ։

Քոյ է արքայութիւն, քոյ է զօրութիւն, քոյ է փառք յաւիտենական ։ Արդարև քո է ինքնիշխան թագաւորութիւն, որով տիրես ամենայնի · քո է ամենակալ զօրութիւն, որով կեցուցանես զամենայն · քո է անբաւելի մեծութիւն փառաց, որով բարձրանաս և փառաւորիս յամենայնի ։

Տէր տուր ինձ աղաչեմ զքեզ յաննիաղելի իմաստութենէ քումմէ զլոյս մեծի առաքինութեան խոհեմութեան, ուղղել և կարգել ըզխորհուրդս իմ · չափել և կշռել զբանս իմ · կանոնել և յարմարել զգործս իմ ըստ աստուածային պատուիրանաց քոց, և ըստ բնական

կան օրհնայ առ 'ի քէն ազդելոց
'ի բանական բնութենս ։

Եւ քոյին շնորհիւդ կրել 'ի ձե-
ւին անձնիշխանութենս զամ որ
ինչ է յիս իբր 'ի փոքու թագա-
ւորութեն ․ եւ վարիլ յամի զգաս-
տութբ եւ զգուշութբ , զգօնութբ եւ
գիտութբ ։ Եւ յամի զքեզ ունե-
լով ինձ ապաւէն եւ օգնական ,
քեւ առաջնորդեսցայց՝ խորշիլ 'ի
չարէ , եւ առնել զբարին ․ եւ փա-
ռաւորեսցից զքեզ յամի եւ յամ
ժամ․ եւ արժանացայց հասանել
յարքայութն քո ․ եւ օրհնեսցից
զքեզ ընդ հօր եւ ընդ որդւոյ հոգւոյդ
յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

# ՀՐԱՀԱՆԳ․ Ե։

## Յօթնեակ բանք աղօթից առ խորհուրդ խոստովանութե և հաղորդութե։

Առ պատրաստութիւն խորհրդոյ խոստ-
ովանութե պահանջի նախ՝
պատրաստութե հանդոյ. այս է ջանալ ու-
ղիղ սրտիւ խոստովանել զմեղս առաջի
օրինաւոր քահանայի առ 'ի գտանել
զթողութի։ Պահանջի երկրորդ՝ քննութե
խղճի մտաց 'ի վերայ մեղաց ըստ տեսակին
պատուիրանաց, և ըստ կանոնական աւա-
նդութեանց, թէ ո՛րքս իցէ յանցուցեալ։
Պահանջի երրորդ՝ զղջալ 'ի վերայ գոր-
ծեալ մեղաց, հանդերձ առաջադրու-
թե ոչ ևս մեղանչելոյ։ Եւ այս մաս-
նէ 'ի խոստովանութե. և ասել զխոստ-
ովանելի մեղս, յորոց ծանեաւ, անկեղծ
սրտիւ,

արդեօ , և ըստ կարգի որոշ թուոց , համ-
դերձ խոստովանութե և ցաւօք : Իսկ յետ
կատարման խոստովանութե պահանջէ
զէր կատարել զդրեալ ապաշխարանսն ,
մատուցանելով միանգամայն և շնորհա-
կալութե առ Ած :

Նոյնպէս և առ ընդունելութե խոր-
հուրդն հաղորդութե , պարտի նախ խո-
նարհութե աղաչել զԱծ՝ զի արժանացու-
ցէ զնա անդատապարտ ընդունել զխոր-
հուրդն : Իսկ երկրորդ պարտի յետ
ընդունելութեանն գոհանալ զԱյ , և
խնդրել 'ի նմանէ՝ զի կարասցէ անմե-
ղութե և սրբութե անցուցանել զկեանս
իւր : Իսկ յետ Աի մաղթել առ Աէ կոյս
Ածածինն , զի բարեխօսութե իւրով
պահեսցէ և պաշտպանեսցէ զինքն :
Իսկ ահա յաղագս այսոցիկ Աի կարգեմք
զեօթն աղօթս յայսմ հրահանգութե ·
զչորեսին առ խորհուրդն խոստովանու-
թե · և զերեսն առ խորհուրդ հաղոր-
դութեան :

## Ա Ղ Օ Թ Ք · ա̃ ։

### Յա պատրաստութե̃ն խորհրդոյ խոստովանութեան ։

Լո՛յս արա ինձ 'ի խաւարի ա̃ծ իմ · դու ո̃ր բա՛ց զաչս հոգւոյ իմոյ՝ զի տեսից զոր ինչ ընդդէմ բարութե̃ քո գործեցի , և յորս ը̃դդէմ բարերարութե̃ց քոց ապերախտ գտայ · և յորս միանգամ 'ի հաճոյից կամաց քոց յետս կացի ։ Տեսից՝ թէ յո՛րքան թիւր խորհուրդս յղացայ , և յո՛րքան սնոտի բանս չարաչար զեղծայ ։ Տեսից և զղջացայց · զգաստացայց և նորոգեցայց ։ Գիտեմ տէր՝ զի 'ի բազում իրս յանցեայ , և 'ի զանազան մեղս ծանրացայ ։ Այլ ահա այժմ յա̃մ սրտէ ցանկամ ապաշխարել 'ի վերայ ա̃մի · և 'ի ձեռն խորհրդո՛յ խոստովանութե̃ սրբել զիս ·

զիս . և հաճելով զամենայնը կամս քո՝ հաճոյ գտանիլ առաջի երեսաց քոց ։

Ինքն ոչ կարեմ առնել զայս . ոչ գծանրութի մեղաց ձանձրացել, և ոչ ՚ի վե՛ր նոցա զե՛ արժանաւոյն զղջալ, և ՚ի սրտէ զնոսին ատել ։ Դու միայն կարող ես առնել, և քև միայն ՚ի թշուառութենս յառնել ։ Կարողացո՛ զիս ՚ի սոյն աղաչեմ շնորհօք հոգւոյդ Սրբոյ ։ Եւ զոր կամիմ կարել, տո՛ւր ինձ ճշմարտիւ կատարել ։

## Ա Ղ Օ Թ Ք . Է ։

### Առ քննութիւն խղճի մտաց ըստ տաս-նայէն օրինաց յառաջ քան զխոստովանութիւն ։

Երկնչիմ ՚ի քէն տէր և սոսկամ . ամաչեմ յինէն և տաղտկամ ։ Օրէնս ընկալայ ՚ի քէն յուղղութի կենաց իմոց , և ես

յամի ընդ հակառակն ընթանալով՝ չարաչար մոլորեցայ ։ Պատուիրեցեր ինձ սիրել զքեզ յամ̃ սրտէ . և ես միշտ պակասեալ գտայ 'ի սիրոյ քումմէ ։ Զգուշացուցեր՝ ոչ առնել զանուն քո . և ես բազմ̃ անգամ յընդունայնս առի զնոյն 'ի բերան , նաև տարապարտ երդուայ 'ի նոյն անզգուշութ̃ , ևս և անիրաւութ̃ ։ Զօր կիւրակէի ետուր ինձ 'ի հանգիստ . իսկ ես զ̃ վայր ծախեցի՝ սնոտի գործոց պարապելով ։ Յորդորեցեր զիս յաղօթս . և ես 'ի նոյն հեղգացայ . և յաղօթելս անդ 'ի նանիր խորհուրդս տատանեցայ և անհոգացայ , և 'ի յոլովս կամօք պակասեցայ ։ Պատուիրեցեր պատուել զծնօղս զ̃ հոգւոյ և զ̃ մարմնոյ . իսկ ես փոխանակ պատուելոյ զնս̃ , վիշտ եղէ նց̃ , և դառնացուցի զնոսա . որով փոխանակ օրհնութ̃ ընդու-

նելոյ՝ յանիծից ներքոյ անկայ : Հրամայեցեր՝ մի՛ սպանանել . իսկ ես բազում անգամ բանիւք բամբասանաց և մեղադրանաց սպանի զբազումս 'ի համբաւս նոցին . նաև նախատելով զնս , և խստութ խօսելով ընդ նոսա՝ վիրաւորեցի զսիրտս նոցա : Օրէնս կարգեցեր սիրելոյ զընկերս իբրև անձին իմոյ . իսկ ես ատելութ բերայ առ նս . և 'ի բազում իրս անգթութ վարեցայ ընդ նոսա : Իմովս չար գործովք զայրացուցի զոգիս նց . և անկարգ գնացիւքս գայթակղեցուցի զանմեղութի նց : Ստօք իմովք յանդուգն դատեցի զնս , և 'ի թիւրն մեկնեցի զարարս նոցա : Ստեցի նց , և խաբեցի զնոսա : Ծաղր արարի զշարժուածովք նց , և արհամարհեցի զկեանս նց : Նախանձեցայ ընդ բարիս նց , և խնդացի ընդ չարիս նոցին : Աղէ

պատ

պատճառ մխասու նց, և ետու
առիթ՝ 'ի մեղս գլորելոյ նց:
Խրատ բարի ընկալայ 'ի քէն օրհ-
նելոյ զայլս. և ես յանէծս
շարժեցի զբերան իմ: Զգուշա-
ցուցեր զիս ոք պահել զանձն
իմ. և ես տեղի ետու անտեղի
յօժարութեց: Պոռնիս եղեր
զգայարանացս, և ես յանդէպս
բացի. ո՛չ յետս կացի յարատ
հայելոյ, և ո՛չ զգուշացայ չարիս
լսելոյ: Ո՛չ հրաժարեցայ 'ի զա-
զիր խորհելոյ, և ո՛չ կասեցայ
յանխայելս խօսելոյ:
Զեղխեցայ յուտել և յըմպել.
և հեղգացայ զգործս իմ բարուք
կատարել: Ե. յորքիւք և այլս
բազմապատիկ չարեօք յանդգնե-
ցայ բարկացուցանել զամենաբա-
րի արարիչդ իմ:

Ե.

## ԱՂՕԹՔ. Է ։

Սա 'ի զղջման 'ի վերայ զանցեալ մեղաց յառաջ քան զխոստովանութիւնն ։

Եւ արդ ցաւիմ տէր և զղջամ վն սիրոյ քո 'ի վր այսչափ անօրէնութեց , զորս գործեցի ընդդէմ հրամանաց քոց , և ընդդէմ բարեհաճութեն կամաց քոց ։ Վա՛յ ինձ տէր վա՛յ ինձ . քանի՛ քանի բարիս տեսի առ 'ի քէն . և ես փոխանակ նմի զայսքան չարիս հատուցի ։ Վա՛յ ինձ վա՛յ . զի 'ի մեծամեծ երախտիս քո վայելելն, յնմի մեծապէս ապերախտ ցուցայ ։ Վա՛յ ինձ վա՛յ . զի հանապազ անսաստ գտայ երկնային ազդարարութեց քոց . և անունկնդիր եղէ ածային օրինադրութեանցդ ։

Օ խա՛րդ յանդգնեցայ թշուառական 'ի քումդ ներկայութե

յայս.

յայսքան անօրէնութիս ժպրհիլ. և 'ի տեսչութե հայրագութ խնամոց յայսպիսի անարժան գործոմոլիլ ։ Ո՜ խորդ ապստամբեցյայ յիմարս և ապարասանս յերկնաւոր թագաւորեդ, և ոչ ակն ածի յարդար դատաւորեդ ։ Ո՜ խորդ դրեցայ գերի՝ անօրէն ծառայս ամենակալի տ͞նդ . և ատելի եղեցայ երկնաւոր փեսայիդ ։ Ո՜ խորդ 'ի մի միայն ծայրագոյն բարւոյդ թիկունս դարձուցի . և յամենաբարի բարերարէդ հեռացեալ մեկնեցայ ։ Ո՜վ մեծի ապիրատութեես . ոչ 'ի սպառնալեացդ զգաստացայ , և ոչ 'ի բարկութե քումմէ զարհուրեցայ . ոչ 'ի քաղցրութե սիրոյ քո ամօթեցայ , և ոչ 'ի բազմադորով գթոյ քո պատկառեցայ . այլ յամի ապառում ցուցայ , և անզգուսպ իմն արձանացայ ։

Բ.այց դու անոխակալ և անյիշա-

չար

չար տէր, մի՛ հայիր յայսոսիկ ա-
րարս իմ, յորս անօրինեցայ, այլ
հայեա՛ց յամենազօրութ ողորմու-
թեն քո, և խնայեա՛ յիս ։ Մե-
ղայ տէր, մեղայ քեզ. մեղայ, և
զանօրէնութիւնս իմ ես ինձէն գի-
տեմ, և զչարիս իմ ինքնին ճա-
նաչեմ ։ Թո՛ղ ինձ տէր, թո՛ղ
ինձ. թո՛ղ աղաչեմ զամ զմեղս
իմ. և քաւեա՛ համայն զպարտա-
ւորութիւնս իմ ։

Մի՛ պնդեր զծանրութիւն յանցա-
նաց իմոց. այլ ա՛ռ ՚ի ձեռին
զանկշռելի չափ ողորմութեդ ։
Դի՛ր զողորմութիւն քո հանդէպ ի-
մոյս անօրէնութեան ՚ի կշիռ արդա-
րութեան. եթէ ծանրասցի ապիրա-
տութիւն իմ, մի՛ ևս ներեր ինձ. իսկ
եթէ յափշտակեսցէ մեծութիւն ո-
ղորմութեան քո զամ ծանրութիւն չա-
րեացս, քաւեա՛ և ջնջեա՛ զյանցա-
ւորութիւնս իմ. որով և սքանչելի
ցուցցի երկայնամտութիւն քո ։

Յայդ

Յայդ ահա և 'ի դոյն վստահա-ցեալ յուսադրութի բաւականու-թե, և յանչափական ապաւի-նեալ աւետաւորութի գթասի-րութե, ակն ունիմ առ 'ի քէն թողութի գտանելոյ : Եւ հաս-տատութբ առաջադրեմ՝ այսու-հետև ո՛չ ևս մեղանչել . և ո՛չ իսկ երբեք դառնացուցանել զե-րեսս քո, ո՛չ խորհրդով, ո՛չ բա-նիւ, և ո՛չ գործով : Եւ սովին առաջադրութբ մատչիմ աւասիկ 'ի խոստովանութի : Ո՛վ հայր յանկատարութի զղջման սրտիս, և մի՛ յանհաւասարութի առաջադ-րութե կամացս . այլ հայեա՛ց յա-մենաբարերար մարդասիրութի քո . որով հաճիս և ախորժիս սրբել զիս 'ի մեղաց, և նորոգել 'ի կեանս :

Յանկամ տէր ունիլ յիս ցաւ սաստիկ, և ատելութի մեծ ընդ-դէմ անօրէնութեց իմոց, և ան-

նա-

նահանջելի հաստատութ̃ի առա-
ջադրութ̃ես : Այլ թէ պակասիմ
'ի սոսին, ընկալ զարտիս ցանկու-
թ̃ի 'ի բարին : Նաև զօրացո՛ զիս՝
անկեղծ մտօք և աննենգ բերա-
նով պատմել զմեղս իմ առաջի
քահանայի, և լինիլ արժանի
ճշմարիտ և ո̃ք արձակման :

## ԱՂՕԹՔ. Է :

### 'Ի գոհութ̃ե առ Ա̃Ծ յետ խոստովա-նութեան :

Բա՛րձր առնեմ զքեզ Տ̃ր, զի
ընկալար զիս, որ օտարացեալ էի
'ի սիրոյ քո . գոհանամ զքեն
Ա̃Ծ իմ, զի օգնեցեր ինձ, և հա-
ներ յապականութ̃ե զկեանս իմ :
Օրհնեմ, գովեմ և փառաւո-
րեմ զքեզ, զի ժամանեցուցեր
զիս մեծի խորհրդոյ խոստովա-
նութ̃ես . զոր սահմանեցեր և հաս-
տատեցեր իբր քաղաք ապաստա-

նի

նի պարտաւորելոյս 'ի մահն յա-
ւիտենական. և իբր նաւահան-
գիստ ազատութե՟ ալեկոծելոյս
մեղօք. և իբր ապրեցուցիչ փայտ
փրկութե՟ նաւաբեկելոցս յանցա-
նօք. և իբր օթևան խաղաղութե՟
և անդորրութե՟ տատանելոյս և
խռովելոյս անօրէնութե՟ք:
Հաւատամ ի՟ր աներկբայ մտօք,
և յուսամ հաստատուն կամօք
ի՟ն անսուտ խոստման քում, թէ
'ի կատարիլ յիս անթերի այսր
խորհրդոյ, զերծ գտեալ իցեմ
'ի պարտաւորութե՟ մեղացս և 'ի
դատապարտութե՟ յանցանացս.
ընդունելով յողորմութե՟ քումմէ
զթողութի՟ ամ՟ ապիրատութե՟ց ի-
մոց, և 'ի գթածութե՟ քումմէ
զքաւութի՟ ամ՟ անիրաւութե՟ց իմոց:
Այլ եթէ կայցէ յիս արատ ինչ՝
զոր յայտնի ոչ տեսանեմ, և
կամ թէ իւիք պակասեալ իցեմ,
յոր խղճելով կասկածիլ կա-
րեմ,

րեմ, դու ինքն սրբեա՛ զարատաւորութիւնս իմ. և լուա՛ զպակասաւորութիւնս իմ. զի մի՛ ունայնասցի յիս զօրութիւն խորհրդոյս. և մի՛ ընդ վայր հարցի փոյթ և հոգաշխատութեանս ։ Մի՛ ծիծաղեսցին դևք զինև, և մի՛ տրտմեսցին հրեշտակք ՚ի վերայ իմ. այլ նոքա տխրեսցին և յամօթ լիցին, և քոյքդ բերկրեսցին և ուրախ լիցին ։ Նաև յանձին փառաւորեսցի ողորմութիւն քո և մեծասցի գթութիւն մարդասիրութեան քո ։ Նաև ես ընծացայց և զուարճացայց ՚ի փրկութեան քում տէր. և պարծելով յԱստուած փրկիչ իմ, կացից և մնացից հաստատուն ՚ի սէր քո ։

Եթէ վտանգեցայց, դու լե՛ր ինձ ձեռնտու, զի մի՛ գլորեցայց. և եթէ պաշարեցայց ՚ի թշնամեաց հոգւոյ իմոյ, դու լե՛ր ինձ այցելու, զի մի՛ գայթակղեցայց, և մի՛ իւիք կրկին մե-

ղայց, և դառնայուցից զքեզ։ Եթէ դու ոչ պահեսցես զիս, իսկևիսկ անկանիմ. և եթէ ոչ օգնեսցես ինձ, չարաչար կործանիմ. եթէ դու ոչ մատուսցես ձեռն պաշտպանութե̄, առ 'ի մահ վիրաւորիմ. և եթէ ոչ առաջնորդեսցես ինձ, վարտուղի մոլորիմ, և 'ի չարիս մոլիմ։ Ով զի՛նչ օգուտ այնուհետև 'ի նորոգուե̄ս՝ եթէ անդրէն հնացայց և խորտակեցայց. և որ շահ 'ի յառնելոյս, եթէ միւսանգամ մահացայց և կորեայց. զի՛նչ ինձ նպաստ 'ի լուանալոյս և 'ի սրբելոյս, եթէ վերստին աղտեղացայց և ապականեցայց։

Ով արդ տէր ամենակալ, դու պահեա՛ և ամրացո՛ զիս, զօրացո՛ և հաստատեա՛ զոգիս. 'ի քեզ եմ յուսացեալ ա̄ծ իմ, մի՛ սասանեցայց յաւիտեան. այլ կեցից և ապրեցայց. և ոչ դադարե-

րեցայց յօրհնելոյ զքեզ զամ՟ աւուր կենաց իմոց ։

## ԱՂՕԹՔ. Է ։

### Յառաջ քան զհաղորդութիւն ։

Ապաւինեալ 'ի բարեգթութ՟ի քաղցրութե սիրոյ քո՝ մատչիմ բազում խոնարհութ՟բ առ ամենանուէր խորհուրդ մարմնոյ և արեան փրկչիդ իմոյ. առ աղբիւրդ անմահութե, և առ հնարդ փրկութե. առ յոյսդ կենդանութե, և առ լոյսդ իմաստութե ։ Ուր ցանկամ ընդունիլ զիս 'ի յօթևան սրտիս զտէրդ փառաց, և զԹագաւորդ Թագաւորաց. զհացդ հրեշտակաց, և զմանանայդ համայն ճաշակաց. զկեանքդ մահացելոյս, և զբժիշկդ ախտացելոյս. զհովիւդ մոլորելոյս, և զհայրդ խորդացելոյս. զազատարարդ գերելոյս, և զճշմարիտ

փեսայդ այրեացեալ հոգւոյս։
Այլ հայեցեալ յանարժանութի
իմ՝ սարսիմ և սոսկամ երևիլ
առաջի մեծ վայելչութե քո։ Ո՞վ
եմ ես զի խիզխեցից առ քեզ մեր-
ձենալ. դու միայն Տէր, դու միայն
բարձրեալ. իսկ ես տեղի աղտե-
ղութե, և անօթ անարգութե ար-
համարհեալ և տրորեալ։ Դու
բարութի անսահման, իսկ ես
անդունդ անյատակ չարութե. դու
ճառագայթ անճառելի, իսկ ես
խաւար խոր անտանելի. դու ե-
րանութի ցանկալի, իսկ ես թշուա-
ռութի ատելի և մերժելի։ Եւ
զիարդ մարթ իցէ ինձ յայսպիսի
գոլով մոլի վիճակի՝ համարձա-
կիլ առ քեզ, և՛ի համբոյր հպիլ
սրբութեան։

Դու ինքն համարձակեցո զիս ա-
ղաչեմ զքեզ. դու ինքն արժա-
նացո. դու պատրաստեա, դու
յարդարեա։ Դու գիտես տէր,

զի

զի ես անկարանամ, և յիս խստա-
նամ. կամիմ և ո՛չ կարեմ ։ Այո՛
կամիմ յիմ սրտէ իմմէ արժա-
նաւոր պատրաստութեամբ յարմարել
յանձն իմ տեղի ընդունելութեան
երկրպագելի խորհրդոյս . այլ
զի՛նչ այն իմ պատրաստութիւն իցէ,
և զի՛նչ իմ այն արժանաւորութիւն .
հրեշտակաց իսկ սրբութիւն չէ բա-
ւական, թո՛ղ թէ հաւասար
կաւոյ անձինս մեղուցելոյ ։

Այլ քանզի դու ինքն զիմոյս
անտես առնելով զապիրատութիւն՝
հաստատեցեր զայս խորհուրդ
մեծ՝ ինձ 'ի փրկութիւն . և դու ինքն
աստուածային բերանովդ հրաւիրեցեր
զամենեսին 'ի սոյն, մանաւանդ թէ
և հրամայեցեր, 'ի դոյն ապաս-
տան լինել կարօտիմ . միանգա-
մայն և 'ի թշուառութիւն իմ հայե-
ցեալ՝ վարանեալ մաշիմ, և յեր-
կուց կողմանց տատանեալ՝ 'ի

հոգս տայիմ և տագնապիմ։ Ամաչեմ մերձենալ, և երկնչիմ հեռանալ. անարժանութիւն իմ յամօթ առնէ զիս, այլ քաղցրութիւն հրաւիրանաց քոց վստահացուցանէ զոգիս. հեղգասրութիւն իմ յետս նահանջէ զիս, այլ հրաման պատուիրանի քո ստիպէ և յառաջ մղէ զիս։

Օ ինչ գործեցից եղկելի թշուառականս. արժա՞ն իցէ ինձ արդեօք ՚ի մուտս յուսահատութեան մատնիլ և զդատապարտութիւն ժանտ համբուրել. քա՛ւ լիցի։ ՚Ի բաց թողեալ ապա զվարանմունս հոգւոյ իմոյ, վստահութեամբ դիմեմ առ փրկիչդ իմ. և սրտի մտօք մատչիմ առ բարերարդ իմ։ Մատչիմ ճշմարիտ հաւատով. մատչիմ հաստատուն յուսով. մատչիմ անմեկնելի սիրով. և անդառնալի կամօք։

Մի՛ մերժեր զտաժանեալս՝ ա-

ղաչեմ զքեզ . մի՛ յանդիմաներ զտարտամեալս . մի՛ ընդ վայր հարկաներ զտառապեալս . մի՛ անմաջեցուցաներ զյուսացեալսն ՚ի քեզ ։ Ընկալ և ա՛ռ զիս առ քեզ . և երևեցո՛ առ իս զամենաքաղցր դէմս քո . յայտնեա՛ առ իս զայցելութիւն բարեգթութեան քո . և ցոյց յիս զբարեհաճութիւն ներողամտութեան քո ։ Աւասիկ գամ առ քեզ տէր . եկ և դու առ իս Յիսուս . եկ սիրով . եկ և մուտ ՚ի խաւարեալ սենեակ սրտիս , և լուսաւորեա՛ զիս . օրհնեա՛ զիս , և ես օրհնեցից զքեզ ՚ի կեանս իմ ։

## ԱՂՕԹՔ . Է ։

՚Ի գոհութիւն զկնի հաղորդութեան .

Անքննելի ես դու տէր , և անքննելի է գութ սիրոյ քո՝ զոր ցուցեր առ իս ։ Քանի՛ մեծ է ինձ այս , զի դու ինքն արարիչդ երկ-

նի և երկրի հաճեցար գալ այսօր
'ի բնակարան սրտիս ։ Ո՛չ գար-
շեցար յաղտեղութե̃ իմմէ . և ո՛չ
երեսս դարձուցեր յաղքատացե-
լոյս և 'ի չուառացելոյս ։

Ո՜ ի՛նչ տեսեր յիս քեզ հաճոյա-
կան , զի կամեցար իջևանս առ-
նել առ իս . տեսեր յիրաւի զա-
նարգութի̃ անձինս , և պանկար-
գութի̃ գնացիցս . տեսեր և ան-
տես արարեր . գթացար և խո-
նարհեցար բնակիլ յիս՝ առ 'ի
բնակեցուցանել զիս 'ի քեզ յա̃
անսուտ խոստման քո ։

Ո՞ որ օրհնութի̃ կամ զո՛ր գոհութի̃
մատուցից քեզ տ̃ր . և զի՛նչ հա-
տուցից մեծի այսմ անհամեմատ
բարերարութե̃ քո ։ Չունիմ ինչ
յինէն . այլ հայցեմ 'ի քէն ,
տո՛ւր զի տաց . ետուր զքեզ ինձ
բոլոր . տո՛ւր և զքոյդ՝ տալ քեզ
նուէր ։ Ո որ ունիմ քո է , և զոր
կարեմ ունիլ 'ի քէն է տ̃ր ։ Պատ-
կա-

կարիմ տալ քեզ՝ զոր ունիմ զսիրտ իմ, ընդ նմին և զմիտս և զկամս իմ, ես և զիմ զկեանս իմ ։ Այո պատկառիմ և յամօթ մեծ ըմբռնիմ. զի զայս ա̄մ առ 'ի քէն առեալ՝ 'ի զազրութի̄ իջուցի, և յանարգութի̄ հասուցի ։ Այլ դու ամենաբարերար բազմագութ փրկիչ, որ հաւանեցար առ իս գալ, սրբեա՛ և մաքրեա՛ զսոսա զամենայն ։ Բարեկարգեա՛ և բարեզարդեա՛ զհոգի իմ, և ընկա՛լ քեզ՝ 'ի հանապազորդեան տեղի հանգստեան ։ Հաճեա՛ և հանգի՛ր յիս տ̄ր, և մի՛ հեռի առնիր յինէն. մի՛ լքաներ, մի՛ թողուր, և մի՛ 'ի բաց մերժեր զծառայ քո ։

Օրհնեա՛ և ամրացո՛ զիս շնորհօք հրաշալի այսր մեծի խորհրդոյ. զի մի՛ իւիք թուլացայց 'ի սիրոյ քո. և մի՛ երբէք մեկնեցայց 'ի գթոյ քո ։ Հաստատեա՛

զիս

զիս պարգևօք հոգւոյդ ս՟բյ , զի
մի՛ յանցեայց և մեղայց , և տաց
առիթ հեռանալոյ յինէն ա՟ծային
ներկայութե՟ քո :

Պատսպարեա՛ ամրածածուկ ա֊
ջովդ զկգայարանս իմ , զի մի՛
խոտորեսցին , և խոտորեցու֊
ցեն զիս յօրինաց քոց : Պարու֊
րեա՛ զհայեցուած աչացս յարա֊
տոյ գայթակղութեան . ամփո֊
փեա՛ զանպատեհ զանպատկան
ցնդումն լեզուիս արձակման . փա֊
կեա՛ և պարսպեա՛ զլսողութի՟ս իմ
՚ի բանից անխրատութե՟ . զգուշացո՛
զգործարան ձեռացս ՚ի վտանգա֊
ւոր հաղըից կործանման :

Արիացո՛ զիս ՚ի գործս առաքի֊
նութե . առաջնորդեա՛ ինձ ՚ի
վարս զգաստութե՟ . ուղղեա՛ զըն֊
թացս իմ յարդիւնս արդարութե՟ :
Յաջողեա՛ ինձ գնալ յամ՟ի ըստ
հաճոյս կամաց քոց . և միացո՛
զկեանս իմ ը՟ կեանս քո կե՛անքդ

յա֊

յաւիտենական :

Պահեա՛ զանձն իմ հանապազ 'ի կենդանութե հոգւոյ՝ զօրութբ կենդանարար մարմնոյ և արեան քո՝ Քս աննահանջելի քումդ խոստմամն, զոր ուխտիւք խոստացար, և վկայութբ քով հաստատեցեր, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս. և թէ որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան. և թէ ես, եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան : Յաւելեր ես, թէ որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի՛ մեռանիցի :

Կատարեա՛ Տր, զոր խոստացար. կատարեա՛ աղաչեմ, և կենդանացո՛ զիս ըստ բանի քում 'ի փառս ամենափառաւոր տէրութե և բարձրութե քո որ օրհնեալդ ես յաւիտեան :

Ա-

# ԱՂՕԹՔ. Է.

## Առ սբ ածածինն զկնի հաղորդութեան:

Պչխոյ փառաց փառաւորեալ սբ կոյս մարիամ, մայր այ սբ ածածին, թագուհի երկնի և երկրի. բարեբանեալ յազգաց և յազանց, և երկրպագեալ յերկնաւորաց և յերկրաւորաց: Դու ցնծուն սբց ամի յարքայութեան այ. դու զուարճութիւն զուարթնոց անմարմին զօրաց. դու ուրախուն ըհանուր սբ եկեղեցւոյ. դու աւետիս խաղաղուե համօրէն ազի. դու բարբառ սխրալի հաւատացելոց ամի. դու պարծանք կուսուե նուիրելոց 'ի հարսնութի յսի քսի. դու ապատուի վտանգելոց, և անդորրութի մխիթարուե ամ վշտացելոց: Օրհնաբանեմ և գովաբանեմ

զքեզ

զքեզ տիրածին կոյս, որ ետուր մահացելոցս մեզ զպտուղն անմահութե՟ն և զհացն կենդանութեան յայս սքանչելի սեղանս խորհրդոյ. արդարև դու ետուր, դու հանդերձեցեր, և դու հասուցեր յամենամաքուր որովայնէ քում. և դու ինքն քոյին միջնորդութե՟ արժանի արարեր զիս այսօր ճաշակման անհասանելի այսր շնորհի :

Գոհանամ զքէն և շնորհակալ եմ վս՟ այսր մեծի բարերարութե՟ քո՝ զոր ցուցեր առ իս : Եթէ արժանի ինչ էի, յիրաւի մեծ իմն լինէր ինձ այս. ապա քանի՛ ես մե՛ծ իցէ՝ զի անարժան գոլով՝ 'ի կարգ արժանաւորաց դասեցեր զիս. և ո՛չ ծանր համարեցար մատակարարել իբր արժանաւորի զամենամեծ զայս պարգև 'ի կերակուր և 'ի սնունդ հոգւոյ իմոյ : Եւ արդ աղաչեմ զքեզ մա՛յր օ-

ղոր-

ղորմութե̃, պահեա́ և պաշտպա-
նեա́ զիս զի մի՛ յանկարգս ինչ ըն-
կելով՝ ապերախտ գտայց այսմ
գերագոյն շնորհաբաշխութե̃ ·
պահեա́ աղաչեմ, զի մի՛ իւիք
այսուհետև դառնացուցից զե-
րեսս որդւոյ քո · և մի՛ իւիք թիւր
խորհրդով արտմեցուցից զհայեց-
ուածս աչաց նորա · մի՛ բանիւք
բնաւ ունայնութե̃ տաղտկացու-
ցից զլսելիս նո̃ր · և մի՛ չար ինչ
գործով զարթուցից 'ի վ̃ր իմ
զբարկութի̃ նո̃ր : Այո́ պահեա́
զիս մայր ա̃յ · զի մի՛ փոխանակ
օգտի և շահու վտանգեցայց և
վնասեցայց · և փոխանակ փրկու-
թե̃ ժամանելոյ՝ կորստեան պար-
տաւոր գրեցայց :

Օժանդակեա́ ինձ ամենամայր
յանկանելս իմ 'ի փորձութի̃, և
կանգնեա́ զիս : Ձեռն կարկա-
ռեա́ առ իս յըմբռնելս իմ յորո-
գայթ մեղաց · և ապրեցո́ զհո-
գիս :

գիս ։ Հա́ս ինձ յօգնութիւն 'ի տագնապիս իմ յառիթս գայթակղութեան ․ և փրկեա́ զանձն իմ ։ Գիտես զտկարութիւն բնութեան իմոյ , ո́վ տիրածին կոյս ․ գիտես և զզօրութիւն բնութեան ախտից , և զչարահնար նենգութիւն դիւաց , և զբազմավտանգ ձգումն չար օրինակաց ․ և զիա́րդ կարացից ապիկարս ապրիլ անարատ՝ 'ի յափշտակելոյ յայսքան ալիս եւ ամբոխով խռովութեանց , և 'ի հողմակոծելս իմ յայսքան հնչմունս փոթորկալից փորձանաց ։

Դու օգնեա́ ինձ , և ա́յց արա առ իս սուրբ աստուածածին ․ քև կարող ես զերծանիլ , և զանձն իմ ձողոպրել յայսմ ամենայնէ ․ քև հնար է ինձ պահել զիս ամբիծ յամենայն արկածից ․ քև և 'ի ձեռն քո յուսամ ոչ միայն ապրիլ , այլև անսասան մնալ 'ի հաստատութեան բարւոյ առաջադրութեան , և 'ի հաւատարմու-

մութե՛ աննենգ խոստմանս՝ զոր խոստացայ այսօր միածնի որդւոյ քո ։ Եւ սովին յուսով ակն ունիմ, զի ամենասուրբ խորհրդս այս՝ զոր ընկալայ, լիցի ինձ նորոգումն վարուց, և անդորրութեան կենաց, զգաստութեան մտաց, և հաստատութեան կամաց. բժշկութեան ախտից, և ազատութեան չար սովորութեանց. վահան ամրութեան ընդդէմ փորձութեանց, և անվանելի զօրութեան ընդդէմ յարձակման դիւաց. անմոլար ուղեւորութեան յանարատութեան սրբութեան, և անսայթաք առաջնորդութեան ՚ի ժառանգութեան երկնային բարութեանց ։ Կարօղ ես մա՛յր գթութեան՝ կատարել զիս զայս տամ. և զառաւելն ես գործել քան զոր ես կարեմ խնդրել ։ Յառնելդ զոյս՝ ոչ ումեք կարօտիս, և ՚ի շնորհելդ՝ ոչ յիմիք նուազիս. արա՛ աղաչեմ, և ես բարձր աբարից զքեզ յաւիտեանս

# ՀՐԱՀԱՆԳ. Զ.

## Եօթնեակ կարգ աղօթից նուիրելոց ՚ի ժամ պատարագի:

Բանն՝ զօրաւոր իցէ տեսութե̄ն մէջ պատարագին՝ և ո՛րչափ ընդունելի առաջի ա̄յ, գտանես աւանդեալ ՚ի ճաշոմ գիրս: Այժմք մեր ոչ է խօսել զայսմանէ. այլ միայն յիշեցուցանել՝ թէ զիա՛րդ պարտ իցէ տեսանել պատարագն, և զո՛րպիսիս աղօթս մատուցանել յայնմ ժամու:

Յաղագս առաջնոյն այսչափ ինչ միայն ասեմ, թէ որովհետև սքանչելի իմն ընծայ է ա̄է պ̄տրագն՝ որով ա̄ծ նուիրի ա̄յ, պարտ է ե̄ղ̄մ զգուշութե̄՝ և ա̄մ զգաստութե̄ յանդիման լինել այնմ, և ՚ի ձեռն ն̄ր նուիրել զանձն ա̄յ: Յաղագս երկրորդին գիտելի է, զի են ճաշոմք

որք ոչ գիտելով վերոյիշեալ աղօթս պատարագի, ուշ եղեալ բանից քահանային և պաշտօնէից՝ նոքիմբք շարժման. ոմանք հայրմերիւ և ողջունիւ վճարեն. ոմանք սոսկ մտածական աղօթիւք կատարեն. այլք պայծառայն աղօթս մատուցանեն. իսկ կէսք ունելով պատշաճեալ աղօթս արարեալս վասն պտրգի՝ զայն մատուցանեն. որպէս են աղօթք եղեալք 'ի պարտիզի: Բնաւին ևս բարի է՝ եթէ կայցէ ջերմեռանդութեն յաղօթսն: Նայց քանզի են՝ որք փափաքին ունել 'ի ձեռին պատանձին աղօթս յարմարեալս հայկական արարողութեն պտրգի 'ի թականչանաց նոցա ասելեալ՝ յօրինեցաք զեօթն կարգս աղօթից ըստ եօթանց աւուրց, եղեալ յեռաբանականերբն քան քան մաղթողական բանս: Եւ 'ի յարմարել մեր պայտունէ՝ այնպէս իմն դաստտորութե եղաք, որով զեռանօղ պատարագին ունիցի միջոցս եթէ՛ ընդ քահանային աղօթելոյ, և եթէ՛ պատանչին: Մերթ զի յաւել քահանային զաղօթս բարձ-

րա-

րանջայն՝ այնմ ուշ դիցէ տեսանողն․ եւս
յաղօթել քահանայէն 'ի ծածուկ՝ պէտր
աղօթսն մատուցանէ · որպէս տեսանես
յիւրաքանչիւր կարգս աղօթից ։

Նաեւ ըստ այսմ յարմարութե̄ նախ քան
զսկսանել պատարագի մատոյ՝ զաղօթսն
դեպաւորութե̄՝ որ եդեալ է 'ի սկզբան
իւրաքանչիւր կարգի ։ Նաեւ 'ի սկսանել
պատարագի աստ զաղօթս սկսանելոյ ։
Ո՛ւշ դիր աստ եանեց քահանայեն , եւ
յարկանել ն̄ր աստս 'ի եածակն՝ յորժամ
ծածուկ աղօթէ, աստ պհետեալ աղօթ-
ոքն միւսն 'ի ժամանակն ։ Յաղօթել
ապա դարձեալ քահանայեն 'ի ծածուկ,
աստ զաղօթսն՝ որ զինի ժամանակեն միւ-
սն 'ի մէ տծն ։ Նաեւ զինի այնորիկ աստ
զյեպագայ աղօթսն․ եւ յայնմ հետէ մ՛ն
դիր ընթերցուածոց եւ աւետարանին եւ
հաւատամքեն․ եւ զինի աստ զյամբոր
աղօթսն ։ Նոյնպ̄ զնա միւսն 'ի վերջն ։

Զայսոսիկ աղօթս եթէ ուրեք կարծա-
նոր եդաք , զի աղօթողն կարասցէ ասել
ամէնողջ, եւ հանդարտ 'ի գլուխ տանել ։

Այլուրեք ուրեք ևս եդաք երկար բան
տանելոյ Յիշոցաց ժամանակէն ։ Յոմանս
ցուցանէք աղօթից ներգործութե̅ յիշատա-
կեցաք պատշաճելեայ լինել պատարագին ,
և յոմանս շորութե̅ ։ Այլ ծանի՛ր ևս ,
զի այսոքիկ աղօթք ոչ են մատուցանելի
վեր ’ի վերոյ և փութանակի , այլ՝ ըշ-
ջանօք սրտի , հեծութե̅ հոգւոյ , ուղղա-
րութե̅ մտաց , և ևէր ’ի սրտէ երկիւղիւ·
որով և քաղցրացեալ և շուարձացեալ սիրտ
մատուցողին , և ընկալցի զօրհնութե̅
սրբոյ պատարագին ։

## Առաջին կարգ աղօթից 'ի ժամ պատարագի ։

## Ի ԿԻՐԱԿԷԻ ։

Դիտաւորութ՟ տեսանելոյ զն՟է պատարագն հանդերձ գոհութ՟ե ։

Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ . ամէն ։

Երկրպագանեմ քեզ տ՟ր իմ և ա՟ծ իմ, օրհնեմ, գովեմ և փառաւորեմ զքեզ . որ 'ի վ՟ր ա՟մ բարերարութեց քոց՝ զորս ցուցեր առ մեզ, հաստատեցեր զանձառելի զայս խորհուրդ պատարագի ամենա՟սբ մարմնոյ և արեան քո ։ Օ սոյն զայս աւասիկ առ 'ի քէն գերագոյն պարգև ընկալեալ՝ քեզ մատուցանեմ 'ի փառս ա՟ն եր-

երրորդութեդ, և 'ի գոհութի ան- չափ բարերարութեց քոց, 'ի քաւութի մեղաց իմոց, և յընդունելութի ածային շնորհացդ · յօգուտ կենդանեաց և 'ի նպաստ ննջեցելոց :

Ասս տէր ողորմանասոր տէրտէրէր · դր 'ի բժշկութեն այս աւուրն հիւանդի · 'ի յաջողութեն ճանապարհի այս աւուրն ճար- դոյ · յօժանդակութեն այս աւուրն ննջեցելոյ · կԾ :

'Ի ուխտանել պատարագի :

Ընկալ տէր ած իմ զի 'ի քէյ պատարագիս զյօժարութի կամաց իմոց. որով փափաքիմ հաճել զամենայն կամս քո : Օգնեա՛ և տր- կարութեն իմում, զզաստութե մնաց կալ առաջի խորհրդոյս մինչև ցաւարտութն :

'Ի ապաս արձանել ժամանայէն :

Յիշատակաւ չարչարանաց և խաչելութեն քո լուսաւորեա՛ զմիտս իմ ամենապայծառ լոյսդ ճշմա- րիտ

րիտ, 'ի խորհիլ և 'ի միտ առնուլ զսքանչելի տնօրէնութ̃իս քո : Խորբոքեա՛ և զկամս իմ 'ի սէր ա̃ծային բարութ̃ե քո, որով գթացար յիս, խոնարհեցար առ իս, և հաճեցար լինել իբրև զիս, զի արասցես զիս իբրև զքեզ :

Յետ ճաշակմանն :

Թագաւո՛ր փառաց որդի̃ ա̃յ Թագաւորեա՛ 'ի վ̃ր իմ . մո՛ւտ փառօք քո 'ի հոգի իմ 'ի ձեռն շնորհաց քոց իբր յե̃կեմ : Եւ ես երգեցից ը̃ հրեշտակս քո ովսաննայ օրհնեալ որ եկիր, և գալոցդ ես :

Յետ ա̃ք ա̃ծին :

Մե̃ ո̃ւ ա̃ր սրբութեց . սրբեա՛ զիս յա̃մ մեղաց իմոց . և նորոգեա՛ զկեանս իմ նորոգութ̃բ շնորհաց քոց . զօրացո՛ և զոգիս ամենազօր զօրութ̃բ քով . որ հաճեցար զօրանալ ը̃ս մարմնոյ 'ի հրեշտակէն զօրացուցիչդ երկնաւորաց և երկ-

րաւորաց ։ Արկին ես զօրացն զիս ՚ի լուր պատգամաց քոց . զոր հանդոյն հրեշտակացդ զօրացուցչաց ունին աւետարանել այժմ պաշտօնեայք քոյ ։ Բացցէ զօրութի̃ բանից քոց զլսելիս հոգւոյ իմոյ . և հասցէ ՚ի սիրտ իմ իբրև զտարափ անձրևոյ հոսե̃լ յերկիր ցամաքեալ . և բուսուսցէ բոյս բարեաց ՚ի փառս քո ։

Յետ հաղորդմանէն ։

Այո՛ տ̃ր հաւատամ ա̃մի՝ զոր ասացեր . հաւատամ զա̃մ՝ զորս վ̃ն իմ կրեցեր . հաւատամ և յուսամ յայն՝ զորս հանդերձե̃լ ես տալ յարքայութե̃ քում ։ Եւ սովի̃ն հաւատով պատրաստ եմ յա̃մի դաւանիլ զքեզ տ̃ր . որ մկայեցեր զբարւոք դաւանութի̃ն առաջի պոնտացւոյ պիղատոսի ։ ա̃ . տիմ . Զ̃ . 12 ։

Յաւել քահանային . Տ̃ր ա̃ծ օրհնեալ է ։

Օրհնեա՛ զիս տ̃ր ա̃ծ իմ երկնայ-

նայլին քո ողորմ օրհնութեանդ. օրհնեա՛ և զտէր զգործս իմ, զի կատարեսցին ըստ հաճոյս կամաց քոց։ Օրհնեա՛ և զամենեսեան զնոսա, որք կան առաջի մեր պատարագիս, ևս և որք փափաքին տեսանել զսա, և ոչ կարեն։ Նաև զամենեսին զմեզ արժանի արա արդեանց չարչարանաց քոց, զորս յանձն առեր վասն մերոյ փրկութեան, ՚ի կատակելդ և յապտակելդ, ՚ի գանելդ և ՚ի պսակելդ։

Յաւելն. Արժան և իրաւ ։

Ստուգապէս արժան է և իրաւ յամենայնի և յամենայն ժամ գովել զքեզ, և գոհանալ զքէն. փառաւորել զփառաւորեալդ յանհաս էութեան, և բարձրացուցանել զբարձրացեալդ յանձառ ինքնութեան։ Օրհնեալ յաւիտեան։

Յետ ամէն ամէն ։

Ով ես տէր և ՚ի մեռեալս հանգուցելոց արժանաւորեա՛ զիս լինել տաճար սրբութեան քում. և սըր-

բոց

բութեամբ սրտի նք առնել զանուն քո՝ 'ի խորհուրդս, 'ի բանս, և 'ի գործս իմ: Սրբեա՛ և զզգայարանս իմ՝ ամբիծ պահպանութեամբ գալ զկնի քո մինչև յիմանալի լեառն գողգոթայ 'ի կատարելումն վարուց, և լինել խաչակից ընդ քեզ, և հաղորդ գտանիլ փառաց քոց :

Յաւել քահանայն . Լուէ՛ք ներքէ՛ք, պարտ է ասել :

Խոստովանիմ և հաւատամ:

Այնպէս և յասելն արէք Խտ, պարտ է ասել զնոյն :

Խոստովանիմ և հաւատամ:

Յետ ասէք ներքէքէն :

Յիրաւի խոստովանիմ և հաւատամ և երկրպագանեմ քեզ Աստուած իմ Յիսուս Քրիստոս փառաւորեալ ընդ հօր յաթոռ փառաց 'ի բարձունս. որ խոնարհութեամբ իջեալ յերկնից՝ մատչիս 'ի վերայ սրբոյ սեղանոյս՝

պա.

պատարագ կենդանի պատարագ
քաւուե̄ն, պատարագ հաշտուե̄ն ·
զոր մատուցեր 'ի վ̄ր խաչափայ-
տի, բևեռելով 'ի նմա զմեղս
մեր և զզօրուի̄ մահու :

Յաւել քահանայն · Ես [illegible] 'ի [illegible]:

Օ՛ի՞նչ տաց քեզ տ̄ր տրիտուր
ը̄ ամ̄ն՝ զոր արարեր և զոր ցու-
ցեր ինձ · զի՞նչ այլ՝ բայց միա՛յն
զա̄ծդ կենդանի՝ ո̄յդ կենդան-
ւոյ : Խորհուրդ անհաս 'ի վեր
ք̄ զա̄մ միտս, և ընծայ մեծ ք̄
զա̄մ պարգևս · որով կարօ՛ղ եմ
համարձակիլ՝ զմեծամեծս ևս
հայցել յանբաւ մարդասիրութ̄ե
քումմէ, և զմեծութի̄ փառաց
յարքայութե̄ երկնից :

Յաւել քահանայն · Որպէս չէ եղիցի
սա Լի̄ա :

Սա եղիցի ինձ կեանք տ̄ր տ̄ր
փրկութե̄ իմոյ · սա եղիցի պար-
տաւորելոյս թողութի̄ մեղաց և
քաւութի̄ յանցանաց · սա եղիցի
վտան-

վտանգեցելոյս ակնկալուն ազա-
տութեն և մահացելոյս թոշակ ան-
մահութեն ։

Յաւել ժամանակին · ընդ որս և մեղ ԼԱ։

Կարօտ եմ այցելութեն քում · յե-
րաւելի կարօտ եմ Տէր · ա՛յց արա
առ իս ողորմութբ քով · ա՛յց արա
մարդասիրութբ քով · ա՛յց արա
խնամովք տեսչութեն քո ։ Ա՛յց ա-
րա և այնոցիկ, որք կան և հեծեն
՚ի կարօտութեն, և ՚ի տագնապ
սրտի նեղութեն · և ցո՛յց առ ամենեսին
զգութ սիրոյ քո ։

Յաւել ժամանակին · Նա— Եղիցի ողոր-
մութիւն ։

Յօղեա՛ Տէր զցօղ առատ ողոր-
մութեն քո ՚ի վիրաւորեալ հոգի
իմ՝ մշտկաւ ամենամոր վիրացդ՝
զորս վիրաւորեցար վասն սիրոյ
իմոյ ։

Յետ Հայր մերին ։

Ընկա՛լ Տէր զպաղատանս և ըղ-
ձալութիս իմ՝ զորս սրտի մտօք
քեզ

քեզ մատուցանեմ · և խոնար-
հեալ առաջի մեծ վայելչութե-
քո՝ հայցեմ ՚ի քաղցրութե քում-
մէ՝ զի եկեսցէ ՚ի վր իմ արքայ-
ութի քո ՚ի կեանս և ՚ի մահու :

՚Ի ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԸՂ-
ԽՈՐՀՈՒՐԴՆ :

Բարձր լեր տր որ բարձրացար
՚ի վր խաչին, և բարձեր զդա-
տապարտութի ազգի մարդկան ·
բարձ և յինէն զապականութի
մեղաց · և բարձր արա զանձն իմ
՚ի դրանց դժոխոց ՚ի մահուանէ
հոգւոյ :

ՅԱՒԵԼ ՔԱՀԱՆԱՅԻՆ · ՚Ի ՄԷ ՚Ի ՄԷ :

Կեցո և ամրացո զիս յս որդի այ՝
օրհնութբ կենդանարար մարմնոյ
և արեան քո · դու յոյս իմ և
կեանք · դու ցնծութիւն հոգւոյ
իմոյ · դու երանութի յաւիտե-
նական · և քեզ փառք յաւի-
տեանս :

Յա-

## Յաղօթել քահանայէն ՚ի ժամուն ։

Ընկեալ առ ոտս կենարար փրկչիդ՝ փափաքիմ թանալ արտասուօք, և համբուրել ներքին շրթամբք, և փարել խանդակաթ սիրով։ Մի՛ մերժեր աղաչեմ ըզ փափաքմունս իմ, և մի՛ արհամարհեր զխղճ տարփման հոգւոյս մի՛ ՚ի բաց հաներ յերեսաց քոց զդատապարտեալ անձն իմ, և մի՛ անտես առներ զամօթապարտեալ ծառայ քո . մի՛ զրկեր զիս ՚ի պտղոյ չարչարանաց քոց, և մի՛ անմասն կացուցաներ ՚ի շնորհաց սբյ պատարագիս ։ Մի՛ հայիր յանարժանութի իմ, այլ՝ հայեա՛ց յարժանաւորութի մեծի խորհրդոյս, զոր ՚ի փրկութի իմ սահմանեցեր ։

Մաքրեա՛ զիս սովաւ յամ արատոյ մեղաց . կազդուրեա՛ զիս սովաւ ՚ի նորոգութի առաքինական կե-

կենաց . հաստատեա՛ զիս սովաւ 'ի բարին, և պաշտպանեա՛ սովաւ յամ չարէ : Սա եղիցի ինձ ազատութի̃ և փրկութի̃ յա̃մի . սա եղիցի ինձ մխիթարութի̃ և ուրախութի̃ սրտի . սա եղիցի ինձ գրաւ փառաց արքայութե̃ և առհաւատչեայ երջանիկ յարութե̃ : Իցէ՞ թէ հաճէր սովաւ մեծութի̃ և բարձրութի̃ քո հայիլ առ իս հաշտ ակամբ : Իցէ՞ թէ լինէր ինձ գտանել սովաւ զթողութի̃ ա̃մի՝ զորս գործեցի ընդդէմ հրամանաց և կամաց քոց : Իցէ՞ թէ յաջողէր ինձ սովաւ՝ առանց մեղաց անցուցանել զաւուրս կենաց իմոց . և սրբաբար ժամանել առ քեզ, և օրհնել զքեզ յաւիտեանս յաւիտենից :

'Ի ճաշակել ժամանակին զսուրբ խորհուրդն :

Արժանաւորեա՛ զիս տ̃ր իմ ճաշակել խորհրդեամբ ընդ քահանայիս

նայիս զմարմին և զարիւն քո փրկական. և ըստ իրապէս ճաշակմանս՝ շնորհիւ միանալ ընդ քեզ, և հոգւով փոխարկիլ ՚ի քեզ. ընդունիլ ՚ի քէն զձիրս պարգևաց քոց, և հաղորդիլ զեղման աստուածային լուսոյդ: Արդ զի կարօղ լինէի զինիլ և վառիլ սովաւ ընդդէմ հակառակամարտ չարին, և զօրանալ արիութեամբ ընդդէմ գրգռութեան երկրաքարշ մարմնոյ. յաղթօղ հանդիսանալ ընդդէմ հրապուրանաց աշխարհային իրաց, և դերադոյն գտանիլ վտանգաւոր և վնասակար առթից: Յառաջադէմ ընթանալ յընտիր վարս, և անմոլար առաջնորդիլ յանբիծ և յանարատ կեանս. մեռանիլ ընդ քեզ ըստ հին մարդոյն վասն սիրոյ քո, և կենդանանալ ՚ի քեզ ըստ նոր մարդոյն ՚ի փառս անուան քո:

Յա-

Յաւարտ ս̅բյ պատարագին ։

Աւետաւոր քարոզութ̅ աւետարանի քո տ̅ր յս̅՝ բերկրեցո՛ զսիրտ իմ · և լիութ̅ օրհնութ̅ե քո՝ զա̅մ զոր խորհիմ, զոր խօսիմ, և զոր գործեմ այսօր՝ կատարեա՛ ՚ի բարի · և կնքեա՛ բանիւ քով · որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

* * * * * * * * * * * * * * * * * *

Երկրորդ կարգ աղօթից ՚ի ժամ պատարագի ։

ՅԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ։

Պատրաստութ̅ն ։

Մտցեն աղաչանք իմ տ̅ր առաջի մեծվայելչութ̅ե փառաց քոց յառաջիկայ ս̅բ պատարագիս, զոր մատուցանեմ ա̅ծուե քում

՚ի փառս ամենատուր երրորդութեան, և ՚ի շնորհակալութիւն բիւրապատիկ բարերարութեանցդ. ՚ի թողութիւն մեղաց իմոց, և յընդունելութիւն աստուածային շնորհացդ. յօգուտ կենդանեաց և ՚ի նպաստ ննջեցելոց:

Պէ՛տ սապ շնաոհաւոր դեպեւլէտ. ՂԲ յաղագել յայս էնչ հրահանգէ, ՚ի հաստանել յայս էնչ գործ. ԼԱ:

՚Ի սկսանել պատարագին:

Բա՛ց տէր բա՛ց զփակեալ սիրտ իմ առ քեզ. և ամփոփեա՛ զցրուեալ խորհուրդս մտաց իմոց, զարթո՛ և զթմրութիւն հոգւոյս պգաստութեամբ և ջերմեռանդն յօժարութեամբ կալ առաջի քո:

՚Ի սոյաս առնանել քահանայէն:

Չունիմ տէր արժանի նուէր քեզ ընծայելոյ. փոխարէն բոլոնդակ զսիրտ իմ վերընծայեմ քեզ նուէր պատարագիս: Այլ պատկառիմ ես, և ոչ վստահիմ. զի

լի

ըն տեսանեմ զսիրտ իմ անկար-
գութե՛ և աղտեղութե՛: Դու սրր-
բեա՛ զնա քոյին շնորհիւդ. քեզ 'ի
գովութի. դու բարեկարգեա՛ զնա
արարչական իմաստութեդ՝ քեզ
'ի հաճութի. դու մաքրագործեա՛
զնա ա՛ծային պարգևօքդ՝ քեզ 'ի
բնակութիւն :

Յետ ծամամոութեն :

Ընկալութիւնդ ա՛մի, ակնու-
նելով մեծի և առատ ողորմութե
քում, առ քեզ դիմեմ, առ քեզ
ապաւինիմ, առ քեզ պաղատիմ.
ընկա՛լ զիս առ քեզ, և կա՛լ զիս
'ի քեզ: Ընդունող իմ լե՛ր և օգ-
նակա՛ն. ամենաբաւական օգնա-
կանդ տարակուսելոյ :

Յետ ո՛ք ա՛ծին :

Ա՛ծ կենդանի. ա՛ծ ճշմարիտ,
ա՛ծ հզօր և անմահ. ընկա՛լ զե-
րեքսրբեան զօրհնութիւ պաշտա-
ման քումդ ե՛րրութե, զոր սրտի
մտօք մատուցանեմ քեզ առաջի

նք սեղանոյս ։ Ընկալ 'ի խորան սրբութե երկնից . և տուր փոխարէն զսրբարար շնորհս հոգւոյդ սբյ, վառիլ 'ի սէր Ածային հաճութե քո, 'ի սէր երկնային երանութե, 'ի սէր անսպառ քաղաքավարութե, և 'ի սէր կատարել առաքինութե ։

Յետ հաղորդմանն ։

Օրացեալ յամենապարգև շընորհացդ՝ Քի ճշմարտութե ուղղափառ հաւատոյս յուսամ յանձնաւ մարդասիրութեն քո . և փափաքեմ յամ օրտէ կեալ և մեռանիլ՝ 'ի սիրել զՔեզ որ անբաւելիդ ես 'ի բարութե, և անճառելի 'ի ժառանգութե ։

Յաւել քահանային ։ Տր Ած օրհնեայէ . ԼԷ ։

Տուր ինձ Տր աղաչեմ զՔեզ, տուր ինձ օրհնութե Տյ պատարագիս ճանաչել զիս, և ճանաչել զՔեզ . Թողուլ զիս . և գըտա-

տանել զքեզ · արհամարհել զխո
և փառաւորել զքեզ · խոտել
զունայնութի կենցաղոյս , և յա-
րել միայն 'ի հաճոյս քո · ատել
զմեղս , և սիրել զկամս քո · խո-
տորիլ 'ի չարէ , և առնել զբա-
րին · լռեցուցանել զլեզու իմ
յանարգ բանից , և ընդարձակել
'ի գովութի սքանչելի և ահաւոր
մեծութե քո ։

Յաւելն · Երգոն և երրո ։

Քո՛ եմ ես ա͞ծ իմ · այո՛ ճշմար-
տապէս քո եմ ես , և ոչ օտարի ·
դու լե՛ր ինձ փրկութի և կեանք ·
դու լե՛ր ինձ առաջնորդ բարի 'ի
ճանապարհս արդարութե · դու
լե՛ր ինձ յա͞մի պաշտպան , յա͞մի
պահապան , յա͞մի զէն զօրութե , և
անվանելի վահան ամրութե ։

Յետ ա͞յ ա͞յին ։

Օրհնութի և փառք օրհնաբա-
նեալ ա͞ծութեդ յա͞մի և յա͞մ
ժամ ։ Օրհնեսցեն և գովեսցեն

զքեզ տէր արարածք ամ՟ յերկինս և յերկրի ։ Օրհնեցից և ես զքեզ 'ի կեանս իմ · օրհնեցից խորհրդով, օրհնեցից բանիւ, օրհնեցից և գործով ։ Նա և յօրհնելս իմ զքեզ գովութ՟բ՝ օրհնեցայց 'ի քէն լիութ՟բ ։ Օրհնեա անձն իմ զՏ՟ր ։

Յ[illegible] ։

Խոստովանիմ և հաւատամ ։

Յետ [illegible] ։

Մեծացուցեր առ իս զողորմութ՟ի քո Տ՟ր, սահմանեալ պաշխարհակեցոյց զայս խորհուրդ սքանչելի 'ի փառս քո և 'ի փրկութ՟ն իմ · մեծացուցանեմ և ես զշնորհս քո, և խոստովանիմ զբարերարութ՟իս քո · հռչակեմ և հրատարակեմ զերախտիս պարգևաց քոց, և աներկբայ մտօք յուսամ գտանել, զոր փափաքեմ յանձն իմ տեսանել ։

Յա

Յաւել քահանայէն : Օ յոյս 'ի յոյսդ :

Քեզ ընծայեմ զանձն իմ արա-
րիչդ ամի և տր ամ եղելոյ . քեզ
ընծայեմ և զկեանս իմ, զհոգի
և զմարմին իմ . ընծայեմ և ըզ-
միտս և զկամս իմ և զգործս . ըն-
ծայեմ և զամ զոր ունիմ, և զոր
ունիլ կարեմ . զոր կամիմ և զոր
կամիլ ախորժեմ . զոր խորհիմ
և զոր խորհիլ յօժարիմ . զի 'ի
քէն է ամ, և առ քեզ ուղղեմ
զամ : Ա՛ռ զոր ընծայեմ, և տո՛ւր
զոր խնդրեմ . տո՛ւր մաղթողիս
աղաչեմ, տո՛ւր զշնորհս քո, առ
'ի գտանել ինձ շնորհս առաջի
քո :

Յաւել քահանայէն : Սրբեա զի եղե-
ցի սա :

Արա՛ տր, զի եղիցի ճշմարտու-
թբ ընծայս խորհրդոյ 'ի քաւութն
մեղաց իմոց, և յազատութն պար-
տեացս . 'ի փրկութն հոգւոյ իմոյ,
և 'ի նորոգութն կենաց իմոց . զի

զերծեալ 'ի չարեաց՝ 'ի բարին
ուղղել փութացայց · և անմաման
զտեղ ստուերաց մահու՝ յանըս-
տուեր լոյսդ բերկրեցայց :

Յաւել քահանայն : Ընդ որս և մեզ :

Այց արա ինձ տ͞ր 'ի նեղութե͞
իմում · և ցո՛յց զօգնութի͞ քո յեր
վտանգի փորձութե͞ : Ծագեա՛
զլոյս քո խարխափելոյս 'ի խաւա-
րի , և ձեռն մատո՛ մոլորելոյս
յախտից վտանգի : Այց արա և
առ այնոսիկ ամ͞ն՝ որք ակնունին
ողորմութե͞ քում · ցո՛յց և զմար-
դասիրութի͞ քո առ այնոսիկ , որք
հեռացեալ են 'ի սիրոյ քումմէ ,
և անկեալ են յերեսաց քոց :

Յաւել քահանայն : Եւ եղիցի ողոր-
մութիւն :

Աչք ամ͞ցն առ քեզ հային և 'ի
քեզ յուսան տ͞ր · բերանք նոցա
կարդան զանուն քո և սիրտք ն͞ց
յողորմութիւն քո աղաղակեն :
Ընդ որս և ես առ քեզ գոչեմ

և

և պաղատիմ, ցոյց ինձ տէր, ցոյց և առ ամենեսին զողորմութիւն քո մեծ: Ամենեցուն գթա՛ . ամենայն խնայեա՛ . զամենայն կեցո՛ . զամենայն զօրացո՛ . զամենայն ուղղեա՛ 'ի հաճոյս կամաց քոց :

Յետ հայր մերն :

Ապաւէն փրկութեան իմոյ տէր Յիսուս՝ առ ի՛ ապաստան եղէց . առ ի՛ պաղերս իմ առաջի արկից . առ ի՛ զմթագնեալ աչս իմ 'ի վեր ամբարձից : Առ յոյսդ կենդանի, առ հովիւդ բարի, և առ հայրդ գորովալի : 'Ի քեզ տէր աւասիկ յուսացեալ եմ . մի՛ ամաչեցից յաւիտեան :

'Ի բարձրացուցանել քահանային զխորհուրդն :

Երևեցո՛ ինձ զերեսս քո ամենացանկալի՛ Յիսուս փրկիչ իմ . և փարատեսցի մէգ մոլացս, և յուզմունք խորհրդոցս : Ճառագայթեա՛ և 'ի սիրտ իմ 'ի նշուլիցդ

զլոյս

զլոյս երկնային բարուեց. և հե-
ռասցի յինէն պղտորումն երկ-
րաքարշ յօժարութեց:

Յաւել քահանայէն. 'Ի տէ 'ի տէ ևն:

Արեգա՛կն արդարութե՛ որդի՛ այ
ազդեա՛ 'ի հոգիս զջերմութի՛ ած-
ային սիրոյ քո. և յափշտակեալ
վերացո՛ և ժողովեա՛ առ քեզ
զիղձ փափաքանաց հոգւոյս ըստ
նմանութե՛ բարձրանալոյ գոլոր-
շեաց հողոյ:

Յաղօթել քահանայէն 'ի ծածուկ:

Սքանչելի եղև առ իս մարդասի-
րութի քո տր. և բազմապատիկ
եղեն բարերարութիք քոյ, զորս
ցուցեր ինձ. զո՞րն թուեցից, և
զո՞րն եղից առաջի. և յաղագս
որո՞ց խօսեցայց: Մինչդեռ ատե-
լի էի՝ 'ի սէր սաստիկ սիրեցեր
զիս. մինչդեռ թշնամի էի՝ բարե-
կամական համբուրիւ գրկեցեր
զիս. մինչդեռ աղտեղել շրջէի
առաջի քո՝ պայծառութե՛ շնորհաց

քոյ զարդարեցեր և ճոխացու-
ցեր զիս :

Տո՛ւր ինձ զքեզ բոլոր , զի զիս արասցես քեզ բոլոր . որպէս թէ անկարօտդ ա՟մի կարօտ ինչ էիր իմումս անարգութե՟ և ոչնչութե՟ : Ինչ՞ արդեօք ունէիր մեծանալ մեծատուունդ յիմի . ինչ՞ արդեօք ունէիր պարծիլ ո՟րդ պարծանաց . ինչ՞ արդեօք ունէիր փառաւորիլ փառաւորեա՛լդ 'ի բարձունս : Ո՛ ի՞նչ ակնունէիր տեսանել յիս և ընդունիլ յինէն . բայց միայն զապերախտութիւն ընդդէմ երախտեացդ և զանօրէնութիւն ընդդէմ բարեհաճութե՟դ , զդառնութի՟ ընդդէմ քաղցրութե՟դ , և զչարութի՟ ը՟դէմ բարութե՟դ : Այլ արդ մի՛ մոռանար զգութ մարդասիրութե՟դ , և մի՛ զայսքան խնամս բարերարութե՟դ : Մի՛ մոռանար և զիս , առ որ ցուցեր զայս ա՟մ : Յիշեա՛ , խնայեա՛ , գթեա՛ ,

գթա՛ , ողորմեա՛ և ներեա՛ ։

Ի ճաշակել քահանայէն զխորհուրդն ։

Տո՛ւր ինձ զքեզ Տէ՛ր սրբարար սրտի կերակուր . և ա՛ռ զիս քեզ պատարագ ընդունելի և ընծայ մաքուր ։ Մի՛ արհամարհեր զանձն իմ իբրև զանարժան . և մի՛ տաղտկութեամբ հայիր յիս իբրև ՚ի խոտան ։

Թող եմ և քոյդ լինել փափաքեմ . դու փրկեցեր զիս , և դու գնեցեր . փրկեցեր՝ մատնելով զմարմինդ ՚ի չարչարանս վասն իմ . գնեցեր՝ հեղլով զարիւնդ քո առ ՚ի փրկանս իմ ։ Մի՛ ունայնասցի առ իս փոյթդ փրկելոյ , և մի՛ ՚ի զուր երևեսցի կիրքդ կամաւոր ։ Մի՛ ծիծաղեսցին զինև թշնամիք իմ յանարգելդ զիս . և մի՛ աւաղեսցեն զանձն իմ ծառայք քո ՚ի խոտելդ զիս ։ Մի՛ յամօթ եղեց ՚ի ծածկել քո զերեսդ յինէն . և մի՛ կոր ՚ի գլուխ դարձայց՝ մերժեալ

ժեալ առ՚ի քէն ։ Յանձնարկելդ
քո յիս գթով՝ ոգի առից, և հայե֊
ցայց 'ի քեզ սիրով . 'ի գտանել
քո զիս խնամով, գտից և ես ըզ֊
փրկիչդ իմ փութով . 'ի կոչելդ
զիս առ քեզ քաղցրութ՟բ, եկից և
ես առ կենարարդ խոնարհութ՟բ ։
Միացայց ը՟ քեզ անմեկնելի,
և մնացից առ քեզ անբաժանելի
միշտ և յաւիտեան ։

Յառաջ պատարագին ։

Խաղաղութիւն ա՟մի որդի ա՟յ, խա֊
ղաղայն՛ և պարսպեալ ամրայն՛
զկեանս իմ երկնային խաղաղու֊
թ՟բդ քով ։ Ուղղեա՛ և կարգեա՛,
յարմարեա՛ և յաջողեա՛ զա՟մ ըզ֊
գործս իմ 'ի փառս անուան քո
ա՟յ . որ ես օրհնեալ ը՟ հօր և ը՟
ս՟բյ հոգւոյդ յաւիտեան և յա֊
ւիտեանս . ամէն ։

## Ութերորդ կարգ աղօթից 'ի ժամ պատարագի :

## ՅԵՐԵՔՇԱԲԱԹԻ :

### Սարգէաւ'ի դիմաց մեղաւոր անձին : Պարտաւորութն :

Սոսկամ տր մատչել 'ի տեսութն ահաւոր խորհրդոյ պատարագիս, գուցէ փխկ հաճելոյ զկամս քո , շարժեցից զցասումն բարկութե քո 'ի վր իմ : Բայց վստահացել 'ի դիտաւորութն սբ եկեղեցւոյ համարձակիմ մատչել և մատուցանել քեզ զպատարագս զայս 'ի փառս ամենասրբ երրորդութեդ , և 'ի գոհութն բազմապատիկ բարերարութեցդ . Եւ ( որպէս եդաք յառաջին և յերկրորդ կարգն :)

'Ի

Ի սկսանել պատարագին :

Անարժան եմ տ̃ր, այո՛ անարժան եմ ես կալ ը̃ ծառայս քո յանդիման փառաց մեծվայելչութե̃ քո 'ի ժամուս յայսմիկ : Այլ դու անարգամեծա՛ր թագաւոր մի՛ յանդիմաներ զանարժանութիւն իմ, այլ նայեա՛ց յարժանաւորութի̃ ծառայից քոց . և հա՛ն ինձ մասն և բաժին ողորմութե̃ 'ի պարգևացդ, զոր առատաձեռնես առ նո̃ :

Ի սպաս արկանել քահանայէն :

Մինչև յե՞րբ տ̃ր, մինչև յե՞րբ անկեալ դնիցիմ 'ի մահիճս ախտից անխրատութե̃ . մինչև ցե՞րբ տուայտեալ մաշիցիմ 'ի խղճէ մտացս չարութե̃ . մինչև ցե՞րբ ծառայեցից անկարգ և անարգ բերմանս բնութե̃ : Ո՞վ օգնեսցէ ինձ և հանցէ զիս յապականութե̃ աստի թշուառութե̃ իմոյ . դու միայն կարող ես տ̃ր . դու արա՛ . և դո՛ւ

լեր

լեր ձեռնտու ։

Յետ ժամամուտին ։

Ո՛ւր եմ և զի՛նչ առնեմ, ոչ իմանամ և ոչ 'ի միտ առնում։ Կամ առաջի քո տէր շաղախեալ յարեան մեղաց և անօրէնութե՟ · յիմարեալ 'ի խորհուրդս աղտեղութե՟, և ը՟արմացեալ 'ի կամս թմրութե՟ իսպառ ։ Այլ դու ամենահայեա՛ց տեսութ՟ի մի՛ խըրտուէ՟ աչաց հայիր յիս · այլ ամենադարման գթութե՟քով խնայեա՛ և կեցո՛ ։

Յետ ն՟է ժ՟ծին ։

Հալիմ հայելով յանձն իմ, և պատկառեմ · մաշիմ ակնարկելով առ քեզ, և զարհուրիմ։ Դու սրբութի՟ ես, և ես աղտեղութի՟ մեղաց · դու հզօր զօրութի՟ փառաւորեալ յա՟մի, և ես անարգութի՟ տկարութե՟ անպիտան յա՟մի · դու յաւիտենական անմահութի՟ կենաց, և ես ինքնածին փշաբեր

գար-

դարշուն սատուերամած : Այլ դու ինքն տէր՝ ողորմեա՛ ինձ , գթա՛ յիս , և ա՛յց արա առ իս :

Յետ հաւատամքին :

Վա՛յ անձինս մեղաւորի , որ մեռեալս եմ 'ի կենդանի հաւատս ունիմ այս զճշմարիտ և ուղիղ դաւանութիւն սուրբ եկեղեցւոյ , և գործեմ զգործս չուննողի զհաւատս և չարի քան զանհաւատս :

Ո՛ ինչ արարից թշուառականս , և յի՛նչ վստահացայց անկեալս յերեսացդ ա՟յ , և կամ յո՛ յուսացայց հատեալս 'ի յուսոյ : Այլ դու փրկիչդ ա՟մի և յոյսդ ա՟մյն որդի ա՟յ , կենդանացո՛ զիս 'ի գործս բարեկրօն կարգաց ըստ դաւանութեան հաւատոյս :

Յաւել քահանայէն : Տէր ա՟ծ օրհնեալէ :

Միշտ օրհնիմ 'ի քէն տ՟ր , և ես յանիծաշաղախ տիղմն թաւալիմ · յա՟մի լնամեալ և սուզեալ

լինիմ առ 'ի քէն , և ես տունկս դառնուե͞ պաղաւաղեալ և զմրտ-տեալ բոյս բուսուցանեմ առ-ջինէն : Լուսաւորիմ 'ի պայծա-ռուե͞ լուսոյ շնորհաց քոց , և ես 'ի խաւարի խռովութե͞ շրջիլ ա-խորժեմ : Ջանամ անդորրա-նալ մարմնով , և փութամ մե-ռանիլ հոգւով . զհետ եմ մաք-րել և յարդարել զարտաքինս իմ , և հնարիմ աղտեղել և եղ-ծանել զներքինս իմ : Օ՜խ լքել զիմոցս հոգամ . ցանկամ՝ բարի և պատուական տեսանել ոչ զիս , այլ զիմս : Եւ ահա յայսպիսի և յայսչափ անդէպ և անբարի կիրս ծանրացեալ՝ ամօթալից և ամօթապարտեալ գտանիմ ա-ռաջի աչաց քոց : Ոչ կարող է ամենաբաւական ձեռն քո տէր յս͞ ազատել և ապրեցուցանել զիս :

Յա-

Յաւէլն ։ Արծան և Երաւ ։

Այլ՛ ո՛ր զի՛ քև արձակեալ և քև
զերծ գտեալ ՚ի շղթայից և ՚ի
կապանաց բռնութե՛ չարաչար
սովորութեց , արժանի եղէց լիա-
բերան գովութ՟ փառաւորել և
օրհնել զքեզ․ մնալ ՚ի շնորհս
քո , և կատարել զհաճոյս քո
հանապազ ։

Յետ ոճ ոճին ։

Զքեզ ո՛ր օրհնեն զուարթունք
և զքեզ բարեբանեն ՚ոյք յար-
քայութե․ զքեզ գովեն ծառայք
քո , և զքեզ փառաւորեն արա-
րածք ոմ ։ Ես միայն՝ անարգս
քան զամ՝ յամի դառնացուցա-
նեմ զքեզ․ ես միայն՝ վատթարս
քան զամ՝ վատթար խորհրդովք
մտաց տաղտկացուցանեմ զե-
րեսս քո և բանիւք թիւնալից
լեզուի իմոյ տրտմեցուցանեմ
զհոգի՛ոյ ։ Ես միայն՝ անօրէնս
և անիրաւս քան զամ՝ անօրէն գ

 րե-

բինօք և անխրատ արարովք զայ-
րացուցանեմ զբարերարդ իմ .
և ամենակործան գայթակղութե
մոլեգնիմ և ամպարշտիմ առ
քեզ : Այլ դու անոխակալ Տէր
մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն . մի՛ զայրանար , մի՛ տաղտկա-
նար , և մի՛ անարգեր զիս . գթա՛
զի քոյ եմ . և ցո՛յց առ իս զողոր-
մութիւն քո . և ուղղեա՛ զթիւրեալս
յուղղութենէ՝ յուղղութիւն և յամի-
ծութիւն օրինաց քոց :

ՅԱՌԱՋ ԵՐԵԿՈՅՆ ԵՒ ՅԵՐԵԿՈՅՆ :

Խոստովանիմ և հաւատամ :

ՅԵՏ ԱՌԱՋ ԵՐԵԿՈՅԻՆ :

Տեսանելով աւասիկ զթագա-
ւորդ թագաւորաց և զդատա-
ւորդ կենդանեաց և մեռելոց
բազմաւ խորհրդեամբ ՝ի խաչի
՝ի վերայ սեղանոյս , երկնչիմ և
դողամ . զուցէ մերժեցայց ՝ի
քաղցրութենէ աչաց քոց ՝ի բաց . և ըն-
կեցայց ՝ի խնամոց մարդասիրութե

քո ,

քո․ Նա զի մերժեալ իսկ եմ 'ի շնորհաց քոց, և մատնեալ 'ի դրունս աններելի դատաստանաց ։ Այլ յոյս առեալ անդրէն ազատուե̃ և ներողուե̃՝ ապաւինիմ 'ի գութ երկայնամիտ մարդասիրութե̃ քո, և յա̃մ անձնէ յանձն առնեմ զիս քեզ Տ̃ր ․

Տ̃ր փրկուե̃ իմոյ ։

Յաւէլուժահանայէն ․ Օժոյս 'ի ժոյոց ։

Բանի՞ք են՝ որք քեզ ընծայեն Տ̃ր զմեծամեծ գործս հաճոյականս կամաց քոց ․ քանի՞ք զսըրբուի̃ սրտի ․ քանի՞ք զպգաստուի̃ մտաց ․ քանի՞ք զհեզուի̃ և զխոնարհուի̃ ․ քանի՞ք զպահեցողուի̃ և զյանձնառուի̃ վշտաց ։ Իսկ ես ձատթարացեղս և վարակեղս 'ի չարիս՝ չունիմ ինչ մատուցանել քեզ նուէր ընդունելի ․ ընդմեղս իմ ևեթ և զանօրէնուի̃ս իմ տարածանեմ առաջի քո ․ ընդխառնարեալ միտս և զթշուառա-

ցեալ կամս իմ արկանեմ զզար-
շապարօք ոտից քոց : Մի՛ վաներ
՚ի բաց զաղքատս՝ ոտն հարկանե-
լով, այլ՝ վանեա՛ յինէն խապա-
զմեղս իմ և զանօրէնութ͞իս, և ս͞բ
արա՛ զիս :

Յաւել ձայնականն . Որպէս չէ եղիշէ
ստ մեղ :

Լեր դատապարտելոյս անդատա-
պարտութ͞ի մ͞ծ ազատարարդ ա͞մ͞ի
տ͞ր յ͞ս, և յուսահատելոյս ակն-
կալութ͞ի բարի վստահութ͞ե . մահա-
ցելոյս նորոգութ͞ի կենդանութ͞ե,
և կորուսելոյս հնարաւորութ͞ի ա-
պատութ͞ե . կործանելոյս ձեռնկա-
լութ͞ի հաստատութ͞ե, և մոլորելոյս
ուղղութ͞ի առաջնորդութ͞ե . աղե-
կոծելոյս խարիսխ ամրութ͞ե, և
նաւաբեկելոյս նաւահանգիստ
խաղաղութ͞ե :

Յաւել ձայնականն . Ընդ որս նո մեղ :
Տէր չեմ բաւական քումդ այցե-
լու͞ե, և ոչ արժանի մեղաց քա-
ւու-

ւուն. յիրաւի եմ միայն չեմ ար-
ժանի և ոչ իմիք յիշատակի. զի
քան զա՟մն առաւել յանցաւոր
գտայ առ քեզ, և մեծացան ա-
նօրէնութիւք իմ քան զմեղս խաչա-
հանուաց քոց. զի նոքա ոչ գի-
տէին՝ զոր գործէինն, վ՟յ և թո-
ղութ՟ե արժանի գտանէին, յա-
սել փրկիչդ վ՟ն ն՟ց. հա՛յր թո՛ղ
դոցա, զի ոչ գիտեն զինչ գոր-
ծեն։ Ես գիտու՟բ մեղայ. գի-
տու՟բ անօրինեցայ. գիտութ՟բ
գլորեցայ, վ՟յ և աններելի գը-
տայ։ Մի՛ լուայց ո՟ր զհակառա-
կաձայն սոսկալիդ բարբառ, հա՛յր
մի՛ թողուր սմա, զի գիտէ զի՛նչ
գործէ։ Գիտեմ այո՛ զոր գոր-
ծեցի. այլ քանզի անհաս և ան-
քննելին են ողորմութիւք աւետեաց
քոց, դիւրին է քեզ ներողութ՟ե
արժանի առնել զանարժանս։

### Յաւել ջահանմայէն · Նա եղիցէ ողորմութին ։

Մի՛ ըստ անօրէնութեան իմում յանդիմաներ զիս տէր, և մի՛ ըստ ապիրատութեան իմում ըստ վայր հարկաներ զանձն իմ. այլ ըստ մեծի ողորմութեան քում խնայեա՛ յիս, և ըստ բազում գթութեան քում ներեա՛ ինձ վասն պատուական և սուրբ արեան քո՝ զոր հեղեր ՚ի փրկութիւն իմ։

### Յետ Հայր մերին ։

Համարձակեցո՛ զիս Հայր ամենակալ, կարդալ և պաղատիլ առ քեզ ճշմարիտ յուսով։ Պատառեա՛ աղաչեմ զպնդութիւն խստացեալ սրտիս՝ հարուածով տեղախոց կողի միածնիդ՝ զի լացից և ողբացից զանօրէնութիւնս իմ. և խոնարհ խոստովանութեամբ գտից առ ՚ի քէն զթողութիւն անթողլի մեղաց իմոց. և հաստատեցայց ՚ի շնորհս հոգւոյդ սրբոյ։

'Ի բարձրացուցանել ժամանակին ըն-
խորհուրդն :

Ոչ ներեն անօրէնութիւնք իմ 'ի վեր ամբառնալ զաչս, և տեսանել զբարձրութիւն մեծի խորհրդոյս : Ծանրութիւնք մեղաց իմոց եւս յերկիր կորացուցանեն զերեսս իմ, և յուսաբեկ առնեն զիս : Այլ դու բազմագութ փրկիչ դարձո՛ առ իս զաչս քո · տե՛ս զխոնարհութիւն իմ, և կանգնեա՛ զանկեալս 'ի մահ :

Յաւել ժամանակին , 'Ի տէ 'ի տէ :

Ո՛վ ամենաբարի տէր, նայեա՛ յիս 'ի վտանգեալս յանցանօք, և մատո՛ յիս ձեռն 'ի կործանեալս անկանգնելի : Ազատեցո՛ զոգիս 'ի ձեռաց այսոյն չարի · և ապրեցո՛ զիս 'ի հեղձմանէ ծովացեալ անօրէնութեանց իմոց : Կեցցէ անձն իմ · օրհնեսցէ զքեզ :

Յաղօթել ժամանակին 'ի ծածուկ :

Ճանաչեմ և խոստովանիմ տէր,

զի

զի դու ինքն արարեր և ստեղ-
ծեր զիս 'ի պատկեր քո և 'ի նմա-
նութ̃ի սխրալի. իբրև զայգի տըն-
կեցեր զիս. ցանկով նախախնա-
մութ̃ե քո պատսպարեցեր զիս.
ցօղով շնորհաց նորոգեցեր զիս.
անձրևօք պարգևաց քոց աճե-
ցուցեր և ճոխացուցեր զիս։ Իսկ
ես յիմարեալս և խելագարեալս՝
յա̃մի ապերախտ գտայ առ երախ-
տաւորդ իմ, և ապաշնորհ երևե-
ցայ առ առատապարգևդ. յա-
պականութ̃ի դարձուցի զայգի իմ,
և քակտեցի զցանկ գթոյ քո.
հնացայ 'ի փտութ̃ի, և ցամաքե-
ցայ յա̃մ արգասեաց։ Այլ դու
երկայնամիտ ո̃ր մի՛ հայիր 'ի չա-
րիսն իմ՝ զորս հատուցի, այլ 'ի
բարիդ՝ յորս ինձէն անիրաւե-
ցայ. այո՛ հայեա՛ց 'ի բարերա-
րեալդ քո առ իս, և մի՛ յանիրա-
ւիլս իմ առ քեզ. հայեա՛ց յայն՝
զոր արարեր, և մի՛ յայն՝ զոր ա-
րա-

րարի · զի քոյդ զքեզ յորդորէ 'ի գթուե̃ն · և իմս զարթուցանէ 'ի բարկուե̃ն ։ 'Ի քոյդ ապա ապաստանեալ՝ 'ի քեզ յանձն առնեմ զիս · արա՛ ը̃ իս՝ որպէս և կամիս

տէր ։

'Ի ճաշակել քահանայէն զհաղորդութիւն ։

Պատեալ է զինև մառախուղ մթութե̃ մեղաց , և պաշարեալ է զհոգի իմ անձկութի̃ չար ունակութե̃ց · հեռացեալ է յինէն հոգի ս̃յ , և մեկնեալ է ազդուութի̃ երկնային շնորհաց ։ Ես երևին յանձն իմ հետք առաքինութե̃ց , և ոչ տեսանին նշմարանք բարութե̃ · այլ՝ յա̃մի եղծումն ապականութե̃ , և յա̃մ կողմանց բեկումն թշուառութեան · և ես յամենայնի մոլորաշաւիղ շուարեալ տատանիմ և տագնապիմ ։ 'Ի խորհիլս իմ զբարին՝ 'ի չարն բերիմ , և 'ի խօսիլ զօգուտն՝ ունայնս բարբառիմ · 'ի

կա-

կամելս իմ զլաւն՝ զյուռին ընտ-
րեմ, և 'ի մառտչիլն 'ի գործ՝ 'ի
Թիւրն խոստորիմ. 'ի հանդար-
տիլ սակաւ մի՝ 'ի կրից հողմոյ
իբր փոշի յափշտակիմ, և 'ի ծաղ-
կիլս առ վայր մի՝ համայն 'ի պտ-
ղոյ Թօթափիմ։ Կրկնամեռ ծառս
դառնութեան յարմատոյ գոսա-
ցեալ. ալէտանջ նաւս տատա-
նական 'ի կոհակաց կարեաց խոր-
տակէն. անպատուհան պալատս
անվայելուչ 'ի հիմանց ներքնոց
խախխալեալ։ Ո՞հ, զիա՛րդ ապատ
գտայց յայսքանեաց ոգեկործան
յուսահատութեանց. երբ արդեօք
զերծայց յայսպիսեաց ամենա-
վարան ախտաւորութեանց. ուստի՞
արդեօք եկեսցէ ինձ օգնականու-
Թի՞ փրկել զանձն իմ յամենավ-
տանգս աստի հեղձամղձուկ յոր-
ձանաց։ Ո՞չ զօրասցէ՛ ամենա-
հնար բազուկ գթութեան քո տէր զօ-
րութեանց 'ի վերայ իմ, և յաղթեսցէ

տմի

ա͞մի 'ի վեր քան զ͞ամ : Բայց տէր բա՛ց զդուռն ողորմութե՛ քո . և հա՛ն ինձ յամենայնի գանձուցդ անչափ առատութե՛ մասն բարի՝ ազատարար պարգևացդ :

Յաւարտ ս͞բյ պատարագին :

Լիացա՛ տ͞ր և յագեցա՛ զսովեալ անձն իմ գէթ 'ի կոտորոյ թօթափելոյ 'ի լիուէ՛ սեղանոյ քո , և կերակրեա՛ հոգևորական հացիւդ կենաց զհոգիս լքեալ : Նազդուրեա՛ և զօրացո՛ զիս , զի կարողացայց ելանել 'ի մեռելութե՛ մեղաց . և յամբիծ վարս առաջնորդեալ ժամանեցից առ քեզ , և փառաւորեցից զքեզ յաւիտեանս յաւիտենից :

Զոր

## Զօրօրէ հարկ աղօթից ՚ի ժամ պատարագի։

## Ի ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ։

Ուղղեալ ՚ի դէմս սբ Ածածնին։
Պնէպատորութէ։

Մայր ողորմութեան սբ Ածածին․ բարեխօսեա՛ վս իմ առ որդիդ քո միածին՝ տալ ինձ զշնորհս իւր, զգաստութն կալ ՚ի ժամ սբ պատարագիս․ զոր տեսանեմ և մատուցանեմ ՚ի փառս ամենասբ երրորդութեն, և ՚ի գոհութի ած-ային բարերարութեց, ՚ի թողութի ամ մեղաց իմոց, և յընդունելու-թի շնորհաց հոգւոյն սբյ, յօ-գուտ կենդանեաց, և յօժան-դակութի ննջեցելոց։

Մա

( Սաս դէր զմանաւոր դիտէլիտ : )

'Ի սկսանել պատարագին :

Լուսաւորեա՛ զիս զխաւարեալս մեղօք մայրդ լուսոյ սբ̃ ա̃ծածին · զի ծանեայց զյանցանս իմ և զա-պիրատութի̃ գործոյ իմոյ, և ճըշ-մարիտ զզջմամբ լալով 'ի վ̃ր նց̃ գտից յորդւոյ քումմէ զքաւութի̃ և զթողութի̃ ա̃մի 'ի ժամ պատա-րագիս :

'Ի սպաս արկանել քահանայէն :

Ընկեալ առաջի քո պաղատիմ առ քեզ սուրբ ա̃ծածին · մաս-նաւորեա՛ ինձ 'ի գթուէ քումմէ 'ի ժամուս յայսմիկ մասն բարի, և 'ի շնորհաց քոց զձիր կենդանի · բաց մաղթողիս դուռն ողորմու-թե̃, և տուր խնդրողիս ձեռն այցելութե̃ · ցոյց ինձ ճանապարհ հոգւոյս փրկութե̃, և ուղղեա՛ ըն-թացս իմ 'ի շաւիղս ամբծութե̃ և արդարութե̃ :

Յետ ճաշակմանն :

Խնդամ տր̃ փառս անուան քո ո՛վ
ամենաբերկրեալ սբ̃ կոյս մա-
րիամ փառաւորեալ տիրուհի ·
և ցնծամ տր̃ անհասանելի սքանչելի
բարձրութե̃ն քո : Արժանաւորեա՛
զիս բարեբանեալ սբ̃ ա̃ծածին
օրհնել և գովել զքեզ զօրհնեալդ
և զգովեալդ ՚ի կանայս, և մե-
ծացուցանել զերանեալդ յա̃մ
ազգաց յաւիտեան :

Յետ տ̃ր ա̃ծին :

Օրհնեալ տ̃ր ա̃ծ իսրայէլի՝ որ
օրհնեաց զքեզ ա̃մ հոգևոր օրհ-
նութբ̃ ո՛վ ամենամաքուր կոյս :
Օրհնեալ է հայր յերկինս, որ
սքանչացոյց զքեզ զդուստրդ լու-
սոյ · օրհնեալ որդին միածին,
որ մեծացոյց զքեզ զմայրդ լու-
սոյ · օրհնեալ հոգին սուրբ ա̃ծ,
որ զարդարեաց զքեզ զհարսնդ
լուսոյ : Օրհնեա՛ և դու զիս ՚ի
լիութե̃ օրհնութե̃դ սբ̃ ա̃ծածին · և

սքան

սքանչացո՛ յիս զօրհնութի՟ հօրն երկնաւորի · մեծացո՛ առ իս ըզ-գթասիրութի՟ որդւոյ քո, և զար-դարեա՛ զհոգի իմ պարգեւօք հոգւոյն սրբոյ :

Յետ հաղորդութեան :

Անյեղական աւանդ ունելով ա՟ծային զճշմարիտ հաւատս ո՟ր եկեղեցւոյ՝ նովին հաւատով դա-ւանիմ և խոստովանիմ զքեզ մայր ՚ի կուսութե՟, և միշտ կոյս ՚ի մայրութե՟ սուրբ ա՟ծածին · և ա-ղաչեմ զքեզ հաստատեա՛ զիս համայն ՚ի ճշմարտութե՟ հաւատոյ · և պահեա՛ զիս անսասան ՚ի նմին կալ, և աներկբայ ՚ի նմին մե-ռանիլ :

Յաւել քահանայն · Տ՟ր ա՟ծ օրհնեալ է :

Նայեա՛ յիս աղաչեմ զքեզ ո՟ր ա՟ծածին · նայեա՛ քաղցրութ՟բ · նայեա՛ մայրենի գթով · նայեա՛ գորովալից սիրով : Բաւական է նայիլդ միայն՝ ՚ի զգաստութի՟ տա-

բոկուսելոյս , 'ի վատահունն սըր-
տաբեկելոյս , 'ի յուսադրութե̃ն
վարանելոյս , 'ի բժշկուե̃ն հիւան-
դացելոյս , 'ի յանդորրուե̃ն նա-
ւակոծելոյս , և 'ի բերկրութե̃ն
ոգեսպառ տխրեցելոյս : Ոչ 'ի
նայելդ ծանրանաս մա՛յր ՚որ , և
ոչ 'ի խնամելդ խստանաս . ոչ
յակնարկելդ դժուարիս , և ոչ
յօժանդակելդ դժկամակիս : Այլ
միս և հաճիս ՝ ա̃մյն յա̃մի ցու-
ցանել զգութ սիրոյ քո . ցո՛յց և
ինձ աղաչեմ , և մի՛ զրկեալ կա-
ցուցաներ զիս զկարօտեալս գթոյ
և սիրոյ քո :

Յաւելն . Արծան և երաւ :

Մենապայծառ սիւն լուսոյ նո-
րոյս իսրայէլի , և ամպ հովանի
որդւոց սիոնի՝ ՚որ ա̃ծածին . դու
գրաւական փրկութե̃ն մարդկային
սեռի , և միջնորդ հաշտութե̃ն
ծննդոցս եւայի . դու ուրախութե̃ն
երկնի և երկրի , և աւետիս կե-
նաց

նայ համօրէն Տր ։ Դու օգնեա՛ ինձ յամի, և լե՛ր ձեռնտու յամ ժամու, առանց մեղաց անցուցանել զաւուրս իմ զամ, և ամբիծ վարուք ծառայել որդւոյ քո միածնի և անմահի, և քեզ միայնոյ փառաց դշխոյի ։

Յետ տր տրին ։

Անապական կոյս Մարիամ մր ածածին՝ աղաչեմ զքեզ, սրբեա՛ զհոգի իմ. ամփոփեա՛ ըզ-միտս իմ. մաքրեա՛ զսիրտ իմ. նորոգեա՛ զկեանս իմ ։ Արբո՛ ըզ-ծարաւեալս. կազդուրեա՛ զքաղցեալս ։ Ապրեցո՛ զվշտացեալս. զօրացո՛ զվտանգեալս ։ Կանգնեա՛ զգլորեալս. ազատեա՛ զպարտաւորեալս ։ Բժշկեա՛ զհարուածեալս. դարմանեա՛ զխորտակեալս. ապաքինեա՛ զհիւանդացեալս. կենդանացո՛ զմեռեալս. և մո՛յծ զիս՝ 'ի թիւս հարազատ և հաւատարիմ ծառայից քոց ։

Ո՛յ եղեց մայր տն, և զքեզ
փառաւորեցից յաւիտեան ։

Յառաջ ներէջն ։

Խոստովանիմ և հաւատամ, զի
սա է ճշմարիտ մարմին որդւոյն
տն կենդանւոյ կերպարանեալ
յամենամաքուր կուսական ար-
գանդի սուրբ ածածնին ։

Յորբէջ 'ի սմանէն ։

Խոստովանիմ և հաւատամ, զի
սա է ճշմարիտ արիւն որդւոյն տն
կենդանւոյ առեալ յանապական
և յանարատ կուսէ ։

Յետ առաջ ներէջին ։

Փափաքիմ և ցանկամ յամ սըր-
տէ կալ ը քեզ մայր տն առ խա-
չին միածնի քո, և ցաւակից լի-
նել ը քեզ, տրտմիլ ը քեզ, և
հեղուլ զարտասուս ը քեզ ։ Ի-
ցէ՛ թէ ցաւօք սրտի քո մխիթա-
րեցայց, և տրտմութ հոգւոյ քո
ամփոփեցայց․ արտասուօք քո լուա-
ցայց 'ի մեղաց, և սգովք քո սըր-

բե-

բեցայց ’ի չար սովորութեանց: Ոչ կամիմ առանց քո ցաւոյդ մխիթարիլ, և առանց տրտմութեան քո սփոփիլ: Իմ մխիթարութիւն այն է՝ զի ցաւեցայց ընդ քեզ. իմ սփոփանք այն է՝ զի տրտմեցայց ընդ քեզ. իմ ցնծութիւն այն է՝ զի սըգացայց ընդ քեզ, և ուրախ եղէց ’ի քեզ:

Յաւել քահանայէն: Նա պքոյս ’ի քոյոց:

Ով զիա՛րդ մեծ եղև անձնատոչորդ ցաւ տէ՛րամայր՝ ’ի տեսանելն անդ զմի միայն սիրելի որդիդ ողջակիզեալ՝ պատարագ կենդանի ’ի սեղան խաչին ’ի փըրկութիւն տիեզերաց. հեղուսեալ ’ի փայտի յաղագս փայտին յանցանաց. նշաւակեալ մերկ իբրև ըղչարագործ ’ի մէջ աւազակաց. հայհոյեալ և նախատեալ ’ի չարալգած հրէից և ’ի զինուորաց. ծարաւեալ և նուաղեալ ’ի հրա-

տապ հնոցի դառուն տանջանաց · արհամարհեալ և լքեալ 'ի մերձաւորաց և յազգականաց , 'ի սիրելեաց և յաշակերտաց · և թողեալ յերկնաւոր հօրէ ։ Արդարև 'ի պատարագիլ որդւոյ քո 'ի խաչելումն՝ ողջակէզ մատուցար և դու ո՛վ Ածածին ։ Տուր և ինձ աղաչեմ մն ցաւոյդ՝ պատարագ ընծայել զանձն իմ 'ի հաճոյս ամ բարձրելոյ ։

Յաւել քահանայն · Որպէս զի եղիցի սա ։

Գերահրաշ տեսլեամբ սքանչելի ցուցար յանկէզ մորենւոյն ո՛վ Ածածին ։ Սքանչելի արդարև · զի բոցածաւալ հուր ցաւոցդ բորբոքեալ 'ի հնոց սրտի քո ոչ բոցակիզեաց զքեզ ։ Մխեցար յերաշխէպ վշտաց իբր մաքրաձոյլ պողովատիկ , և անծախելի 'ի նմին պնդեալ լուսափայլեցար ։

Ո՜ անտանելի տագնապ անհամեմատ

մաստ տանջանաց մարմնոյ միած-
նիդ 'ի վառարան սիրոյ հոգւոյդ
տուընկալեալ՝ փայլեցար, յափըշ-
տակեցար, և ոչ այրեցար ։ Ան-
չափութբ անկշռելի սիրոյ որդւոյդ
խաչեցելոյ՝ զանչափութն բոցոյ
ցաւոցդ 'ի չափ բովանդակեցեր,
և անվթարելի մնացեր ։ Եւ արդ
տուր ինձ աղաչեմ զքեզ մայրդ
Այ և մայրդ ցաւոց, անտրտում
և անտրտունջ տանիլ իմ տուայ-
տանաց հոգւոյ և մարմնոյ, և
մնալ անկեղ յիմ վիշտս ։

Յաւէլ ժաղանայէն. Ընդ որս ես մեղ ։

Յուշ լիցի քեզ մայր Տր, զի
քումդ խնամոց յանձն արար ըզ-
մեզ որդին քո միածին 'ի ժամու
խաչելութե ։ Ո՝ռուացաւ զանհան-
դուրժելի զցաւ իւր, և յիշեաց
զմահացուցիչ ցաւս մեր. և կար-
գեաց զքեզ փարատիչ ցաւոց մե-
րոց, և բարձօղ դառնատխուր
տրտմութե մերոյ, զոր չարաչար

ժառանգեցաք 'ի նախաստեղծից անտի : Մ՛ի մոռանար ո՛վ ածա-մայր՝ զոր լուար 'ի բերանոյ միած-նի քո , յասելն առ քեզ վն մեր 'ի դէմս յովհաննու սիրելոյ . ահա որդի քո : Քեզ ահա որ-դիացաք տէրամայր . քո եղաք, և քո եմք . հայեա՛ց յորդեգիրսդ , և ընկա՛լ զքոյսդ . կեցո՛ զյանձն-եալքս 'ի քեզ, և ցո՛յց զմայրութի քո 'ի մեզ : Նորևեցո՛ վտանգեցե-լոցս զայցելութի քո , և յայտնեա՛ վշտագնելոցս զսէր քո . ծանո՛ ծանրացելոցս զօգնականութի քո , և մատո՛ տառապելոցս ձեռն

պաշտպանութե քո :

Յաւել քահանայն . Նա եղիցէ ողոր-մութիւն :

Ո՛ ծայրին շնորհաց գանձարան ընտրեալ ոք ածածին . հե՛ղ յիս աղաչեմ 'ի լիաբաշխ առատութե քումմէ զանազան առաքինութեց զձիրս պարգևաց , զխոնարհութե

և

և զհեզութն , զզգաստութն և զա-
րիութն , զարդարութն և զա̃ծ-
պաշտութն . և զարդարեա՛ զիս
նոքօք 'ի փառս և 'ի պատիւ առա-
ջինկայ մեծի խորհրդոյս :

Յետ Հայր Մերին :

Ահա ժամ մայր Ա̃յ՝ քումդ օրհ-
նութե̃ ժամանելոյ , և քոյին
միջնորդութե̃՝ շնորհաց հոգւոյն
արժանաւորելոյ : Մի՛ զրկեր ըզ-
կարօտեալս աղաչեմ , և մի՛ մեր-
ժեր զտարամերժեալս յա̃մ բար-
ւոյ : Պատկառեալ դիմօք պաղա-
տիմ առ քեզ ա̃ղ արքայուհիդ
երկնի և երկրի . գնեա՛ զիս իբ-
րև զգերի 'ի ծառայութի մօրդ
երկնաւոր արքայի :

'Ի քարոզս յայտնելոյ քահանայէն ընթեր-
ցուածն :

Բարձրեա՛լ և բարեբանեալ ս̃բ
կոյս Մարիա՛մ ա̃ծածին . բարձ-
րացո՛ զխորհուրդս իմ 'ի տեսութի
ճշմարտութե անքննելի և անճա-
ռե-

ռելի խորհրդոյս առ 'ի քէն և քև
մեզ շնորհելոյ ։

Յաւետ ժամանակին · 'Ի մէ 'ի մէ ։

Դաւադայթ փառաց ինքնաբաւ-
էութի · որ յաղագս մերոյ աղա-
տութե մարդ եղեալ յանապական
կուսէ՝ ղենար 'ի խաչին և մե-
ռար · և մահուամբ զմահ կոխե-
ցեր ։ Մ՝եռո՛ յիս աղաչեմ զապա-
կանութի մեղաց , և կեցո՛ ։

Յաղօթել ժամանակին 'ի ծածուկ ։

Ուրախ լեր և բերկրեա՛ սբ ածա-
ծին , 'ի հօրէն բարձրելոյ ընտ-
րեալ և հովանաւորեալ · 'ի հոգ-
ւոյն սբյ մեծարեալ և մաքրա-
զարդեալ · յորդւոյ քո միածնէ
պատուեալ և փառաւորեալ · և
յամ արարածոց բարեբանեալ և
երկրպագեալ ։ Քեզ երանեն
ամենայն ազգք և ազինք , և 'ի
քեզ ապաւինին ամենայն հաւա-
տացեալք · զքեզ խոստովանին
գումարք դասուց ամ սբց 'ի վայե

քան

քան զքեզ, և զ.քեզ մեծացուցա-
նեն'ի վեր քան զամենայն ստեղ-
ծուած ։ Դու աթոռ բարձրութե
փառաց, յորում բազմեցաւ ճշ-
մարտութին ինքնագոյ · դու կա-
մարակապ ծխածան կենդանի,
յորում պարագրեցաւ անսպառ-
գիծ էլին գեղեցկութի ամենասպա-
ռիկ աղեղն հաշտութե · դու
պայծառափիլու պարզութի հան-
դարտութե օդոյ, յորում երևե-
ցաւ տր զօրութեց ած իսրայէլի ։
Դու տապանակ օրհնութե և
փրկութե, յորում տապաւարե-
ցաւ ծոցածին հօր որդին՝ ած
ճշմարիտ · դու տախտակ տիրա-
կան, յորում կենդանագրեցաւ
կտակն կենաց՝ բանն ած · դու
սափոր ոսկի սխրալի, յորում
բովանդակեցաւ մանանայն ամե-
նաճաշակ · դու գաւազան գե-
ղասաղարթ վերաբուսեալ յար-
մատոյն յեսեայ, յորմէ ծա-
գեաց

գեաց ծաղկեալն 'ի հօրէն լուսոյ
ծնունդ 'ի յաւիտենից . դու
գեղմն իմանալի , յորմէ հոսեաց
անձրևն կենդանութեան յոռոգումն
և 'ի զովացումն համօրէն Տէր :
Դու պարտէզ փակեալ և աղ-
բիւր կնքեալ . դու դուռն ար-
քայութեան , և ճանապարհ երանու-
թեան . դու սկզբնատիպ օրինակ
խոնարհութեան , և նպատակ անա-
րատ կուսութեան և զգաստութեան :
Դու մուտ բարձրութեան և սքանչե-
լահրաշ մեծութեան ապաստան առ-
նեմ ահա զանձն իմ . և 'ի քո գը-
թութի ապաւինեալ աղաչեմ ,
հա՛ն յապականութեան զկեանս իմ .
ամրացո՛ զիս ընդ հովանեաւ թևոց
քոց . և պահեա՛ զանձն իմ յամենայն
վտանգէ և յամենայն չարէ :
'Ի ճաշակել քահանայէն զխորհուրդն :
Ծառ կենաց՝ աջով անեղին տըն-
կեալ 'ի սրովբէափակ դրախտի
սրբութեան Աստուածածին . յամենա-
հոս

հոս լիութ̃է շնորհաց ոռոգեալ և առատացեալ. և քառաղուարձ աղբերբք բարգաւաճեալ և պարարտացեալ, (Քո̃) անխափանելի կուսութ̃բ, ամենամաքուր անարատութ̃բ, ամենաբարձր խոնարհութ̃բ, և ամենակատար առաքինութ̃բ, անտիրելի յախտից բնականից, և անհպելի չարին հնարից ։ Յորմէ կթեցաւ և տուաւ մեզ մահացելոցս պտուղն անմահութ̃ն հայրական ծոցոյ, հասունացեալ մարմնով՝ ի քումդ կուսական որովայնի ։ Այն պտուղ անմահութ̃ն, և հաց կենդանութ̃ն իջեալ՝ ի յերկնից, հանդերձեալ և յարդարեալ յանկիրդ վառարան անկիզելի մաքրութ̃ն քումդ արգանդի ։ Հաղորդս արդ զիս աղաչեմ զքեզ մայր Այ̃՝ ամենահրաշ զօրութ̃ն կենսատու պտղոյդ և անմահացուցիչ հացիդ ճաշակման, հոգեպէս միանալ ընդ միա-

ցե-

ցելումն քո մերում մարմնապէս ։ Նզէցի յիս իբր ոգի՝ որ եղեն 'ի քեզ ճշմարիտ որդի · եղէց և ես 'ի նմա անդամ կենդանի անմեկնելի 'ի յաւիտեան ։

Յաւարտ սրբոյ պատարագին ։

Յիշեա՛ զիս սուրբ Աստուածածին յիշատակաւ չարչարանաց միածնի որդւոյ քո 'ի խորհուրդ սրբոյ պատարագիս ( զոր տեսի ) · տիրուհի վերամբարձեալ փառօք յԱստուածակերտ և յիմանալի խորանս՝ հանգչիս 'ի լոյս անմատոյց · և ես տառապանօք տուայտեալ մաշիմ 'ի փշաբեր երկիր անիծից, վտանգեալ յամենավարան որոգայթից հոգւոյ և մարմնոյ ։ Մա՛յր Տեառն մի՛ մոռանար զիս, և մի՛ ընկենուր յերեսաց քոց · գի՛ն արեան որդւոյ քո եմ · հայեա՛ց յարդիւնս նորա, և փութա՛ յօգնել անօգնականիս ։ Տո՛ւր ողորմագին պաղատանացս · և պաշտպանեա՛ զիս

յընթացս կենաց իմոց . մինչև ժամանեցուսցես զիս ’ի տեսութն փառաց քոց ։

Հինգերդ կարգ աղօթից ’ի ժամ պատարագի ։

Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ։

Օրհնաբանութն Երջանկութեց աստուածորդեւոյ ’ի մջ աւետարանի ։

Պնծառութն ։

Յամենապարգև շնորհս քո ապաստան եղեալ՝ կամիմ տեսանել և մատուցանել վսեմ պատարագս զայս ’ի փառս ամենասբ երրորդութեդ եւ ( որպ եդաք յառաջինսն ։ )

’Ի սկսանելն պատարագին ։

’Ի մատչիլն պատարագիս մատչիմ առա.

առաջի քո տ̃ր իբրև զկոյր անտե-
սարան. աղաչեմ զքեզ, արա՛ զի
բացայց և տեսից զքեզ, և մխի-
թարեցայց. տեսից և զմեղս իմ
և զղջացայց. տեսից և զգաղտ-
նութ̃ի խորհրդոյ պատարագիս,
և զգաստացայց. տեսից և զճա-
նապարհս առաքինական կենաց,
և յայն ընթացայց. տեսից և
զփառս արքայութե քո, և 'ի նոյն
ժամանել փութացայց:

'Ի սպաս արժանել քահանայէն:

Յանկայ և փափաքի անձն իմ
վերընծայել հաճութեան քում
նուէրս արժանաւորս, կատարե-
լով զկամս քո, և գնալով 'ի հրա-
մանս պատուիրանաց քոց. այլ
ես յա̃մի վատթար գտանիմ.
միանգամայն և անպիտան երե-
իմ: Ձեռն իմ գօսացեալ՝ ան-
կար 'ի գործել. ոտք իմ կա-
ղացեալ՝ անզօր 'ի վարել. կար-
կա-

կամեալ հոգւով՝ յուղիղն շար-
ժիլ, և կապեալ մտօք՝ զարժա-
նին խորհիլ. և ես ինքն բովան-
դակ անձամբ անդամալոյծ ան-
կեալ՝ անմասն յա̃մ լաւութեց ։
Այլ աղաչեմ զփրկիչդ իմ. ասա՛
դօսացելումս. ձգեա՛ զձեռն քո.
և եղիցի ողջ իբրև զառաջինն ։
Հրամայեա՛ կաղացելոյս և կար-
կամելոյս, արի՛ և գնա՛. և ուղ-
ղեսցի յընթանալ զընթացս բա-
րիս ։ Բարբառեա՛ առ անդամա-
լոյծս. թողեա՛լ լիցին քեզ մեղք
քո, և երթ՝ի տուն քո. յարեայց
և ես, և եկից զկնի քո յա̃մ՝ի
կեանս իմ ։

Յետ ժամանակութին ։

Կամաւասիկ առաջի քո Տ̃ր համ-
րացեալ լեզուաւ. անլուր յա-
կանջս, և անզգաստ՝ի միտս.
խելագարեալ և ցնորեալ՝ի թե-
լադրութե̃ չարին ։ Ո՛ արձակեսցէ
զլեզու իմ. ո՛ բացցէ զականջս

հոգւոյս . ո՛ ազատեսցէ զիս , և կամ ո՛ զգաստացուսցէ զմիտս իմ: Դու ինքն Տէր աղբեւր յիս զօրութեան քոյ, որպէս 'ի համրին 'ի քէն բժշկեալ . և բացցի բերան իմ յօրհնութիւն քո . լուիցէ ունկն իմ զպատգամս քո . և ցնծասցեն ոսկերք իմ 'ի փրկութեան քում:

Յետ ԺԲ Աստուածածնին :

Երկինք և երկիր սարսին յահէ փառաց քոց . և ամենայն արարածք օրհնեն և փառաւորեն զքեզ : Իսկ ես սարսուիմ և դողամ 'ի բռնութենէ ախտից : Հիւանդութիւն սաստիկ տենդի չար սովորութեանց կրծոտէ զիս , և յանօրէն գործս տագնապէ . դու միայն կարող ես ապաքինել . կա՛լ զձեռանէ իմմէ աղաչեմ , և թողցէ զիս խստութիւն ջերմանս . և ես ընդ ողջացելումն երկիւղիւ պաշտեցից զքեզ :

Դարձեալ և խօթութեան ջրգողութեան

հնա

հնայեալ մեղաց պատպարեցու-
ցանէ զլեզու իմ ներքին , և նա-
հանջէ յօրհնութ՟ քումն զշըր-
թունս իմ · ապաքինեա՛ զիս տ՟ր
և բժշկեա՛ , ազատեա՛ և արձա-
կեա՛ ըստ արձակման ջրգողեցե-
լոյն · և ես փառաւոր արարից
զտ՟րութի՟դ հանապազ ։

Յետ Հաւատամքին ։

Հաւատամ տ՟ր , օգնեա՛ անհա-
ւատութեա , որպէս օգնեցեր թե-
րահաւատացելոյ հօր մանկանն ·
ը՟ նմին մատուցեալ առ քեզ , ը՟
նմին աղաղակեմ · հայեա՛ց 'ի հո-
գի իմ , զի մահաբեր է ինձ · և ահա
այս չար խորհրդոց հարկանի 'ի
նմա , և զարկուցանէ զնա յերկ-
բաշաղախ ցանկութ՟իս · թաւալե-
ցուցանէ 'ի գարշելի մեղս , և
խորտակէ զնա յանիրաւութ՟իս ·
փրփրեցուցանէ 'ի բարկութ՟ , և
տայ գոչել զանպատեհս , և խօ-
սել զանդէպս ։ Կարօ՛ղ ես տ՟ր օգ-

նել և փրկել , օգնեա՛ և փրկեա՛ :

Յաւել ճաշանայէն . Տէր ամ օրհ-նեսցէ :

Կապեալ եմ 'ի շղթայս մեղաց և յոտնակապս մոլութեանց . կոծիմ հանապազ քարամբք զանազան չար ախտից՝ հանդոյն լեգէոնաբնակ գերգեսացւոյն . 'ի գերեզմանս գարշահոտ սովորութեանց մաշիմ , և 'ի լերինս վայրենի խորհրդոց տարուբերիմ : Ազատեա՛ զիս յն̃ ք̃ս որդի ա̃յ բարձրելոյ . ազատեա՛ աղաչեմ օրհնութե̃ առաջիկայ նուիրացս : Լոյծ զշղթայս իմ , որով տագնապիմ . քակեա՛ զոտնակապս իմ , որով վտանգիմ . գթա՛ յիս 'ի գին արեան քո , և վանեա՛ 'ի հոգւոյս հոգւոյդ սր̃վ զլեգէոնագունդ զումարուն հոգեհեղձոյց վարանմանցս :

Յաւելն . Արժան է երա— :

Ով անտանելի վշտացս , ար-

եամբ

եամբ անօրէնութ՟ե հեղեղիմ և
հեղձիմ. առ բժիշկս հոգևորա-
կան կենաց դիմեալ դեգերիմ,
և ոչինչ օգտիմ։ Բայց արդ
յոյս առե՟լ ը՟ն երկոտասանամեայ
վշտացելոյն մերձենամ ՚ի քղանցս
հանդերձից կենդանարար մարմ-
նոյ և արեան քո տ՟ր։ Համարձա-
կեցո՛ զիս աղաչեմ, զո՛նէ ՚ի յե-
տուստ հաւատով հպիլ, և ՚ի
հպիլս իմ ՚ի քէն բժշկիլ և զօ-
րանալ։

Յետ ՍԷ ՕԷԻՆ։

Կենդանի՛դ յաւիտենից բանդ
ա՟ծ, որ եկիր ՚ի սրբել և ՚ի բժշ-
կել զհիւանդութիւնս մեր. նայեա՛ց
առ իս՝ որ հայիմս առ քեզ. մա-
տի՛ր առ թշուառացեալս, և տե՛ս.
քանի՛ ժամանակք են՝ յորմէ հե-
տէ դնիմ ՚ի տաժանաժառանգ
հիւանդութ՟ե հոգւոյ յանկողինս
թուլութ՟ե և մեղկութ՟ե։ Մերձ
եմ ՚ի պրոբատիկէ՝ յաւազանն

ապաշխարութեան . և ակնունիմ ի-ջանելոյ վերջին օգնականութե՛ , և յուզելոյ ջուրցդ շնորհաց . ակն-ունիմ այս , բայց չունիմ կամս արկանելոյ զիս յաւազանն : Դո՛ւ Տր̃ օգնեա՛ ինձ , և տո՛ւր զոր ա-սացեր վշտագնեցելումս յերեսն-եւութամեայ հիւանդութե՛ . որ՛ 'ի հիւանդութե՛ մեղացդ . ընկեա՛ 'ի բաց զմահիճս նեխեալ և տո-րեալ սովորութեցդ , գնա՛ 'ի ճա-նապարհս արդարութե՛ և սրբութե՛ :

Յառաջ կերակրելն և յարգելն 'ի սմանէն :

Խոստովանիմ և հաւատամ :

Յետ Ս. կերակրելոյն :

Տարածեալ հոգւով տարածա-նեմ առաջի քո Տր̃ զկիրս ամե-նատկար բնութեա մեղօք փարա-կելոյ . այլ ամաչեմ ես՝ ոչ 'ի տկարութե՛ս , այլ 'ի չարութե՛ իմ-մէ . որով 'ի յորդորիլս իմ 'ի բա-րին՝ յոր հաճիմ , անկիմ 'ի չարն զոր ոչն կամիմ . և յամի յայլեւայլ

ներ.

ներհական զկիճակս փոխաբերիմ։ ՚ի բորբոքիլ նշուլից ա̃ծայինդ բանից առ իս՝ իբրև զմոմ հալիմ, և իբրև զհող խստութ̃ մնդիմ։ ՚Ի շնչել հողմոյ արդարութե̃ քո՝ իբրև զխոտ թառամիմ, և իբրև զծաղիկ թօթափիմ։ Յորոտալ ամպոյ ցասմանդ՝ հանգոյն ողնւոյ սասանիմ և կծկիմ. և իբրև ոյծեամն նուաղիմ և շնչաքաղիմ։ Յանկանիլ խմուեմ ՚ի հուր նեղութե̃, բուրեմ յինէն ոչ զհոտ անուշութե̃ իբրև զհալուէ, այլ զհոտ գարշութե̃ իբրև զկապերտ յաղտեղի ասուէ։ Այլ դու՝ որ կարօղդ ես փոփոխել զա̃մ, և կազդուրել զգոյութի̃ եկից համայն, հնարաւորեա́ առ իս զելս բարեկաւութե̃՝ ՚ի հաղորդակիցս լինել ճաշակման ամենադեղ խորհրդոյս, ոչ զնոյն յիս փոխարկելով, այլ զիս ՚ի նոյն կերպարանելով։

Յառեւ ժառանգութեան. Նա պտոյս 'ի ժողոյ:

Նորանիմ էր ինձ եթէ ձեռնհաս գտանէի՝ մատուցանել ինչ քեզ յինէն Տէր, և պարզերես երևելով առաջի քո՝ զուարթութբ̃ ծառայել: 'Ի դրախտի անմեղութե՛ յորժամ զպտուղն կենաց կթէի, 'ի պտղոյ անտի իբր 'ի քոյոյ ինչ քեզ ուղերձ ընծայէի. զի էի ամ̃ բարեօք. կայի յանարատութե և յամբծութե, և ցնծայի ընդ հրեշտակս անմահական կենօք: Աւա՜ղ աստանօր իմումս անարգութե. զի աւասիկ յոմէ մերկացայ և կողոպտեցայ. զի 'ի մեկնիլս իմ յերանական վիճակէ անտի, և յիջանելս իմ յերիքով մեղանչականութե՝ անկայ 'ի ձեռս աւազակագունդ դիւաց, որք մերկացուցին զիս յամ̃ ձրից շնորհաց. հարին և վիրաւորեցին զիս զանազան մեղօք. թողին զիս կի-

սա-

տամեռ և գնացին ։ Այլ արդ ո՛
օգնեսցէ թշուառացելումս , ո՛չ
քահանայ նուիրական , և ո՛չ ղև-
տացի օրինական . այլ երկրպա-
գելի սամարացիդ՝ ապաւէնդ
միայն փրկութե , յուսահատելոց
ամի անձնենց ասպնջական ։ Ա՛ռ
տէ՛ր առ իս աղաչեմ, մատի՛ր գը-
թութբ , և պատեա՛ զվէրս իմ
քաղցրութբ . արկեալ՝ ի վր զօ-
ղորմութն քո իւղ և զձէթ , և ըղ-
մարդասիրութն քո իւղ և զգինի ։
Դնե՛ր զիս ՝ի վր օր[illegible]ացդ գրաս-
տու . և ա՛ծ զիս ՝ի պանդոկ եկե-
ղեցւոյ քո . և դարմա՛ն տար ո-
ղորմելւոյս առողջարար դեղովք
նք խորհրդոցդ առ ՝ի քէն սահ-
մանելոց և հաստատելոց , մինչև
՝ի գալուստ փրկչիդ իմոյ . որում
սպասեմ մնամ , և հոգւոյս անձ-
կանօք տեսանել ցանկամ ։

Յաւէլ ժամանակին · Որպէս զի եղի-ցի սա ։

Ով ամենաճարտար բժիշկդ պատկառանօք մատուցեմ՝ յայտնեմ զապականութիւն բորոտութեան անձինս, և ը̃ խղճալի թեալ բորոտեցելումն պաղատիմ, որ եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Մի՛ աշխատիր ձգմամբ ձեռինդ՝ յապաքինել · մի՛ զսպեղանիս խնդրեր վասն իմ՚ի բժշկել · մի՛ յայլոց ձեռն յանձներ՚ի դարմանել · այլ միայն հրամայեա՛ և ասա՛ բանիւ · կամիմ, սրբեա՛ց · և վաղվաղակի բժշկեցայց, սրբեցայց, և առողջացայց ։ Ոչ դեղոց կարօտիս, և ոչ սպեղանեաց հող ունիս · բաւական է բան քո յա̃մի · և շատ է ասելդ՝ եղիցի՛ ։ Որով և ես նորոգեալ՚ի հոգիս՝ օրհնեցից զնորոգօղդ իմ · և մատուցից քեզ՝ ոչ զպատարագն՝ զոր հրամայեաց մովսէս, այլ

ԸՂ-

զերկրպականս պատարագ օրհ-
նութե̄ և գովութե̄ , և զկենդանից
պատարագ բարձրելոյ հօր քում
հաճութե̄ ։

Յաւել յահաճախայէն · Ի՞նչ որս ՚ի մեզ ։

Այժմ այրիս տառապեալ մեկ-
նեցին յերկնաւոր փեսայէդ · ող-
բամ և լամ զի̄ այլուոյն սգացելոյ
՚ի վե̄ր մեռեալ հոգւոյս ։ Այլ
դու տ̄ր ա՛յց արա ինձ և գթա՛
յիս · մատի՛ր ՚ի դագաղ մարմնոյս
կենդանատու ձե̄ռ մարմնոյդ · և
լսեցո՛ ինձ զքաղցր բարբառ քո ,
մի՛ լար արժանիդ լալոյ · ձայնեա՛
և առ հոգի իմ , քե՛զ ասեմ , ա-
րի՛ · և կանգնեսցի , նստցի , կեց-
ցէ , և պատմեսցէ զքաղցրելիս
քո ։ Ցո՛յց դարձեալ , և յայտնեա՛
մերստին զամենակարօղ զօրութի̄
քո ՚ի հանգէս յարութենն ղազա-
րու , այց առնելով բազմամեայ
մեռելոյս , և ՚ի գերեզմանէ ախ-
տից նեխելոյս և փտեցելոյս ։

Պոռ-

Գոչեա՛ առ իս, արի՛ ե՛կ արտաքս. և դողասցին 'ի ձայնէ քումմէ սանդարամետք անդնդոց. և արձակեսցեն զիս 'ի բռնութենէ մահու. և ես նորոգութեամբ հոգւոյս օրհնեցից զքեզ 'ի կեանս իմ։

Յաւէլ ջահանային. Նա եղիցի ողորմութեան։

Հրամայեցեր ինձ ամենակալ տէր գալ առ քեզ 'ի վերայ ալեաց ծովու աշխարհիս. աւասիկ գամ և ես հաւատով և յուսով։ Բայց տեսեալ զսաստկութիւն հողմոյ փորձութեանց՝ երկնչիմ, պատեալ գոլով 'ի խաւար գիշերոյ թերահաւատութեամբ վտանգիմ. և յառաւելն տագնապիլ՝ 'ի խորս յուսահատութեան ընկղմիմ։ Այլ յոյս առեալ ընդ վիմին ծանրացելոյ՝ գոչեմ առ քեզ. տէր փրկեա՛ զիս. ձգեա՛ առ իս զձեռն քո միջնորդութեամբ խորհրդոյ հաղորդութեան. և ընկա՛լ զիս։

Յետ

Յետ Հայր մերին ։

Հա՛յր մեր, հա՛յր ամենակալ, մե-
ղայ յերկինս և առաջի քո . ա-
մաչեմ աղաչել զքեզ, և կոչել
առ քեզ, և ասել . արա՛ զիս իբ-
րև զմի 'ի վարձկանաց քոց . քան-
զի չեմ բնաւ արժանի և ոչ իսկ
ծառայ անուանելոյ ։ Այլ դու
հայեցեալ յարգիւնս արժանեաց
միածնի քո՝ վս իմ անառակիս
զենելոյ ըստ եզինն պարարակի,
արա՛ որպէս իս որդի և հաճիս 'ի շնորհս
և 'ի պատիւ հեղման արեան նր ։

'Ի բարձրացուցանել քահանային զխոր-
հուրդն ։

Ած իմ յս քս ակնարկեա՛ առ իս
իբրև առ վշտատաժան ցանկա-
ցողն զաքէոս . եկ առ իս, և օրհ-
նեա՛ զտունն իմ . քանզի և ես զա-
ւակ աբրահամու եմ հոգեպէս ։

Յասել քահանային . 'Ի սբ 'ի սբ ։

Անկանիմ յոտս քո որպէս մեղուցե-
լոյ մագդաղենացւոյն և արտաս-
ւօք

ուօք աղերսեմ ։ Հա՛ն յինէն զեօթնատարազ զիմ չարիս զսերմանեալսն յիս ձեռամբ սկզբնաչարին ։ Դարձո՛ առ իս զքաղցրահայեաց զերեսս քո, և ասա՛. Թողեալ լիցին քեզ մեղք քո. Հաւատք քո կեցուցին զքեզ.

Ե՛րթ 'ի խաղաղութի ։

Յաղօթել քահանային 'ի ծածուկ ։

Բարերար հոգւոց և տէր կենաց փրկիչ իմ յս քս, աղաչեմ զքեզ ըստ հարիւրապետին մաղթանաց. Նայեա՛ յիս. զի հոգի իմ անկեալ կայ 'ի տան մարմնոյս անդամալոյծ չարաչար տանջեալ. չունիմ համարձակութի հրաւիրելոյ առ իս զբժիշկդ իմ ։ Դիտեմ՝ զի մարդասիրութի քո ստիպէ զտէրդ փառաց՝ ասել ցիս. Ես եկից և բժշկեցից զնա. բայց սակայն ես չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի հոգի իմ ։ Քանզի

հա-

հաւատամ թէ 'ի կամիլդ՝ կա-
րող է ամենազօր հրամանն քո ազ-
դել 'ի բացուստ և կեցուցանել
զհոգիս ։ Եւ արդ ասա՛ աղաչեմ.
ե՛րթ , և ո՛չ հաւատացերդ եղի-
ցի քեզ ։ Երկնին ես պաղատիմ և
զտագնապ հոգւոյս ընդ քանա-
նուհւոյն քեզ յայտնելով՝ թա-
խանձանօք պաղատիմ. ողորմեա՛
ինձ տ̃ր որդի ա̃յ կենդանւոյ . զի
հոգի իմ չարաչար այսահարի .
և դարձեալ վերստին կրկնեմ.
տ̃ր օգնեա՛ ինձ ։ Եթէ յերեսս
իմ՝ հարկանիցես՝ ասելով , ոչ է
բարւոք առնուլ զհաց մանկանց
և արկանել շանց , զդոյն և ես
խոստովան լինելով՝ ը̃ նմին գո-
չեմ. այո՛ տ̃ր՝ և այս մեծ է ինձ ,
եթէ հայեսցիս յիս իբրև 'ի շուն
քո . զի թէ քո պտայց , 'ի փշրա-
նաց քոց ընկալայց զկեանս . ք̃զի
և շունք կերակրին 'ի փշրանաց
անկելոց 'ի սեղանոյ տ̃ն իւրեանց ։

Եւ

Ու տուր իցէ՞ թէ լուսայց Ճ̃Է մաղ-թողին 'ի բերանոյ քո, եղիցի քեզ ոսկ̃ և կամիս. և բժշկեսցի հոգի իմ ։

'Ի ճաշակել քահանայէն զխորհուրդն ։

Տագնապ է ինձ աստանօր և ա-մօթ անհնարին. զոր մեծիդ յան-դիման առնել ամաչեմ և սոս-կամ. վա՜յ յիմարութեանս. քանի՜ քանի բարիս տեսի 'ի բարերարէդ, և ինչ ո՛չ օգտեցայ ։ ʻԻշանեցաւ առ իս լոյս երեսաց քոց, և ես 'ի խաւարի մնացի. ծագեաց 'ի միտս իմ աստղ առաւօտու շնորհացդ, և ես ո՛չ զարթեայ ։ Հնչեաց փող պատգամաց քոց 'ի սիրտ իմ, և ես ո՛չ զգաստացայ ։ Կանգ-նեցաւ դրօշակ սպառնալեացդ 'ի խիղճ մտաց իմոց, և ես ո՛չ զար-հուրեցայ ։ Կնքեցաւ ամենագեղ կնիք սիրոյ քո 'ի հոգի իմ, և ես ո՛չ կերպարանեցայ ։ Ո՜ ինչ ես ունիմ ասել, կամ զի՞նչ պատաս-

խա-

խամնի առնել՝ի հարցափորձի ե-
մում. և կամ զոր պատճառս ա-
ռաջի մատուցանել՝ի դատելո
իմ՝ի քէն զի յոյժ անպատաս-
խանի եմ: Այլ դու ամենողորմ
և բարեգութ, որ գիտես զհաս-
տատիլ մտացս՝ի խնամս չարու-
թե, և զբերիլ բնութես ընդդէմ
բարութե, խնայեա՛ յիս. և ան-
նահանջելի զօրութ նուիրելոյ ա-
ռաջիկայ պատարագիս՝ դարման
տա՛ր տկարութես. հաստատեա՛
զկամս իմ՝ի խնամս բարութե. և
զօրացո՛ զիս ընդդէմ ախտիցս չա-
րութե. զի մեծացի յանձն իմ
օքանչելիք ամենահնար ճարտա-
րութե և կարողութե քո. և բարձ-
րասցի փառօք անուն քո յաւի-
տեան:

Յաւարտ պատարագին:

Արդ արձակեա՛ զիս՝ի խաղաղու-
թի տծ իմ և տր. զի տեսին աչք
իմ զփրկարարդ խորհուրդ՝ ա

ժզ Ջ ՚ի

’ի յիշատակ երկրպագելի տնօրէ-
նութեանց քոց: Օրհնեմ և պահ-
պանեմ զիս ընդ ժողովրդեան
քում. և ուղղեմ յամբծութե՟
զկեանս իմ ’ի փառս փառաւո-
րեալ տէրութե՟դ քո, որ ես օրհ-
նեալ ընդ Հօր և Ս՟բյ Հոգւոյդ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Վեցերորդ կարգ աղօթից ’ի ժամ պատարագի:

## ՅՈՒՐԲԱԹՈՒ:

### Ուղղեալ ’ի յիշատակ չարչարանաց տեառն:

### [illegible]:

Առաջի մեծվայելչութե՟ փառաց
երկնաւոր թագաւորիդ յանդի-
մանս լեալ՝ ընծայեմ զնուէր պա-
տարագիս յիշատակաւ երկրպա-

գե-

դեղն չարչարանաց քոց 'ի փառս և 'ի պատիւ ածութեդ , և 'ի գոհութիւն բազում բարերարութեցդ , 'ի թողութիւն մեղաց իմոց ( և այլոց որոց եդաք 'ի նախընթացսդ ) ։

'Ի ՍԿՍԱՆԻԼ ՊԱՏԱՐԱԳԻՆ ։

( 'Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՍԱՆԵԼՈՅ ՏՆ 'Ի ԳԵԹՍԵ-ՄԱՆԻ ) ։

Օրհնեալ է մուտ քո տր̃ 'ի պարտէզ խորհրդոյ , սկիզբն առնել չարչարանաց վս̃ սիրոյ իմոյ ։ Իցէ՞ թէ մտից և ես 'ի խորհուրդ մտածութե̃ ցաւակից լինելոյ քեզ փրկիչ իմ յո վս̃ սիրոյ քո ։

'Ի ՍՊԱՍ ԱՐԺԱՆԻԼ ՔԱՀԱՆԱՅԻՆ ։

( 'Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ և ԿԱՊԱՆԱՑ ՏՆ , և ԹՈՂԼՈՅ ՆՈՐԱ ՅԱՇԱԿԵՐՏԱՑ , և ՀԱՍԱՆԵԼՈՅ 'Ի ՅԱՏԵԱՆ ) ։

Ով թէ քանի մեծ եղև տրտմութի̃ քո տէր` զոր տրտմեցար 'ի պարտիզի . ուր կրելով և զերկիւղ ծանր` քրտունս հոսեցեր արեան . և անկարօտ գոլով տմ̃`

կարօտ ցուցեր զքեզ զօրանալոյ
՚ի հրեշտակէ. և որ ՚ի ձեռին ու-
նիս զտ̃մ՝ Թողեալ յաշակերտաց՝
մատնեցար ՚ի յուդայէ ։ Տուր
ինձ աղաչեմ զքեզ, տրտմութ̃դ
քով մխիթարիլ ՚ի տրտմութ̃են
իմ. արեանդ քրտամբք քաջալե-
րիլ ՚ի վտանգաւորիլս իմ. Թող-
մամբդ ՚ի սիրելեաց անկործան
մնալ ՚ի դաւաճանութ̃են ատե-
լեաց, և մատնութ̃դ սփոփիլ և
բերկրիլ ՚ի դժկամակիլս իմ յըն-
կերաց ։

Յետ Խածածութեն ։

(՚Ի յիշատակ այնր ժմ՝ յորս հրեաց
տէր յըմէանինն, ՚ի հայինն, ՚ի պա-
տինն, և յապատինն ) ։

Խնամ տր, զխարդ արձակիչդ
կապելոց՝ ՚ի զինուորաց կրկին
կապեցար. և բարձողդ տիեզե-
րաց՝ ՚ի ծառայէ ապտակ ընկա-
լար. և դատաւորդ դատաւորաց
առաջի անօրէն դատաւորաց իբր
չա-

չարագործ դատեցար ։ Ո՛ այսո-
սիկ և զայլ բազումս վ՟ս իմ և
յաղագս իմոյ փրկութե՟ն յանձն ա-
ռեալ՝ ցուցեր զսաստիկ սէր քո
առ իս ։ Եւ արդ աղաչեմ զքեզ
արձակեա՛ զիս սիրով քո 'ի կրկին
կապանաց մեղաց . և ազատեա՛
զիս 'ի հարուածոց այսոցիկ չարի .
և անպարտ պահեա՛ զանձն իմ 'ի
նենգաւոր շրթանց օտարի ։

Յետ Սէ ածէն ։

('Ի յիշատակ չարչարանաց տ՟ն , և ծեծոյ
պատահելոյ ) ։

Ո՞վ զի դառն եղեն հարուածք
գանիցն՝ որով գանեցար տ՟րդ փա-
ռաց 'ի ձաղկիլդ և 'ի պսակիլդ
փշով ։ Արիացո՛ զիս աղաչեմ
յանձն առնուլ սիրով զ՟մ տան-
ջանս և զնեղութիս 'ի փառս քո ։
Կարողացո՛ և զկարողութիս հոգ-
ւոյ իմոյ՝ պսակիլ փշով բարի
խորհրդոց , և յ՟մ գործս իմ՝
փայլիլ լուսով շնորհաց քոց ։

## Յետ Հաղորդութեան :

( ՚Ի յիշատակ դատապարտելոյ Տն ՚ի մահ ) :

Անպարտական մահու որդի այ . երկիրպագանեմ անձառելի խոնարհութե քում . որ վսն իմ դատապարտեցար ՚ի մահ խաչի : Բա՛րձ աղաչեմ, բա՛րձ զդատապարտութի յանցանաց իմոց :

## Յաւել ժամանակին . Տր ած օրհնեալ է :

( ՚Ի յիշատակ բառնալոյ Տն զխաչ խաչէ , և բեռնաւորելոյ ՚ի նմա ) :

Մե՛ծ է ինձ , այո՛ մեծ է ինձ Տր օրհնել ՚ի լիութե օրհնութե խաչի քո , զոր բարձեր խոնարհութբ յուսոյ ածայլին . և տարածելով զբազուկս քո ՚ի նմա՝ լուծեր զյանցանս նախաստեղծին ադամայ . և կեցուցեր զպարտեալ և զկորուսեալ անձն իմ : Զօրացո՛ զիս , և կրկին կեցո՛ . օրհնեա՛ և օգնեա՛ ինձ՝ բառնալ կամաւ ըզխաչ

խաչ քո և զիմ 'ի պատիւ և 'ի պարծանս անուան քո , և տարածել զն̃մ զգործս իմ 'ի կենացդ փայտ սքանչելի , 'ի զօրացուցիչդ վհատեալ սրտի , և 'ի կեցուցիչդ ամենայնի ։

Յաւելն · Արձան և Երաս ։

('Ի յեղանակ աղօթելոյ տ̃ն Հ̃ր խաչա հանգստայ ) ։

Անյիշաչար և անոխակալ Տ̃ր մի յիշեր զյանցանս ծառայի քո · և մի մտաներ ը̃իս 'ի դատաստան ։ Գիտեմ զի արժանի եմ մերժելոյ և դատապարտելոյ · այլ դու որ ներեցեր խաչահանուաց քոց , և աղօթեցեր վ̃ն նոցա՝ ցոյց ինձ զներողութի̃ գթութե̃ և մարդասիրութե̃ քո ։

Յետ ԱԷ տէրն ։

('Ի յեղանակ Բարձրանալոյ տ̃ն 'ի խաչ, և Նախատելոյ 'ի նմա ) ։

Ընդ սերովբէիցն սրբաբանութեց բարեբանեմ զՏ̃րդ փառաց՝ որ

վ̄ն քաւնալոյ զանարգութիւն մեղաց իմոց անարգաբար բարձրացար ՚ի խաչ · և օրհնաբանեալդ յերկնաւորաց յաթոռ բարձրութեան՝ նախատեցար և հայհոյեցար ՚ի խաչին ՚ի յերկրաւորաց · և ցուցար յա̄մի երկայնամիտ , յա̄մի անոխակալ , յա̄մի քաղցրողորմ և մարդասէր ։ Տուր և ինձ տէր ՚ի խաչ հանել զմարմին իմ կարեօք և ցանկութ̄ք հանդերձ , և տանիլ նախատանաց և հայհոյանաց , և յա̄մի գոհանալ զքէն ։

Յառաջ կերակրոյն և յարբելոյ ՚ի սեղանէն ։

Խոստովանիմ և հաւատամ ։

Յետ ճաշոյ կերակրոյն ։

( ՚Ի յիշատակ պատարագելոյ տ̄ն ՚ի փ̄տ խաչին ) ։

Խորհուրդ անճառելի , խորհուրդ անքննին , խորհուրդ անհասանելի սիրոյ արարչիդ ա̄մի · որ միշտ անծախապէս պատարագիս ՚ի մեզ · ՚ի մահու կեանք՝ հա-

համայնից կենդանարար անշիջա-
նելի լուսոյդ 'ի խաւարի, անապա-
կանութե աղբիւր, յ͞ո փրկիչ աշ-
խարհի · կեցո զիս, և զօրացո ա-
նապական կենօք պատարագել
զանձն իմ 'ի հուր սիրոյ քո ։

Յաւել քահանայէն. Նա աղօթս 'ի ծոյոյ ։
('Ի յիշատակ ցաւոցն, զորս կրեաց Տ͞ր
'ի խաչին 'ի ձեռս, յոտս, և 'ի
գլուխն) ։

Նայեաց տէր՝ նայեաց յընծայս
մեծի խորհրդոյ · զոր վերընծայեմ
ա͞ծութե քում ։ Ընդ խորհրդոյս
ընծայեմ և զա͞մ զորս կրեցեր
'ի վերայ խաչին 'ի խոցուածս վե-
րաց ոտիցդ և ձեռաց, և 'ի խայթ-
ուածս փշոց բոլորելոց յա͞ծային
գլուխդ ։ Ընկալ յինէն ա͞ծ իմ
զայսոսիկ գ͞թով, զորս յանձն ա-
ռեր յաղագս իմ սիրով · և շնոր-
հեա ինձ զուարթ կալ յա͞մ սա-
ռապանս իմ, և զգաստ մնալ
յա͞մ փորձութիս ։

Յա-

Յաւել քահանայէն. Սրբէս չէ եղէցէ
սա:

(Ի շեշտապատ ծարաւելոյն ջուր ՚ի խա-
չէն):

Սէ՛մդ կենդանի որդի՛ բարձրե-
լոյ տէր յս, որ ետուր և տաս տիե-
զերաց ջուր անմահութե, և ար-
բուցանես զլերինս: Դու լիացու-
ցիչդ ամի ծարաւեալ ՚ի նուազ-
մանէ հիւթաւոր հոսման ա-
րեանդ ՚ի տանջանս խաչի կարօտ
ցուցար ջրոյ, և յաւէտ իմուժն
փրկութե: Այլ աւա՛ղ ապերախ-
տութե անձինս. զի ես ինքն փո-
խանակ մատուցի քեզ քացախ և
լեղի դառնութե՝ մեղաց և ախտից:
Բայց արդ՝ դու ներողամիտ տէր,
կարող ես անտես առնել և նե-
րել ինձ: Նորեա՛ աղաչեմ, զի
մի՛ ունայնասցի վն իմ վաստակ
կրից չարչարանաց քոց. այլ մե-
ծասցի և բարձրասցի առ իս և
առ ամսին:

Յա

Յաւել քահանայէն · Ընդ որս և մեզ ։
( Ի յիշատակ անուանց աշակերտացն առա- ւելէն ) ։

Պաղատիմ առ քեզ ընդ երջանիկ աւազակին · յիշեա՛ զիս տէր յորժամ գայցես արքայութեամբ քով ։ Յիշեա՛ զիս և այժմ որ պատկառեալ դիմօք կամ առաջի քո · յիշեա՛ և ի խաչակցիլս իմ ընդ քեզ ի փորձութիւնս հոգւոյ , և ի փորձանս մարմնոյ ։ Յիշեա՛ և մո՛յծ զիս ի դրախտ խաղաղութեան հոգւոյ · ի դրախտ բերկրութեան սրտի · ի դրախտ լուսաւորութեան մտաց · ի դրախտ բարեկենդանութեան ընտիր վարուց և ի կէտ յետին կոչմանս՝ ի դրախտ երկնային անմահ ուրախութեանցդ ։

Յաւել քահանայէն · Առ Եղիայէ ողոր- մութեան ։
( Ի յիշատակ ծնողաց իւրոց , առ մայր իւր և առ յաջորդսն ) ։

Ամէն , այո , եղիցի անմնիկաղ ո-
ղոր-

ղորմութ՟ քո որ ընդ իս է՟ անարգ. ծառայ քո, միջնորդութ՟ ամե՟ն- օրհնեալ մօր քո անարատ կու- սի . որում յանձնեցեր և որդեգ- րեցեր զիս ՚ի հանդիսի չարչարա- նաց քոց, յասելդ ցյովհաննէս ցաշակերտ սիրելի, ահա՛ մայր քո ։ Այլ վա՛յ է ինձ . զի ես խո- տան գտայ այսմ շնորհի . վա՛յ ա- ղաչեմ զքեզ, կրկին ես յանձն առա՛ զանձն իմ ՚ի ձեռս մօր քո ։

## Յետ Հայր մերին ։

(՚Ի չէշտական բանից տն՟՝ ուր խօսեցա- ւ հայր) ։

Մի՛ թողուր զիս թողուլ զքեզ. տէր իմ յս՟ քս՟, որ յաղագս ո՛չ թողլոյ զիս թողար ՚ի հօրէ, և գոչեցեր առ նա . էլի էլի լամա- սաբաքթանի ։ Գիտեմ տէր զի չեմ արժանի ո՛չ թողլոյ ՚ի քէն . քանզի բազում անգամ կամա- կար թողի զքեզ . այլ դու որ թողութեանց ես թագաւոր, գթա՛

և

և թո՛ղ ինձ . ընկա՛լ զանմներե-
լիս ո՟պ զանառակ որդին , և լե՛ր
ինձ դու միայն հայր բարի :

Ի երկրպագութեանն քահանային ըն-
խորհուրդն :

( Ի յեղանակ Քրիստոսէ ասքի ճարտեան ,
զոր ասաց Տէր 'ի խաչին ) :

Ընծութի՛նք երկնի և երկրի
քո՟ որդի ա՟յ , գոհանամ զքեն ,
և մեծացուցանեմ զքեզ , որ առ
'ի կեցուցանել համօրէն զազգ
մարդկան ետուր զկեանս քո , մե-
ռանելով 'ի խաչին : Տո՛ւր և ինձ
վ՟ս սիրոյ քո մեռանիլ մեղաց և
ցանկութեց մ՟ի . և 'ի քեզ կեալ ,
և առ քեզ գալ , և ը՟ քեզ մնալ :

Յաւէլ քահանայէն . Ի մէ 'ի մէ :

( Ի յեղանակ սքանչելեացն՝ որք գոր-
ծեցան յաստուածական հոգւոյ տ՟ն ) :

Կենդանացո՛ զիս հոգւով կեն-
դանի՛ց յաւիտենից քո՟ . և կանգ-
նեա՛ զիս 'ի մեռելութե՟ մեղաց .
պատառեա՛ զդատակնիք յանցա-
նաց

նայց իմոց . և շարժեա՛ զսիրտ իմ
'ի հաճոյս կամաց քո :

Յաղօթել քահանայէն 'ի ծածուկ :

( 'Ի յիշատակ իջանելոյ տն̄ 'ի խաչէ ,
և թաղելոյ 'ի գերեզմանի ) :

Հոգի երեսաց մերոց տ̄ր յ̄ս ք̄ս որդի ա̄յ վստահութ̄ի կենաց , և յոյս յարութե̄ . որ մահուամբ զմահ կոխեցեր . և 'ի մահու 'ի զկենաւորն դեղարդեամբ զխոցումն ընկալեալ՝ կրկնավտակ աղբերբք կողի քո զմեզ կրկին նորոգեցեր . և զամենայնն կատարելով , 'ի խաչափայտէ իջեալ՝ զիջուցեր զբարկութ̄ի հօրդ երկնաւորի . և թաղմամբ մարմնոյ քո 'ի նոր գերեզմանի՝ թաղեցեր և ընկղմեցեր զհնութ̄ի մեր : Գոհանամ զքէն , և աղաչեմ . պահեա՛ զիս՝ զի մի՛ ես յանդգնեցայց միւսանգամ մեղօք իմովք բևեռել զքեզ 'ի խաչի : Դու ինքն ա՛ւտէր , դու ինքն օծ̄ ի̄ օծման ա-

նա-

նապական մարմնոյդ իւղով շնոր-
հայդ, կնդրկաւ պարգեւացդ,
հալուեխւ սիրոյդ ։ Պատեա՛ և
զկեանս իմ պատանօք պահպա-
նութե թեւօք հոգւոյդ սբյ · և ամ-
փոփեա՛ զգնացս իմ ՚ի գոգ հայ-
րական նախախնամութե քո ։

՚Ի ճաշակել ժամանակին զսբ խոր-
հուրդն ։

(՚Ի յիշատակ իջանելոյ հոգւոյն քի
՚ի դժոխս) ։

Ինչ է, աղաչեմ զքեզ ած իմ և
տէր, ինչ է ՚ի հոգի իմ հզօր զօ-
րութի ամենայաղթ հոգւոյդ ՚ի
ձեռս հօր աւանդելոյ · և խզեա-
ցէ զշղթայս ախտից իմոց · և խոր-
տակեսցէ զնիգս դրանց ապակա-
նութե չար յօժարութե կամաց ի-
մոց ։ Մխիթարեսցէ զաքսորանս
իմ · սփոփեսցէ զտարագրութի
իմ · կազդուրացուսցէ զքանտար-
կութի իմ · և հանցէ զիս ՚ի յան-
դորրութի կենաց, և յերանու-
թիւն

Թիւն յաւիտենական փառաց:

Յաւարտ պատարագի :

('Ի յիշատակ յարութ͞ե եւ համբարձման տ͞ն ) :

Լսելի՛ արա ինձ տէր զազդումն աւետաւոր յարութ͞ե քո 'ի լրումն խորհրդոյ պատարագիս : Ամ-բա՛րձ եւ զսիրտ իմ առ քեզ յեր-կինս . յոր համբարձար փառօք փառաւորեալ յաւիտեան :

❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖

Եօթներորդ կարգ աղօթից 'ի ժամ պա-տարագի :

ՅԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒ:

'Ի դէմս տ͞մ ն͞էց :

Դնէպաւորութ͞ե :

Ա͞ծ զօրութ͞եց , տ͞ծ կենդանի , առաջի քո յանդիման եղեալ՝ քեզ մատուցանեմ բարեխօսու-

Թ͞է

Թն՛ոյց քոց զպատարագս զայս
՚ի փառս անձինանց երրորդութեանդ,
և ՚ի գոհութիւն բազում բարերա-
րութեանցդ, եւ ։

՚Ի միջամնել պատարագին ։

( Ա. — ոչ Յովհաննէս Միրտէչն ) ։

Զայն բարբառոյ աւետաւոր
հնչեալ յանապատացեալ ոգիս
մարդկան ընդ Յովհաննէս · արու-
սեակ ծագեալ ՚ի սկիզբն առա-
ւօտու շնորհացս օրինի ։ Բարե-
խօսեա՛ վասն իմ առ անարատ
գառն այ՝ բառնալ յինէն զծան-
րութի մեղաց, և արժանաւորել
զիս՝ սրբութեամբ սրտի կալ ա-
ռաջի քո պատարագիս ։

՚Ի սպաս արձանել քահանայէն ։

( Ա. — ածահայրն Յովսէփ ) ։

Հայրական պատուով յայ պա-
տուեալ երանելին ընդ հայրդ յով-
սէփ, արդարդ յամի · արդար ՚ի
սրբութե, արդար ՚ի կուսութե ·
արդար յածպաշտութե · արդարու-

Թէ ա̅ծպաշտութեդ ընտրեցար
պաշտպան և պահապան պաշտ-
պանողին ա̅մի, և պահպանողին
իսրայէլի ։

Քեզ միայն պարգևեցաւ այս
պատիւ յարարածս ա̅մ · քեզ
միայն տուաւ հրամայել հաստա-
չին ա̅մի, և մօր նորա ամենօրհ-
նեալ կուսի · քեզ միայն շնոր-
հեցաւ կառավարել զնախախնա-
մօղն երկս ա̅մի իբրև հայր ։

Աբրահամ ցանկացաւ տեսանել
միայն, և ո՛չ ետես · դու ո՛չ միայն
տեսեր, այլ և 'ի ձեռս առեալ՝
ողջագուրեցեր, գգուեցեր և
համբուրեցեր · տածեցեր և խնա-
մարկեցեր · և 'ի չափ կատարեալ
հասակի հասուցեալ՝ պատրաս-
տեցեր 'ի զենումն և 'ի պատա-
րագ հօրն երկնաւորի ։ Ո՛րոյ
զանքննին խորհուրդ մեծի յիշա-
տակի ունիմք յառաջին պատրա-
գիս բովանդակել · ակն ունելով
ընդու-

ընդունիլ 'ի նմանէ զշնորհս սըր-
բութե սրտի և անարատութե վա-
րուց բարեխօսութբ և հայցուա-
ծովք քովք :

Յետ ժամամուտին :

( Որ առաւօտ ընթերցանի քհն , կամ առ յառաջ ապաշխարողն քհ ոք ) :

Գովելով այսօր զյիշատակ սքան-
չելի փառաւորութե քո , աղաչեմ
զքեզ ով երանելի Սբ ( այս ա-
նուն ) . հայցեա վն իմ յամենա-
ռատ Տնէ՝ տալ զթողութի մեղաց
և զքաւութի յանցանաց . պար-
գևել և զհաճոյարար շնորհս
իւր՝ կեալ ինձ անարատ վարուք
յայսմ կի , և խնդութբ ժամա-
նել յանանց և յանվախճան ու-
րախութիս երկնից , և փառաւո-
րել ընդ քեզ զամենասբ զերրոր-
դութին յաւիտեանս յաւիտենից :

Յետ սբ տծին :

( Որ սբն Ստեփաննոս Նախավկայ ) :

Փառք պայծառ վայելչութե երկե-

ղեցւոյ առաջին վկայ ք՟րի ն՟խ
ստեփաննոս · որ 'ի վարդագոյն
ներկեալ քարանց յարեան քո
հոսմանց՝ բոլորեալ պսակ փա-
ռաց՝ ընծայեցեր զանձն քո նուի-
րական ողջակէզ հաճոյ ա՟յ · և
աղօթիւք բացեալ զդրունսն
երկնից՝ տեսեր զորդին ա՟յ ընդ
աջմէ հօր՝ գովեալ և բարեբա-
նեալ երեքսրբեան օրհներգու-
թե՟ յանմարմին զուարթնոց ։
Մանաւորեա՛ ինձ աղաչեմ յա-
մենաբաշխ աջոյն բարձրելոյ զձիր
շնորհաց արութե՟ 'ի վկայութե՟
ճշմարտութե՟, և 'ի խոստովանութե՟
քրիստոնէական աւանդութե՟ ։

Յետ Հաւատամքին ։

( Ա.— ՚նէ Գրիգոր Լուսաւորիչն ) ։

Շնորհք մեծ ունիմք քեզ ով
քահանայապետ ընտրեալ ն՟ւդ-
գրիգորիոս · որ նստելովս 'ի խա-
ւարի կռապաշտութե՟ արփի ե-
րևեալ՝ լուսաւորիչ մեր եղեր ։

Տան-

Տանջանացդ երկամբք ծնար ըզ-
մեզ յորդիս անստերիւր հաւա-
տոյ. և բանիւ աւետարանի հաս-
տատեցեր զմեզ յեկեղեցի սբ ։
Ո՛չ մոռանամք զերախտիս քո
հա՛յր սբ, և ո՛չ հեռանամք յոր-
դի քո լինելոյ ։ Մի՛ մոռանար և
դու զմեզ, և մի՛ հեռանար յոր-
դեգրելոցս. այլ հայրական գը-
թովդ ցո՛յց մեզ զխնամս քո ։
Լե՛ր բարեխօս առ տէր վ՟ն մեր՝
գտանել 'ի նմանէ զողորմութի՟ն և
զպարգևս հաստատութե՟ն հաւա-
տոյ՝ անսասան մնալ յուղղափառ
դաւանութե՟ն կաթուղիկէ և առա-
քելական սբ եկեղեցւոյ ։ Լե՛ր
և վ՟ն իմ բարեխօս 'ի ժամուս
յայսմիկ՝ աներկբայ մտօք կալ
առաջի սբյ պատարագիս, և քև
մեծացուցանել զԱ՟ծ ։

Յաւել քահանայն . Տէր ա̄ծ օրհ-
նեսցէ :

( Առ որդիս և առ Թոռունս լուսա-
ւորչին ) :

Ներկրական բարունա՛կք շառաւիղեալք 'ի լուսապանծ որթոյ օրհնելոյ, երանեա՛լքդ և փառաւորեալքդ յա̄յ, բարձրացեալքդ և պսակեալքդ յերկինս, որդ արիստակէս և վրթանէս, ընդ յուսկանն վկայելոյ և գրիգորիսդ նահատակեալ . ընդ երջանիկն դանիէլի և ը̄ ներսեսի մեծի և խադդ խրախուսեալ :

Որք նուիրեցիք զանձինս ձեր 'ի փրկանս ազգիս հայոց . աղաչեմք զձեզ՝ մի՛ թողուք զմեզ 'ի ձեռաց ձերոց . մի՛ դարձուցանէք 'ի մէնջ զերեսս ձեր . մի՛ հայիք յապիրատութիս մեր . այլ՝ հայեսջի՛ք 'ի վաստակս ձեր՝ զորս վաստակեցայք վ̄ն մեր : Եւ միջնորդութ̄բ ձերով հայցեսջիք յերկնաւոր

հօ

հովուապետէ զպահպանութիւն հօտին ձերոյ , և ուղղափառութի որդւոց ձերոյ 'ի հարստահարութէ թշնամեաց . և որ առաւելն է՝ զզեղումն հարազատ սիրոյ առ միմեանս , և զցանկալի անդորրութի քաղաքական միաբանութե ընդ ամենեսին :

Յաւելն . Ործան և երան :

(Առ ամէն յանձռ ճծբռնաց հայրապետ) :

Բարձրելոյն փառաց արժանաւոր ծառայ 'սբդ յակոբ . երջանիկդ 'ի հայրապետս . կենցաղակից անմարմնոց երևելով՝ հիացուցիչ գտար վերնոց և ներքնոց . պարծանք նորոյս սիոնի , և սիւն հաստատութե հաւատոյ . կազդուրիչ և յորդորիչ մանկանց եկեղեցւոյ , և աւետիս յայտարար ճշմարտութե մեզ աւանդելոյ՝ փայտիւ նոյեան տապանի յամօթ և 'ի քարընկէց յերեսս ուրացելոց :

Աղաչեմք զքեզ հա՛յր գթած՝ գորովալից գթասիրութ՟բդ պահպանեա՛ զմեզ, և խնամողակա՛ն պաշտպանութ՟բդ ազատեա՛ յա՟մ արկածից չարաց՝ ապրեցո՛ զապաւինեալքս 'ի քեզ 'ի տարաժամ մահուանէ, և փրկեա՛ ըզմեզ 'ի ժանտութե՟ն չարաչար ախտաւորութ՟եց ։

Զերծո՛ և զիս 'ի մեռելութ՟է մեղաց, և 'ի պաշարմանէ մոլեգին ախտից, և 'ի տաժանմանէ երկրաքարշ կրից · զի սրբութ՟բ սրտի կեցից, և ամբծութ՟բ հոգւոյ ծառայեցից տ՟ն իմոյ յա՟ւ զա՟մ ըզկեանս իմ ։

## Յետ ՍԷ տեէն ։

## ( Առ հրեշտակս յերկինս ) ։

'Ի վեր առեալ ը՟ մաղթողական բանիւս զխորհուրդս մտաց սրտիս, գոչեմ առ երկնային զօրսդ, և առ անմարմին զուարթունսդ ։ Ու արտասուօք աղերսեմ, հայիլ

առ

առ խս առ տաժանեալս ՚ի վերայ
երկրի , և առ տատանեալս ՚ի
խաւարի · առ տառապեալս ՚ի
բռնութէ չարի , և առ վտան-
գեալս ՚ի հոգևորական մարտի ։
Խնդրեմ օգնել ինձ տկարացե-
լոյս , և ընկերել չարաչար ան-
կելոյս · վարեսջի՛ք յինէն զյար-
ձակմունս գրգռութէ տապից և
ախտից · և վանեսջի՛ք զյարուց-
մունս բռնակալ բանսարկուին
հրեղէն նետից ։ Մ՛ի անփոյթ ա-
րասջի՛ք զինև ո՛վ փոյթքդ ՚ի փըր-
կութի՛ ազգի մարդկան ։
Հայցեմ ՚ի ձէնջ՝ տո՛ւք ինձ ձեռն
ապաստուն · և լերուք մոլորելոյս
օգնական անքոյթ փրկութէ · զի
զերծեալ և ես ՚ի չարեաց , և
անբիծ պահեալ ՚ի կարեաց , ար-
ժանի եղէց արժանաւոր օրհնու-
թե՛ փառաւորել ընդ ձեզ զփա-
ռաւորեալն ՚ի ձէնջ ՚ի բարձունս
զամենանման զերրորդութի՛ն զհայր
և

և զորդի և զսբ հոգին ։

Յետ Ս[illegible] ։

( Ս[illegible] մէ [illegible] ըհըր [illegible] մէ աշաքէրտան ) ։

Ինքնաբաւ էին համայնից կենցաղականցս, և անկարօտ ձեռին միածնի որդւոյն այ̃ ձեռնատուք մի երանելի առաքելովք ընտրելովք ’ի սկզբանէ յառաջնորդութիւն նորոյ սիոնի ։ Հիմունք հաւատոյ, և յենարանք հաւատացելոց. մատեանք ած̃աշունչ պատգամաց, և կտակարանք ճշմարտութեան աւետարանի ։ Ձեզ նախ և ձեր առաջի կարգեաց և ետ տէր զանհաս տնտեսութիւն սքանչելի խորհրդոյ հաղորդութեան անքննելին պատարագաւ յասելն անդ. առէք կերէք այս է մարմին իմ. արբէք ’ի սմանէ ամ̃քն այս է արիւն իմ նորոյ ուխտի ։ Նաև ետ ձեզ իշխանութիւն քահանայագործելոյ զայս խորհուրդ

’ի

՚ի յիշատակ սիրոյ և չարչարանաց
իւրոց ասելով . զայս արարէք առ
իմոյ յիշատակի :

Ի ձեռս ձեր յանձն արար զտիեզերս ամ՟, և զարքայութի՟ իւր : Ձեզ աւանդեաց և զկառավարութի՟ թագաւորութե՟ իւրոյ . կացուցեալ ՚ի միջի ձերում իւր երեսփոխան զպետրոս , և պաշտաման ձերում գործակից զեօթանասուն և երկուս : Դուք ծնօղք մեր հոգևոր . դուք հարք մեր . դուք փառք մեր . դուք դերագոյն փաստաբանք մեր : Մի՛ մոռանայք զմեզ աղաչեմք զձեզ, և մի՛ անտես առնէք զյանձնեալս ՚ի ձեզ : Սնուսջի՛ք զմեզ սրբութ՟ զծնեալս երկամբք քարոզութե՟ ձերոյ . և հաստատեսջի՛ք զմեզ բարեխօսութ՟ ձերով ՚ի հաւատ ՚ի յոյս , ՚ի սէր և յա՟մ գործս բարիս . և հասուսջի՛ք զմեզ առաջնորդութ՟ ձերով ՚ի փառս ար-

քայ-

քայուն երկնից 'ի քն յն 'ի տէր
մեր :

Յաւէլ ժամանակին . Նա ըշտոյս 'ի
ժողոյ :

(Առ նահապետս և առ մարգարէս) :

Նորկնանշոյլ երանափայլ ձառագայթից արեգականն արդարութե 'ի մեզ ծագելոյ նախաժառանգ բարձունք լերանց հոյլք նահապետաց և մարգարէից: Ազգաց և ազանց բիւրախորհուրդ արդեամբք, և հրաշանուագ պատգամօք կանխահրաւէր բարբառք աւետեաց . և յանցուցելոյ մարդկայինս բնութե խրախուսական ազդմունք փողոց 'ի բացուստ հնչեալք :

Ով երանելի հարք հարց մերոց , նախահաւք պատուեալք յայ . որք ամենալի տենչմամբ և կաթոգին տարփմամբ ցանկայիք վայելել զտեսութի նախանկարելոյ 'ի ձէնջ և սկզբնագուշակելոյ

լոյ ձեօք սքանչելահրաշ մեծի
խորհրդոյ անմահ գառինն նուի-
րելոյ և պատարագելոյ 'ի հաշ-
տութի հօր :

Որում ցանկայիքդ՝ մեզ աւան-
դեցիք · որում անձկայիքն՝ մեզ
աւետաւորեցիք · որում փափա-
քէիքն՝ մեզ յայտնեալ ծանուցիք:
Հասիք այժմ՝ որում ակն ու-
նէիք · ժամանեցիք յառաւելն
ևս, և տեսիք · գտիք և ժառան-
գեցիք :

Այլ արդ շնորհս ունելով բազ-
մարդիւն և բազմերախտ պատ-
գամաւորացդ՝ մատչիմ աղաչել.
և համարձակիմ 'ի ժամուս յայս-
միկ 'ի նուիրման տաճարիկայ ոք
պատարագիս միջնորդութք ձե-
րով յամենապարգև տնէ զմեծա-
մեծս խնդրել : Ստացս՝ զլուսա-
ւորութի հաւատոյ՝ 'ի հաստատութի
աւետաւեաց ձերոց : Կամացս՝ ըղ-
հաստատութի լուսոյ՝ 'ի կատա-

րումն

րութն պատգամաց առ 'ի ձէնջ հրատարակելոց ։ Կենացս զանգորրուն՝ առաւելութիւն սիրոյ 'ի վայելումն ածայլին բարեհամբուն ձեօք յայտնելոյ . որովք ակնանիմ ժամանել 'ի ժառանգութի երկնային ուրախութեցն , և 'ի նոսին բերկրիլ ընդ ձեզ յաւիտեանս յաւիտենից ։

Յաւել քահանայէն . Որպէս չէ եղիցի առ մեզ ։

( Առ Մարտիրոսս ) ։

Նահատակք և վկայք քնի այ՝ երանելի նք մարտիրոսք . որք իբրև զոսկի փորձեցայք հրով 'ի բովս զանազան տանջանաց ։ Մատնեցիք զանձինս ձեր 'ի գանս և 'ի տուգանս , 'ի ըլկանս և 'ի քերանս ։ Դուք կամաւ ըզմարմինս ձեր 'ի հարուածս խարանաց և 'ի ժանիս գազանաց . յերկուոնս քքուանաց և 'ի գեղանս կապանաց ։ Քարկոծեցայք ,

ցայք · աղօթեցայք, քննեցայք,
սպանմամբ սրոյ մեռայք, վանե-
ցիք զկործանումն մահու, և խոր-
տակեցիք զսաստ սպառնալեաց
չարին ։ Ակայեալք առաջի դա-
տաւորաց, փառաւորեալք յան-
դիման թագաւորաց ։

Ով արիք և քաջք 'ի հանդիսի ·
երջանիկքդ 'ի հզօրս, պանծալիք
և տօնելիք · որք ցօղով արեան
ձերոյ ոռոգեցիք զեկեղեցի ն̃ր ·
և մահուամբ ձերով կենդանա-
ցուցիք զյոյս հաւատացելոց ։
Յանձնառութ̃բ չարչարանաց խրա-
խոյս ետուք քաջազօր զինուորաց ·
և համբերութ̃բ ձերով ճանա-
պարհ հորդեցիք մեզ յարքայու-
թ̃ն երկնից ։

Ընկալայք զբրաբիոն յաղթանա-
կի յերկնաւոր արքայէ · և կար-
գեցայք բարեխօս տօնողաց յի-
շատակի սրբութ̃ն ձերոյ ։ Կարօ-
տելոյս և ինձ մաղթանաց ձերոց

ցուց-

յուցջի՛ք. աղաչեմ զգործուն միջ-նորդութեան և բարեխօսութեան ձերոյ: Զօրացայց և ես շնորհօք Տն. և կազդուրեցայց զօրութբ առա-ջիկայ խորհրդոյս. առաքինա-ցայց ընդդէմ մահու ախտից և մեղաց. և նահատակեցայց 'ի համբերութիւն նեղութեց. և ընկա-լայց ձեօք 'ի քսէ զյաղթութեն պսակն 'ի կեանսն յաւիտենա-կանս:

Յաւել ժամանայէն. Ընդ որս և մեզ:
( Ի՛ — ՟Է հայրապետաց ) :

Ընծայեմ և զուարճանամ 'ի յի-շատակել զմեծամեծս, զորս ե-ցոյց ձեօք և 'ի ձեզ բարերարն տմի, ով երանելի դք հայրա-պետք: Բերկրիմ այժմ ընդ բերկ-րական արարս ձեր, որով ուրախ արարէք զեկեղեցի դք 'ի վանել զյարուցեալսն 'ի մջ նր հերձուա-ծողք, և 'ի հովուել զգառինս նր բազում խնամովք: Գերա-պանծ

պանծ ցուցան գործք ձեր , և ա-
ռաւելութ՟բ հանդիսացան . զո՟րն
առցուք ՚ի յիշատակ : Արօրադ-
րութ՟բ վարդապետութ՟ե ձերոյ
ծաղկեցուցիք զհովիտս հոգևորս
նորոյ սիոնի . և յաւէժ ավաստակ
հսկողութ՟բ աշխատասիրութ՟ե ձե-
րոյ պայծառացուցիք զմանկունս
երկնաւոր առագաստի : Վերա-
դիտողութ՟բ պաշտաման ձերոյ
բարձրացուցիք զեղջիւրս հաւա-
տացելոյ . և այցելութ՟բ տեսչութ՟ե
ձերոյ նորոգեցիք զոգիս վհատե-
լոց և հնացելոց : Նասջիւք ևս
յօգնութ՟ի և յայցելութ՟ի համօրէն
ննջեցելոց . զի բարեխօսութ՟բ ձե-
րով հասցեն և ն՟ք ՚ի հանդիստն
յաւիտենից :

Յաւել քահանային . Եւ եղիցի ողոր-
մութիւն :

( Ասա մէ խոստովանօղս ) :

Մարտիրոսական և առաքելա-
կան հանդիսի հանգունատիպք

փայլեալք և երջանկացեալք
խնկազգեացքդ խոստովանողք
ամենամբք երրորդութե̃ն . արմաւե-
նիք տնկեալք և ծաղկեալք ՚ի
տանն Տ̃յ . և ձիթենիք բարե-
բունք պարարտացեալք ՚ի մէջ
եկեղեցւոյ ։ Արք բանիւք և որ-
դեամբք քաղցրացուցիք մեզ ըզ-
լուծն Քի̃ . և թեթևացուցիք
զբեռն օրինաց նր̃ ։ Աղաչեմք
զձեզ . բարեխօս լերուք վն̃ մեր
առ աղբիւրն բարութե̃ն . զի արժա-
նացեալք ողորմութե̃ն նորա ՚ի
շնորհաց ս̃բյ խորհրդոյս՝ հա-
ցուք ՚ի խոստացեալ երանութի̃ն։

Յետ Հայր մերին ։

( Ա.— ձէ̃ն ոահաջ ն Ձեւրող ) ։

Չեմք բաւական բարերարութե̃ն
ձերում հատուցանել, զոր ցու-
ցիք մեզ ո̃վ հարք մեր երանելիք,
սբ̃դ սահակ, և սբ̃դ մեսրոպ։ Ան-
դէր դեգերելոյս տանք վայել-
չականք . և անպատգամ մնացե-

լոյս

լոյս մարգարէահրաշ Թարգ-
մանք : Ամոլք միահետոք համա-
բունք . և լուծք զուգակցորդք
համընթացք : Ընդ ձեզ և ձե-
ռասունք ձեր յարգոյք և պատ-
ուականք , փառք մեր և պար-
ծանք : Աղաչեմք զձեզ բարեխօս
լինել վն մեր առ հայր յերկինս ,
հաստատել զմեզ յիւր ուղղեգ-
րութե շն որհս , և զօրացուցանել
զմեզ երկնային հացիւ ածային
բանից :

Ի բարձրացուցանել քահանային զսուրբ
նուէրն :

( Յեշտապաշտան տմ տէր և տմ արար-
ծոյ ) :

Փառք և երկրպագութի՛ անճառ
Թագաւորին՝ յամ տէր և յամ
արարածոյ , յերկնաւորաց և
յերկրաւորաց :

Յաւել ժամանակին . 'Ի մէջ 'ի մէջ :

( Ս,երժէն յիշատակա նահապետէլոյն յազգէ Աբրամ . ոսկեանց և սուրբեաանց , ըստուածեանց , Հայրապետանց և ապոլճանց ) :

Օրհնեա՛ զմեզ Տէր , օրհնեա՛ և զազգ մեր բարեխօսութեամբ 'ի քէն օրհնելոց , և 'ի սէր քո 'ի մեզ նահատակելոց :

Յաղօթել ժամանակին 'ի ծածուկ :

( Ը,ստ մէջ Ճգնաւորս ) :

Պաղատիմ առ Քեզ առ երանագունմար երանեալ Ճգնաւորաց , առ վերնաձեռեալոց , և առ երկնակենցաղաց . առ կուսարձակեցելոց հոգւով յերկրի , և առ Հրեշտակացեալոց լուսով 'ի մարմնի . առ հզօրացեալոց 'ի տկարութենէ , և տոնեալոց յերկասիրութեան :

Որք փառեցայք և մարտեայք Ք մարմնոյ և ընդ արեան , ընդ աշխարհի և ընդ սատանայի , յաղթող երևեալ յամի : Զ ախտա

մարմ

մարմնոյ մեռուցանելով՝ երջան-
կացայք 'ի վր̃ երկրի ։ Աշխարհի
և աշխարհայնոց մեռանելով ,
կենդանացայք քնի ։ Զհնարս
սատանայի և արբանեկաց նր̃ 'ի
բաց վանելով՝ ճոխացայք ճախրե-
ցիք ընդ հրեշտակս երկնից ։
Յանապատի բնակելով՝ յանա-
պատ դարձուցիք զշինուած հին
մարդոյն ․ 'ի ծերպս քարանձա-
ւաց ճգնելով՝ 'ի ծերպ անձնիշ-
խան կամաց նուաճեցիք զընդդար-
ձակուն ապականեալ բնութե̃ ․ 'ի
պահս պնդութե̃ պարապելով՝ 'ի
պահ արկիք զխրոխտութն զգայ-
ութե̃ց ․ 'ի հսկմունս տքնութե̃
բազմելով՝ 'ի հուսկն հասիք կա-
տարելութե̃ ։
Նորանէ ձեզ և բիւր երանի ․ 'ի
փառաց փախուցեալ հեռացայք ,
և 'ի փառաւորաց պայծառացայք ․
'ի բերկրութե̃ց հրաժարեցայք ,
և խնդութե̃ հոգւոյ փափկացայք ․

'ի մեծութեանց թօթափեցայք, և երկնային փարթամութե՜ լիացայք: 'Ի քաղց և 'ի ծարաւ վաստակեցայք, և հացիւ առաքինութեան յագեցայք · մերկ և անպաճոյճ շրջեցայք, և շնորհօք հոգւոյն զարդարեցայք · 'ի լռութեան և 'ի խոնարհութեան հրահանգեցայք, և երանական անդորրութե՜ զմայլեցայք:

Նու արդ աղաչեմք զձեզ հա՛րք մերք, որք փորձ գտայք յա՜մի՛ օգնական լերուք փորձանաւորացս · նպաստեսջի՛ք և ինձ 'ի ժամուս յայսմիկ հաղորդակից լինել շնորհաբաշխութեան նուիրաց մերյ պատարագիս:

'Ի ճաշակել ժամանակին շնորհաւորդն:
( Ա՛ռ զէ հոստանս ):

'Ի մարմնի անմարմնականացն փայլեալք սրբութե՜, և նուիրեալք 'ի հարսնութե՜ երկնաւոր փեսային քի՛ · ծնունդք պանծալիք պատ-

րե-

րեցելոյ նախամօրն եւայի · բերկ-
րեալք 'ի դստերս նախաստեղ-
ծին ադամայ խնկաւորէք խումբք
կուսանաց · որք ընծայեցիք զան-
ձինս ձեր պատարագ ա̃յ ընդու-
նելի 'ի հոտ անուշից մաքրութե̃
ամբիծ վարուց , զգաստութե̃ ար-
թուն մտաց , հաստատութե̃ անսայ-
ըայլելի կամաց , պահպանութե̃
ներքին խորհրդոց , ճգամբ եւ
ճնշմամբ մարմնոյ եւ արութե̃
հոգւոյ ։

Ջրով շնորհաց շիջուցիք զհուր
ցանկութե̃ բորբոքելոյ · հրով սի-
րոյ ցնդեցիք զջուր հեշտութե̃ հե-
ղեղելոյ ։ Զօրացայք վառեցայք ·
յաղթեցիք իշխեցիք · սքանչա-
ցայք պատուեցայք · վերացայք
պսակեցայք եւ փառաւորեցայք
ընդ զուարթունս բարձանց ։

Ինչէ՞ թէ կատարեցիք եւ ես ա-
նարատութե̃ զընթացս կենցա-
ղոյս · Երբ արդեօք զերծ գտայց

յորոգայթից և 'ի հաղբից կոր-
ծանման · եկեսցէ՞ արդեօք ժամն
այն ,յորում ոչ ևս երկեայց ինչ
'ի չարէ ,այլ ցնծացայց ընդ ձեզ
'ի ժառանգութեան անսահման
բարւոյ ։

Ո՛վ հրաշալի հայելիք սրբութեան և
լուսաւորիչ օրինակք զգաստութեան ,
աղաչեմ զձեզ՝ լերո՛ւք ձեռնտու
վտանգեցելոյս , և այցելու արի՝
յառթից թակարդեցելոյս զի
մի՛ ըմբռնեցայց · պաշտպան ա-
պաւինութեան 'ի թշնամեաց պաշա-
րեցելոյս , և օգնական ազատա-
րար յալեաց փորձութեան ողողելոյս
զի մի՛ ընկղմեցայց և կորեայց ։

Ո՜վ գառինք անարատք և որոջք
ընծայեալք գառինն անմահի ,
կրկին աղաչեմ և դարձեալ ա-
ղերսեմ , հայեսջի՛ք առ իս , և
լերո՛ւք վասն իմ բարեխօս հաշտու-
թեան և միջնորդ փրկութեան առ
հոգևորդ ձեր յանկալի փեսայն ·

զոր տեսանեմ աւասիկ 'ի վերայ
սբյ սեղանոյս նուիրեալ 'ի ճաշա-
կումն հաւատացելոց : Նաեւ ակն-
ունիմ ձերովդ արդեամբք լինել
մասնակից իմանալի ճաշակման ,
և ներքին վայելման սրտակաթ
սիրոյ նորին :

Յաւարտ պատարագին :

( Յեղապաշտ երանեալ հոգւոյ , եւ
և ննջեցելոց ) :

Օրութ̃ ո̃ւ պատարագիս , յոր
նկարեն ա̃մ խորհուրդք չարչա-
րանաց քոյ տէր յս̃ , և յիշատա-
կին փառք կենդանացելոց ընդ
քեզ երանելի հոգւոց , յանձն
առնեմ քեզ զհոգի և զմարմին
իմ և զա̃մ ընկեանս իմ և ըղ-
գործս :

Յանձն առնեմ և զայնոսիկ , ո-
րոց վասն պարտական եմ աղօ-
թել . և աղաչեմ զքեզ օրհնեա
զմեզ զա̃մսին 'ի պատիւ լուութե̃
խորհրդոյս : Յանձն առնեմ ո-
ղոր-

ողորմութեան քում եւ զհոգիս ննջե-
ցելոց քրիստոնէից․ եւ աղերսեմ,
խնայեա՛ ՚ի նոսա, եւ ողորմեա՛ նոցա,
եւ հանգո՛ զնոսա ը̃ սբ̃ս քո յար-
քայութեան քում․ ուր փառաբանիս
ընդ հօր եւ ընդ սբ̃յ հոգւոյդ յա-
ւիտեանս յաւիտենից․ ամէն ։

# ՀՐԱՀԱՆԳ. Ա.

## Յօժարեալ հաստատեմք բանից ՚ի վր՟ նր՟ հաղորդութե՟ ։

Տեսանելով զպատիւ յարարածոց հրա-
շալեաց ա՟յ աղաղակէ . * որպէս ա
չէ մեծ են գործք քո Տէր || . սաղ. ճԴ.
24 ։ Յերկարել մեծ են և սքանչելի որ
ինչ յերկրի երևին և որքանս յերկինս ։
Բայց ձանր պարմանալեօք լցեալ է եր-
կիր . յորում որքան և հատուածքն , յիմա-
ստուերաց * գործք սքանչելեաց || ան-
սահմանեն ։ Բայց հեռանալի է և ճարտ-
րութե՟ երկնից . մեծութե՟ նր՟ , և ճարտա-
րապետութե՟ նորին ։ Այս ամ՟ եղև և լինի
ճանապարհ ա՟յ ։ Այլ ՚ի վեր քան զամ՟ հրա-
շալի եղև , զի նոյն բանն որով գոյա-
ցաւ ամ՟ , եղև մարմին ։ Այս այս հրա-
շալիս հրաշագոյն ևս ցուցան , զի նա

ինքն

ընդջն՝ որ մարմին եղև, արդար՝ ոչէ և հացն լիցի իւր մարմին, և գինին՝ իւր արիւն. և ծաւալով մի 'ի մարմնի նոյնին մարմնով եղէ 'ի բազում տեղիս: 'Ի լինելն մարմին՝ նոյն բանն միոյ բնութե հաղորդեցաւ երրորդէս. իսկ 'ի մարմին լինել հացին, և բաժակին՝ արեան, ամ ձաղաւողաց հաղորդի պատուագէս: 'Ի խորհուրդ մարդեղութեան ած մարդ եղև գոյացապէս. իսկ 'ի խորհուրդ հաղորդութեան մարդն լինի ած հոգևորապէս: 'Ի մարդեղութեան այնչափ խոնարհեցաւ բանն ած, մինչև զածութիւն իւր ծածկել. իսկ 'ի հաղորդութեան այնչափ խոնարհի, մինչև զմարդկութիւն իւր ևս ծածկել: 'Ի խորհուրդ մարդեղութեան զարմանալի էցոյց զողորմութիւն իւր. իսկ 'ի խորհուրդ հաղորդութեան սքանչելի հանդիսացոյց զամենակարողութիւն իւր. որով և ցոյց զյիշատակ ամ սքանչելեաց իւրոց 'ի վեր քան զհասողութիւն մտաց. մինչև երաւամբք աղաղակել Նարեկացւոյն 'ի բանն. խն. * դու ես ած ամ

: հոգ-

հոգւոյ, որ մեծացուցեր զայս տուրս
շնորհաց քան զամ գործոց քոց հրաշս ||։
Արժանաւորապէս ջերմեռանդաբար յորժամ ոչ
կարեմ ընդունել զխորհրդութե, զմեծութե և
զլայնութե ծովու, և զանհեղութե նորին,
զանձն ՚ի նոյն կարէ առնլով. * ո՜վ խորք
անդնդոց. որովհետև ոչ կարացի զքեզ
ընդունել, դու ընդունեա՛ զիս ||։ Ար-
դարև անդունդք խոր է խորհրդոյն
հաղորդութե. և ծով անդորր անչափե-
լի. զորոյ ոչ զխորութեն հնար է մարդոյ
բովանդակել և ոչ զբարձրութեն, ոչ ըզ-
լայնութեն ընդունել և ո՛չ զմեծութեն.
զի՞նչ արդ. պարտ է զանձն ՚ի նոյն ար-
կանել՝ առնլով. * ո՛վ խորքն խորք
անդնդոց հաղորդութե. որովհետև ոչ
կարեմ ընդունել զքեզ, դու ընդունեա՛
զիս, և ընկղմեա՛ ՚ի ներս քո ||։
Յայլ ամ գործս այ թէպէտև նշմարին
կատարելութեք նորա, բայց մանաւանդ
երեքին սոքա, այս է բարութե, իմաստու-
թե, և կարողութե։ Այլ սոքա առաւե-
լութե են գերազանցեալ փայլեն ՚ի
խոր

խորհրդոյ հաղորդութե՟. մինչև ասել օգտակարեննոս. * որ անձնական է՛ ասելն փաւ ոչ չարայ. որ անձնիմաստն է՛ աւելն փաւ ոչ գիտայ. որ անձնաճարութեամբ է՛ աւելն փաւ ոչ ունէր ‖: Յայտնեալ աջանչելն երկուսէ նշանելով չխորհրդոյ հաղորդութե՟՛ պատշաճ տանեցայ ջանի մի բանս խօսել 'ի վերայ նորա յեօթն հատուածս: Յառաջնում՛ յաղագս գերազանցութե՟ նորա. յերկրորդում՛ թէ որպէս ճաշականօք սահմանեաց տ՟ր զայս խորհուրդ. յերրորդում՛ թէ առանց մեղաց պարտ է մատչել 'ի նոյն. 'ի չորրորդում՛ թէ առանց աղօթից պարտ է ընդունել զայն. 'ի հինգերորդում՛ թէ մաքրութե՟ խղճի մտաց պարտ է հաղորդել այնմ. 'ի վեցերորդում՛ թէ յանձնս պարտ է մերձենալ 'ի նոյն. յեօթներորդում՛ թէ պարտ է բարւոք մտածութե՟ խորհել զնմանէ:

ՀԸ.

# ՀԱՏՈՒԱԾ. Ա ։

Թէ քանի անհաս է գերապանծութեան խորհրդոյ հաղորդութե̃. օրինակեալ յամպն եւ յաղեղն. զոր եցոյց Ա̄ծ Նոյեա ։

Յորժամ կորեաւ աշխարհս ջր-
հեղեղաւ , եւ բնու̃թք ապականե-
ցան , Նոյ նահապետ հրամանաւն
Ա̄յ կազմեալ զտապան՝ ապրեցոյց
զորդիս իւր 'ի ջրհեղեղէ անտի ,
եւ նոքիմբք համօրէն զազգ մարդ-
կան ։ Իսկ Ա̄ծ ցածուցեալ 'ի բար-
կու̃է իւրմէ՝ ուխտ եդ ընդ մար-
դիկ . եւ առ հաստատու̃ի ուխտի
իւրոյ՝ զաղեղն իւր եդ յամպն ,
այն է ծիածանն , իբրեւ նշան
հաշտութե̃ . որպ̃ զի 'ի տեսանել
իւր զայն աղեղն՝ խնայեսցէ յաշ-
խարհ .

խարհ. և մի ևս կորուսցէ ջրհե-
ղեղաւ։

Նոյ նահապետ ( ըստ մեկնելոյ սբ.
հարց ) նշանակէ զՔս. քանզի որպ
ըստ ստուգաբանութեան անուան իւրոյ
հանգոյց և դադարեցոյց զբարկու-
թիւն Այ, և տապանաւ ապրեցոյց
զորդիս իւր, սոյնպէս և Քս տէրն
մեր հանգոյց և դադարեցոյց զբ-
բարկութիւն Հօր իւրոյ. և խաչանիշ
տապանաւ, այն է խաչիւ իւրով ապ-
րեցոյց զազգ մարդկան ՚ի ջրհե-
ղեղէ մեղաց։ Նա լինել այսր՝ հայրն
երկնաւոր ուխտս եդ ընդ որդիս
մարդկան. և առ հաստատութիւն
այսր՝ եդ զաղեղն իւր յամպն.
իբր զի զնոյն ինքն զՔս զՃառա-
գայթ փառաց էութեան իւրոյ ծա-
գեաց և եդ յամպն խորհրդոյ հա-
ղորդութեան ՚ի նշան հաշտութեան։ Նաև
սովին այսու խորհրդովն հաղոր-
դութեան օրինակեցաւ յամպն յայն,
և ասացաւ լինել ամպ՝ նմանութբ

և

և հանգիտութ :

Նմանութ՝ է երից . մի՝ զի որպս յիշեցաք ՚ի նախընթաց բանսդ՝ մարդկութեն քնի այսու խորհր֊դով իւր ամպով ծածկի : Երկ֊րորդ՝ զի այսու խորհրդով իւր ամպով հովանաւորիմք և զովա֊նամք : Երրորդ՝ զի յայսմ խոր֊հրդոյ իւր յամպոյ անձրևեն ՚ի մեզ շնորհք հոգւոյն սբյ :

Հանգիտութ ևս է երից . մի՝ է բարձրութն . է որեւմ բարձր է այս խորհուրդ իբրև զամպս քան զայլ խորհուրդս հաւատոյ :

Երկրորդ՝ ըստ անքննութն . զի ամպն ՚ի մջ գիրս փոխաբերական հանգիտութ ցուցանէ զանքննե֊լի լինել իրին . որոյ վր բազում անգամ ամպովք երևեր ած . և քանզի ամենևին անքննելի է այս խորհուրդ՝ հանգիտութ իմն ամպ ասի . յորում եդեն կայ աղեղն հօր ծոյ : Երրորդ՝ է թաքուցեալ

գոլոյ . զի այս խորհուրդ ամպով հաւատոյ թաքուցեալ է քանզի զամենայն խորհուրդս . ուսանի և կոչի խորհուրդ հաւատոյ . վասն զի ՚ի վերայ այլոց խորհրդոց՝ եդեալ զհաւատս, մարդկային միտք կարեն փոքր մի հետազօտել . սակայն այս խորհուրդ, որպէս և խորհուրդ ամենասուրբ երրորդութեան, ամենևին անհետազօտելի է ստեղծական մտաց ։

Այն այս անիմանալի և անճառելի խորհուրդ օրինակի և ՚ի նոյն իսկ յաղեղն, որպէս ՚ի ծիածանն, որ եղաւ յամպն ։ Արդ ՚ի ծիածանն բաց ՚ի բազում գունոց հինգ գլխաւոր գոյնք փայլին . որպէս են կարմիր, դեղին, կանաչ, կապոյտ, և մանուշակագոյն ( այն է մոռ ) ։ Այնպէս և ՚ի ծիածան մէջ հաղորդութեան բաց ՚ի բազում կատարելութեանց հինգ գոյնք սքանչելեաց նշմարին, և այլ ևս երկու,

կու , ը̄ ամ եօթն :

Առաջինն է գոյափոխութի̃ իրին. զի յայս խորհուրդ գոյացութի̃ հացին և գինւոյն առանց ապականելոյ փոխի 'ի գոյացութիւն մարմնոյ և արեանն քս̃ի . ոչ ըստ իմիք մասին , այլ ըստ բոլորին , մինչև ոչ մնալ 'ի հաղորդութե̃ անդ և ոչ իսկ առաջին նիւթոյ հացին և գինւոյն :

Երկրորդ սքանչելիքն է այս , զի յայս խորհուրդ 'ի փոխիլ գոյացութե̃ն՝ մնան պատահմունք հացին և գինւոյ . ոպ̄ գոյնն , համն , հոտն , ձևն , և քանակութի̃ն առանց յենլոյ յենթակայ ինչ . և ամբողջ պահին սքանչելապէս : Մինչ զի այսորքիւք պատահմամբք մին երևի իսկական հաց , և միւսն իսկական գինի . և սոքին կոչին տեսակք խորհրդոյն . ը̄ որոյ ասեմք՝ թէ մարմինն քս̃ի կայ ամբողջ ը̄ տեսակօք հացին ,

և արեանն ը̄ տեսակօք գինւոյն :

Ե̄րդ սքանչելիքն է այս, զի 'ի փոքու չափու անդ՝ թէ՛ նուազ իցէ, և թէ՛ առաւել, պարունակի ք̄ս բովանդակապէս ա̄մ մասամբք, ոչ միայն ը̄ գոյացութե̄ն, այլ և ըստ ա̄մ պատահմանց, և ա̄մ փառօք, ո̄պ է յերկինս . զի ոչ այլ ք̄ս է որ պարունակի անդ, այլ նոյնն՝ որ կայ փառօք յերկինս ըստ ա̄մ կատարելութե̄ց իւրոց :

Զ̄րդ սքանչելիքն է այս, զի 'ի բաժանիլ ո̄ք նշխարին 'ի հարիւր մասունս կամ 'ի հազարս, նոյնպէս և բաժակին 'ի բիւր շիթս, յա̄մին 'ի նոսա թէ՛ և մին քան զմիւսն մեծ իցէ կամ փոքր, գըտանի մի և նոյն ք̄ս միապէս և ամբողջապէս . այնպէս՝ զի մին ոչ է առաւել ք̄ զմիւսն . թէ՛ սա և թէ նա ճշմարիտ ք̄ս . այնպէս 'ի միումն, ո̄պ 'ի միւսումն :

Հին-

Չորրորդ սքանչելիքն է այս զի յա̃մ տեղիս՝ յորս կայ և կատարի այս խորհուրդ, յա̃մենին 'ի նմ̃ կայ և է ճշմարտապէս մի և նոյն ք̃ս, ոչ անցողապէս և խմանալապէս, այլ մնացապէս, և Փիզիգապէս, մինչզի ցորչափ պահին տեսակքն՝ պահի և մնայ 'ի նմ̃ ք̃ս ա̃մ ուրեք խրով բովանդակութ̃բ :

Բաց 'ի հնգից ասացեալ սքանչելեաց, որք անհետապօտելիք են մտաց մերոց, կան 'ի հաղորդութե̃ և այլ բազում իրք սքանչելեաց. որոց գլխաւորքն են երկոքին ո̃ք. Մին է այս՝ զի 'ի խորհուրդ մարմնոյն՝ կայ և արիւնն. նոյնպէս և 'ի խորհուրդ արեանն՝ կայ և մարմինն հանդերձ հոգւովն և ա̃ծութ̃բն : Զի թէպէտ զօրութ̃բ բանից քահանային գոլ ասէ : Առէք կերէք, այս է մարմին իմ, հացն դառնայ անմիջա̃պս 'ի մար-

մին Քի , բայց քանզի մարմին նր
ոչ է առանց արեան և առանց հոգ-
ւոյ՝ զի է մարմին կենդանի , նոյն
մարմինն ունի յինքեան և զա-
րիւն և զհոգի հանդերձ ածու-
թբն : Նոյնպէս և զօրութբ բա-
նից քահանային զոր ասէ . * Ար-
բէք՛ի սմանէ ամքն , այս է արիւն
իմ || . Թէպէտ գինին անմիջապս
դառնայ յարիւն Քի , բայց քան-
զի արիւն նր ոչ է առանց մարմ-
նոյ և հոգւոյ՝ զի է արիւն կեն-
դանի, նոյն արիւնն ունի յինքեան
և զմարմինն Քի և զհոգի նր
հանդերձ ածութբն :

Եւ թբ այսմ յասել քահանային՝
այս է մարմին իմ գոյացուի հա-
ցին փոխարկի նաև յարիւն՝ ոչ
զօրութբ այսր բանի , այլ զօրութբ
զուգընթացութեն . Նոյնպէս և
յասել քահանային՝ այս է արիւն
իմ , գոյացուի գինւոյն փոխարկի
և՛ի մարմին՝ ոչ զօրութբ բանիցն,
այլ

այլ զօրութ՟բ զուգընթացութ՟ն ։ Երկրորդն է այս , զի որովհետև որդին ա՟յ ոչ է բաժանեալ 'ի հօրէ և 'ի հոգւոյն ա՟յ , զի է մի ը՟ն էութ՟բ , և ա՟ծութ՟բ և կարողութ՟բ , 'ի լինել ք՟ի ներկայ 'ի խորհուրդ հաղորդութ՟ն , ներկայ լինի անդ ը՟դ նմա և հայրն ա՟ծ և ամենա՟բ հոգին , ոչ զօրութ՟բ բանից քահանային , այլ զօրութ՟բ միաւորականութ՟ն ։ Ուրեմն և 'ի ճաշակել մեր զայս խորհուրդ՝ ը՟դունիմք 'ի մեզ ը՟դ ք՟ի նաև ըզհայր և զհոգին ա՟ծ . որով և իրապէս կատարի 'ի մեզ խոստումն այն՝ զոր խոստացաւ ք՟ս , թէ * առ նա եկեսցուք , և օթևանս առ նմա արասցուք ‖ . յովհ . ժդ . 23 ։ Այսմ մի հետևեցուսցես , թէ ուրեմն 'ի ճաշակելն զք՟ս՝ ճաշակեմք նաև զհայր և զհոգին ա՟ծ . զի այն ճաշակումն բերի 'ի ք՟ս ը՟ստ մարմնոյն և ը՟ստ արեանն զոր որդին մի-

միայն ունի, և ոչ հայրն և ոչ հոգին սբ . և սակայն ՚ի ճաշակելն զնա՝ ընդունիմք ՚ի մեզ ընդ նմա և զհայր և զհոգին սբ :

Մի՛ դարձեալ հետևեցուսցես, թէ, ըստ այդմ կարեմք երկրպագանել հաղորդութեան իբրև սբոյ երրորդութեան, և կոչել իսկ սբ երրորդութի . վն զի երկրպագութիւն ՚ի հաղորդութեան անմիջապէս եզերի յանձն մարմնացեալ և մարմնով ներկայացեալ ՚ի խորհուրդն . և քանզի ոչ հայր է մարմնացեալ և ոչ հոգին սուրբ, երկրպագութիւն անմիջապէս ՚ի նոսա ոչ եզերի: Ասացի անմիջապէս, զի միջնորդութեամբ ՚ի նոսա ևս եզերի . իբր զի յերկրպագանիլ որդւոյն անմիջապէս՝ միջնորդութեամբ երկրպագի և հայր և հոգի սբ : Իսկ կոչումն ամենասբ երրորդութեան՝ ոչ անմիջապէս և ոչ միջնորդութեամբ պատշաճի . զի յայս խոր-

հուրդ

հուրդ յանդիման լինի անձն որդ-
ւոյն. իսկ անձն որդւոյն ոչ է եր-
րորդութ̃ի, այլ մին յամենասուրբ
երրորդութ̃է :

Այս ամ̃ զոր ասացաք և զոր ու-
նիմք ասել զամենաս̃բ հաղոր-
դութ̃է, անըմբռնելի է 'ի մէնջ,
և 'ի վեր քան զկար հասողութ̃ե
մերոյ. և սակայն ճշմարտութ̃բ
հաւատոյ աներկբայ հաւատամք
այսմ ճշմարտութ̃ե ըստ վկայելոյն
այ̃. քանզի գիտեմք՝ թէ այ̃ ոչ
խաբէ զմեզ 'ի վկայելն թէ այս
այսպէս իցէ. և անտարակոյս եմք,
թէ նա ոչ տկարանայ առնել
զայս :

Ա.

# ՀԱՏՈՒԱԾ. Բ:

Թէ որո՛վ ճաշակաւք և ո՛րպէս ըղձիւք կամեցաւ քս̄ հաստատել զխորհուրդ հաղորդութե̄ :

Տէրն մեր 'ի գիշերի ընթրեաց յորում հաստատեաց զխորհուրդըն հաղորդութե̄, յառաջ քան զսահմանեալն՝ ասաց. * ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ը̄ ձեզ, մինչչև չարչարեալ իցեմ‖. ղուկ. իբ̄. 15: Ո այսպիսի ոճ բանից ոչ 'ի կիր էարկ քս̄ 'ի վ̄ր այլոց տնօրինական գործոց իւրոց, այլ միայն 'ի վ̄ր այսր. որ ցուցանէ զմեծութի̄ փափաքանաց սրտի՝ զոր ունէր 'ի հաստատութե̄ այսր խորհրդոյ. զոր և պատշաճ դատիմ սակաւուք ա-

ռա-

ռաջի առնել։

Նախ առաջին՝ ցանկանալով տ̃ն
մերոյ ունել զպատիւն (կամ ը̃
հաստատելոյ բազմաց՝ զհայցս
զայս), յորդորէր զմեզ՝ զի և
մեք մեծաւ ցանկութ̃բ և ծարա-
ւով դիմեսցուք և կերիցուք զայս
խորհուրդ։ Յայս տարացոյց ՚ի
սեղանի անդ յովհաննէս աւե-
տարանիչ նախ քան զճաշակելն
զմարմին տ̃ն՝ խոնարհեցաւ և
մերձեցաւ ՚ի լանջսն քրիստոսի,
ուր է օթևանն բաղձանաց.
առ ՚ի ցուցանել՝ թէ պարտ է
մեզ բաղձանօք և ցանկութ̃բ դի-
մել առ նա։ Նոյ և դանիէլ զօ-
րինակն այսր երկնային հացի կո-
չեաց հաց ցանկութ̃ե. (դան. Ժ.
3.) ՚ի ցուցանել, թէ միշտ ցան-
կալի է այս հաց. և թէ չէ ար-
ժան այսր ցանկութ̃ե պակասիլ ՚ի
սրտից մերոց։ Այլ զսորա ներ-
հակն տեսանեմք ՚ի բազումս,

յորս

յորս ոչ է սա հայց ցանկութե՛, այլ ի̅ հոլկաաւակն՝ հայց տաղտկութե . մինչև ասել՝ ոչ եթէ բերանոյ նց̅, այլ սրտից նոցին ընդխորհելացի . * անձինք մեր տաղտկացեալ են ՚ի սնոտի հացէս ‖ . Թուոց . ի̅ա̅ . 5 : Սմին իրի և ոչ իսկ սնունդ առնուն ՚ի մանանայէ աստի :

Երկրորդ՝ ո̅րն մեր ցանկանալով հաստատել զայս խորհուրդ՝ կամեցաւ յաղեցուցիչ հաց պատրաստել մեղաւորաց . որք սրդարև սովեալ են ՚ի շնորհաց, և տնանկացեալ ՚ի հոգևոր կենաց . առ որ հայլի բանն դաւթի՝ զոր ասէ . ՚ի սաղ . ի̅ա̅ . 27 . * կերիցեն տնանկք և յագեսցին ‖ . ո̅ր թէ որք տնանկացեալ ՚ի շնորհացն ա̅յ՝ սովլին և նքթին ՚ի քաղցու , կերիցեն ՚ի հացէ աստի , և յագեսցին ՚ի շնորհաց սորա : Յայս իսկ և անառակ որդին , որ տնան-

կա-

կայաւ և սովեցաւ՝ ասէր. * քանի՞ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք. և ես աստ սովամահ կորնչիմ ‖. ղուկ. ժե. 17. յարուցեալ ապա եկն առ հայր իւր. և լցաւ 'ի սեղանոյ պարարակ եզինն, որ օրինակէր զամենապարարտ հաղորդութիւն :

Ըստ սմին և կնոջն քանանացի, որ էր տարացոյց դարձող մեղաւորաց՝ ասաց. * և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տն՟ իւրեանց ‖. մարկ. է. 27 : Զսոյն կարէ ճշմարտիւ և մարդ մեղաւոր ասել Թէպէտ և շուն իցեմ, այլ աղաչեմ արժանի՛ արա զիս փշրանաց երկնային հացիդ. զի մի՛ սովամահ կորեայց:

Ուստի հացս այս՝ Թէպէտև կոչի հաց հրեշտակաց և որդոց, բայց մանաւանդ սովեալ մեղաւորաց արժան է մերձենալ առ սա. և ուտել 'ի սմանէ. զի մի՛ սովամահ

մահ կորիցեն : Այլ արդ դու կամ արդար ես , և կամ մեղաւոր . եթէ ասես , մեղաւոր եմ, յոյժ մերձենալդ 'ի սոյն սովամահ լինիս . իսկ եթէ արդար իցես , ահա սա է հաց արդարոյ. ուրեմն եթէ արդար իցես , և եթէ մեղաւոր , պարտիս մեծաւ փափաքանօք 'ի սոյն մերձենալ :

Չորրորդ` տրն մեր ցանկայր զայս խորհուրդ հաստատել , զի գիտելով` թէ ծառայք իւր բազմօք ունին վաստակիլ և տառապիլ յաշխարհի աստ` կամեցաւ սովին զօրացուցանել զնս` ը̃ երկուց . մի` առ 'ի դիմել 'ի բարին , և մի ևս` առ 'ի վանել զչարիս : 'Ի գնալ եղիայ մարգարէի 'ի քորեբ լեառն` հրեշտակ տն զարթոյց զնա 'ի քնոյ . և մատոյց նմա հաց և ասէ . *արի և կեր զի բազում է 'ի քէն և անդր ճանապարհդ ‖ . Գ . Թագ . ԺԹ . 7 : Եւ ետ սմին և

տրն

տէրն մեր՝ ճանապարհորդելոցս
մեզ յիմանալի քորէբ լեառն այ՝
մատոյց զհացն զօրացուցիչ. զի
մի՛ նքթեսցիմք ՚ի ճանապարհի. և
հանապազ յորդորէ զմեզ զարթ-
նուլ ՚ի քնոյ և ուտել զայս ան-
մահացուցիչ և զօրացուցիչ հացս.
զի որովհետև ՚ի ճանապարհ աս-
տի կենաց ՚ի մէջ բազում նե-
ղուեց տառապիմք, հարկ է մեզ
բազում անգամ զօրանալ այսու
խորհրդովաւ ՚ի դիմել ՚ի բարին,
և ժամանել յարքայութն երկնից:
Օ օրանամք դարձեալ սովաւ առ
՚ի վանել զչարիս՝ զնեղիչս ան-
ձանց մերոց. յոր ակնարկելով
դաւիթ ասէր. * պատրաստ ա-
րարեր առաջի իմ զսեղան՝ ակն
յանդիման նեղչաց իմոց. օծեր
իւղով զգլուխն իմ. բաժակ քո
որպէս անապակ արբեցոյց զիս ||.
սաղ. իբ. 6: Արդարև սեղան
անիմանալի և ամենազօր. յոր

ակն

ակն եղեալ նեղչաց մերոց՝ նուա-
ճին և նուաղին ։ Եւ իւղ ամե-
նապարար . յոր օծանելով հող-
ւոց մերոց՝ արիանամք ըմբշամար-
տիլ ընդ ախտից ՚ի վանել ։ Եւ
բաժակ անապակ՝ զոր արբեալ
զուարթանամք , ՚ի կռուիլ ընդ
մեղս և ը̄ ախտս ։ Որով թէպէտ
և վաստակիմք , բայց միանգա-
մայն և քաջալերիմք , և ծարա-
ւեալ՝ բերկրանօք բերիմք առ
աղբիւրն անմահութե ։ Օ՜ի փ̃ր
՚ի վաստակեալս զարթնու ծա-
րաւ , սոյնպէս և ՚ի մեզ՝ ծարաւ
դիմելոյ առ աղբիւրն անմահու-
թե ։ Դաւիթ մարգարէ յորժամ
արիանայր ը̄դէմ մեղաց և ախ-
տից՝ ծարաւելով ասէր . * որ̃պս
փափաքի եղջերու յաղբիւրս
ջուրց , այնպէս փափաքի անձ̃ն
իմ առ քեզ ա̃ծ հզօր և կենդա-
նի . Ե՛րբ եկից երևեցայց երե-
սացդ ա̃յ ‖ . սաղ . խա̃ . 1 ։ Ս̃ր վի

ո̃նչ

որպ՟ եղջերու ը՟ օձս մարտնչելով ջերմանայ, և ծարաւեալ դիմէ առ ջուրս, այսպէս հոգի մարդոյ յորժամ սիրով և ջերմեռանդու- թ՟ զօրացեալ մարտնչի ը՟ օձս ախտից՝ ծարաւեա՟լ դիմէ առ այս աղբիւրս անմահութե՟ ։

Արդ՝ ցանկայր տ՟րն մեր հաստա- տել զայս խորհուրդ, զի ազա- տեսցէ զմեզ սովաւ 'ի մահուա- նէ հոգւոյ. քանզի գիտելով՝ թէ պնդելոց է սատանայ զհետ մեր՝ առ 'ի որսալ զմեզ և սպանանել, զայս ետ մեզ իբր վահան և իբր ապաստանարան, և յաւէտ ևս իբր ամենավճարիչ նշան 'ի պահ- պանել զմեզ 'ի չար հնարից ն՟ր և յամենաչար վնասուց նորին ։

Յայս օրինակ հրամայեաց ա՟ծ իս- րայէլացւոց դրոշմել նշան 'ի վ՟ր բարաւորի դրանց տանց իւրեանց արեամբ զատկական գառինն. զի յանցանել առ նոքօք սատակչին

անդրանկաց՝ տեսեալ զարիւնն՝ զանց արարցէ. Ելից. ԺԲ. 22:
Ապա քանի՛ առաւել ևս մեք 'ի դրոշմել մեր զքարաւոր դրանց հոգւոյ մերոյ արեամբ գառինն այ 'ի ձեռն խորհրդոյ հաղորդութե ապրիցիմք 'ի սատակչէ անտի անդրանկաց, որ 'ի սատանայէ՝ որ ջանայ սպանանել զոգիս մեր: Եւ յայտ է թէ յազատիլ մեր 'ի նըմանէ՝ անվտանգ Ճանապարհորդեմք յերկիրն աւետեաց, որ յարքայութե երկնից:

Հինգերորդ՝ ցանկայր Տրն մեր՝ զայս խնդ հաստատել. զի որով հետև յոյժ սիրեաց զմեզ, մինչև փոխակերպիլ 'ի մեզ, որ լինել մարդ, կամեցաւ՝ զի և մեք այսու խորհրդով փոխակերպեսցուք 'ի նա. քանզի ըստ ասելոյ սրբ հարց յընդունել մեր զայս խորհուրդ՝ ադ Քս Ֆիզիկապէս 'ի մեզ մտանէ, սոյնպէս և մեք բարոյապէս 'ի

՚ի նա փոխարկիմք ։

Սուրբն Օգոստինոս խորհե-
լով՚ի դիմաց այսր խորհրդոյ ա-
սէ. * հաց մեծաց եմ. ոչ դու
զիս փոխես՚ի քեզ որպէս զկերա-
կուր՚ի մարմին քո, այլ դու յիս
փոխիս ‖ ։ Եւ սուրբն Լեւոնդ ասէ.
* զինչ այլ ինչ առնէ՚ի մեզ հա-
ղորդութիւն մարմնոյն Ք̃ի, եթէ
ոչ զի դառնայցեմք յայն՝ զոր ընդ-
ունիմք ‖, քանզի նովին թողումք
զայն որ եմք, և փոխիմք յայն՝
որ ոչ եմք ։ Զի որպէս հացն և
գինին Փիզիքապէս փոխին՚ի
մարմին և յարիւն Ք̃ի, այսպէս և
մեք յառնուլն զայս խորհուրդ՝
բարոյապէս փոխիմք՚ի նա այլ և
այլ բանիւ ։

Մի՝ բնակութ̃ Ք̃ի որում ինքն ա-
սաց. * որ ուտէ զմարմին իմ, և
ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակես-
ցէ, և ես՚ի նմա ‖. յովհ. Զ. 57 ։
Երկրորդ՝ հաղորդակցութ̃ կեն-

դանուե՟ն ք՟ի . ըստ յով՟հ . Զ . 50 . * այս է հացն՝ որ յերկնից իջեալ է . զի որ ուտիցէ ոք 'ի սմանէ, մի՛ մեռանիցի . Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ . եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան . . . և որ ուտէն զիս, և նա կեցցէ վ՟ն իմ ‖ :

Երրորդ՝ մասնակից և կցորդ լինելով զօրութե՟ ք՟ի մինչև արխանալ մեզ ըդ՟էմ մահու ևս . ո՟պ յայտնի տեսաւ այս յոմանս, որք 'ի հաղորդիլն արժանապէս՝ 'ի մահ մատնեցին զանձինս վ՟ն սիրոյն ք՟ի, և գործեցին զմեծամեծս ո՟պ թէ զօրութի՟ն ք՟ի լեալ էր զօրութի՟ն ն՟ց . ոչ զի փոխարկեալ էր 'ի նոսա, այլ զի հաղորդեալ էր նոցա : Օ՟ի որպէս ոսկի խառնեալ 'ի դեղ յուտիլն ոչ փոխի յուտօղն՝ զի ոչ մարսի, և սակ. յն հաղորդելով նմա զզօրութի՟ իւր՝ զօգտակարութիւն փարատէ, և

զկա-

զկարողութիւն հաստատել, այնպ՟ս
առնել և ամենան՟ք ոսկին հաղոր-
դութ ։ Չորրորդ՝ զգենլով զք՟ս,
ընկարելով ՚ի մեզ զսրբութի՟ն նր՟,
և հետևելով վարուց նորին, ևս
և ՚ի խաչ հանելով զմարմին մեր.
ոց. հռովմ. ժգ. 14. * զգե-
ցարո՛ւք զտ՟ր յս՟ քս՟. և մարմնոյ
խնամ մի՛ տանիք ՚ի ցանկութի՟ս ‖ ։
Հինգերորդ՝ ցանկայր տ՟րն մեր
զայս խորհուրդ հաստատել. զի
ցանկայր հանապազ ը՟ մեզ միաւ-
որովհետև ը՟ աւանդելոյ սուրբ
գրոց առակ. ը. 31. ինքն * ու-
րախ լինէր յորդիս մարդկան ‖ ։
Վասն որոյ հաստատութի՟ ասաց յետ
յարութե՟ յորժամ վերանալոց էր
յերկինս. * ահաւասիկ ես ընդ
ձեզ եմ զա՟մ աւուրս մինչև ՚ի կա-
տարած աշխարհի ‖ մատ. իը. 20 ։
՚Ի մեկնիլ բարեկամին ասէ չա-
փազանցութ՟. * Թէպէտ գնամ,
ը՟ քեզ մնամ ‖. այլ քս՟ ճշմար-

տուեն գոլով՝ ոչ եթէ չափազան-
ցութ՟ք, այլ ճշմարտութ՟ք ասաց,
ք՟ ձեզ եմ. և որպ՟ ճշմարտութ՟ք
ասաց, սոյնպէս և ճշմարտութ՟ք
մնաց և մնայ 'ի մեզ 'ի ձեռն հա-
ղորդուն. որպ՟ թէ կապեալ իցէ
ընդ մեզ:

## ՀԱՏՈՒԱԾ. Գ.

Թէ պարտ է մեզ առանց մեղաց, կամ
սրբելով զմեզ 'ի մեղաց ճաշակել 'ի խոր-
հուրդ հաղորդութեան:

Ըստ պատուիրելոյ տն՟ 'ի գիրս
ելից. Լ. 18. և ԼԸ. 8. մով-
սէս մարգարէ յետ ձուլելոյ զա-
ւազանն պղնձի, եդ 'ի մջ՟ խորա-
նի նր՟ հայելիս կանանց. զի 'ի
մտանել քահանայից 'ի խորանն.
կամ 'ի մերձենալ նց՟ 'ի սեղան
պաշ-

պաշտամանն՝ տեսեալ զաղօտե-
ղութն իւրեանց՝ լուասցին : Ուր
յաւելլով զկանոնսն՝ ցուցանել
կամէր զառաւելութն զգուշութե
'ի հայիլ և 'ի մաքրիլ. զի որում
սովորութե է կանոնց յաճախ և
հետաքննին նայիլ 'ի հայելիս՝
առ առաւել սրբելոյ և յօրինե-
լոյ զանձինս :

Սովին այսու խրատէր զմեզ Տր,
զի 'ի մերձենալ մեր 'ի հաղոր-
դութն տր սեղանոյն՝ նախ հայես-
ցուք 'ի հայելի խղճի մտաց մե-
րոյ. ուր է խարիսխն հոգևոր
կենաց. և տեսանել զամ զաղօտե-
ղութն հոգւոյ մերոյ լուասցուք
յաւազանն ապաշխարութե :

Յայս իսկ տրն մեր յորժամ հա-
ղորդելոց էր զաշակերտսն յայս
խորհուրդ, լուաց նախ զոտս նց.
յոհ. ժգ. 9. յորոյ վն ասէ
կոռնելիոս զի մեկնութն օգոս-
տինոսի և բեռնարտինոսի, թէ

ոտիւք՝ որովք կոխեմք զերկիր, նշանակի երկրաւոր սէր, ևս և աղտեղութիւնք և պակասութիւնք, որք 'ի կենցաղավարիլ մեր 'ի վերայ երկրի՝ իբրև փոշի և իբրև կաւ կռուին յոտս մեր ըստ յախորժակս մեր. զորս պարտ է լուանալ արտասուօք և ապաշխարութեամբ, և ապա մատչիլ 'ի խորհուրդ հաղորդութեան:

Ստուերական իմն օրինակ եղև այսմ զոր արար յովսէփ. զի նախ ետ լուանալ զոտս եղբարց իւրոց, և յետոյ հրաւիրեաց 'ի սեղան. (Ծնն. խգ. 24:)

Որ և դաւիթ 'ի լուացումն ձեռաց փութայր ասելով. * լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանովք քով տէր ||. սաղ. իե. 6. որով նշանակի լուանալ զխիղճ մտացն և զգործս՝ որք այլաբանին 'ի ձեռս. և ապա մերձենալ 'ի սեղանն տեառն:

Անուի

Ասուի թէ յայս խորհուրդ տէրն մեր'ի սափոր ջրոյ փութացոյց և հետևեցոյց զաշակերտսն'ի պատրաստութիւն ուտելոյ զզատիկն (մարկ. ժդ. 13. և ղուկ. իբ. 10.) 'ի ցուցանել թէ նախ պարտ է հետևիլ 'ի սափոր ջրոյ արտասուաց, և ապա ճաշակել զգառն զատկին զոր հաղորդութիւն :

Որ ասէ մեծն ալպերտ. * սափոր ջրոյ քաւութեան՝ է մաքրութիւն խղճի մտացն 'ի ձեռն արտասուաց և ջերմեռանդութեան. զի սըրբեալ և մաքրեալ մերձեսցի՝ որ մերձենայ 'ի տէր խորհուրդն ‖ :

Ուստի և Եղիա նախ ջուր խնդրեաց 'ի սարեփթացի այրւոյն, և յետոյ զհաց. (Գ. թագ. ժէ.) որ ասէ մեկնիչն, թէ նախ պարտ է խնդրել զջուր արտասուաց ապաշխարութեան, և մաքրիլ, և ապա խնդրել և ուտել զհացն երկնային :

Հացն

Հացն յերկրագործի, յալերէ, ՚ի ջրոյ և ՚ի հրոյ. և որք ըստ ամենայն ըստ Թովմայի Ագուինացւոյ՝ ցուցանեն թէ առ ընդունելութիւն երկնային հացին պահանջին երեքին այսոքիկ: Ալիւրն աղացեալ՝ ցուցանէ զքննութիւն կամ զճանաչումն մեղաց. Ջուրն՝ զարտասուալից ապաշխարութիւն հանդերձ խոստովանութեամբ. իսկ հուրն զայրումն մեղաց սիրովն Այ: Սոքիմբք քաւութիւն գտանելով ՚ի մեղաց՝ որբութեամբ պարտ է մատչիլ ՚ի սեղան խորհրդոյն:

Եւ որպէս քահանայապետն մեծ միայն ՚ի տօնի քաւութեան մտանէր ՚ի սրբութիւն սրբոց, այսպէս և մեզ պարտ է ՚ի տօնի քաւութեան, այսինքն քաւութեամբ մեղաց մատչիլ առ սրբն սրբոց: Որպէս ասէ Դիոնեսիոս Արիսպագացի. որովհետև ինքն է ծայրագոյն սրբութիւն, խնդրէ զծայրագոյն մաքրութիւն ՚ի մեղաց,

յայ-

յայտնակ՝ որք մերձենան առ
երկնային կերակուրս յայս. իսկ
այս յայտ է՝ թէ հեծութբ̄ ապաշ-
խարութ̄ կատարի. առ որ կարէ
յարմարիլ բանն յովբայ՝ զոր ա-
սաց. * Յառաջ ք̄ զկերակուրս
իմ հեծութ̄ի եհաս. արտասուօք
և աչիւ նեղեալ եմ ||. յոբ. Գ.
24 ։ Պատուիրեաց ա̄ծ մովսէսի
վ̄ն իսրայէլացւոց. ելից. ժբ̄. 8.
* Ու կերիցեն ասէ զմիս գառինն
՚ի գիշերիս յայսմիկ խորովեալ
հրով. բաղարջ ը̄ եղեգի կերի-
ցեն . . . և այսպէս ուտիցէք. գօ-
տիք ձեր ը̄ մէջ. և կօշիկք ձեր
յոտս. և ցուպ ձեր ՚ի ձեռին ||։
Այս գառն խորովեալ, որպէս
և բաղարջն՝ նշանակէ զհաղոր-
դութ̄ինն տր̄ ։ Իսկ դառն եղեգն ը̄
ասելոյ տե̄յն գրիգորի նշանակէ
զդառնութ̄ի ապաշխարութ̄ ։ Ցուպ
՚ի ձեռին լինիլն ցուցանէ զարիա-
նալն ընդդէմ մեղաց ։ Գօտին

ը̄

ընդ մէջ՝ յայտ առնէ զպատրաս-
տութ̃ի սրտի ։ Մօշիկն յոտս 'ի մէջ
բերէ զյառաջադրութ̃ի գնալոյ
յօրէնս ա̃ծն ։ Ապա ուրեմն որ կա-
մի արժանապէս ուտել զգառնս
զայս 'ի գիշերի կենցաղոյս, պարտ
է նմա զա̃մ աղտեղութ̃ի մեղաց
ապաշխարութ̃բ և զառն արտա-
սուօք մաքրել յանձնէ իւրմէ 'ի
ձեռն շնորհաց հոգւոյն ս̃բյ հան-
դերձ առաջադրութ̃բ ուղղութ̃ե ։
Նախ քան զիջանել մանանային՝
զառաջինն շնչէր հողմ̃ն քաղցրիկ
առ 'ի բաց փարատելոյ զաղտեղու-
թ̃ի օդոյն, ապա իջանէր ցօղ առ
'ի յարմարելոյ զօդն և պատրաս-
տելոյ զերկիրն . և յետ այսորիկ
գայր մանանայն ։

Եւ քանզի մանանայն է օրինակ
հաղորդութ̃ե ( ա̃ծ աւանդելոյ վար-
դապետաց եկեղեցւոյ ), յառաջ
քան զընդունիլն զայն պարտ է
ընչմամբ շնորհաց հոգւոյն ս̃բյ 'ի
բաց

քաց վտարել զաղտեղութին օձոյն,
այսինքն զաղտեղութին հոգւոյն.
և՚ի ձեռն ցօղոյ արտասուաց սըր֊
բել զայն. և ապա արժանի գտա֊
նիլ ընդունելութե նորին :

Ի մի բան բովանդակեցից. ո֊
րովհետև ոչ յիշեցաք ՚ի հատ֊
ուածն Ե. դաւիթ մարգարէ կո֊
չէ զօրինակն հաղորդութե՝ զմա֊
նանայն * հաց հրեշտակաց ||. և
ևս * հաց յերկնից ||. սաղմ ՀԷ.
26. պարտ է հրեշտակային սըր֊
բութե. և երկնային քաղաքավա֊
րութե և ներքին փափաքմամբ
մերձենալ ՚ի նա :

# ՀԱՏՈՒԱԾ . Դ :

Թէ պարտ է մեզ առանց ախտից և մոլութեանց մատչել 'ի խորհուրդ հաղորդութեան :

Պիտանի է՝ զի յօժարութի՛ մարդոյ կամ բաղձանք նո՛ր՝ եթէ՛ բանականն և եթէ՛ զգայականն, յետ յանցանացն ադամայ, անկարգացեալ բերի առ չարն . և այս բերումն կոչի յառաքելոյն ցանկութի . զոր ոմանք լուցկիք կոչեն . և այս ըստ ինքեան ոչ է մեղք, և ոչ ախտ, կամ մոլութի . այլ արմատ մեղաց և գրգռիչ առ մեղս : Եթէ այս անկարգ յօժարութի կատարեսցի, կատարի և մեղքն . և նոյն յօժարութին զգենու զունակութի ինչ

ինչ չար կամ զտրամադրութի
զիւրաւ զխմելոյ առ չարն , և սա
կոչի մոլութի . իսկ հաճութի նորին
առ չարն՝ եթէ իցէ առանց հա-
ւանութե՝ կոչի ախտ , իսկ եթէ ի-
ցէ համոզերձ հաւանութբ ասի և
է մեղք :

Իսկ որ միանգամ վարի այսու
տրամադրութբ՝ ասի վարիլ ըստ հին
մարդոյն , կամ գործել ըստ հնա-
ւոր մարդոյն : Իսկ եթէ յաճա-
խութբ ներգործութեց հաստատես-
ցի այս տրամադրութի , լինի սովո-
րութի չար , որ յոմանս այնչափ
զօրանայ , մինչև լինել երկրորդ
բնութի , մանաւանդ թէ բռնութի
ընդդէմ բնութե :

Արդ յաւել մեր աստ՝ առանց ախ-
տից և մոլութեց , բանք մեր ոչ են
զբնական անկարգացեալ յօժա-
րութեն՝ որ կոչի ցանկութ. , այլ զչար
ունակութե՝ որ ասի մոլութի . և
մանաւանդ զախորժական հա-

ճու-

ձուէ նորին՝ որ կոչի ախտ . եւս
և զանկարգ և զչար սովորուէ :
Օ այս եղեալ՝ մտածիցուք յա-
ռաջիկայդ :

Մանանայն՝ զորմէ ասացաք թէ
նշանակէ զհաղորդութին , արտա-
քոյ բանակին իջանէր . և ժողո-
վուրդք ելանէին արտաքոյ և ժո-
ղովէին զայն : Եւ այս յայտնի
իմն ցուցանէր , թէ առ 'ի ժողո-
վել 'ի մեզ զերկնային մանա-
նայս այս՝ պիտոյ է ելանել յախ-
տից և 'ի մոլութեց , յանկարգ-
կենցաղավարութեց և յապակա-
նեալ վարուց . զի առանց թող-
լոյ զսոսա՝ որք են գործք հին
մարդոյն , ոչ է մեզ արժան ժո-
ղովել և ուտել զմանանայս զայս:
Անառակ որդին 'ի դառնալն առ
հայր իւր՝ ոչ հրաւիրեցաւ 'ի սե-
ղան ուտել զեզն պարարակ , ե-
թէ ոչ նախ հանելով 'ի բաց
զհնացեալ ձորձն , և զգենլով ըն-
տիր.

պատմուճանն առաջին՝ որ էր օրինակ մաքրութե̃ և անախտութե̃. (Ղուկ. ԺԵ. 22 ։) Ապա և մեզ պարտ է նախ մերկանալ զձորձ ախտից և մոլութե̃ց, և այնպէս մատչել ՚ի ճաշակումն ամենամա̃ք պարարակ եզին ։

Յովսէփ յորժամ հանեալ եղև ՚ի բանտէ առ ՚ի մեկնել զխորհուրդ պարարտ հասկացն, և պարարակ եզանց՝ որք էին նաեմական օրինակք հաղորդութե̃, ասէ գիրն (Ծնն. խա̃. 14.) թէ *փոքրեցին զհերս նր̃. և փոխեցին զպատմուճան նր̃ ‖ ։ Արդ եթէ առ ՚ի խօսիլ ՚ի վր̃ օրինակի հաղորդութե̃ յանդիման փարաւոնի՝ այսպէս եղև ընդ յովսէփ, որչափ ևս ՚ի յանդիման լինիլն և ՚ի ճաշակելն զնոյն զայն սուրբ հաղորդութիւն՝ պարտ իցէ փոքրել զհերս ախտից և մոլութեց, և փոխել զպատմուճան չար սո-

կորուսեց ։ Գրեն Եպիփան և Ոսկեբերան՝ թէ կայ տեսակ մի օձից, որ յառաջ քան զըմպելն զջուր՝ ՚ի բաց թողու զթոյն իւր, և ապա ըմպէ ։

Եւ արդ քանզի ասաց Տէր * եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս ‖. Մատ. Ժ. 16. արժան է մեզ նախ քան զմերձենալ առ ջուրն կենդանութեան՝ ՚ի բաց թողուլ զախտս իբրև զթոյն չար ։ Եւ զի սովորութիւն է օձի փոխել զխորխ իւր՝ մեզ ևս պարտ է փոխել զխորխ հնութեան և չար սովորութեան, և նորոգութեամբ կենաց ընդունիլ զկենդանատուն մեր. որպէս և յորդորեն զմեզ առհասարակ սուրբ հարք, յաղաղակել նոցա, թէ ՚ի մերձենալ մեր յայս խորհուրդ պատտիմք ոչ միայն ՚ի մեղաց սրբել զմեզ, այլ և ՚ի ձեռն մասնաւոր շնորհաց ՚ի բաց վարել ՚ի մէնջ Զախտս և զչար ունակութիւնս ։

՚Ի

'Ի հաստատել տն՟ մերոյ զխոր-
հուրդս զայս, 'ի պատրաստութի՟
այսր առաքեաց զպետրոս և զյով-
հաննէս : Յառաջելն պետրոսի
ցուցանէ զկանխելն ապաշխարու-
թե՟ և խոստովանութե՟ 'ի սրբել
զմեղս . ըստ որում Նմա տուան
նախ բանալիք իշխանութե՟ արձա-
կելոյ 'ի մեղաց . և նա եղև իբր
նախատիպ օրինակ ապաշխարո-
ղաց : Իսկ հետևելն յովհաննու
ցուցանէ զնորոգում՟ կենաց 'ի
ձեռն շնորհաց . ըստ որում յով-
հաննէս՝ շնորհք տն՟ թարգմանի,
կամ՝ շնորհաւոր :

Սոքիմք ուսանիմք թէ նախ ք՟
զհաղորդիլն պարտ է խոստովա-
նութե՟ մաքրել զմեզ 'ի մեղաց .
( զորմէ խօսեցաք 'ի նախընթաց
հատուածն ) . և 'ի ձեռն միջնա-
ւոր շնորհաց սրբել յախտից և'ի
մոլութեց, այրել ջնջել զչար սո-
վորութիս, և նորոգիլ 'ի կեանս :

՚Ի տեսլեանն եսայեայ (Զ. 6.) զի դրելոյն նորա առաքեցաւ առ նա մի ՚ի սերովբէից, որ ունէր ՚ի ձեռին զունելիս, (որ է մաշա). և նովին առեալ ՚ի սեղանոյ զկայծակն հրոյ մերձեցոյց ՚ի բերան նորա, և ասէ. * Ահաւասիկ մերձեցաւ այդ ՚ի շրթունս քո. և հանցէ զանօրէնութիւնս քո ՚ի քէն. և զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն ||։ Ունելիքն ցուցանէ զխորհուրդն խոստովանութեան որ երկուց. մի՝ զի որպէս ունելեօք մի մի կայծակունք առեալ լինին ՚ի բաց, սոյնպէս և խոստովանութեամբ մի մի ՚ի բաց հանին մեղք ՚ի հոգւոյն. և երկրորդ՝ որպէս որ առնու զկայծակն առանց ունելեաց այրի ՚ի ձեռս իւր, սոյնպէս որ մատչի առնուլ զկենդանի և զանմահարար կայծակն հաղորդութեան առանց ունելեաց խոստովանութեան և ապաշխարութեան, այրի ՚ի կեանս իւր. զորմէ ունիմք

խօ-

խօսիլ 'ի յաջորդ հատուածս ։

Իսկ մերձենալ սեղանէին յայտ առնէ՝ թէ 'ի մերձենալ մեր յայս խորհուրդ պարտ է նախ լինել սեղանէ, որ կիզող մեղաց և ախտից . ըստ որում սեղանէ՝ կիզող թարգմանի, յայրել և 'ի մաքրել զհոգի մեր 'ի ժանտ մոլութեց և 'ի չար սովորութեց . և իբրև զոսկի փորձել և սրբել ոչ միայն 'ի խառնութէ օտար նիւթոց որ 'ի մեղաց, այլև 'ի խառնգարիչ տրամադրութէ անտի, զոր ոսկերիչք հատ կոչեն կամ առումն հոտոյ, որով նշանակի չարութեն ախտից ։

Եւ թէպէտ 'ի տեսլեանն եսայեայ՝ յետ մերձենալոյ կայծականն դնի հանել զանօրէնութիս և սրբել զմեղս, բայց այդ ըստ հետևութե առի . իբրզի զովին ոչ ցուցանի՝ թէ առանց սրբելոյ 'ի մեղաց և յախտից, հնար է

մերձենալ առ ամենամաքուր կայծակն. այլ թէ յետ սրբելոյ՝ 'ի մերձիլ ապա այնր կայծական յարժանաւոր շրթունս՝ այսպիսի ինչ առնէ, և այնպէս նորոգէ, մինչև ոչ ևս յարիլ հոգւոյն 'ի մեղս, և ոչ վարիլ յանկարգ բերմունս և 'ի չար սովորութիս:

Իսկ եթէ դու յընդունիլն անդղայն նը կայծակն՝ պահես զքեզ տրամադրեալ առ չարն՝ յոր յօժարի բնութիդ, և զայդ տրամադրութի տեսանելով՝ ոչ կամիս հատանել 'ի քէն, այլ այդու տրամադրութբ ընդունիս զխորհուրդն, գիտասջիր, զի 'ի մերձենալն 'ի քեզ՝ ոչ ևս սրբէ զքեզ, այլ այրէ. որպէս այժմ ասացաք. և ունիմք ասել 'ի յետագայ հատուածդ: Նաև յասացելոցս յորդորիմք և ստիպիմք մաքրութբ խղճի մտաց և նորոգութբ կենաց ընդունիլ 'ի մեզ զմարմին

և

և զարիւն տն՟ : Որում և ունիմք օրինակ զյովսէփ արիմաթացին. որ առեալ զմարմին տն՟ * պատեաց նախ ընդ կտաւօք, և եդ ՚ի նոր գերեզմանի, զոր փորեաց ՚ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ. և գնաց ‖. ( մատ. իէ. 59 ) : Սովին ցուցանի՝ թէ պարտ է և մեզ յընդունելն զմարմին տն՟՝ նախ պատել զայն սրբութ՟ իւր զի պարտ է նախ սրբել ըզխիղճ մտաց մերոց. և այնու իւր ընդ կտաւով պատել զսուրբ խորհուրդն, ևս և նորոգել զսիրտ մեր յախտից իբրև զգերեզման նոր, և այն՝ փորեալ ՚ի վիմի, յ՟ ՚ի հաստատութ՟ հաւատոյ. և այսպիսի պատրաստութ՟ թաղել, յ՟ ընդունիլ ՚ի մեզ զՔ՟ս : Նաև ՚ի գնալ մեր ՚ի գործս՝ դնել կափարիչ զգաստութե՟ և զգուշութե՟ ՚ի վերայ սրտից մերոց : Յաւնել մեր զայս

 յա-

յարիցէ քո ՚ի սիրտս մեր. և յարուսցէ զմեզ ՚ի կեանս։

Յաւելլից ՚ի վերջոյ ասել և զայս եթէ կամիս պատրաստել զքեզ արժանապէս, ջանա՛ այնմ պատրաստիլ, որպս ցանկայիր պատրաստիլ յաւուր ելլից քոց ՚ի կենաց աստի։ Քանզի և խորայեղացիք յուտելն զօրինակ այս խորհրդոյ էին յելս յեգիպտոսէ. ապա և դու յուտելդ զճշմարտութի իրին՝ այնպէս պարտիս ուտել, որպ թէ իցես յելս կենաց քոց. զի թէ այսպէս պատրաստիցիս, ելանես յեգիպտոսէ, յր ՚ի հնութենէ մեղաց և ախտից. * Որ ոք ուտիցէ ( ասէ ոսկեբերան ) զգառն հաղորդութեան այնպէս պարտի պատրաստ լինել, որպս թէ ելանելոց իցէ յայսմ նէ ‖. Ընդ սմին ասէ և սբն եւսեբիոս եմեսացին. * այնպէս պարտիս մերձենալ, որպէս թէ իսկոյն

մե.

մեռանելոյ իջես ‖․ կամ որպէս թէ իջես ՚ի յետին ժամ կենաց քոց ։ Յայս տարացոյց թերեւս ասաց Տէրն․ * յորժամ կոչիցիս ՚ի հարսանիս կամ ՚ի կոչունս երթիջիր բազմեսջիր ՚ի յետին տեղւոջ ‖․ (ղուկ․ ժԴ․ 8․) որ խորհրդաբար ցուցանէ թէ յորժամ գնաս ՚ի հոգեւոր կոչունս և յիմանալի հարսանիս՝ ՚ի ճաշակել զՏէր հաղորդութիւն, այնպէս պարտիս գնալ և բազմիլ՝ որպէս թէ իջես ՚ի յետին տեղւոջ, ա՟յ ՚ի յետին շունչ կենաց քոց․ ըստ որում մեկնէ Տէրն բեռնարդինոս ։ Այնպէս կեր ասէ, որպէս թէ այսօր եւեթ ունիս ուտել ։

Նաեւ յայս սակս ՚ի խնդրել մեր զհոգեւորական հացն ՚ի բան հայր մերին՝ յաւելումք ասել և զայսօրն ՚ի ցուցանել՝ թէ այնպէս պարտ է մեզ առնուլ զհացն հաղորդութեան, որպէս թէ այսօր միայն

այն ունիցիմք ուտել զայն երբեւ
զվերջին թօշակ։

Ո՛ն զատկական գառին հրամայեալ ամ մատուցանել ՚ի երեկս, առ ՚ի ցուցանել, թէ որ մատուցանէ և ընդունի զգառն այ քն ՚ի հաղորդութե՝ այնպիսի պատրաստութ պարտի ընդունիլ, որպիսի կամի ընդունել յերեկոյի կենաց իւրոց, այսինքն ՚ի հասանել ժամու մահուան. զի այսպիսի պատրաստութ ընդունելով ընդունի զլիութի շնորհաց խորհրդոյն, և ընկալեալ լինի ՚ի փառս արքայութե։

# ՀՐՏՈՒՐԾ. Է.

Թէ յոյժ հարկէւոր ՚ի մէջ հաղորդութեանն հաւատութէ հոգւոյ՝ ծախսական
շահելոյ ճշմարտ։

Խորհուրդ սբյ հաղորդութե հո-
գևոր

գև որ իմն հարսանիք է. յորում փեսայն երկնաւոր միաւորի ընդ հոգւոյ հաւատացելոյ ։ Յայս հարսանիս հրաւիրին ա̃մ հաւատացեալք՝ որք միանգամ զգեցեալ իցեն զմաքրութիւն խղճի մտաց և զուղղութ̃ի վարուց ։ Ապա եթէ դու չունիցիս զայսպիսի զգեստ հարսանեաց և համարձակիցիս մտանել ՚ի նոյն աղտեղի զգեստուք մեղաց, և հինզգեստուք մոլութ̃եց, զինչ ասիցէ քեզ փեսայն երկնաւոր. * ընկեր զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց ‖. զի՞նչ ապա՝ եթէ յաւելուցու. * կապեցէ́ք զդորա զոտս և ըզձեռս. և հանէք զդա ՚ի խաւարն արտաքին ‖. մատ. իբ̃. 13 ։ * Ահա զորպիսի վճիռ արժանացաւ լսել (ասէ օգոստինոս) որ ՚ի կոչունս հարսանեաց եկ̃ ՚ի սեղան տ̃ն աղտեղութ̃ե իշխեաց մերձենալ ‖։

Սե-

Սեղանն փրկութեան՝ ատեան դատապարտութեան եղև նմա. հարցանիքն ուրախութեան դարձաւ նմա սպանդարան տարամերժութեան. կերակուրն անմահութեան փոխադրեցաւ մ͞ն ն͞ր ՚ի թոյն ապականութեան: Որչափ կարէր օգտել ՚ի մերձենալն նորոգութեան կենաց, այնչափ վնասեցաւ ՚ի ժպրհելն հնութեան մեղաց և չար սովորութեանց: * Ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս (ասաց Քրիստոս. Մատթ. Թ. 17.) ապա թէ ոչ՝ տիկքն պատառին և գինին հեղու. և տիկքըն կորնչին. այլ արկանեն ըզգինի նոր ՚ի տիկս նորս. և երկոքին պահին ||: Գինի նոր է խորհուրդն հաղորդութեան. եթէ արկանես ՚ի հոգիդ ՚ի հնացեալ անկարգ մոլութեամբ կամ չար սովորութեամբ, պայթի յոյլ չարագոյն մոլութիւնս. որով ոչ միայն նոր գինին այն հեղանի և ոչ ինչ օգտէ,

այլև

այլ և զոր դուդ ունէիր՝ վատնես, և հոգւոդ իբրև տիկ կորնչի։

Ո͞ք պատահեցան անարժանա͞պս ճաշակողին յուդայի. որ իրա͞պս ևս պայթեցաւ։ Իսկ եթէ՛ 'ի նոր տիկս, ք͞ո 'ի նորոգեալ կեանսդ ընդունիս, պահէ զքեզ, և աճեցուցանէ յառաքինութիս. վ͞ոյ ճշմարտիւ ասէ այն բան. * մահ է չարաց. կեանք է բարեաց ‖։

Սմին իրի զգուշացուցանէ երանելին պօղոս և ասէ. * Այսուհետև որ ուտիցէ զհացս, կ͞մ ըմպիցէ զբաժակս տ͞ն անարժանութ͞բ, պարտական եղիցի մարմնոյ և արեան տ͞ն. փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութ͞բ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմին տ͞ն ‖։ (ա͞. կոր. ժ͞ա. 27.) Իբր զի որոշումն ինչ ոչ

առ

տանէ Է հացն կենարար , և ընդ
հացն հասարակ . որով և արկա-
նէ զանձն ընդ դատապարտու-
թեամբ մատնիլ 'ի սուր բարկու-
թեն այ . զի արդարև որ անար-
ժանութ հաղորդի , հաղորդու-
թիւնն այն լինի նմա սուր սա-
տակիչ հոգւոյ ։ Սուտի յաւուր
միում տեսեալ սբյն կիպրիանո-
սի , զի կին մի առանց արժանա-
ւոր պատրաստութե մերձեցաւ 'ի
հաղորդութին՝ ասաց ։ * ոչ կե-
րակուր , այլ սուր էառ ինքեան ‖ ։
Այս է նկանակն այն , զորմէ ա-
սացին մադիանացիք . * ոչ է այն՝
եթէ ոչ սուրն գեդէոնի որդւոյ
յովասու ‖ . դատ . Է . 14 ։ Սոյն
այս նկանակ գեդէոնի՝ որ օրի-
նակէր զմարմին տն , հաց եղև
իւրոց , և սուր մադիանացւոց .
հաց 'ի կեցուցանել , և սուր 'ի
կորուսանել ։ Յիրաւի կենսա-
տու հաց է արդարոց 'ի սնուցա-

նել

նել զն՟ս, և յուրախ առնել. այլ
ամպարշտաց սուր ՚ի սպանանել
և ՚ի դատապարտել. առ ն՟ս ամե-
նաձաշակ քաղցրու՟նի, առ սոսա
ամենավտանգ դառնու՟նի. որպի-
սի եղև մանանայն առ որդիսն
իսրայէլի. արդար եղելոց բերկ-
րալի և ախորժելի. իսկ անզգա-
մացելոց տխրալի և տաղտկալի։
Յայսպիսի այլընդայլոյ ներգոր-
ծութի՟ս հաղորդութ՟ե հայելով
ո՟ք վարդապետաց՝ * հայ երե-
սաց || անուանեցին զսա. զի ար-
դարոց քաղցր դէմս երևեցուցա-
նէ, իսկ առ մեղաւորս զայրագին
դէմս ցուցանէ։ ՚Ի սմին հայէ և
պետրոս եկեր և յուդայ. մին
կենդանացաւ և զօրացաւ, միւսն
մեռաւ, և կորեաւ։ Պատմի ՚ի
վարս հարանց, (դլ. ժԹ. երես.
388.) թէ եպիսկոպոս ո՟մն ե-
տես յեկեղեցւոջ զի յընդունել
ժողովրդեան զմ՟ր խորհուրդն,

նո-

նոքա որք սրբութ՟բ ճաշակէին՝ պայծառանային և սպիտականային. իսկ որք մեղօք և ախտիւք ճաշակէին՝ սևացեալ լինէին և կիզեալ: Եւ թէպէտ որք անարժանութ՟բ մատչին՝ արդէն սևացեալ են 'ի հոգիս և կիզեալ, բայց յետ ճաշակմանն առաւել ևս սևանան, և լինին բնակարան սատանայի. որպէս օրինակեցաւ 'ի յուդայ. յոր յետ պատառոյն եմուտ սատանայ:

Այսպիսիքս 'ի մատչիլն 'ի սեղան հաղորդութեան գրեթէ իբրև գազան յարձակին 'ի վ՟ր մարմնոյն ք՟ի, ոչ 'ի վայելել, այլ 'ի պատառել զայն. վ՟յ մերժին յ՟յ, և քարկոծին 'ի բարկութ՟է ն՟ր: Գրէ պօղոս. եբր. ժ՟բ. 17. * Թէպէտ և ասէ գազան մերձենայր 'ի լեառն, քարկոծ լինէր ‖: Եթէ գազան քարկոծիւր 'ի մերձենալ 'ի լեառն սինա, որ էր օ-

րև

ընդունակ ոք սեղանոյն, ապա քանի՛
քարկոծանաց արժանի գտանի
նա, որ գազանական կամ անաս-
նական ախտիւք մերձենայ ՚ի
սեղանն ոք, հանգոյն շանց քըծ-
նելով, որոց վս ասաց Քս. * Մի՛
տայք զսրբութի շանց ‖։ Որքա
փառաւորագոյն գտանին քան ըզ-
յուդայ. զի համբուրելով զՔս
մատնեաց զնա՝ ոչ ՚ի ձեռս հրէից,
այլ ՚ի ձեռս ախտից. առ որս ա-
սէ Քս. * Յուդա համբուրելով
մատնես զորդի մարդոյ ‖. Ղուկ.
իբ. 48։ Որքա ոչ ունին մասն և
բաժին ընդ Քսի, զի նա է սրբութի
սրբց, և սոքա անօթ աղտեղութե.
նա է խաղաղութի երկնաւոր, և
սոքա լի են խռովութբ ախտից.
նա է աղբիւր սիրոյ, և սոքա ա-
տելի են, և տաղտկալի անձանց.
և զիա՞րդ մարթ իցէ սոցա հաղոր-
դիլ ընդ նմա յայսմ խորհրդեան,
և ընդունիլ ՚ի նմանէ մասն բա-

բուԹն:

Տէրն մեր 'ի ծնանիլն և 'ի մեռանիլն ոչ խնդրեաց տեղի մաքուր. զի ծնաւ յայրի անասնոց, և եդաւ 'ի մսուր անբանից. եւ 'ի գողգոԹա, և անդ մեռաւ. և յայտ է Թէ սոքա չէին մաքուր: Իսկ զայս խորհուրդ հաստատեաց 'ի մաքուր և 'ի զարդարեալ վերնատան, կամելով յայտ առնել՝ Թէ 'ի մաքուր սիրտս պատրաստէ զսա. իբր Թէ մաքուր սրտից հաղորդէ զինքն, եւս և այնպիսի հոգւոյ՝ որ զարդարեալ իցէ առաքինուԹեամբ: Այս հարկ է մեզ մեծաւ ջանիւ և ամենայն փուԹով պատրաստել զսիրտս մեր. և այնպէս մերձիլ առ ահաւոր խորհուրդս յայս: Ասէ սիրաք (ԺԸ. 23.) * նախ քան զաղօԹելդ պատրաստեա զանձն քո. և մի լինիր իբրև զմարդ՝ որ փորձէ զԱստուած ||: ԵԹէ նախ քան զաղօ-

ԹելՆ

թէլն այսպիսի պատրաստութն խնդրի՝ զի մի փորձեսցի ած , ապա զորպիսի պատրաստութն արժան է առնել վասն ընդունելոյ զՀաղորդութն տն ։

ԱՅԼ արդ որովհետեւ այս պատրաստութն հիմնի 'ի սրբութն սրտի ( որ 'ի սրբել զանձն 'ի մեղաց , և յախտից . ) և տեսանկանապէս հաստատի 'ի սէրն այ , եթէ 'ի դիմել քո 'ի Հաղորդութն տեսցես թէ կայ 'ի քեզ մեղք , կամ զաղեալ իցէ յօժարութն չար իրիք մոլութե . որ անկարգ և անարժան սէր , կամ ցանկութն ագահութե , կմ իղձ փառասիրութե , կմ ժանտութն նախանձու , կամ քէն առ ընկերդ . և կմ թէ չունիս հաստատուն կամս յետս կալոյ յանկարգ սովորութե քումմէ . որ 'ի ստասացութե , 'ի բամբասանութե , 'ի յիշոցնարկութե ( որ 'ի քլիփիւրէ ) և յայլ ախտից , ծանիր ստու-

գիւ, զի ոչ գտանի 'ի քեզ արժա-
նաւոր պատրաստութի՟. ուստի և
'ի մատչիլդ 'ի խորհուրդն՝ անար-
ժանութ՟ ընդունիս զայն, որով
պարտաւոր գտանիս. զի այսու
համարձակութ՟ գրեթէ ծաղր
առնես զՔ՟ս. և յորժամ մտանէ
յապարան սրտի քո, գտանիս առ-
նա իբրև զհերովդէս, զի ը՟ օրի-
նակի նր՟ զմոլութիւնդ՝ զորս գա-
ղեալ ունիս 'ի սրտիդ՝ արկանես
'ի վերայ նորա, և անարգանօք
արձակես զնա առ պիղատոս զի
դատապարտեսցի 'ի մահ:

Ո՞չ է օգուտն՝ զոր կամէիր շա-
հիլ, ա՞յս է հատուցումն քո առ
ամենամեծ բարերարդ. ա՞յս է
արդեօք պատիւն քո՝ զոր պար-
տական էիր տալ նմա: Յառաջն
հերովդէս ընդունող. յետ ըն-
դունելոյդ հերովդէս մատնող:
Եւ այս անտի յայտ է, զի յետ
հաղորդելոյ՝ յոլում մոլութե

կայիր

կայիր յառաջն , 'ի նոյն մոլիս ,
գուցէ առաւել ևս ։ Եթէ կայր
'ի սրտիդ քէն , կայ դեռ այն
նոյնպէս , թերևս չար ևս . եթէ
հպարտ էիր և պճնասէր 'ի սի-
րիլ կամ 'ի համբաւիլ , տակաւին
'ի նմին տեսանիս . եթէ սովո-
րեալ էիր բամբասել , կամ արհա-
մարհել զայլս , ոչ թողուս 'ի
բաց ո՛չ զբամբասելդ և ոչ զար-
համարհելդ . սոյնպէս և յայլ
մոլութիս ։ Եթէ այսպէս է , ու-
րեմն դու 'ի հաղորդիլդ չունէիր
կամս հրաժարելոյ 'ի սոցանէ , և
եթէ չունէիր զայդ , ապա անար-
ժանութբ հաղորդեցար . և դա-
տապարտութն արժանի գտար ։
Ասեն ոմք հարք՝ թէ որ արժանա-
ւոր պատրաստութբ և առաւելութբ
սիրոյ ընդունի զխորհուրդ ամե-
նամբ հաղորդութե , փոխէ ամեն-
ևին զվարս իւր 'ի լաւն . և ազա-
տի 'ի մոլութեց . մանաւանդ թէ

մոլութ՟իք ն՟ր բարոյապէս խօսե-
լով զառնման յառաքինութիւնս:
Մարիամ մագդաղենացի մեր-
ձենալով յոտսն ք՟սի ազատեցաւ
յախտից իւրոց. և փոխարկեցաւ
՚ի բարին: Կինն տեռատես մեր-
ձենալով՚ի դրօշակ հանդերձից
ք՟սի բժշկեցաւ:

Արդ և որք միանգամ արժանա-
պէս մերձենան ՚ի խորհուրդ հա-
ղորդութե՟ բժշկին յանբժշկելի
ախտից իւրեանց. ուստի և նա-
րեկացին կոչէ զսա * անհնարա-
ւոր ախտից Ճարակ ||. բան. ծգ. 4:
Գիտասջի՛ր հաւաստեաւ. զի ո՟պ
՚ի ծագել արեւու՝ հալածի խա-
ւարն, նոյնպէս ՚ի մտանել արե-
գական արդարութե՟ յարժանաւոր
սիրտ մարդոյ՝ խաւարն մեղաց
և ախտից փարատի. և զիւական
յօժարմունք ն՟ր ջնջին, և կուռք
չար սովորութե՟ց կործանին. իսկ
յանարժան սրտի է՟ հակառակն

գոր-

գործի ։ Յորժամ տապանակն
տ̃ն ,յորում էր օրինակն հաղոր-
դութեան մանանայն , եմուտ 'ի
տուն դագոնի չ̃ոյն , դագոն կոր-
ծանեցաւ . ( ա̃ . թագ . Ե . 3 ։ )
Ապա եթէ նոյն ինքն հաղոր-
դութ̃ն մտցէ 'ի տուն սրտի մար-
դոյ , զիա́րդ կարիցեն կալ անդ
կուռք մոլութ̃ց . կործանեսցին
արդա́րև . և հոգին ազատեալ 'ի
ծառայութ̃է նոցին՝ գտանէ զճշ-
մարիտ փրկութ̃ի իւր ։
Զայս տարացոյց յորժամ եմուտ
ք̃ս 'ի տուն զաքէի՝ ասաց . * այ-
սօր եղև փրկութ̃ի տանս այսմիկ ‖ ։
Զայս ասէ և տ̃մ հաւատացեալ
հոգւոյ 'ի մտանելն անդ , եթէ
գտցէ 'ի ն̃մ զկամս և զպատրաստ
յօժարութ̃ի հանգոյն զաքէի ։

# ՀԱՏՈՒԱԾ. Զ:

Թէ պարտ է յաճախ մերձենալ առ սբ հաղորդութեն:

Ի սկզբան եկեղեցւոյ 'ի ժամանակս առաքելոց՝ հաւատացեալքն 'ի քն յամ աւուր հաղորդէին մարմնոյ և արեան տն. ըստ որում աւանդի 'ի գործս առաքելոց. և այս սովորութն մնաց քանի մի ժամանակ: Բայց 'ի նուազիլ ջերմեռանդութեն՝ նուազեցաւ և այս սովորութն մինչև 'ի ժամանակս նիկիոյ ժողովոյն ցչորրորդ դար. յորում սկսան միայն 'ի շաբաթու և 'ի կիրակէի հաղորդիլ հաւատացեալքն: Եւ ապա յառաւել տիրել գաղջութե՝ ոմանք յաւուր կիրակէի միայն հաղորդէին. և ոմանք յամենեանն միանգամ.

գամ. և յետոյ ոմանք յերկուս ամիս. և ապա յամին երկիցս. և այլք յամին միանգամ. գտան և ոմանք՝ որք յերկուս կամ յերիս ամս միանգամ հաղորդէին :

Տեսեալ սբ եկեղեցւոյ՝ թէ անդամքն քսի աւելի քան զտարի մի հեռանալով ՚ի նմանէ՝ յանդամ լինելոյ նորա ևս հեռանային, հրամայեաց չանցուցանել զտարին : Եւ յետ ժամանակաց յամի տն 1215 առ Իննովկենտիոսիւ երրդիւ սահմանեաց ՚ի չորրորդ ժողովն լատերանու ՚ի գլ. 21. հանդերձ բանադրանօք, թէ պարտական լիցին հաւատացեալքն գոնէ յամին միանգամ ՚ի զատկին հաղորդիլ. և որ ոչ հաղորդեսցի, արգելցի ՚ի մտանելոյ յեկեղեցի. և ՚ի մահուն իւրում մի՛ թաղեսցի քրիստոնէական թաղմամբ :

Ըստ այսմ սահմանադրութեան զատ-

զատկէ 'ի զատիկ հաղորդելով
Թէպէտ և պարտաւորու̃ի եկե-
ղեցական օրինաց լցեալ լինի ,
բայց թէ այս բաւական իցէ ամե-
նեցուն միանգ̃ս առ փրկու̃ի և առ
ապահպանու̃թի քրիստոնէական
կենաց , տարակոյս է : Այսչափ
ինչ կարեմք ասել , թէ նա որ
միայն զատկէ 'ի զատիկ հաղոր-
դի եթէ փրկու̃թե հասանիցէ՝
մեծ իմն է . նոյնպ̃ս և նա՝ որ յա-
մին երկիցս միայն հաղորդի՝ ե-
թէ քրիստոնէաբար կեցցէ՝ նոր
իմն է : Որովհետև խորհուրդն
հաղորդու̃թե է հոգևոր իմն կե-
րակուր , և տայ կեանս ճաշակո-
ղաց , եթէ ոք ոչ կերիցէ՝ ոչ ու-
նի կեանս յանձին :

Ասիցէ ոք թերևս . որովհետև
մեծ իմն է զօրու̃ի մարմ̃նոյ և ար-
եան տ̃ն , յամին միանգամ ես
ուտելով պահէ զիս 'ի հոգևոր
կեանս : Բայց այս է պատրանք

սա-

սատանայի կամ բնութե. զի որ
յամին միանգամ կմերկիցս հա-
ղորդի, կարելի է՝ թէ՛ի հաղոր-
դիլն էր ՚ի մեղս. իբր զի խոստո-
վանութի նր յիմիք պակասուէ
լեալ էր անվաւեր. և յայնժամ
ոչինչ կեանս տայ նմա հաղոր-
դութին (եթէ ոչ ունիցի յետոյ
զղջումն խորտակման). որով
այնպէս լինի՝ որպ թէ չէր ճաշա-
կեալ. և ոմ գործք նր մեռեալ
են առաջի այ. և բարեգործու-
թիւնք նորին ոչինչ օգտեն առ
փրկութի յաւիտենական:

Բայց գիտուք ես թէ արժանա-
պէս հաղորդեցաւ. սակայն գու-
ցէ յետոյ ՚ի մահացուչափ մեղս ան-
կաւ, և ոչ գիտաց. և ահա նոյն
լինի որ նա՝ որպէս որ անվաւե-
րաբար հաղորդեցաւ. և յայնմ
հետէ կարէ ասիլ առ նա իբրև
առ ոչ հաղորդեալ. որովհետև
ոչ կերեր զմարմին որդւոյ մար-
դոյ՝

գոյ՝ ոչ ունիս կեանս յանձին.
յովհ. Զ. 54:

Ասիցես. պատուիրան եկեղեց-
ւոյ յամին միանգամ պարտաւո-
րէ առ հաղորդութիւն. ուստի ես
չեմ պարտական աւելի և բազում
անգամ հաղորդիլ: Պատասխա-
նեմ. եկեղեցի վն խստասրտու-
թեան ձերոյ ետ զպատուիրանն
զայն. այլ՝ի սկզբանն ոչ եղև այն-
պէս: Իսկ սակայն ոպ յայտ է՝ի
նախագրեալ բանիցս, պատուի-
րանն եկեղեցւոյ ոչ հայի յայս՝
թէ յամին միանգամ հաղորդե-
լով՝ աներկբայ փրկիս, այլ թէ
յամին միանգամ ոչ հաղորդե-
լով՝ յորդի գոլոյ եկեղեցւոյ մեր-
ժիս և անարժան լինիս մտանե-
լոյ յեկեղեցի. անարժան և ե-
կեղեցական թաղման:

Բայց արդ եթէ այսպէս, և ե-
թէ այնպէս, ոչ է քեզ արժան
կարի արդար լինիլ առ ած, հա-

փե-

փելով՝ թէ այդչափ միայն պար-
տական ես դու առ շնորհսն տ՟յ,
և ոչ աւելի. ապա թէ ոչ՝ ա՟ծ ևս
այդպիսի արդարութ՟ե վարի ը՟
քեզ, և մտանէ ընդ քեզ 'ի դա-
տաստան. և յայնժամ զի՞արդ
արդարասցիս. զի ոչ արդարա-
նայ առաջի նորա ա՟մ կենդանի.
թո՛ղ թէ դու՝ որ մեռեալդ ես,
և ոչ կենդանի: Եւ մի՛ կարծեր՝
թէ ա՟ծ ոչ վարի ը՟ քեզ ը՟ս վարե-
լոյ քո ը՟ նմա. զի որով չափով
չափես՝ չափեսցի քեզ: Յայս
հայի և բանն դաւթի՝ զոր ասէ.
սաղ. ժէ. 26. * ընդ ս՟բյն ս՟բ
եղիցիս և ընդ թիւրսն թիւրես-
ցիս ||:

Ոսիցես դարձեալ, բարի է այդ.
բայց զի՛ արարից. ես 'ի բազում
հոգս զբաղեալ եմ. իսկ յաւուր
ը՟ունելոյն ս՟բ խորհրդոյն պար-
տիմ 'ի հոգւոյս դադարել. և զի
զայս յաձախ ոչ կարեմ առնել՝ ա-
պա

պա և ոչ կարեմ յաճախել յայն:
Բայց այս պատճառ ոչ ինչ է,
զի դու նաև յամին միանգամ
ճաշակելով 'ի նմին իսկ աւուր
դատարկաբանութե և ունայնութե
զհետ լինիս . որ առաւել ը̃դդէմ
է յարգութեան խորհրդոյն քան
կհոգ զբաղմանացդ :
Սերեմն այդ ոչ է պատճառն .
այլ այս է՝ զի դու յաւուր ընդու֊
նելութե խորհրդոյն պարտիս
զուսպ ունել զքեզ . իսկ դու սո֊
վորել ես 'ի ցոփակեցութիս . ուս֊
տի և դժուարիս : Սակայն եթէ
դու քրիստոնեայ ես , և ոչ հե֊
թանոս , պարտական ես զմ̃ա֊
ւուրս կենաց քոց զուսպ ունել
զքեզ , և զգաստ կեանս վարել .
և գոնէ յամենեանն միանգամ մի
օր աւելի ևս զգաստ կեալ 'ի պա֊
տիւ ներկայութե տ̃ն քո : Եթէ
միանգամ սկսանէիր յաճախել
առ տ̃րն քո , ո՛չ փափաքիս յա֊
ճա֊

ճախել առ իշխանս աշխարհիս վս մնոտի շահուց, տեսանէիր, թէ զբաղմունք քո ոչ ինչ մնասեն քեզ: Գուցէ վայր իմն պատճառ առաջի դիցես ասելով. ես վասն անարժան համարելոյ զիս՝ ոչ համարձակիմ յաճախ մերձենալ առ այս խորհուրդ:

Բայց այդ պատճառանք 'ի բազում գլխոց ստի. նախ՝ զի եթէ առ յաճախն անարժան գտանիս. ապա և առ սակաւն մանաւանդ թէ առաւել ևս. զի յայտ է թէ որչափ յաճախես, այնչափ մերձենաս առ արժանաւորութի. իսկ յապաղելովդ հեռանաս յարժանաւորութէ. ուրեմն խաբես զքեզ յասելդ, թէ վս այն ոչ յաճախեմ, վս զի անարժան եմ:

Երկրորդ, հարցանեմ. գիտէ՞ր արդեօք քո, թէ դու լիցես արժանի, կամ թէ չլիցես: Եթէ գիտէր՝ թէ դու արժանի ես յաճախ

ընդունելոյ զայս խորհուրդ, ու-
րեմն դու ևս համարձակեա՛ց 'ի
նոյն խոնարհութ͞ե ։

Իսկ եթէ գիտէր՝ թէ չիցես ար-
ժանի, ընդէ՞ր զայս խորհուրդ
ետ քեզ 'ի փրկութի͞ն, և յորդոր-
եաց զքեզ 'ի նոյն ։ Կամ այսպէս
ասացից . յիրաւի է թէ ք͞ս քան
զքեզ առաւել գիտէր՝ թէ դու
զիա՛րդ իցես արժանի . արդ եթէ
նա քան զքեզ առաւել գիտէր
զքոյդ արժանաւորութի͞ն՝ կա՛մ չար-
ժանաւորութիւն, և այսու ա͞միւ
կարգեաց զայս խորհուրդ 'ի փրր-
կութի͞ն անձինդ և 'ի կենդանութի͞ն
հոգւոյդ, ապա դու ոչ կարես
զանարժանութիւն քո պատճառ
բերելով այդչափ հեռի կալ 'ի
նմանէ ։

Երրորդ՝ զի՛նչ պարտ է քեզ առ-
նել զի արժանի արասցես զքեզ.
զորինչ և առնես՝ 'ի քոյդ կողմա-
նէ տակաւին անարժան ես ։ Իսկ

առ

առ 'ի արժանաւորիլ և արժանա-
պէս ը͞ունիլ՝ աւելի ինչ ոչ խընդ-
րէ 'ի քէն ա͞ծ, բայց եթէ որչափ
հնար է ը͞ն մարդկայինս տկարու-
թե͞ պատրաստել զքեզ ։ Արդ
զայն արժանաւորութի͞ կա͞մ պատ-
րաստութի͞ զոր յետոյ կամիս առ-
նել, այժմ ա՛րա, զի այժմ լիցիս
արժանի ։ Օ ի՛նչ ասես․ ո՛չ ապա-
քէն մե͞ծ փառք է քեզ հանապազ
արժանի լինիլդ ընդունիլ 'ի քեզ
զԹագաւորն փառաց ։ Նաև ը͞ն հա-
կառակն՝ ո՛չ ապաքէն մե͞ծ նախա-
տինք է քեզ 'ի տարւոջ միանգամ
միայն լինելն քո արժանի այնմ՝
որոյ ես ։

Չորրորդ՝ յապաղելովդ մերձե-
նալ առ նա՝ լինի՞ս արդեօք առա-
ւել արժանի, թէ առաւել ևս
անարժան առնես զքեզ ։ Խիղճ
քո ևս վկայէ, թէ ո՛րչափ յապա-
ղես, այնչափ առաւել անարժան
կացուցանես զքեզ․ զի յաւելլով

զմեզ 'ի վե՟ր մեղաց՝ յաւելուս և զանարժանութիւ՟ քո : Եւ զայս թէպէտ դու ոչ կամիս իմանալ, սակայն ես կարեմ իմացուցանել քեզ :

Յորժամ դու հաղորդիս, յայտ է թէ նախ սրբես զքեզ 'ի մեղաց . զի առանց այսր ոչ կարես հաղորդիլ : Արդ հարցանեմ . այդ սրբութի՟՝ որով մերձեցար առ հաղորդութի՟ն մնա՞յ 'ի քեզ թէ ոչ . եթէ մնայ, ուրեմն ոչ կարես՝ անարժան եմ ասելով ոչ մերձենալ առ սբ՟ հաղորդութի՟ն . զի նովին սրբութ՟բ որ՟ արժանի եղեր յառաջին, նոյնպէս արժանի լինիս և այժմ . մանաւանդ թէ նոյն սրբութի՟ եթէ մնայ 'ի քեզ, նոյն ինքն յորդորէ զքեզ առ 'ի յաճախ մատչիլ 'ի նոյն հաղորդութի՟ :

Իսկ եթէ ոչ մնայ, ոչ մնայ և շնորհքն ա՟յ . և եթէ ոչ մնայ

շնորհ-

շնորհքն , այնուհետև որ է՟ր օրէ մեղաց 'ի մեղս կործանելով՝ որ յաւուր վ՟ր աւաւել ևս անարժան առնես զքեզ հաղորդութեան ։

Տեսանես ահա՝ թէ որչափ և յապաղես , այնչափ անարժան լինիս . և որչափ անարժան գտանիս , այնչափ դժուարանաս արժանի առնելոյ զքեզ ։ Ուրեմն ցորչափ 'ի մաքրութե՟ իցես մատի՛ր առ տ՟րն քո ։ Իսկ եթէ մարդկային տկարութ՟ե՟ սահիս 'ի մեղս ինչ , փութա՛ առ փրկիչն քո 'ի ձեռն խոստովանութե՟ . և սրբեա՛ զքեզ , և մի՛ կարի յապաղելով յաւելուր զտկարութի՟ քո ։

Յապաղելոցս աստի յայտնի լինի՛ թէ ոչ վ՟ն անարժան համարելոյ զքեզ յապաղես , այլ վ՟ի գաղջ ես և ծոյլ . և անկեալ կաս 'ի հիւանդութե՟ մեղաց և մոլութե՟ց . և վնկ հեղգաս և պժգաս ։ Բայց

արդ եթէ գաղջ ես և հիւանդ , առաւել ևս հարկ է քեզ փութալ առ հուրն կենդանի՝ զի ջերմասցիս , և առ ամենաճարտար

բժիշկն՝ զի բժշկեսցիս :

Ինքն պատրաստ է բժշկել զհիւանդացեալս ըստ որում նա ինքն ասաց . * ոչինչ է պիտոյ բժիշկ ողջոց , այլ հիւանդաց || մարկ . Բ . 17 . մատիր առ նա , և բժշկեսցէ զքեզ 'ի մեղաց և 'ի մոլութեանց . * ո՛ քաւէ զմեղս քո, բժշկէ զամ հիւանդութիւնս քո || .

սաղ . ՃԲ . 3 :

Ոչ եկն նա վս ողջոց , այլ վասն մեղաւորաց . * ոչ եկի ասէ կոչել զարդարս , այլ զմեղաւորս յապաշխարութի || . ղուկ . Ե . 32 : Կոչէ , և յորդորելով ասէ . * եկա՛յք առ իս ամ վաստակեալք և բեռնաւորք . և ես հանգուցից

զձեզ || . մատ . ԺԱ . 28 :

Արդարև ամենաճարտար բըժիշկ .

ժիշկ. և ոչ միայն բժիշկ, այլև ամենահնար դեղ բժշկարար հիւանդութեան մերոյ, և զօրաւոր սպեղանի հնացեալ և խղխայթեալ վիրաց։

Ուստի ասէ սուրբն իգնատիոս ա̃ծազգեաց հայրապետն. * ըապեղանի է. մահու անթեղայ. և հաշտեցուցիչ կենաց ընդ ա̃յ ... դեղ բժշկարար ախտից, և վանիչ ա̃մ չարեաց ||։

Զարմանալի ինչ մի կայ աստ խորհիլ, զի դեղ դառնացուցանէ ոչ զպատրաստողն, այլ զառողն. սակայն պատրաստող այսր դեղոյ որդին ա̃յ յինքն էառ զա̃մ դառնութի̃ դեղոյն. և զա̃մ լեղութի̃ կամեցաւ ունիլ վասն իւր. իսկ մեզ հիւանդացս եթող զքաղցրութիւնն։

Տ̃րն մեր արար մեզ հանգոյն մարց. որք առ 'ի բժշկութի̃ որդայոց իւրեանց ըմպեն զդեղ

գառնագոյն . և զայն դեղ զարձուցեալ 'ի քաղցր կաթն՝ տան 'ի կերակուր տղայոց ։ Գիտեա ապա առ այնպիսի մայրագութեամբ . և առ զդեղ կենդանարար . զի կեցցես հոգւով . և հասցես 'ի կեանս յաւիտենականս ։

## ՀՐԱՀԱՆԳ . Ը ։

Թէ որպէս է բարւոք հոգածութեամբ մատչել 'ի ճաշակումն խորհրդոյ հաղորդութեան ։

Որ կափուցեալ ունի զաչս՝ ոչ տեսանէ զգեղեցկութիւն առարկային , և յոչ տեսանելն՝ ոչ փափաքէ այնմ . ապա և որ անմտածութեամբ կափուցեալ ունիցի զաչս հոգւոյ՝ ոչ տեսանէ զգեղեցկութիւն խորհրդոյ հաղորդութեան .

ուստ

ուստի և ոչ ցանկայ այնմ։ Նմին
առակ է փիլիսոփայից՝ թէ որ ոչ
է ծանուցեալ ոչ է ցանկացեալ,
զի ցանկութիւն կամաց բերի յայն,
զոր ճանաչէ մարդ միտօք. իսկ զոր
ոչ ճանաչէ, ոչ յօժարի։

Ուրեմն և յայս խորհուրդ. սքան-
չելի՝ եթէ միտք մարդոյ ոչ յա-
ռեսցի 'ի խորհիլ և յիմանալ, ոչ
փափաքի ախորժանօք մերձենալ.
իսկ եթէ ուշի միտօք խորհեսցի
և իմասցի՝ թէ զինչ իցէ և որպի-
սի, փափաքանօք դիմէ և ախոր-
ժանօք ճաշակէ։

Ասէ սողոմոն 'ի գիրս առակաց.
իգ. 1. * Յորժամ նստիս յընթ-
րիս ուտել 'ի սեղան հզօրաց, ի-
մանալով իմասջի՛ր՝ որ ինչ առա-
ջի դնիցի. և ապա մխեսջի՛ր ըզ-
ձեռն քո ‖։ Նստիլն՝ զհանգըր-
տեամբ խորհիլն նշանակէ. աստ.
յորժամ ասէ հանգիստ և խո-
րին մտածութեամբ խորհիս զայն՝

որ կայ յընթերցս տէրն այնմինքն է
մարմինն քրիստոսի՝ որ առաջի եդեալ
է ուտել ընդ հզօրաց, այլ ընդ հրեշ-
տակաց, որք հոգևորականս և իմա-
նալականս ուտեն զայն. ընդ որոյ ա-
նի հաց հրեշտակաց. կամ ընդ այնո-
ցիկ՝ որք հզօրք ասին, այլ որք զօ-
րանալով ընդդէմ ախտից, և ա-
րիանալով ընդդէմ ծուլութեան, սըր-
բութեամբ ուտեն զայն կերակուր, *ի-
մանալով իմաստիւ ‖. այլ այնու-
խորին մտածութեամբ բարւոք իմա՛ թէ
զինչ է այն. եթէ իմանաս, յայն-
ժամ մխես զձեռն քո, այլ թէ
յայնժամ փափաքիս ուտել զայն։
Վասն այսր պատճառի տէրն մեր 'ի
հաստատելն զայս խորհուրդ ոչ
յայլում տեղւոջ, այլ 'ի սիոն
լեառն արար զընթրիս իւր. զի
սիոն թարգմանի դիտանոց, կամ
նկատումն, կամ 'ի հայիլ. կամե-
լով ցուցանել՝ թէ պարտ է մեզ
ուշի մտօք հայիլ յայս բարձր

խոր-

խորհուրդ, 'ի սոյն դիտել, և
զնոյն նկատել. և ս և քննել.
* զի՛նչ է այս ||. Ելից. Ժ̄Զ. 15։
Ուր 'ի հայիլն և 'ի քննելն՝ լինի
առ մեզ ամենաքաղցր մանանայ.
յորմէ շարժեալ կամաց մերոց,
ընդ ցանկութ̄ առ այն մերձենալ
փափաքիմք. և որչափ բարձր և
խոր քննեմք, այնչափ փափաքա-
նօք առ այն դիմեմք. զի * ուր
մարմինն է, անդր և արծուիք ժո-
ղովեսցին ||. Ղուկ. ԺԷ. 36։
Օ այս ասաց տէրն մեր՝ 'ի ցուցա-
նել խորհրդաբար, թէ պարտ է
մեզ իբր զարծուիս խոյանալ մը-
տօք 'ի բարձրութ̄ այսր խորհրդոյ.
և յայնժամ ժողովիմք անդ՝ ուր
է մարմինն. կամիմ ասել, եթէ
բարւոք մտածեմք՝ դիմեմք ու-
տել զամենասուրբ մարմինն ք̄ի։
Հռովմայեցիք 'ի յուղարկաւո-
րութ̄ կայսերաց՝ զարծուիս ար-
ձակէին, կամելով ցուցանել, թէ

զո-

զորինչ խորհէր կայսրն 'ի կենդանութեան՝ իբրև զարծուի բարձրագոյնս մտածէր. և զոր մտածէր՝ յայն փափաքէր. և յոր փափաքէր 'ի կենդանութեան՝ անդ դիմեալ գնայր հոգի նորա 'ի մահուանն։ Սա այսմ եթէ և մեք բարւոք խորհիցիմք զխորհուրդն հաղորդութեան, առ այն փափաքիմք, և առ այն դիմեմք։

Են ոմանք՝ որք այս խորհին ընդ հաղորդութեան, բայց ոչ վասն իմանալոյ զպատուականութիւն խորհրդոյն, այլ վասն հետաքննութեան. և յաղագս այսորիկ փոխանակ 'ի նոյն փափաքելոյ՝ խստանան. և սիրտ նոցա կարծրանայ առ ընդունելութիւն այսր խորհրդոյ. և երբեմն վատթարանայ ևս, և չարանայ։

Ո՜րինչ օգուտ է քեզ յայդպիսի մտածութեան. խորհեա՛ դու թէ զոր ընդ տեսակաւ հացի և գինւոյ

ւոյ տեսանես, ճշմարիտ ած քո
է, կեանք քո, երանութիւն քո,
խաղաղութիւն քո ապաւինութիւն քո,
ողորմութիւն քո, գանձն քո, սէր
քո, և այլն. և ևս թէ նա է խորին
խորհուրդն այն, որ 'ի վր խա-
չին իբր ողկոյզ ճմլեցաւ վն սի-
րոյ քո. և տուաւ 'ի կենդանութիւն
մեռելոց, և 'ի փրկութիւն քո
յաւիտենական : Նշխարքն յով-
սէփայ յորժամ բացին զքուրձսն
ցորենոյ, գտին 'ի նս զարծաթն,
զոր յովսէփ ետ դնել 'ի նոսին :
Արդ 'ի սոյն ցորենեղէն ամանն
հաղորդութեան եդ քս զարծաթ
ածային քաղցրութեան, և զգանձ
սիրոյ իւրոյ և զօգուտ շահու
անձանց մերոց. և սակայն յայն-
ժամ կարեմք գտանել, յոր-
ժամ բանամք զայս խորհուրդ :
Այս բացումն լինի մտածու-
թբ 'ի խորհրդին զայն ամ` զորս
եդաք 'ի բանսդ այսոցիկ եօթնեակ

հաւ

հաստուածոց, զի թէ քանի՛ դե-
րագանց իմն է այս խորհուրդ, և
առ ի՛նչ է կարգեալ, զի՛նչ գոր-
ծէ 'ի մեզ 'ի գալն առ մեզ:

Եւ յետ խորհելոյ զայսոսիկ՝
հարկ է զմտաւ ածել, թէ զի-
ա՛րդ պարտիմք պատրաստել ըզ-
սիրտ մեր յընդունիլ զնա:

Եթէ գիտէիր դու թէ այսօր կամ
վաղիւ գայ Թագաւորն 'ի տուն
քո, զի՛նչ առնէիր. ո՛րպիսի տե-
ղի պատրաստէիր, ո՛րպէս մաքրէիր
զայն, և զի՛արդ զարդարէիր. ա-
պա զի՛նչ ոչ է քեզ պարտ առ-
նել 'ի տեսանելդ, թէ ահա գայ
առ քեզ Թագաւորն երկնի և
երկրի, և ունի հանգչիլ 'ի սիրտ
քոյ իբրև 'ի գահոյս իւր:

Տե՛ս թէ ո՛րպիսի սրբութեամբ և խո-
նարհութեամբ ընկալաւ զնա յորովայն
իւր ամենամաքուր կոյսն: Նոյն բանն
մեծ է, զոր ընդունելոց ես և դու
'ի սիրտ քո. ապա զմտաւ ա՛ծ՝ թէ

զի՛նչ

զի՛նչ պարտիցէ գործել քեզ առ 'ի առնուլ զնա 'ի քեզ ։ 'Ի մտանել սբյ կուսին 'ի տուն զաքարիայ աղաղակեաց եղիսաբէթ ․ ուստի՛ է ինձ այս , զի եկեսցէ մայր տն իմոյ առ իս ։ Գայ առ քեզ նոյն ինքն տէրն քո ․ աղաղակեա՛ և դու ․ ուստի՛ է ինձ այս տէր ,

զի դու ինքն գաս առ իս ։

Ընդունիլն ապա անդ զխորհուրդն զմտաւ ա՛ծ նախ , թէ ահա մտանէ քն 'ի սիրտ քո իբրև յերուսաղէմ քաղաք ․ և զայս մտածելով տարածեա՛ զհանդերձս քո զճանապարհայն աստի կենաց յն թէ տարածեա՛ առաջի նր զդառնութի՛ն սրտի քո ․ զանկարգ յօժարութի՛ քո ․ զայլևայլ պակասութի՛ս քո , և զչար ունակութի՛ս քո ․ և առեալ զոստս արմաւենեաց զանազան առաքինութեց՝ մատո՛ նմա ․ * արդարքն որպս զարմաւենիս ծաղկեսցին ‖․

սաղ․

սաղ . ղա . 13 :

Նկդ՝ համարեա՛ թէ քն մտեալ է 'ի տուն սրտի քո որպս 'ի տուն զաքէի . և զայս մտածելով՝ մատիր առաջի նր . և ասա՛ որ ահա զկէս գոյութեա՝ քն զհոգի իմ , տաց աղքատացելոյդ վն իմ . և որչափ զրկեցի զմարդն իմ 'ի հոգևոր կրթութեց՝ չորեքկին հատուցից ձնչմամբ և ապաշխարութբ : Եւ զայս ասացեալ յանձն արա՛ նմա քեզ . մինչև լուիցես 'ի նմանէ , * այսօր եղև փրկութի տանս այսմիկ || . ղուկ ժթ . 9 :

Նրդ՝ հայեա՛ց յաղէտս թշուառութե հոգւոյդ . և զայս մտածելով մատիր առաջի նր իբրև ընդհարիւրապետն , կամ իբրև ընդքանանացին կին իբրև զմագդաղենացին , կամ իբրև զհամրն , և զկոյրն , կամ իբրև զբորոտն , և զանդամալոյծն , կամ իբրև զայսահարն և իբրև զայլսն զորս

բժշկ-

բժշկեաց ք՟ն, և աղաչեա՛ զնա՝ զի
և զքեզ բժշկեսցէ յախտից ։
Նմա զայսոսիկ զպատշաճաւոր
աղօթսն զատանես 'ի հրահանգ
է. յե՟րդ կարգն աղօթից . երես
139 ։

Զե՟րդ՝ խորհեա՛ թէ, ք՟ս կայ 'ի սըր-
տի քում իբրև 'ի վերնատան .
խօսի ը՟ն քեզ և ասէ, * գիտես
զի՛նչ արարի քեզ ‖ . և զայս խոր-
հելով՝ շնորհակա՛լ լեր զնմանէ ։
Ջե՟րդ՝ թախանձեա՛ զնա՝
օրհնել զքեզ . և ասա՛ ցնա ըստ
յակոբայ նահապետին . * ոչ ար-
ձակեցից զքեզ՝ թէ ոչ օրհնես-
ցես զիս ‖ . ծնն . լբ՟ . 26 ։ Ու 'ի
ժամէլդ խոնարհութ՟ե, օրհնեսցիս
'ի նմանէ լիութ՟ե, և կոչեսցիս իւ-
րայն, ք՟ս ա՟ծատես ։

'Ի վերջոյ ասեմ . յաւուր յորում
առնուս զայս խորհուրդ՝ ջանա՛
պարապիլ ջերմեռանդութե՟ և
բարի մտածութ՟ե . և զգուշացի՛ր
զի

զի մի՛ անկարգ ինչ խօսք ելցէ ՚ի բերանոյ քումմէ , այլ բան բարի · զի որ ուտէ զհամեմն՝ հոտ անուշ չունէ բուրել ՚ի բերանոյ իւրմէ · նոյնպէս և դու ՚ի ճաշակել զօրհնութիւն՝ բուրեա՛ ՚ի բերանոյ քումմէ զանուշահոտութիւն մաքուր բանից · և որ հոտոտեսցի հաճութեան , և օրհնեսցէ զքեզ ՚ի կեանս քո պարգևօք իւրովք · և ածցէ զքեզ ՚ի փառս արքայութեան ։

# Վ.Ե.Ր.Ջ.

ՀԱՅ… ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ССРА Пу…чная Библиотека
7/XI 1922
имени А. Мясни и на
…ԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ